

ՀՈՐ ԵՐԱՎԵՐ

Ի ՏԱՐՔ

ՄՈՒԽԻՄ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8

ՕԳՈՍՏՈՍ

1901



ԹԻՖԼԻՍ

Տպոգրաֆիա Հրազ. Իզդատ. Տ—վա. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.
1901

№ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՍԵՒ ՕՐԵԲ, պատմուածք Ա. Ահարոնեանի
2. «ՆՈՔԱ ԼԱԼԻՄ ԵՄ», «ՀԵՌԻՔ Է», բանաստեղծ. Ալ. Շատուրեանի 65
3. ՀԱԶԱՐ ԼՃԵՐԻ ԵՒ ԿՊՋԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ, ճանապ. նկար. Ք. Օհանեանի 66
4. «ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ», բանաստեղծ. Լերմօնտօվի, թարգմ. Ալ. Շատուրեանի 87
5. ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ, դրամա Գ. Հառւպամանի, թարգմ. Ե.—Ա. 88
6. ԻՄ ԵՐԳԸ, բանաստեղծ. Ռւաս Աւիտմանի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի 102
7. ՆՈՐԱՎԵՊԻՆ ՆՈՐԱՎԵՊԸ (Պոլսի կեանքից), Առանձարի 104
8. ԿՈՐՈՒՍՑԻ ՄԱՏՆՈՒԱԾ ՀԱՅԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, Ռուսամիք 111
9. ԿԱՐՄԻՐ ՃԻՊՈՏԸ, պատկեր իրական կեանքից, Ա. Շահնազարեանի 132
10. ՖՐՈՄԾԵ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դոդեկ, թարգմ. Տ. Յ. 133
11. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ, Լիօն . 161
12. ՄԱՏՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—33) Karl Kannenberg „Kleinasiens Naturschätze“, Ե. Փ.: 34) Gustav Hirschfeld „Aus dem Orient“, Ե. Փ.: 35) „Օբзоръ Бак. нефт. промышл. за 1900 г.“ Լ. Ս.: 36) „Lynch Armenia Travels and studiens“, Ե. Ն.: 37) Ալոյանական, Աւանասիրութիւն Յ. Տիւսարին, Լ. 38) Հ. Թերճեմանեան „Պատմութիւն հալոց“, Լ. 191
13. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԲՑԵՐ, «Հողային տուրքը» և հարկերը կովկասում, Ա. Զաւարեանի 204
14. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՅ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ, Վրաստանի ծխական ուսումնարանների նոր ծրագիրը.—Գրագիտութիւն տարածող ընկերութիւնը.—Կօօպերատիկ շարժումը վրացական կեանքում, Տ. Փիրումեանի. 219
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, ԱՆՁՆԱԼՈՆ նախաձեռնութիւնը հասարակական կեանքում.—Ննտելիքէնցիալի դերը այդ հարցում.—Գործնականութեան ողին եւրոպական հասարակական գործիչի մէջ.—Վրացական դատողութիւնների սէրը մեր մէջ.—„Հասարակական դիտութիւնները“ լսողներին մի խորհուրդ.—Ժողովրդական կրեղիսի կազ-

Նոր շրջան 1 տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒԾ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8

ՕԳՈՍՏՈՒ

1901

ԹԻՖԼԻՇ

Տիպոգրիա Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.
1901

Дозволено цензурою Тифлисъ, 17-го августа 1901 г.

№ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- | | | |
|-----|---|-----|
| 1. | ՍԵՒ ՕՐԵՐ, պատմուածք Ա. Ահարոնեանի | 5 |
| 2. | «ՆՈՔԱ ԼԱՎԱՐ ԵՆ», «ՀԵԹԻՔ Է», բանաստեղծ. Ալ.
Ծառուրեանի | 65 |
| 3. | ՀԱՅԱՐ ԼՃԵՐԻ ԵՒ ԿՂՋԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ, ձանապ.
Նկար. Ք. Օհանեանի | 66 |
| 4. | ՃԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ», բանաստեղծ. Լերմօնտօվի, թարգմ.
Ալ. Ծառուրեանի | 87 |
| 5. | ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ, դրսմա Գ. Հառւպամանի, թարգմ.
Ե.—Ա. | 88 |
| 6. | ԻՄ ԵՐԳԸ, բանաստեղծ. Ռւատ Ռւփտմանի, թարգմ.
Կ. Կրասիյնիկեանի | 102 |
| 7. | ՆՈՐԱՎԵՊԻՆ ՆՈՐԱՎԵՊԸ (Պոլսի կեանքից), Առանձարի | 104 |
| 8. | ԿՈՐՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԱԾ ՀԱՅԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ,
Ռուսամի | 111 |
| 9. | ԿԱՐՄԻՐ ՃԻՊՈՏԸ, պատկեր իրական կեանքից, Ա.
Շահնազարեանի | 132 |
| 10. | ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դոդէի, թարգմ. Տ. Ե. 133 | |
| 11. | ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ, Լեօի | 161 |
| 12. | ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—33) Karl Kannenberg „Klein-
asiens Naturschätze“, Ե. Թ.: 34) Gustav Hirschfeld
„Aus dem Orient“, Ե. Թ.: 35) „Օօզօրք Եակ. ԱՓ. Առաջ. 1900 թ.“ Լ. Ս.: 36) „Lynch Armenia
Travels and studiens“, Ե. Կ.: 37) Ալպօյաձեան, Շու-
ստմասիրութիւն Ս. Տիւարի, Լ. 38) Հ. Թերճեմանեան
„Պատմութիւն Հայոց“, Լ.: | 191 |
| 13. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, «Հողային տուրքը» և հարկերը
Կովկասում, Ս. Զաւարեանի | 204 |
| 14. | ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Վրաստանի
ժխական ուսումնարանների նոր ծրագրը.—Վրագիտու-
թիւն տարածող ընկերութիւնը.—Կօսպերատիվ շարժումը
վրացական կեանքում, Տ. Փիրումեանի. | 219 |
| 15. | ՆԵՐԻՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Անձնական նախաձեռնութիւնը Հա-
սարակական կեանքում.—Խնտելիքէնցիալի դերը այդ
հարցում.—Գործնականութեան ողին եւրոպական հասա-
րակական գործիչի մէջ.—Վերացական դատողութիւն-
ների սէրը մեր մէջ.—„Հասարակական գիտութիւնները“
լսողներին մի խորհուրդ.—Ժողովրդական կրեդիտի կաղ- | |

մակերպութիւնը	մեզանում.—Անձնական նախաձեռնութեան օրինակներ մեր կեանքից.—Պէտք է ժողովրդին յարմարեցնել փոփոխուող պալմաններին.—Հայ ինստիգէնտների նախաձեռնութիւնը անցեալում.—Դպրոցական կանոնադրութիւններ, —Ընտրողական սկզբունք և փաշալակոն կամալականութիւնն. —Հոգաբարձութիւնը օրինական մարմին է. —Վոանգաւոր էքսպերիմենտներ. —Ընկերակցութիւնների մէջ թագնուած բազմակողմանիութիւնը, Լեւոն Սարգսեանի	226
16.	ԳԱԻԱՌԱԿԱՆ կԵԱՆՔ, I. Մոռացուած գաւառամասերը Երեանհան նահանգում, Ա. —Փօ: II. Վիճակադրական տեղեկութիւններ Ալեքս. հայ-լուս. մասին, Ն. Բ. Ն.	232
17.	ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Կիտչենէրի վերջին յարաբարութիւնը.—Ազատական կուտակցութեան նոր ֆրակցիա Անգլիակում.—Զեմբերլէնը իրքե նիսմարկի հետեւող. —Անգլիական լեզուի գերիշխութեան հարցը Մալոս կըդզում.—Ազգերի համերաշխութիւն և ուժեղների ստիպութիւն. —Կոպիտ ոլժի կուլտը. նիցշէականութիւնը, իրքե ուժեղ անհատականութեան սանձարձակութիւն.—Գլաղատօնի շկօլայի մարդիկ. —Ֆրիդրիխ-Ալիկտօրիա կալսունու մահը.—Կրիստին իրեր լեզափոխական և Կրիստին իրքե պետական անձ. —Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութեան նոր ցուց, Լ. Ա.	241
18.	ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	246
19.	ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ	259
20.	ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ, Լ.	261
21.	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	263
22.	ՅԱԽԵՂՈՒԱԾ, «ՅԱՐՈՒԹԻՒԻՒՆ», Վէպ Լ. Տօլսովի, թարգմ. Յովհաննիսեանի	209—256

ՍԵՒ ՕՐԵՐ

Դեղեցիկ էր Մարօն, որպէս կուսական լերան կըրծ-
քին հարաւային երկնքի տակ բացուած բուրալից շու-
շան։ Բնութիւնը ոչինչ չէր ինայել իր այդ չքնաղ ստեղ-
ծագործութիւնը հրաշակերտելու համար. ասես նա կա-
մեցել էր սրանով ցոյց տալ, թէ փոթորիկներին և կայ-
ծակներին հրամայող իր զօրութիւնը երբեմն որքան
քնքոյշ, ինչպիսի նուրբ գործեր հրաշակերտել գիտէ։

Նատ գեղեցիկ էր Մարօն։ Նրա սև մազերի հա-
րուստ խոպոպները տասնեակ համաչափ հիւսերով բար-
ձըր պարանոցի վրայից շքեղապէս իջնում էին դէպի
թիկունքը և ամեն անդամ շարժում գործելիս, ասես
թեթև հովից ալեծածան ծփում էին և իրանց ծայրերի
շքեղ փնջերով մեղմիկ ծեծում էին նրա բարակ մէջքը։
Գոյնզգոյն խաս թելերը միացնում էին իրար հետ այդ
հիւսերը, իսկ նրանց վրայ շարուած արծաթեայ դրամն
ները նրա ամեն մի քայլը փոխելիս անուշ զինգոց էին
բարձրացնում։ Նրա կոլոր գէմքը կարծես լուսին լինէր,
նուրբ, կամարաձև յօնքերի տակ վառւում էին մեծ սև
աչքերը, անհուն՝ որպէս երկինքը և յստակ՝ որպէս ջինջ
եթերը։ Դիւթիշ էր այդ աչքերի արտայայտութիւնը,
կուսական սրտի անմեղութիւնը, խառնուած այն ջեր-
մութեան հետ, որ յատուկ է նոր արբունքին հասած
կայտառ, կենսալից աղջիկներին, ցոլանում էր նրա հայ-
եացքի մէջ ամեն անգամ, երբ նա իր երկար թերթե-
րունքների միջից նայում էր մէկին։ Բայց երբ գէմքի

վրայ խաղում էր կախարդական ժպիտը, երբ նա բաց էր անում իր վարդ շրթունքները, այն ժամանակ Մարօն աննման էր դառնում. երկու կարմիր այտերի վրայ միաժամանակ ձեանում էին երկու այնպիսի հրաշալի փոսիկներ, որ ամեն մի երիտասարդ յանձն կ'առնէր կեանքը տալ այդ չնաշխարհիկ պատկերի տէրը լինելու համար։ Բայց շատ քիչ երիտասարդներ կարող էին պարծենալ, թէ իրանց յաջողուել է թէկուղ գաղտագողի տեսնել նրա ժպիտը, սքանչանալ այտերի գեղարուեստական փոսիկներով։

Մարօն զգոյշ էր, որպէս իր հայրենի լեռների այծեամը. նա քիչ էր երևում տղամարդկանց աչքերին, երևալիս էլ գլուխը միշտ կախ էր, աչքերը խոնարհած, ասես թէ ամաչում էր իր գեղեցկութիւնից։

Նա իր հօր, Սհօի՛ մի հատիկ զաւակն էր, նրա քընքոյշ սիրոյ առարկան, նրա պաշտած էակը, նրա կուռքն էր։ Վաղուց... տասն և չորս տարի առաջ, երբ բախտը խեթ նայեց նրան և մի քանի ամսուայ մէջ նա կորցրեց իր մի հատիկ արու զաւակը և ապա իր ամուսնուն, Մարօն մնաց մօրից որբ, մենակ։ Նոյնքան, գուցէ և աւելի որբ զգաց իրան Սհօն, ուստի իր բոլոր սէրը նուիրեց մի հատիկ աղջկան, նրա հետ կապուեց, նրա վրայ թափեց սիրող ծնողի բոլոր խնամքը, բոլոր գուրգուրանքները։

Արդարեւ, վաղամեռիկ և սիրելի ամուսնու և ծաղկափթիթ որդու կորուստը Սհօին շատ մեծ վիշտ պատճառեց, նա շատ սգաց, մազերը վազաժամ ճերմակեցին, բայց Մարօն կամաց-կամայ մեծանալով փարատեց իր հօր ծանր վիշտն ու թախիծը։ Սհօն կարօտ էր մի սիրող սրտի, որ սպեզանի գնէր նրա հոգու վէրբերի վրայ, որ իր սիրով լցնէր նրա աննպատակ դարձած կեանքի ամայութիւնը և այն գտաւ իր նաղելի Մարօփ մէջ։ Աղջիկը հօր անբաժան ընկերը գարձաւ, հայրը սովորեց Մարօփն շարունակ իր մօտ ունենալ, նրա տեսքը, ձայնը, շարժուածքը Սհօին անվերջ մաիթարու-

թիւն էր պատճառում: Նրա ներկայութեամբ Սհօն իր շուրջն զգում էր և կեանք, և խնդութիւն, ահա թէ ինչու իր աղջկայ մի քանի ժամուայ բացակայութիւնն անգամ դժուարութեամբ էր տանում:

Տասն և վեց գարուն էր բոլորել Մարօի գլխով, բայց նա տակաւին ուրիշ սէր չը գիտէր, բացի անմեղ որդիական սիրուց, որ նա ասածում էր դէպի իր հայրը: Նա չէր յիշում ոչ մօրը և ոչ եղբօրը, նա գիտէր միայն որ հայր ունի, խնամու, սիրող հայր, որ նրան ձեռների վրայ է մեծացրել, գիշերները թեփ վրայ պառկեցրել, քաղցր օրօններով, տխուր մեղեգիներով քնացրել, արթուն ժամանակ գուրգուրելով փայփայել է. և Մարօն իր բոլոր սէրը իր ծնողին նուիրեց: Սակայն հարազաններ ունենալու քաղցրութիւնը գեռ մանկութիւնից նա զգում էր բնազդով, մանաւանդ երբ տեսնում էր որ ընկերուհիները մայր, քոյր, եղբայր ունեն: Աւելի ևս խորն էր զգում նա իր միայնութիւնը, երբ գեռ փոքր հասակում ընկերուհիների հետ տարածայնութիւն ունենալիս, հակառակորդները նրան սպառնում էին իշրանց եղբայրների անունից: Այդպիսի դէպքերում Մարօն կորցնում էր իրան, պատասխան չէր գտնում: ամաչում էր հօր անունից սպառնալ, ախր նա մեծ էր, անյարմար էր: Ճարը կտրուած՝ նա կրծոտում էր շրթունքները և դառնագառն արտասում: 0՝, ինչպէս կ'ուղենար նա այդ ժամերին եղբայր ունենալ:

Եղբայրը չը կար, միայն էին, հայր և որդին, բայց կարողացան մի ամբողջ աշխարհ ստեղծել ծնողական և որդիական սիրով և այդ աշխարհում ամբում էին նրանք փոխադարձարեար միմիթարելով իրար: Գոհ էր Սհօն, գոհ էր և Մարօն: Տասն և վեց երկար տարիներն անցան այս կերպով:

Վերջին ժամանակներում միայն Մարօն անհանդըստութեամբ և երկիւզով նկատեց թէ ինչպէս հայրը նորից կամաց կտանաց անձնատուր է լինում ինչոր անձանօթ վշտի: Սհօն ժամերով և օրերով լուռ մտածում էր,

կարծես նա աշխատում էր լուծել մի ծանրակշիռ խընդիր, որ նրա համար կենսական նշանակութիւն ունէր: Եւ այս մտահոգութիւնը կրկնում էր ամեն անդամ, երբ նա երկար և ուշադիր նայում էր աղջկան:

Ի՞նչ էր տանջում Սհօփն, արդեօք աղջկայ պատկերը վերակենդանացնում էր ամուսնու յիշողութիւնները, վաղամեռիկ զաւակին էր մտարերում, թէ մի ուրիշ աւելի ծանր պատճառ ունէր այդ խռովութիւնը, այդ ծածուկ վիշտը, որ ցեցի պէս կրծում էր նրա սիրութ: Այդ ըլ գիտէր Մարօն, բայց գաղտնի խռովութիւնը հօր դէմքին կարդալով, աղջիկը խորապէս վշտանում էր: Վաղուց էր, որ նա հօրն այսպէս տխուր չէր տեսել, վաղուց էր, որ հայրը միշտ ժպտադէմ, ուրախ էր, այս պատճառով աղջիկն այժմ և՛ զարմանում էր, և՛ ցաւում էր: Նա ուզում էր, որ իր հայրը բախտաւոր լինի, ինչպէս ինքն է, որ նա էլ ցաւ ու արտմութիւն չունենայ: Այս ցանկութիւնը նրան դէպի իր հայրը տածած քնքոյշ սիրոյ արգասիք էր: Ահա թէ ինչու սիրելի հօր դէմքին տխրութեան քող նկատելով՝ նա ամեն անդամ նայում էր նրան իր արցունքու արտեանունքների միջից և վզովն ընկնելով հարցնում էր.

—Հայրիկ, դարձեալ տխուր ես, էլի՞ մայրիկին և եղբօրս յիշեցիր, մինչև երբ «գարդ» անես, միթէ բաւական չէ:

—Չէ, զաւակս, չէ, պատամխանում էր շփոթուած հայրը յանցանքի մէջ բռնուած մարդու պէս. ողորմի իրանց, Աստուծոյ կամքն էր, դու ողջ լինիս ինձ համար, բաւական է, ես տխուր չեմ; քեզ այդպէս թւում է միայն:

Այս խօսակցութեան վերջում հայրը սովորաբար փոխում էր իր դէմքի արտայայտութիւնը, աշխատում էր ուրախ ձեւանալ և նոյն իսկ ժպտում էր Մարօի երեսին:

Եւ իրօք մեռած սիրելիների տխուր յիշատակը չէր, որ գալիս էր մուայլելու նրա ծեր ճակատը: Շատ

տարիներ առաջ նա իր վիշտն Աստծուն յանձնեց, ուխտեց իր Մարօխն խորթ մօր ձեռք չը ձգել և իր բոլոր սէրը նրան նույրեց։ Նոյն խակ իր ծանր կորուստից յետոյ, երբ սրախ վէրքը դեռ թարմ էր, Սհօն միշտ Մարօից ծածուկ էր անձնատուր լինում վշտի, գիշերները, խաւարի մէջ էր արտասում, որպէս զի այդ որբ մնացած ծաղկի վրայ ոչ մի սառնաշունչ հով չը փչի, ոչ մի անախորժ զգացմունք չը խոռվի նրա քնրոյշ սիրտը։ Եւ Սհօն հասաւ իր նպատակին, Մարօն մեծացաւ, որպէս անհոգ թիթեանիկ։ Եւ այժմ, երբ Սհօն պէտք է խոպառ մոռացած լինի այն դառն օրերի յիշատակը, երբ Մարօն մեծացել, հասած աղջիկ է դարձել անզուդական գեղեցկութեամբ, նման իր մօրն ինչպէս մի ձու միջից կէս արած, այժմ երբ նա իր գիտակցական սիրով երախտագիտաբար վարձատրում է հօրը նրա կրած բոլոր դառնութիւնների փոխարէն, այժմ Սհօն փոխանակ ուրախ լինելու, յաճախակի անձնատուր է լինում խորագոյն վշտի։ Ինչու Որովհեակ Մարօն շատ սիրուն է, անչափ գեղեցիկ, նա բախտաւոր լինել չի կարող, մտածում և զգում է հայրը։

—Էս «վէրան» երկրի մէջ խօրօտին բախտ չը կայ, շարը սոտից կապած է, մնանում էր նա յաճախ միայնութեան բոպէներում։ Ահա թէ ինչն էր նրա ծածուկ վշտի, նրա յարատու մոռահոգութեան պատճառը։

Սև օրերի, ու աշխարհի ծնունդ էր Մարօն։ Այդ այն աշխարհն է, որ ձգւում է վ... ծովակի ափերում և մի շարք գեղանկար լեռների գրախտանման ստորոտներում։ Այստեղ լոյս ու արև տեսաւ, այստեղ աճեց ու զարդացաւ Մարօն մանկական անհոգութեամբ ու անգիտութեամբ։ Նոր սիրով թևաւորուած, նա խողում էր ժամանակի հետ, առանց զգալ կարողանալու, թէ ինչ տարօրինակ աշխարհում է ծնուած ինքը։

Եւ յիրաւի դա մի զարմանալի աշխարհ էր։ Այնտեղ բնութեան ներդաշնակութիւնը խախտուած էր մարդկանց ձեռքով։ Աղաւաղուած, վայրենաբար այլանդա-

կուած էր այն բոլորը, ինչ որ բնութեան մէջ վեհ է ու վսեմ, ինչ որ ոգի է ներշնչում, խորհուրդ տալիս կեանքին, բնութեանը, տիեզերքին։ Կապուտակ, անհուն երկինքը միշտ ժառուն, միշտ գեղածիծաղ էր այնտեղ, բայց մարդկային դազանութիւնը նրան բանտի հսկայական կամար էր դարձրել. այնտեղ օդը մեղմ էր, որպէս քնած մանկան շունչ և ջինչ՝ որպէս կուսական խոհեր, բայց արիւնածարաւ մարդը այդ հրաշալի մթնուրաը լցրել էր արեան գոլորշիներով,— ծանր էր չնչել։ Եսու դաշտ պճնուած էին գեղահրաշ ծաղիկներով, կանաչաւէտ հիւթալի սէզերով, հաղարաւոր աղբիւրները գլուխով վայր էին գլորում լեռներից իրանց բիւրեղեայ շիթերի ցնցուղները, բայց ծաղիկներն ու խոտերը ջրից աւելի արիւն էին ծծում, արիւնով սնւում, աղբիւրները շատ անգամ կարմիր, բոսորային վտակներ էին կազմում։ Ամեն առաւօտ հսկայ լեռների թիկունքից բարձրանում էր արեւ և ոսկեզօծում սպիտակափառ բարձրութիւնների կատարները, ամեն երեկոյ՝ վերջալուսին արևմուտքում դոյների մի սքանչելի մրցութիւն էր կատարում, երկնակամարի այդ մասը վառւում էր՝ ասես հսկայական հրդեհով բռնուած. գիշերները լուսինն էր սահում բիւրաւոր աստղերի միջից և իր արծաթեայ շիթերով ողողում լեռ ու դաշտ։ Բայց բնութեան այս հրաշալիքներով մարդէկ այդ երկրում յափչտակուել չը գիտէին, վսեմ երազներ չը կային այնտեղ, բնութեան իսկական լեզուն անհասկանալի էր, երկնակամարի կարմրութիւնն արիւնից էր խօսում, երեկոն՝ խաւարի կարսակետը, սարսափ էր պատմում, ջրերի կարկաշիւնը՝ հեծեծանը, գիշերային խոր լուսթիւնը՝ մահ։

Այսպէս էր այն աշխարհը—և՛ գեղեցիկ, և՛ դարհուրելի միաժամանակ։

Այն բոլորը՝ ինչ որ գեղեցիկ էր ու բարի, հալածւում էր այդ սարսափելի աշխարհում։ Զարը և միմիայն շարն էր թեատարած դեխ պէս իշխում այդ-

երկրի վրայ և նրա սև թերերի սոսկալի հովանու տակ գեղեցիկը, բարին խեղդւում; հեծում էին ինչպէս երկաթեայ օղակի մէջ:

Յանցանք էր գեղեցիկ սեփականութիւն ունենալ, այդպիսի սեփականատէրը իր ունեցածի հետ յաճախ զրկուում էր նաև իր կեանքից: Դեղեցիկ արտը բարբարուների ձիերի կոխան էր լինում; բուրմունքով լի, չքնաղ ծաղիկները մի ժամ էին միայն ապրում; գրախառանման պարտէզները մի քանի ժամում ամսայի անապատ էին դառնում: ստքեր կային, որոնց կոխած տեղն այլ ևս ոչինչ չէր բունթաց նժոյգն ու հաստավիզ եղն ու գոմշուկը խլուում էին և տէրերն առանց բողոքի, իրանց անասունների համբերութեամբ խողխողւում էին: Հարուստ և երջանիկ մարդը մի օրում մուրացիկ էր դառնում:

Եւ ահա թէ ինչն ամենքն աշխատում էին թագցնել, հարուտահարիչների ազքից հեռացնել այն բոլորը, ինչ որ գեղեցիկ էր, ինչ որ ախորժակ կամ կիրք կարող էր զարթեցնել: Դեղեցիկ ձիերը շուտով վաճառւում, անյայտանում էին, անասունները մորթւում, պարարտ գաշաերը մնում էին առանց ցանելու, ոսկեայ և արծաթեայ զարդերը ծածկւում էին երկրի տակ: Հարուստը շրջում էր ինչպէս մուրացիկ, աղատութեան սիրահարը՝ ստրուկ էր ձևանում, բարի մարդը՝ չարագործուեցած ծատագով, առաքինին՝ ծածկում էր իր հոգու խորքերում թանձր մրուրի տակ այն աստուածային կայծը, որ մեծագործութեան հուրն է բորբոքում ընտրեալների սրտերում և բարւոյ, յաղթանակի վաեմ նշանով դրոշմում ոսկեգարերի փայլուն ճակատները:

Մարդիկ այս բոլորը թագցնում էին, այս բոլորի համար ճար ունէին, մի բան կար միայն, որ անկարելի էր թագցնել, որից հեշտ չէր զրկուել և որ այս պատճառով ամենավտանդաւոր սեփականութիւնն էր համարւում այն դժոխային աշխարհում—դա կանացի գեղեցկութիւնն էր: Դեղեցիկ աղջիկներն ու իրանց ծնող-

ները, գեղեցիկ կանայք ու իրանց ամուսինները գեռ երբէք այն աշխարհում բախտաւոր չեին եղել։ Այդ գիտէր Սհօն, ահա՝ թէ ինչու իր Մարօի դիւթիչ գեղեցկութիւնը տեսնելով, նա տիրում էր, զլուխը քաշ գըցում, և ծանր, մաշող մաքերը մուայլում էին նրա ծեր ճակատը։

Նատ սիրուն է... իսկ եթէ նրա զարմանալի գեղեցկութեան հոչակը դիւղից տարածուելով՝ վերջ ի վերջոյ անօրէնների և նրանց տոփոս բէգերի ականջին հասնի և նրանք մտածեն խլել իրանից Մարօին իրանց սե աշխարհի սովորութեան համեմատ։ Օ՛, այս բանը երեակայելիս անդամ ծերունին դոզում էր սարսափից։ Նա զարհուրում էր նոյն իսկ իր սեփական չարագուշակ մտքերից, նա աշխատում էր հեռու քշել իր գլխից այդ սե մաքերը, վախենալով մի դուցէ աշխարհն իմանայ, թէ ինքն ինչ էր մտածում իր Մարօի մասին և դրանով հէնց ինքը պատճառ դառնայ նրա կորստեան... Սարսափելի կասկածամոռութիւնն օր աւուր տիրում էր նրան, ինքն իրան չէր հաւատում, նրան թւում էր թէ ինքը բաւականաչափ գաղանապահ, զգոյշ չէ, թէ իր զարհուրելի կասկածները միայն լուռթեամբ չեն փոլփրում նրա ուղեղի ծածուկ խորշերը, թէ նա բարձրաձայն է յայտնում ամենքին, ուստի կրկնապատկում էր իր գաղտնապահական ջանքերը։ Երբեմն էլ ինքն իրան հաւատացնում էր, թէ կասկածելն անմտութիւն է. քիչ աղջիկներ կան աշխարհում, խօմ մենակ Մարօն չէ, հէնց սրան պիտի դիմեն, սրան տանեն. այս մտքերը նրան մի փոքր հանդսատացնում էին, բայց այդ անհանդըստութիւնը շատ կարճատե էր լինում, բաւական էր նորից նայել Մարօյին խորապէս համոզուելու համար, որ զարհուրելի ենթագրութիւնը զուրկ չէ հիմունքներից, որ վտանգը մօտ է... Մարօն աննման էր, ուրիշներին ինչու պիտի տանեն։

Սհօն նոյն իսկ ատում էր այն երիտասարդին, ով և լինէր նա, որին ճակատագիրը վիճակել էր Մարօի

օրինաւոր ամուսինը դառնալ, նա նախանձում էր այդ երիտասարդին, չէր կարողանում հասկանալ, թէ ինքն ի՞նչպէս պիտի սուրբ թոնրան շրթին կանգնեցնի Մարտին և նրան, օրհնի և իր ձեռքով իր մի հատիկ աղջկայ բախտը յանձնի նրան, որ տանի ուր կամենում է. իսկ ինքը մնայ մենակ խրճիթի մէջ, թոնրան կողքին կծկուած, ի՞նչպէս ձագերից զրկուած սղաւոր թռչուն։ Նա չէր կարողանում հասկանալ, թէ ինըն ի՞նչպէս կալող է այդ վիճակում մի օր ապրել, թէկուղ իր զաւակը բախտաւոր ամուսին լինի, ուր մնաց թէ բաց աշքով տեսնի թէ ի՞նչպէս Մարտին... մնացածը նա չէր կարողանում մը տածել, մոքերի թելը կտրում էր և նա միայն իր անհանգիստ, թրթռան սիրտն էր բոնում;—այնտեղ ցաւ կար...

Օ՛, ի՞նչպէս կ'ուզէր Սհօն, որ իր Մարօն տգեղ լինէր, այդքան գրաւիչ, այդպէս չընալ չը լինէր։

—Տէր, խօրօտը խեղճն ի՞նչ անի, տրտնջում էր նա յաճախ. — Էս անիրաւ երկլում հրտեղ թագժնի, ի՞նչպէս պահի. խօրօտը «զալումին» տնւր, գէն է մեր բաժինը, խօրօտը խեղճն ի՞նչ անի։

Սակայն քանի շատ էին անցնում տարիները, այնքան աւելի գեղեցկանում էր Մարօն և այնքան աւելի կասկածամիտ էր դառնում Սհօն։ Անորոշ, բայց յարատեւ երկիւղը պաշարում էր նրան օր աւուր աւելի և աւելի։ Զանազան պատրուակներով նա աշխատում էր որքան կարելի է քիչ գուրս թողնել Մարտին, մանաւանդ՝ երբ պէտք էր մի փոքր հեռու գնալ։ Տօն օրերին նոյն իսկ, երբ աղջիկները տղամարդկանց գաղտնի հսկողութեամբ սիրտ էին անում դուրս լեռները ծաղիկներ հաւաքելու կամ զբօսնելու գնալ, կասկածամիտ ծերունին հիւանդ էր ձեւանում և Մարօն ստիպուած էր լինում տանը նստել հիւանդ հօրը ինսամելու համար։ Նա սիրով և անտրտունչ էր կատարում իր որդիական պարտքը, առանց կասկածելու թէ հայրը դիտաւորեալ հիւանդ է։ Միակ տեղը, ուր Մարօն առաւօտ և երե-

կոյ գնում էր, դա մօտիկ ձորակի աղբիւրն էր, որ Գ... գիւղի աղջիկները ջուր էին բերում:

Մի աննման վայր էր այդ ձորակլը, որից վեր տափարակի վրայ Գ. գիւղն էր: Ոլորապտոյտ շափողը, որ գիւղից սկսուելով՝ ձորի լանջի վրայով իջնում էր գէպի ձորի խորութիւնը, անցնում էր սէզերի և գոյնզգոյն ծաղիկների միջից: Զորակի կրծքերից ցած էին թափում վճիտ, սառնորակ աղբիւրներ: Այս ու այն մացառի տակ, խոտերի մէջ, այս ու այն ժայռի վրայ, քարերի ճեղքերում վիտում էին բաղմաթիւ ու բաղմապիսի թռչուններ, որոնք իրանց ճռուողիւնով օրն ի բուն լցնում էին օդը:

Այն վայրերը, որոնց անսուան հետ կապուած է որ և է ոճիր, արեան յիշողութիւն, սովորաբար գիւղերում նզոված են համարում: գիւղացիք երկիւղով ու զզուանքով խոյս են տալիս այդպիսի տեղերից և եթէ պէտք էլ ունենում են լինել այդպիսի տեղերում, շտապում են շուտով հեռանալ: Մըքան շատ էին այդպիսի արիւնոտ տեղեր Գ. գիւղի շրջակայթում: Այս ձորակը միակ օրհնուած վայրն էր, որի հետ կապուած չէր արեան պատմութիւն, որտեղ տակաւին արտասուզ թափուած չէր: Օրհնուած, սուրբ տեղ էր, ուստի առանձնապէս սիրելի էր Գ. գիւղի ջահէլներին, մանաւանդ՝ աղջիկներին, որոնք աւելի հեռու տեղեր գնալու հնարաւորութիւնից զրկուած լինելով, սիրով էին յաճախում՝ ձորակը: Զորակի մերձաւորութիւնը և գիւղացիների յաճախակի երթեւեկութիւնն այնտեղ Սհօին էլ վստահութիւն էր ներշնչել, նա էլ հանգիստ սրտով էր տեսնում, թէ ինչպէս Մարօն առաւօտներն ու երեկոները կուժը ուսին դրած շտապում է գէպի ձորակը:

II

Գարնանային մի գեղածիծաղ առաւօտ էր: Զորակը կաղմող ըլուրների կուրծքը գորգի պէս ծածկող ծա-

զիկները բաց էին արել իրանց ցողալից բաժակները և վաղորդեան արևի շողերը խողում էին նրանց վրայ քնաթաթախ թիթեռների հետ միասին։ Մացառների մէջ ծուարած թոչունները գեռ նոր թեւերի տակից դուրս հանած իրանց փոքրիկ դլսիկները, կիսախոտփ, քնաթաթախ աչքերով ողջունում էին արևի ծագումը, ճոռողում էին, թափահարում, պատրաստում էին իրանց թեւերը, որ դուրս թոչեն իրանց գիշերային ապաստարաններից։ Աղբիւրը, որից սովորաբար ջուր էին վերցնում գիւղի աղջիկները, քչքչալով գլորում էր իր վճիռ գոհակները արձաթեայ ոլորուն ժապաւէնի ձևով, որ կորչում էր ցօղապատ խոտերի մէջ։ Առաւօտեան հեղաշունչ հովիկն այնքան մեղմութեամբ էր փշում, որ ասես վախենում էր թափել ծաղիկների թերթիկները, վախենում էր խրտնացնել թոչուններին, խանդարել նրանց դայլայլիկը։ Եւ բոլորը միասին այնքան զրաւիչ, այնպէս ներդաշնակ էին։

Օրուայ այդ ժամին Մարօն կուժն ուսին յայտնուեց դէպի ձորակն իջնող շաւղի վրայ և յուշիկ քայլերով ըպեկըսեց իջնել դէպի աղբիւրը։ Նա մի անդամ ջրով լուաց իր երեսը, գոգնոցով սրբեց. ջրի սառնութիւնից նրա այտերը կարմիրեցին և էլ աւելի գեղեցկացան։ Այս բոլորը նա կատարեց մի անհոգ հանդարտութեամբ։ Նրա բոլոր շարժումներից երեսում էր, որ նա ոչ միայն չի շտապում, այլ նոյն իսկ աշխատում է որքան կարելի է աւելի ժամանակ անցկացնել ձորակում։

Վերջին ժամանակները Մարօն մի անսովոր բան էր պատահել, մի սրտամշուկ ձանձրոյթ տիրել էր նրա ամբողջ էութեանը և ծանր քարի պէս օր աւուր ծանրանում էր նրա սրտի վրայ։ Իրանց տունն ու իր ամենօրեայ կերպը սկսել էին նրան խիստ միակերպ, խիստ տաղառուկ թուալ։ Հօր սէլն ու փաղաքշանկները նրան չէին ձանձրացրել, նա այժմ էլ կարօտ էր իր ծնողի քնքշութիւններին, ինչպէս պապակած բոյսը երկնքի ցողին, բայց մի նոր, բոլորովին անծանօթ զգացմունք էր

ծնուել նրա սրտի ամենանովրական խորշերում և նա բացի իր հօր սիրուց, էլի մի ինչոր բան էր փնտրում, ինչոր փափագում: Նա անորոշ կերպով զգում էր որ մի շատ խոշոր, շատ թակագին բան է պակասում իր կատարեալ երջանկութեան համար և ահա այս պակասն էր, որ նա փնտրում էր ձորակում, բնութեան խորհըրդաւոր ներդաշնակութեան մէջ: Նրան թւում էր, թէ այդ աղբիւրն իր վճիտ ջրերը գլորելիս ի զուր չէ արծաթահնչիւն կրկչոց բարձրացնում, որ նրա պղպճաւոր կոհակները փոքրիկ, չարաճճի մանուկների պէս զուր չեն այդպէս շտապ-շտապ իրար յետեից վազվզում, իր փէշից բռնում, քաշքչում, իրար հետ գրկում, համերութում, և սիրահար զոյդերի պէս ծածկում խոտերի ստուերների մէջ. որ այս մանր ու մեծ թռչուններն ի զուր չեն իրանց քաղցրիկ ծլւլոցով լցրել օդը, ցատկուում իրար մօտ, գուրգուրում իրար: Հապա զեփիւը, միթէ նա պարապ տեղն է իր կուսական չնչով սըլսըլացնում, իրար տալիս խոտերը, իրար դիպցնում բռւրաշատ ծաղիկները, որոնք այնպէս սիրով, այնպէս նազելով մօտեցնում են իրար իրանց գլխիկները, ասես հաղորդում են իրար զեփիւոի բերած յուղիչ լուերը, կամ տալիս են իրար առաւօտեան առաջին համբոյրը:

Մարօն հոգեղմայլուած՝ դիտում էր այս բոլորը, դիտում էր և հաւատացած էր, որ սրանք բոլորն էլ բաներ էլ են ասում իրար, քաղցրիկ պատմութիւններ են անում, և նոյն իսկ իր ականջին փսփսում են ինչոր շատ անուշ բան, որի նմանը մարդ միայն երազներում է տեսնում: Մարօն աշխատում էր հասկանալ բնութեան լեզուն, ըմբռնել, թէ ինչ են ասում այս թռչունները, այս խոտերն ու ծաղիկները, այս զեփիւն ու աղբիւրը. ճգնում էր հասկանալ, թէ ինչ է փնտրում ինքը, ինչ է իր ուղածը: Նա խորապէս համոզուած էր, թէ այն ինչ ինքը փնտրում է, հէնց նրա մասին է խօսում մայր բնութիւնը, նրա մասին է փսփսում իր ականջին: Նա էլ աւելի լարում էր իր ուշադրութիւնը, աշխատում

էր խլել իւրաքանչիւր հնչիւն, իւրաքանչիւր նուագ. բայց ի զմկր. նա անկարող էր լինում հասկանալ, ճնշող անորոշութիւնը մնում էր անհասկանալի և մտահոգութիւնն անբաժան:

Յափշտակութեան այդ բոպէներից յետոյ մի թեթև թախիծ էր իջնում նրա վրայ, նա տիրում էր, գլխակոր և մտախոհ էր վեր բարձրանում տուն գնալու: Սակայն նոյն իտկ այդ անհասկանալի վիշտը, կուսական քմահաճ սրտի այդ տարօրինակ խաղը նրբան հաճելի էր, ինչպէս զովացուցիչ, նրբան գուրեկան էր նրա համար: Նա չէր էլ աշխատում բաժանուել իր վշտից, չէր ուզում ցրել իր թախիծը և անգուն գիշերները երկար ժամանակ փայփայում էր իր համար նուիրական այդ կուսական վիշտը, լսաղում էր նրա հետ, ինչպէս թիթեռնիկը ճրադի բոցի հետ, մինչեւ որ լցուած սիրաը փղձկում էր, մի քանի կաթիլ տաք արտասուբներ էին թափուում աչքերից, հոգին խաղաղւում էր և փախած քունը միայն այդ ժամանակ գալիս էր փակելու նրա թաց արտևանունկըները, բերելով իր հետ մէկը միւսից աւելի գեղեցիկ, մէկը միւսից աւելի հաճելի տեսիլքներ, որոնցով նա փայփայում է կոյսի երեսակայութիւնը:

Այսպէս էին անցնում Մարօի օրերն ու գիշերները վերջին ժամանակներում:

Այսօր էլ նա դարձեալ ձորակումն էր և չէր շտապում Մի ձեռքով բռնել էր կժի կանթը և միւս ձեռքը ճնոտին գէմ արած, արմունկով յինուել էր կժի կանթին և խոհուն աչքերով դիտում գրաւիչ տեսարանը:

Ո՞վ գիտէ, որքան ժամանակ Մարօն կը մնար այդ գրութեան մէջ, եթէ ձորակի բարձրութեան վրայ յանկարծ չը յայտնուէր մի երիտասարդի պատկեր: Համարեա ամենայն օր Մարօին իր սովորական յափշտակութիւնից հանում էին կամ ընկերուհիներից մէկն ու մէկը, կամ դաշտ գնացող որ և է գիւղացի. սակայն այդ դէպքեցում նա միշտ առանց որ և է յուղմունքի առնում էր իր սափորը և առանց իրան մատ-

նելու շտապում էր դէպի տուն։ Բայց այսօր յայտնուող երիտասարդը նրան սաստիկ շփոթեց և գողութեան մէջ բռնուած յանցաւորի վիճակի մէջ դրեց։ Զորակի ոլորապոյտ շաւզից ցած էր իշնումնա փայլուն գերան։ դին ուսին դրած և բարձր յստակ ձայնով երգում էր քրդական մի սրտայոյզ երգ։ Նրա երգի քաղցր եւեէջները առաւօտեան խաղաղ ու թարմ օդի մէջ սփռուելով տարածւում էին հեռու ու հեռու և հնչւում էին ձորերաւմ։ Ե՞րբ էր լսել Մարօն այդ երգը, այդ նա չէր կարողանում յիշել, բայց համոզուած էր, որ էլի մի անդամ; ուրիշ տեղ լսել է այդ ձայնը, նրա մելամաղձոտ ոլորները իր սրտի թելերը մի օր թրթռացրել են։ Թեթե և գուրեկան դող անցաւ նրա բոլոր ջղերի վրայով, երբ իր յիշողութիւնը փորմիրելով գտաւ, որ նոյն իսկ իր ներկայ անորոշ թախիծը, այս ճնշող վիշտն սկսուեց հէնց այն օրից, երբ առաջին անդամ լսեց այս երիտասարդի ձայն։ Մարօն յիշեց... յիշեց բոլորը, գա անցեալ տարի Համբարձման տօնին էր... ծաղկաքաղի էին գուրս եկել... երիտասարդները հետեւում էին նըսանց և Մարօն լսեց այդ ձայնը... Օ՛, նա այժմ աւելին է յիշում։ Նա յիշում է թէ ինչպէս այն ժամանակ հէնց այս միեւնոյն երդի իւրաքանչիւր հնչիւնը թափանցում էր նրա հողու խորքը և ինչ լաւ էր... ճիշտ այնպէս, ինչպէս այժմ։ Այն ժամանակ Մարօն չը կարողացաւ իմանալ թէ ինչ կապ կարող էր լինել իր ծածուկ, անհասկանալի վշտի և այդ երգի հնչիւնների մէջ։ բայց այժմ... այժմ Մարօն ականջ է դնում և նրան թւում է, որ այդ երգն էլ ձորակին է պատկանում, թէ գա այն խորհրդաւոր հնչիւններից մէկն է, որոնք ահաքանի ժամանակ է գուրեկան, գիւթական բաներ են շնչում նրան։

Բարձրահասակ էր այդ երիտասարդը, դէմքն առնական, գոյնզգոյն թելերով նախշած թասակը թեք դրած գլխին, մի ձեռքն ականջին դէմ տուած, նա շարունակում էր իր երգը, մինչդեռ միւս ձեռքով նա

բոնել էր ուսի վրայի գերանդին, որ արեի տակ փայ-
փլում էր: Ե՛ւ երիտասարդը, և՛ իր երդը, և՛ ուսի փայ-
լուն գերանդին բոլորն էլ գեղեցիկ, բոլորն էլ գրաւիչ,
դիւթական թուացին Մարօնն, բայց և շփոթեցին, յու-
զեցին նրան:

Ո՞վ էր այս երիտասարդը:

Չորանենց Մուսօն, այդպէս էին անուանում նրան
Գ... գիւղում, նրա հայրը՝ Մանուկը, հովիւ չէր եղել,
բայց նա բացի հողագործութիւնից նաև ոչխարի ա-
ռուտուրով էր պարապում: Մի քանի տարի շարունակ
նա բազմացնում էր իր ոչխարները, մասամբ էլ առնում
էր հարեաններից ձեռնատու գներով և ապա մի անդամ
առաջն ածած ճանապարհ էր ընկնում քաղաք, ուր վա-
ճառում և վերադառնում էր լաւ արդիւնքով: Այս էր
պատճառը, որ հարեանները նրան «չորան» և իր տունը
«Չորանենց տուն» անուանեցին:

Խաղաղ ու երջանիկ էր ապրում Մանուկն իր կնոյն
Նուբարի հետ նրանք միայն մի հատիկ ցաւ ունեին
և այդ այն էր, որ Նուբարի ծնած բոլոր զաւակները
տարին չը լրացրած մեռնում էին: Քանի սուրբերի դիւ-
մեցին, քանի մատաղներ տարան, մի անդամ վերջապէս
Աստուած խղճաց, նրանց վերջին զաւակը՝ Մուսօն ար-
դէն մահաբեր, ճակատագրական միջոցն անցրեց—նա
երեք տարեկան էր, և Մանուկն ու Նուբարը կատարե-
լապէս երջանիկ էին: Մանուկն այս անդամ աւելի քան
երբ և իցէ ուրախ սրտով քշեց իր ոչխարները դէպի
քաղաք: Նուբարը մնաց իր Մուսօնի հետ սպասելով ա-
մուսնու վերադարձին: Շատ երկար սպասեցին: Վերա-
դարձի հաւանական ժամանակն անցաւ, ու սուզը պա-
տեց Չորանենց տունը: Ամբողջ մի տարի անցաւ, սդի
և արտասուրի տարի Նուբարի համար: Քանի՛քանի կա-
րաւաններ գնացին դարձան, Մանուկը չը կար ու չը կար,
վերջապէս տարի ու կէս յետոյ մի կարաւան նրա դիա-
կի մնացորդները բերեց. քրդերը նրա վերադարձի ժա-
մանակ կողոպտել ու սպանել էին Մանուկին:

Այրիացած նուբարը և կապեց, իր մի հատիկ զաւակի բախտին կապեց իր բախտը, օջաղը չը ցրուեց, մարդու չը գնաց, նստեց իր տանը և իր Մուսօին խնամեց, մեծացրեց։ Հայի ճախարակը իր պատմական գոյութեան ընթացքում շատ անճար, որը ընտանիքներ է պահել, այս անգամն էլ նա նուբարին օգնութեան հասաւ։ Անօփնական այրին դրեց իր առաջ այդ փրկարար գործիքը, մանեց, մանեց, թելեր պատրաստեց և իր ու Մուսօի ապրուստը հոգաց։

Անցան տարիներ և Զորանենց օջաղի մի հատիկ տունկը աճեց, զօրացաւ և մեծ ծառ դարձաւ։ Մուսօն այժմ հասակ առած տղամարդ էր և պառաւած նուբարը իր կեանքի վերջալուսին դարձեալ երջանիկ էր։

Գ. գիւղում ամենքը սիրում էին Մուսօին։ Նա իր գեղեցիկ արտաքինի, սրտի պարզութեան, քաղցր բնաւորութեան հետ ուներ և մի ուրիշ այնպիսի բան, որ գիւղում էր ամենքին—դա նրա աննման ձայնն էր, նրա քաղցր, սրտայոյզ երգերը։ «Կունկի պէս է երգում», ասում էին նրա համար գիւղացիք։ Բոլոր հարսանիքների, բոլոր խնճոյքների զարդն էր Մուսօն։ Երբ հրաւիրուած ծերերը բազմում էին, քահանայի հետ միասին, Մուսօն իր հասակակից «ազափներով» շըապատուած՝ կանգնում էր իշխանների, ծերերի գէմ ու դէմը և մի ձեռքն այտին գրած հնչեցնում էր իր վըշտու երգերը։ Ծեր գլուխներն օրօրում էին, ջլուտ ձեռներն իրար փակում, ցաւերով լի կրծքերն եռում և ալէզարդ միրուքների վրայից ցած էին գլորում աղի արտասուքներ։

—Օ՛ֆ, օ՛ֆ, այս ի՞նչ արիր, Մուսօ, ասում էր ծերունի քահանան, մեր ուրախութիւնը սուգի փոխեցիր, զաւակս. բաւական է, մատաղ, բաւական է, թնդ որ մի քիչ էլ ուրախանան, առանց այն էլ լացի ժամանակ շատ ունենք։

—Տէրտէր ջան, աջիդ մեռնինք, մէջ էին ընկնում այս ու այն կողմից ծերունիները լացից կերկերուող

ձայնով.—լցուած սիրտը դուրս թափելն էլ մեծ բախ-
տաւորութիւն է, մեծ մխիթարութիւն է մեզ համար։
Ապրի Մուսօն, սրտներո հովացրեց. դէ ի՞նչ անենք,
հայր ջան, մեր ճակատագիրն էլ էսպէս է եղել, հար-
սանիքն էլ առանց արտասուքի չի լինում։

Սյսպէս էին ուրախանում այն աշխարհում։ Վիշար
սիրելի էր, ուրախութիւնը՝ խորժ, իսկ Մուսօն վշտի
երդի էր և ընդհանուրի սիրելի։ Նա նչ աղքատ էր և
ոչ հարուստ։ Հօր թողած արտերը բաւական էին, որ
նա մշակելով՝ գոհ կերպով ապրել կարողանար իր մօր
հետ։

Ահա այս երիտասարդն էր իջնում դէպի ձորակը,
որա երգն էր, որ յուզեց, տակն ու վրայ արեց Մա-
րօին։ Մի թեթև սարսուռ զգալով՝ Մարօն շտապեց,
խլեց կուժը և շարժուեց ձորն ի վեր։ Նրանք շուտով
իրար հանդիպեցին նեղ շաւդի վրայ։ Մուսօն ճանա-
պարհ տուեց նրան և անցաւ, աշխատելով գալտագողի
հայեցքով տեսնել Մարօի դէմքը, որի գեղեցկութիւնը
նրա լնկերական շրջանի խօսակցութեան առարկան էր։
Մարօն աջ ուսին բարձրացրել էր կուժը, ձախ ձեռքն
էլ դէմքի վրայից տանելով, բռնել էր կժի կանթից, այս
պատճառով նրա դէմքը համարեա ծածկուած էր և
Մուսօն ջանքերն իզուր անցան։ Մարօն աշըերն անդամ
ը բարձրացրեց, բայց սաստիկ կարմրեց, զգալով որ՝
երիտասարդի հայեցքը փնտրում է նրա դէմքը։ Մի
քանի քայլ վեր ելնելուց յետոյ աղջիկը սաստիկ պա-
հանջ զգաց շուռ գալ և գալուագողի կերպով գիտել
այդ երիտասարդին յետեից։ Բայց անմիջապէս այս
միտքը նրան հրէշաւոր, սարսափելի թուաց, սակայն
Մուսօնն նայելու պահանջը զօրեղ էր, համարեա ան-
ընկծելի, մանաւանդ կարելի էր այնպէս նայել, որ նա
չը տեսնի։ Նա դէպի ներքեւ է իջնում, ի՞նչ կարող է
իմանալ, այսպէս էր դատում աղջիկը։ Ներքին այս
կուլը մի քանի վայրկեան միայն տեսեց, մատաղ սրտի

բուռն տեհնչանքը յաղթող հանդիսացաւ կուսական ամօթխածութեան և բանականութեան վրայ... Մարօն շուռ եկաւ և յետ նայեց հէնց այն բառէին, երբ Մուսօն էլ նոյն անյաղթելի զդացմունքից դրդուած, շուռ էր եկել և նայում էր աղջկան: Խեղճ աղջիկը իր ձեռնարկութեան բոլոր վտանգները կշռադատելիս, հէնց այս մէկն աջքի առաջ չէր ունեցել. նա չէր ենթադրել այն պարզ հաւանական բանը, թէ գուցէ երիտասարդն էլ յետ դարձած իրան է նայում, նա զգաց իր սարսափելի սխալը, բայց արդէն ուշ էր. նրանց հայեացքները մագնիսական ուժով իրար հանդիսեցին, Մարօն գողաց ոտից ցգլուխ, ցնցուեց այնպէս, որ կարծես մէկը ծանր հարուած իջեցրեց նրա գլուխն, շշմեցրեց նրան և նա այնպէս թափով շուռ եկաւ, այն աստիճան յուղուեց ու վախեցաւ, որ կուժը ձեռքից բաց թողեց, որ վայր ընկաւ, վշուր-վշուր եղաւ նրա ստների տակ, նախապէս ողողելով նրա թիկունքն ու մազերի հիւսերը: Խեղջ աղջիկը քիչ մնաց բարձրածայն լաց լինէր. ասկա առանց ուշք դարձնելու, որ իրան նայող կայ, ամօթից և երկիւղից ստների տակ գետին չը զգալով՝ վազեց դէպի տուն:

—Սա ի՞նչ բան էր, Տէր Ասաուած. ախր ի՞նչու չարը կապեց ինձ և ես յետ նայեցի, մըմնջում էին նրա շրթունքները. վազը՝ միւս օրը ամքողջ գիւղի բերնում ծամոն կը դառնամ: Ծխուր, գունատ, չնչակտուր նա տուն հասաւ:

—Մարծ ջան, ի՞նչ է պատահել, վրայ պրծաւ հայրը, ի՞նչու ես գունատ, կուժդ ուր է, շունչդ ի՞նչու է կտրում, վազել ես, փախել ես...

—Զէ հայրիկ, չեմ փախել, ոչինչ չը կայ, ոտքս սոթ տուեց, կուժս ընկաւ կոտրուեց, մի փոքր վախեցայ:

—Դրա համար ի՞նչու էիր վախենում, հողիս, չես իմանում որ «կուժը ջրի ճամբին կը կոտրուի», ասաց

հայրը գրկելով դողդողացող Մարօի սիրուն զլուխը և
կրծքին սեղմելով նրան:

Հասաւ գիշերը. Մարօն անկողին մտաւ, բայց բու-
նը երկար ժամանակ հեռու էր փախչում նրանից: Նա
փախում էր աչքերն աշխատելով ընել իղուր. ձորա-
կում պատահածը նրան հանգիստ չէր տալիս, Մուռօի
պատկերը նրա առաջն էր, չը նայելով՝ որ ինքը չէր
կամենում նրան տեսնել, աշխատում էր ուրիշ բանի
մասին մտածել, հեռացնել իր գլուխոց այդ պատկերը.
ի զուր, ի զուր. Մուռօն նրա առաջն էր... Ուշ գիշեր
էր, բայց նա դեռ անկողնի մէջ չարչարւում էր, մինչև
որ յոդնած միտքն ինքնամուռացութեան մէջ ընկաւ.
Ահա նա դարձեալ ձորակումն է. յանկարծ ժայռերի
տակից դուրս են գալիս մի խուճք գեեր, մեծ, հսկայ
հրէշներ, սե, սարսափեցի: Նրանք վրայ են վագում,
Մարօն բոլոր ուժով փորձում է սարն ի վեր փախչել,
բայց սոները չեն հնազանդւում, ծնկները ծալւում են.
Նա աշխատում է ճշալ, օգնութիւն աղաղակել, ի զուր,
ձայնը դեռ կափարփից դուրս չեկած, մարում է. ահա
մի զարհուրելի դե ամենից առաջ հասնում, գրկում է
նրան, վրայ են հասնում նաև միւսները, վերցնում են
նրան և տանըւմ... տանըւմ են... ուր, Մարօն այդ
չի կարողանում իմանալ, միայն գիտէ, որ շատ հեռու
են տանըւմ: Նա աշխատում է գոնէ չը տեսնել գեերի
դէմքերը, սարսափելի են. մի անդամ նայեց միայն,
նրանք ժպտում էին զզուելի երախներով, արիւնոտ
փրփուր, սուր, սուր ժանիքներ... և Մարօն փակեց աչ-
քերը այդ ժպտակոց փրկուելու համար: Նրան տանըւմ
են, տանըւմ են... Մարօն մէկ էլ բացեց աչքերը և մի
զարմանալի բան տեսաւ, երկնքից կատաղի թռիչքով
ցած է սաւառնում մի մեծ, շատ մեծ, հսկայաթե ար-
ձիւ. Նա իր սուր ճիրանների մէջ բռնած ունէր ինչոր
փայլուն բան. արծիւն այդ փայլուն բանով հալածում
է հրէշներին և խելով նրանց ձեռքից Մարօին, դնում
է իր թեւերի վրայ և նրանք սլանում են գեր, վեր:

Մարօն այժմ աւելի է սարսափում, նրանց ոտների տակն են մնում լեռ, ձոր, գաշտ, անտառ։ Ահա վերջապէս նրանք անցնում են իրանց դիւղի վրայով։ Մարօն տեսնում է իրանց խրճիթը, շատ մօտ են, որ ծըւայ, հայրը կը լսի, բայց իր ձայնը չի դուրս դալիս, Մարօն նոյն իսկ տեսնում է, թէ ինչպէս հայրը բակում կանգնած արտառում է, բայց վերև չի նայում։ ախ, որ նայէր, կը տեսնէր, նա նորէն փորձում է ճշալ, կանչել, բայց յանկարծ արծիւը խօսում է Մուսօի ձայնով, Մարօն զարմացած հարցնում է.

—Դու Մուսօն ես։

—Հա, ի հարկէ Մուսօն եմ, էլ ով կը տանէր քեզ։

—Ապա ինչո՞ւ ես այդպէս։

—Ի՞նչ եմ։

—Ախր Մուսօի պէս չես. տես թեերգ...

—Այդ վկաս չունի, ես Մուսօն եմ։ Կ'ուզես երգեմ։

—Երգեմ։

—Հա։

—Չէ, մի երգի, ասա, մենք ուր ենք թռչում, ուր ես տանում ինձ։

—Քեզ ի՞նչ, չես ուզում ինձ հետ գալ։

—Քեզ հետ... ախր այսպէս վերից լաւ չէ, ես վախենում եմ։

—Կ'ուզես ցած ձգեմ քեզ։

—Չը ձգես, ցած իջեցրու ինձ կամաց, ես վախենում եմ այսպէս։

—Մի վախեցիր, չեմ ձգի, ահա հասանք, այ այնտեղ ցած կ'իջնենք, այնտեղ համաց։

Արծիւը ցոյց տուեց մի ծով, որ հեռու մշուշի մէջ փայլում էր։

—Ծովի մէջ, հարցրեց Մարօն զարհուրած։

—Հա, ծովի մէջ։

—Ախր ես կը խեղդուեմ։

—Չես խեղդուի, ես հետդ եմ։

Նրանք հասան ծովին, արծիւն սկսեց արագութեամբ ցած իջնել, արդէն շատ մօտ են ջրին. ծովը կատաղած է, փրփրուն ալիքները լեռներ կազմած գոռումքոչումով զարկւում են իրար, Մարօն դողում է սարսափից, բայց նրանք իջնում են, իջնում են. ահա ալիքների ցայտումները թրջում են Մարօնի դէմքը, էլլի մի րոպէ և նա ալիքների մէջ կը լինի: Սոսկումը իսպառ պատում է Մարօն, և նա վերջին ճիղերը հաւաքելով սաստիկ ճշում է:

Մարօն վեր թռաւ, զարթեց, նա յօգնած էր ու քրթնաթոր. աչքերը բաց արեց, խրճիթ խաւար էր առաջուայ պէս, տեսածը երազ էր: Դարձեալ ձորակը պատկերացաւ նրա աչքին, դարձեալ Մուսօն իջնում էր գերանդին ուսին, ինչ սիրուն էր... ականջ դրեց, հայրը խորը քնի մէջ ընկղմած՝ խոմիում էր: Յանկարծ մի տարօրինակ միտք անցաւ նրա գլխով, նա հետաքրքրուեց իմանալ, թէ ինքն ինչպէս կ'ասի՝ «Մուսօ», և վերմակը գլխին ձդելով՝ կամացուկ փափսաց՝ «Մուսօ, Մուսօ, Մուսօ». ինքն ասաց, ինքը լսեց, ինքն էլ սարսափից. դարձեալ սովորական ախորժելի սարսուռն անցաւ նրա մարմնով. ինչ գուրեկան, որքան քաղցր հնչեց «Մուսօ» անունը նրա ականջին... նրան թուաց, թէ Մուսօն իր մօտն է, այս տան մէջ և կծկուեց վերմակի տակ. նա նոյն խոկ ինչ որ փափսուկ լսեց, կարծես իր անունն էր հնչում; նա զլուին աւելի խոր թաղեց վերմակի տակ. երեակայութիւնը խաբում էր նրան, հայրն էր դարթել և տուաւտեան ազօթքն էր մրմնջում ամբողջ աշխարհի և իր Մարօնի համար: Հաւերը խօսեցին, լոյսը բացւում էր, եկեղեցւոյ զանգակը հնչեց և Սհօն վերկենալով ժամ գնաց:

Անցան օրեր և շաբաթներ, անցան և բաղմաթիւ անքուն գիշերներ: Մարօն այլ եւս չէր կարողանում մոռանալ իր կուժն ու նրա հետ կապուած արկածը: Գիշեր թէ ցերեկ, քուն թէ արթուն նա երեակայութեամբ շարունակ ձորումն էր և Մուսօն էլ իբր թէ ցած էր

իշնում ձորի լանջից Եւ երբ այնուհետեւ նա ջրի էր գնում, ակամայ կանգ էր առնում սափորի կոտրուած տեղը և մի թեթեւ ժպիտ խաղում էր այդ ժամանակ նրա դէմքի վրայ: Այդ տեղը նրա համար մի ուխտատեղի գարձաւ հաճելի էր նրան անցել այնտեղից, դիտել սափորի կտորները... օ, ինչպէս սիրով նա կը հաւաքէր այդ նիշն բեկորները և կը պահէր... ինչու, այդ ինքն էլ լաւ չը գիտէր: Նա գիտէր միայն որ մինչև այսօր շատ երիտասարդներ էր տեսել, ոմանք նոյն իսկ հետամուտ էին եղել նրան, բայց ոչ ոք այնպէս չէր յուղել նրան, ինչպէս Մուսօն: Այդ երդիչ երիտասարդը լցրեց նրա սիրտը մի այնպիսի զգացմունքով, որպիսին նա գեռ երբէք չէր զգացել. դա մի զգացմունք էր, որ և՛ տանջում էր նրան, և՛ հաճելի էր. այդ զգացմունքն էր խլում նրա քունը, պաշարում միտքը տարօրինակ երազներով և մեխում նրա աչքերի առաջ Մուսօն պատկերը:

Ամեն անդամ, երբ այդ մտքերն անցնում էին նրա գլխով, սիրտն ոկտում էր արագ-արագ բաբախել, վառ կարմրութիւնը պատում էր նրա այտերը: Այնուհետեւ վախվախելով, դադարագողի էր իշնում ձորակը: Նրան թւում էր, թէ ահա որտեղից որ է, Մուսօն կը յայտնուի մի բարի, մի մայառի, մի թմբի տակից, կամ հեռուից կը լսուի նրա սիրուն ձայնը: Նա այդ ժամանակ և՛ ուզում էր նրան տեսնել և չէր ուզում: Անցան դարձեալ օրեր և աղջկայ յոյսերն ի գերեւ անցան, Մուսօն չը կար ու չը կար:

Մուսօն էլ մտքերի ծովն էր ընկել: Չորակի անցքն այնքան անսպասելի, այնպէս տարօրինակ էր Մուսօն համար, որ ամբողջ շաբաթներ էր հարկաւոր մինչեւ նա կարողանար պարզել իր համար իրերի իսկական դրութիւնը: Նա Չոբանենց Մուսօն էր, այդ ինքը լաւ գիտէր, իր չափը ճանաչում էր, նա չէր կարող երեւակայել անդամ, թէ Մարօն, այդ անմատչելի հրեշտակը իրան բաժին կը լինի: Նա վազուց էր տեսել Մարօն, վաղուց

էր սրանչացել նրա տեսքով, բայց ամեն բանում համեստ եղաւ, հազիւ նա թոյլ էր տալիս իրանց պատահելու ժամանակ մի վայրկեանով վայելել Մարօի գիւթիչ պատկերի հաճոյքը, այն էլ հեռուից իր և այդ աղջկայ մէջ ծագումով և հարստութեամբ այնքան մեծ անջրագետ էր տեսնում, որ նրա ձեռքն ստանալու մասին չէր մտածում, որովհետեւ յստ չունէր: Բայց ձորակի անցքը նրա աշքերը բացեց, նրան մի հեռաւոր, բայց բաղցը յոյս ներշնչեցին, երազելու համարձակութիւն տուին: Յուսոյ այդ ազօտ նշոյլի առաջ մի հատիկ սեւ ամպ կար, դա այն ենթադրութիւնն էր, թէ գուցէ ձորակում կատարուածը դիպուածի արդիւնք է, գուցէ Մարօն ամենեւին չի էլ մտածում նրա մասին, չի էլ հետարբեում նրանով: Այս անախորժ ենթադրութիւնն էր պատճառ, որ նա վճռեց հետամուտ չը լինել Մարօնն և իր սիրոյ գործը յանձնել ճակատագրին, մինչև որ մի երկրորդ բախտաւոր գիպուած վերջնականապէս համոզի նրան, թէ Մարօի սիրտը պատկանում է իրան: Նա իրեւ նահապետական բարքերի ծնունդ, խիստ կարգերի բովից անցած, օտար աղջկան հերամուտ լինելու համարձակութիւնը չունէր: գիւղը հազիւ է սէր թոյլատրում ամօթի, պատկառանքի սահմաններում, բայց սիրային թէկուզ խիստ անմեղ արկածներ տանել չի կարող: Այս շատ լաւ գիտէր Մուսօն և սպասում էր...

Ահա թէ ինչու Մարօն այլ եւս չէր տեսնում Մուսօնին, այն ինչ ինքը կարծում էր, թէ Մուսօն անպատճառ կ'աշխատի նրան տեսնել: Անցան էլի մի քանի օրեր: Մարօն մօտ էր յոյսը կտրելու, բայց ահա մի երեկոյ Մարօն ձորակում կրկին լսեց նրա ձայնը հեռու դաշտից: Այլպէս էր Մուսօն սովորութիւնը՝ առաւօտեան երգելով դաշտ գնալ և երեկոյեան երգելով վերադառնալ: Մարօն շտապով լցրեց սափորը և աշխատում էր շուտով բարձրանալ Մուսօնն չը հանդիպելու համար: Ժանոթ գոզը դարձեալ անցաւ նրա մարմնով: Ահա նա արդէն դառիվայրի վրայ է, փորձեց շտապել,

բայց ոտները դաւաճանեցին և հակառակ իր կամքի սկսեց յամրագայլ բարձրանալ։ Մուսօն նրան տեսաւ հեռուից, ոյժ տուեց ոտներին և մի քանի րոպէից յետոյ նրա սանաձայնը հասնում էր արդէր Մարօի ականջին։ Աջ ձեռքով սափորը պահճելով Մարօն ձախ ձեռքով սեղմեց կուրծքը, կարծես կամենալով խլացնել սրտի թըրթըռոցը։ Իսկ Մուսօն այդ ժամին միայն մի ցանկութիւն ունէր, մէկ էլ այն հրաշալի աչքերի մէջ նայել։ Մարդկային ոչ մի ոյժ այլ եւս չէր կարող ստիպել Մարօն յետ նայել, այդ գիտէր Մուսօն, ուստի շտապեց, առաջ անցաւ և մի քանի քայլ գնալով՝ գիտմամբ մի քանի անգամ յետ նայեց. վերջին անգամ հաղիւ Մարօն սիրա արեց, աչքերը բարձրացրեց և նրանց հրատապ հայեցքներն իրար հանդիպեցին։

Երկու սիրող սրտերն իրար հասկացան լուսվեամբ։ Նահապետական ընտանիքի զաւակներ էին, իրանց սէրը խօսքով յայտնել չը գիտէին, գատապարտելի էր։ Լեզուն պիտի լուռ մնայ, գիւղական աշխարհում սիրոյ գործը վճռողները, նրա մասին խօսողներն աչքերն ու յօնքերն են և Մարօն ու Մուսօն իրանց աչքերով այդ օրը շատ ասացին, շատ բան խստացան իրար։ Այնուհետեւ իւրաքանչիւր յարմար առիթին, մանաւանդ տօն օրերին, Մուսօն գալիս էր ձորակի գլխին կանգնում, երբ Մարօն յայտնուում էր ձորակում սիրահար երիտասարդը մի այլ կողմից ցած էր իջնում և զիլ երդերով թնդացնում էր շրջակայքը։ Մարօն գանդաղութեամբ էր լըցնում իր կուժը, զգոյշ հայեցքներ էր ձգում գէպի այն կողմը, ուր Մուսօն էր և ապա ժպտագէմ բարձրանում էր ձորն ի վեր։ Մուսօն չէր մօտենում Մարօն, չէր փորձում նրա հետ խօսել, այլ պահապան հրեշտակի պէս հետեւում էր նրան հեռուից, զանազան պատրուակներով յայտնուում էր ձորի բարձրութեան վրայ, կամ ծածկում էր մացաների մէջ, գիտում էր իր սիրելու շարժմունքը, գէմքը, ժպիտը և գոհ էր այսրանով։ Այսպէս անցնում էին օրեր և շաբաթներ, նրանց այս երջան-

կութիւնը ոչնչով չէր խանդարւում; Նրանց սէրն օր ա-
ւուր աճում էր և այդ սէրը յստակ էր, որպէս իրանց
աղբիւրների վճիռ ջրերը:

Մի անգամ միայն գեղջուկ սիրահարներին յատուկ
եղանակով նրանք իրանց սիրային տեսակցութիւնների
միակերպութիւնը խանդարեցին. Մուսօն մի մեծ կար-
միր խնձոր գրեց այնտեղ, ուր կոտրուել էր կուժը և
առաջ անցաւ հէնց այն րոպէին, երբ Մարօն սկսեց
ցած իջնել գէպի ձորակը: Մօտենալով իրան համար այն-
քան նուիրական տեղին, աղջիկը վերցրեց խնձորը, հոտ
քաշեց և պահեց ծոցում. Մուսօն շատ հեռու չէր, Մա-
րօն ամեն բան հասկացաւ:

Բայց ամեն մի բուարարութիւն ստացած ցանկու-
թեանը միշտ հետեւում է երկրորդը. Երկու սիրահարնե-
րին իրանց սէրային տեսակցութիւնները վերջիվերջոյ
խիստ միակերպ, խշուտ անբաւարար թուալ սկսեցին:
Նրանք երկուսով էլ համարեա միաժամանակ պահանջ
զգացին մի փոքր աւելի մօտենալ իրար, երես առ երես
նայել, մի բառ, գոնէ մի հատիկ բառ արտասանել: Այս
ցանկութիւնը կար, բայց ոչ մէկը սիրու չէր անում միան-
դամ դրուած ուահմանից առաջինը դուրս գալ. տղա-
մարդը համարձակ է. մի օր վերջապէս Մուսօն պատ-
ուեց այդ ամօթխած լուութեան քօղը և մօտենալով
Մարօն շատ ցած ձայնով տսաց.

—Մարօ ջան, այսպէս մինչեւ երբ...

—Հօրս մօտ մարդ ուղարկիր, Մուսօ, շնչաց աղ-
ջիկը և քիչ մնաց ամօթից հալուէր:

Պառաւ Նուբաղն ուրախութիւնից ստքերի տակ
գետին չէր զգում, երբ այս անցքից մի քանի օր յեառյ
զնում էր Սհօենց տուն՝ Մարօի ձեռքը Մուսօի համար
խնդրելու:

—Ուզում եմ քո տան օջաղից մի ճշագ վառեմ;
Սհօ ախպէր, ասաց Նուբարը:

—Ես աղջիկ չունեմ մարդու տալու, վճռական կեր-

պով ասաց ծերունին խոժոռուելով և նուբարը վերադարձաւ տխուր, սիրտը կոտրած:

Իսկապէս Սհօն շատ էլ հաւանում և նոյն իսկ սիրում էր Մուսօթն, մեծ սիրով էլ կը կամենար Մարօիքախոր նրան յանձնել՝ քան թէ մի ուրիշին, բայց և այնպէս մերժեց՝ սոսկ աղջկանից բաժանուելու ճակատագրական անհրաժեշտութիւնն աւելի հեռացնելու համար։ Կ'անցնէին օրեր և եթէ երկրորդ դիմումն լինէր, նա անպատճառ կը զիջանէր, նոյն իսկ այժմ էլ նա փոշմանած էր, երբ մանաւանդ զլիսի ընկաւ, որ իր մերժումը Մարօի սրուով չեղաւ, բայց արգէն ուշ էր, նա չէր կարող յետ կանչել պառաւին, այդ անվայել էր, նոյն իսկ խայտառակութիւն էր, ոչ մի աղջկայ ծնող չի թոյլ տայ իրան այնքան ստորանալ, որ վեսացուին աղջկի առաջարկի։

Եւ Սհօն՝ նկատելով՝ թէ ինչպէս Մարօի դէմքից ժպիտը կորաւ, օր աւուր սպասում էր, թէ նոր խնամախօսը երբ կրկին կը բանայ իր գուռը։

III

Կարգից գուրս նորութիւններով, անօրինակ պատահարներով աղքատ էր Գ... գիւղը Թէե շաբաթ չէր անցնում որ մի գիւղացի սարսափելի ծեծի չենթարկուի կամ բանտ չը նստի, ամիս չէր անցնում որ մէկի անասունները գաշտից չը տարուին, տարի չէր անցնում, որ լեռներից որ և է անմեղի գիտի չը բերէին արիւնաթաթախ, կամ որ և է աղջիկ կամ կին չը փախցնէին, բայց այս բոլորն էլ անօդինակ չէին համարւում այն աշխարհում։ Այս երևոյթները առօրեայ սովորական պատահարների շարքն էին անցել և առանձին հետաքրքրութիւն չէին զարթեցնում։ «Անցածն անցած է», կրկնում են գիւղացիք մի այդպիսի դէպքից յետոյ և գլուխ քաշ ձգած՝ գնում գործի։ Շատ անգամ քաղցած բէդերն էին հիւր լինում, բայց անկոչ հիւրերի

դալուստը կարծես չէր խանդարում գիւղական կեանքի
միակերպութիւնը:

Մի անդամ միայն Գ... գիւղում մի հետաքրքիր
տնձնաւորութիւն յայտնուեց և ընդհանուրի ուշադրու-
թեան և խօսակցութեան առարկան գարձաւ: Այդ մար-
դը մօտ քառասուն տարեկան էր, կորացած մէջքով,
նիհար, լսիրչ երեսով, որ իր վրայ կրում էր քաղաքա-
յին զեղս կեանքի, ազատեղի շրջանների, անառականոց-
ների, հարբեցութեան կնիքը: Նրա փոքրիկ, պլստան
աչքերի իւղոտ փայլը, խորամանկ արտայայտութիւնը
զզուելի էր և գժուար էր առանց նողկանքի նայել նրա
երեսին, մանաւանդ որ քթի ծայրն ու վերին շրթուն-
քի մի մասն էլ կտրուած էր և մի խոշոր սպի լրա-
ցնում էր այդ գէմքի այշանդակութիւնը: Հնամաշ, իւղոտ
սերտիւկի վրայ նա հատած ունէր տաճիկ գեներալի մի
նոյնքան հնամաշ վերարկու, գեղին կոճակներով: Գլխին
կրում էր մի խունացած ֆէս նոր վնջով: Քաղաքացի
չէր նա, այլ Գ... գիւղի զաւակն էր, նրան էլ շատ տա-
րիներ առաջ այդ խղճուկ գիւղն էր ծնել, բայց այժմ
նա այնքան այլափոխուած, այնպէս այլանդակուած էր,
որ գիւղը գժուարանում էր ճանաչել իր զաւակին: Նա
տարօրինակ էր, ահա թէ ինչու ընդհանուրի ուշա-
դրութեան առարկան գարձաւ:

Մարդիկ այդ օրը վափալով ու հեգնութեամբ
հաղորդեցին իրար, թէ քաշալ Սրբէն եկել է: Հին հին
յիշողութիւններ էին վորփրւում, մի ամբողջ անցեալ
էր մէջ բերւում, մինչեւ որ շատերը կարողանում էին
յիշել բաշալ Սրբէին: Ախր քանի՛ տարի էր, որ նա ըլ-
կար, մօտ քսան և հինգ տարի, մի ամբողջ կեանք է
և ով էր կաշծում, թէ նա մէկ էլ կ'երեայ, այնքան
բաներ էին լսել նրա մտսին... Երբ տուացին անդամ նա
երեաց գիւղի հրապարակում, մի ծերունի ասաց գլու-
խը թափահարելով.

—Հայ գիտի, քո տունն աւերուի, Յակօ, դու էլ մի

որ ուրախացար, ասիր տղայ ունեցայ, օջաղս չէն ու պայծառ կը պահի, թաղեմ էս տղան համ...

Յակօ, որքան արտասուզ, որպիսի վշտոտ պատմութիւն էր կապուած այդ անուան հետ։ Նա էլ իր ժամանակին մի մարդ էր, մի տուն էր, մի օջաղ էր, կին ունէր, զաւակների տէր էր. երկու աղջիկ ու մի տղայի աղմուկն ու ճիշը լցնում էր նրա խրճիթը, երկինքը հաշտ էր նայում վերևից։ Տղան Սրբէ էր կոչւում, մանկական հասակում գլխի հիւանդութիւնը զրկել էր նրան մազերից, այն ժամանակից նրա անուանը կցուել էր «քաշալ» մականունը. Սրբէն քաշալ էր, բայց և այնպէս Յակօի տղան էր, նրա օջաղի ճրագն էր. Յակօն սիրում էր նրան։ Յակօն ապրում էր իր համար, լաւ չէր առում, վատ էր ապրում, բայց ապրում էր, արև ու աշխարհ էր տեսնում, կեանք էր վայելում, Աստուծոյ տուածով գոհ էր և չէր տրանցում. շատերից մէկն էլ նա էր...

Բայց մի անգամ ճակատագիրը խեթ նայեց նրան. Յակօն մի գիշեր ազօթեց և անմեղ պառկեց ու քնեց, իսկ միւս առաւօտը մեղաւոր արթնացաւ. Նա այդ գիշեր թէև հանգիստ ու խաղաղ իր խրճիթում քնած, բայց մի «զարհուրենի ոնիր էր զործեր»—«Նա սպանել էր հարեւան ֆիւրդ զիւլի բէզի չորս եզր»։ Թէ ինչպէս էր կատարուել այդ յանցանքը, Յակօն ամենսկն չէր իմանում; բայց վերջիվերջոյ նրան հասկացրին իր յանցանքը։ Բէզի եզները այդ գիշեր տիրոջ բակից դուրս գալով՝ դաշտ էին դնացել և մոռել էին Յակօի թարմ առւոյտի մէջ, մինչև լոյս արտը տրորել, կերել էին և լուսագէմին կուշտ ջուր խմելուց յետոյ՝ ուռել էին և սատկութել հէնց առւոյտի մէջ։ Նոյն առաւօտ բէզը Գ... գիւղն եկաւ իր հետեւրդներով, կանչել տուեց Յակօն և ասաց.

— Իմ եզները տնիր, Փլան։

— Ի՞՞նչ եզ, բէզ. Հարցրեց զարմացած Յակօն, որ անտեղեակ էր անցքին։

— Ի՞նչ եղ... իբր թէ չես հասկանում: իմ չորս եղը,
որ քո առւոյտի մէջ այս գիշեր սատկացրել ես:

— Ե՞ս... Աստուած է վկայ, բէդ, ես ոչինչ չը գիտեմ:

— Մի՞թէ միևնոյն չէ, դու ես սպանել, թէ քո
առւոյտը. այ լսիր, եղները գիշերը ըս առւոյտն արա-
ծել են և սատկել, ուրեմն դու ես սպանել:

— Բէդ, գլխիդ մեռնեմ, բայց չէ որ քո խուլամներն
են քաց թողել եղները. որ լաւ պահէին, դուրս չէին
երթայ, ես ինչ անեմ, խօմ քո...

— Զայնդ, շուն անպիտան, գեռ խօսում էլ է,
ճչաց բէդը ապտակելով նրան, թնդ այնտեղ առւոյտ չը
ցանէիր. եթէ ցորեն, կամ գարի լինէր ցանուած, եղ՝
ները կը սատկէին, համ, ասա, կը սատկէին:

Յակօն լոեց. նա զգաց իր յանցանքը, հասկացաւ,
որ յիրաւի եթէ այնտեղ առւոյտի փոխարէն ցորեն
կամ մի այլ քան լինէր ցանած, այդ ուել չէր գայ իր
գլխին:

— Ասա, կը սատկէին, շարունակեց որոտալ բէդը:

— Չէ, չէին սատկել, դողդողալով պատասխանեց
Յակօն:

— Տեսնում ես, որ գնւ ես մեղաւոր, դու ես սատ-
կացրել եղները, թնդ ուրիշ քան ցանէիր մեր գիւղի
մօտ, դու այդ գիտմամբ ես արել: Տնկը եղներա:

— Բէդ, բայց վերև Աստուած կայ, եաման խնայիր,

— Տուեք գեաւուրին:

Հետեւորդները վրայ պրծան կատաղած չների պէս
և Յակօին թակելով տարան: Դատարանն արդար ճա-
նաչեց բէդի պահանջը: Յակօն քանտ դրուեց, մինչև որ
վճարի չորս եղան գինը՝ քսան և հինգ ոսկի, մի գու-
մար, որ Յակօն երազել չէր կարող:

Քաշալ Արքէն այդ ժամանակ տասնեւիեց տարեկան
էր: Հարևանների խորհրդով նա պանդխտութեան դա-
ւաղանը ձեռք տուաւ և գնաց մեծ քաղաքներում աշ-
խատելու, որ բերի հօր պարտքը վճարի և նրան քան-
տից ազատի:

—Տեսանք, ասում էին իրար դիւզացիք, երբ Սրբէն ճանապարհ ընկաւ, Աստուած ցաւը տուել է, ճարն էլ հետն է տուել. թէ պատահմունք էր, եղաւ, Յակօն բանտ գնաց, բայց Աստուած պահի տղան, ահա գնաց աշխատելու, կը բերի, հօրը բանափից կ'աղատի. վանք քեզ Աստուած, դու արդար ես:

Անցան տարիներ։ Սրբէից ոչ մի լուր չը կար: Խեղճ Յակօի ոսկորները մաշուեցին բանտում, այնտեղ էլ նա հոգին փչեց, անտեր ու սոված թողնելով կնոշն ու երկու աղջիկներին, որոնցից մեծը տասն, իսկ փոքրը հինգ տարեկան էր: Բեգն իր պահանջի փոխարէն խլեց Յակօի միակ արտը: Գոհարը՝ Յակօի այրին երկար ժամանակ մերթ կուշտ, մերթ սոված իր որբուկների հետ ծուարեց իր կիսաւեր խրճթի մէջ, յուսալով մի կերպ քաշ առաջ իր ողորմելի գոյութիւնը. բայց վերջիվերջոյ տեսնելով՝ որ այդպէս շարունակել անհնարին է, երկրորդ անգամ յանձն առաւ ամուսնանալ իր որբերին սովից փրկելու համար: Խորթ հայրն սկզբում սիրով ընդունեց երկու աղջիկներին և խնամում էր զաւակների պէս, բայց ժամանակի հետ նրա վերաբերմունքը փոխուեց, նրանք աւելորդ բեռը նկատեցուին, կերածները աչք եկաւ, միւս երեխաներն էլ սկսեցին նրանց յաճախակի ծեծել, անից դուրս խրկել, կերակրից զրկել: Քիչ չէր պատահում, որ երկու որբիկները իրար գրկած բաց երկնքի տակ էին գիշերում նոյն իսկ ցուրտ եղանակներին: Այդ այն ժամանակն էր, երբ նրանց մայրը հիւանդ ընկած էր անկողնում: Նրա սիրադր կը ակնում էր տեսնելով իր վատաբախտ զաւակների դառն վիճակը. առանց այն էլ նրա ջարդուած սիրտը այս վերջին հարուածին էլ դիմանալ չը կարողացաւ և նա վշտահար գերեզման իջաւ: Երկու որբերը մնացին գլուխովին որբ—նրանք այժմ անպաշտպան մուրացիկներ էին:

Այդ ժամանակ միայն մարդիկ յիշեցին այս թըշ ուառներին: Գտնուեց մէկը Մոխսի Փանօն, որ վերցրեց

նրանց և պահում էր իր «վարձի» համար։ Որբերից փոքրը նոյնպէս չապրեց երկար, ծանր զրկանքները քայշայել էին նրա քնքոյշ կազմուածքը և նա շուտով թռղեց այս գառն աշխարհը և հետեւեց իր վատաքախտ ծնողներին։ Մնաց մեծը, բայց սրտ ճակատադիրն աւելի սև եղաւ։ Երբ նա հասած աղջիկ էր արդէն, Փանօի քիւրդ հովիւը ձագօն, իր երկու ուրիշ լնկերների հետ նրան բռնի խլեց ու փախցրեց։ Յակօի օջաղը մարեց։

Քաշալ Սրբէն չը կար ու չը կար։ Նա շարունակում էր մնալ քաղաքներում։ Քաղաքային կեանքին նա հեշտ ընտելացաւ, նուիրեց իրան անառակութեան, մոռացաւ հօրն ու նրա ցաւերը, մոռացաւ մօրն ու քոյրերին։ Նրան կարելի էր տեսնել մերթ իբրի սրճարանների ծառայ, մերթ քարվանսարայի «օդաբաշի», մերթ այս ու այն թուրքի տանն ստոր և գաղտնի յանձնարարութիւններ կատարով և մերթ էլ իր նման սրիկանների հետ գինետներում ու անառականոցներում, ուր նա վատնում էր արդար կամ անարդար ճանապարհով ձեռք բերած մի քանի կուպէկները։ Վերջին տարինները նրա առաջ գործունէութեան մի բոլորովին նոր ասպարէղ բացուեց։ Նրան կարելի էր յաճախ տեսնել «փօլիս» էֆէնդու դռանը, կամ զափթիանների հետ շրջելիս։ Շատ երիտասարդներ նրա յուցմունքով բանտ նստեցին և մեծ փրկանքով դուրս եկան, կամ իսպառ թշուառացան։ Լուրեր էին պտառում նոյն իսկ, թէ նա իսլամութիւն է ընդունելու՝ մի մեծ դումար ձեռք ձգելու համար։ Քաշալ Սրբէն հետպհետէ լսեց իր ծնողների մահը, քոյրերին վրայ հասած աղէսաները, բայց աշխատեց անգէտ ձեւանալ։ Կեանքի հեշտ ճանապարհը նա գտել էր, մատնութիւնը նրա համար լաւ ապրուստի միջոց էր, վաստակլ մեծ էր։

Բայց մի անգամ բախտը երեսը շուռ տուեց նրանից։ Մի գիշեր խաւարի մէջ ատրճանակի մի գնդակ սողաց նրա դէմքի վրայով, անմեղ զոհերը հաշիւ էին պահանջում դահճից։ Հարուածը մահացու չեղաւ, միայն

զոհ գնաց նրա քթի ստորին մասը և վերին շրթունքը։ Սրբէն սարսափեց։ Նա զգաց, որ այս մի փորձին հետեւելու է երկրորդը, և նոյն իսկ երրորդը, մինչեւ վերջ դրուի իր զազիր կեանքին։ Պէտք էր խոյս տալ այդ վտանգաւոր դարձած վայրերից, ուր ամենքը ճանաչում էին նրան։ Բայց ուր փախչել, ուր ծածկուել։ Այդ նեղ ժամին նա յանկարծ յիշեց իր հայրենի գիւղը և մի օր անյայտացաւ քաղաքից։ Գ... գիւղի անառակ զաւակը յետ եկաւ իր հոգու առաքինութիւնները վատնելուց յետոյ, եթէ ունեցել էր, բայց առանց ապաշարութեան։

Գիւղում նա ամենքին հաւատացնում էր, թէ քաղաքում լաւ սրճարան ունի, թէ եկել է մօրն ու ըոյրերին տանելու, որոնց հասած գժբախտութեան մասին իբր ինքը տեղեկութիւն չունէր և թէ գիտէր միսյն հօր մահը, որին ինքը հակառակ իր բոլոր ջանքերին օդնել չը կարողացաւ։ Առաջի օրերում նա նոյն իսկ իրան խորապէս վշտացած էր ցոյց տալիս, մանաւանդ՝ քրոջ առեւանգուելու համար։ Բայց յետոյ ի զարմանս գիւղացիների, նա պատրաստուեց գնալ, ինչպէս ինքն էր ասում, «Փեսային» և քրոջ տեսութիւն։ Եւ արդարեւ նա գնաց, գտաւ նրանց, մինչև իսկ «զալան» պահանջեց քրոջ համար։ Գիւղացոց զզուանքին ու զայրութիւն չափ չը մնաց, երբ իմացան այս բոլորը։

Ամենքն էլ երես դարձրին նրանից։ Սրբէն այդ զգում էր։ Արդէն գիւղական կեանքը մօտ էր նրան ձանձրացնելու, երբ մի օր յանկարծ տեսաւ Մարօին։ Իմանալով որ հարուստ հօր մի հատիկ ժառանգ է այդ գեղեցկուհին, նա մտածեց ամեն ճիգ գործ դնել, ամուսնանալ նրա հետ և հօր հարստութեան տէր լինել։ Ի՞նչ անենք, որ ինքը քաշալ Սրբէն է, ողորմելի Յակօի տղան, բայց նա այժմ քաղաքից է գալիս, լաւ խօսում է տաճերէն, վրան մարդավարի շօրեր ունի, մի խօսքով էֆէնդի է, միթէ Մարօի ձեռքը կը մերժեն նրան, կամ միթէ Մարօն հենց ինքը բախտաւոր չի համարի իրան

նրա կինը գառնալով։ Այսպէս էր գատում Սրբէն և մի օր Սհօի տունը մտաւ և Մարօի ձեռքը խնդրեց։ Սհօն զայրոյթով դուրս փռնտեց նրան. նահապետական գիւղացու վրայ զզուելի տպաւորութիւն թողեց քաղաքի խեղկատակը։

Քաշալ Սրբէն չը յուսահատուեց, նա մտածեց աղջրկան հետամուտ լինել, գրաւել նրան իր պալտով ու ֆէսով, սիրտը վաստակել և այս ճանապարհով նպատակին համեր։ Եւ Սրբէն սկսեց։ Այս բանը պատահեց ճիշտ այն դէպքից յետոյ, երբ Սհօն մերժեց Մարօի ձեռքը Մուսօին տալ։

Մուսօն երեւակայել անգամ չէր կարող, թէ այդ քաշալը սիրտ կ'անի աչք բարձրացնել Մարօի վրայ, ուր մնաց թէ նրան հետամուտ լինի։ Բայց ինչե՛ր չեն պատահում աշխարհում. նա յանկարծ իմացաւ, որ Սրբէն նոյն իսկ Մարօի ձեռքն է խնդրել։ Թէեւ նրան մերժել էին, բայց միմիայն այդ յանդզնութեան համար նա պատրաստ էր կոկորդը ծամելով նրա զզուելի դլուխը բաժանել մարմնից։ Սակայն այդ գեռ քիչ էր. Մուսօն շուտով նկատեց, որ Սրբէն յաճախակի շրջում է ձորակում և յատկապէս այն ժամերում, երբ Մարօն այնտեղ էր լինում, կասկած չը կար, որ նա հետեւում էր Մարօին։ Մի օր մանաւանդ՝ նա մի այնպիսի բան տեսաւ, որ այլ եւս համբերել անհնարին էր։ Առաւօտ էր, Մարօն իր մի ընկերուհու հետ վերադառնում էր ազբրից. յանկարծ նրանց առաջ յայտնուեց Սրբէն, և առաջին աղջկանից անցնելով Մարօի առաջը կտրեց։ Աղջիկը անծանօթի առաջ շփոթուած ինչ անելը չը գիտէր, մինչեւ Սրբէն աւելի մօտեցաւ, ինչոր փսփսաց և իր ձեռքը համբուրելով ճակատին դրեց։ Մարօն սարսափած փախաւ նրա առաջից։ Նոյն րոպէին Մուսօն մի քանի ոստոյնով Սրբէի առաջը կտրեց։

—Հը՛, քաշալ Սրբէ, ինչ ես ամեն օր այս տեղերում հոտոտելով թափառում, ասաց նա հրացայտ աչքերով և բռունցքները սեղմած։

— Եֆէնդըմ, քեզ բան արի, պատասխանեց Սրբէն գոռողաբար, ես այստեղ զբօնում եմ:

— Ես զբօնել, բան չը դիտեմ. լսիր քեզ ինչ եմ ասում. եթէ մէկ էլ համարձակուել ես այստեղերում երեալ, հաւատա քաջալ գլուխդ կը կոտրեմ, մանաւանդ՝ եթէ քեզ տեսնեմ առաւատներն ու երեկոները:

— Առաւատներն էլ կը գամ, կէսօրին էլ, իրիկունն էլ. քեզ ի՞նչ, էֆէնդըմ. ձորը խօմ քոնը չէ:

— Ձորը իմը չէ, բայց այստեղ մէկը դալիս գնում է, նա իմն է, քեզ ասում եմ այստեղ մի արի:

— Ես կը գամ, ինձի Սարգիս էֆէնդի կ'ասեն:

— Կը գամ,

— Կը գամ:

— Դէ, առ քեզ «կը գամ», ասաց Մուսօն մի ծանր ապտակ տալով երեսին:

Քաջալ Սրբէն փորձեց պաշտպանուել, բայց առողջ յաղթանդամ գիւղացու հզօր բազուկներին դժուար էր դէմ գնել, ուստի նա փախաւ իր բոլոր զայրոյթն ու անզօր վրէժինդրութիւնը թուրքերէն մի լսկիրշ հայհոյ-անքով դուրս թափելով:

IV

Քաջալ Սրբէն գնաց սաստիկ զայրացած, ատամ ները կրծտելով «Այսպէս էլ բան. մի վայրենի, մի դիւղացի արջ՝ Սարգիս էֆէնդու վրայ ձեռք բարձրացնի, անարգի»: «Քաջալ Սրբէ» էր ասում ինձ. կեցիր, անասուն, միթմիթում էր նա ճանապարհին բռունցըները թափ տալով, կեցիր և տես ի՞նչ կ'անեմ քեզ»: Նա սպառնում էր. բայց իրօք ի՞նչ պիտի անէր, այդ ինքն էլ չը դիտէր: Սեփական պատուի, անարգանքի համար իր անձը վտանգի ենթարկելու քաջութիւնից զուրկ էր նա. «այդ յիմարութիւն է, ասում էր նա, այնպէս պէտք է վրէժխնդիր լինել, որ քեզ ոչինչ չը պատահի և եթէ հնար է, նիւթական շահ էլ ունենաս»: 0՝, եթէ

այս բոլորը քաղաքում պատահած լինէր, նա ի՞նչ հեշտութեամբ Մուսօխն բանտ կը նստացնէր իբրեւ «կօմիտաշի», իսկ այժմ... այժմ բոլորովին ուրիշ բան պէտք էր մտածել: Եւ նա մտածում էր:

Մինչ այս մինչ այն, պառաւ նուբարը չոքեց քահանայի առաջ, նրա ձեռք ու ոտքը ընկաւ, որ մի ճարանի Սհօխ սիրտը կակացնելու համար: Մի քանի օրից յետոյ բարի քահանան օրէնեց երկու սիրահարների նշանը: Գիւղացիք ուրախացան, Սհօն աւելի լաւ ընտրութիւն անել չէր կարող: Կատաղեց միայն Սրբէն: Հակառակորդի այս յաղթութիւնը եւս աւելի բորբոքեց նրա վրէժինդրութիւնը, հազար ու մի ծրագիրներ անցան նրա փոքրիկ գլխով, բայց ոչ մէկի վրայ կանգ առնել չէր կարողանում և չը կար մէկը, որ նրան խորհուրդ տար, առաջնորդէր իր վտանգաւոր ձեռնարկութեան մէջ: Այս նեղ ժամին նա յանկարծ յիշեց ձազօխն, իր «փեսային»: Նա ժամաց, շփեց նեղ ճակատը, բախտաւոր միտք ծագեց նրա գլխում: Սրբէն անյայտացաւ գիւղից:

Ո՞ւր գնաց նա, այդ չիմացան գիւղացիք, և չը հետաքրքրուեցին էլ իմանալ, միայն մի օր յետոյ նա ձազօի վրանումն էր և դիշերն այնտեղ հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ փեսայի և աներձագի մէջ.

— ձազօ, քո օդնութեանն եմ կարօտ, ես խաթրունեմ քեզ մօտ, ասաց Սրբէն:

— Ի՞նչ ես ասում, Սրբէ, գլուխս չեմ ինայի քեզ համար, պատասխանեց կեղծաւոր քիւրդը:

— Մեր գիւղի Սհօխ աղջկան տեսել ես:

— Հա, տեսել եմ շատ առաջ, մի սիրուն փոքրիկ աղջիկ էր: Ի՞նչ է, չը լինի թէ ուզում ես առնել, չեն տալիս:

— Ուզեցի, չը տուին, այժմ արդէն ուշ է, ուրիշի վրայ նշան են դըել:

— Ամենեին ուշ չէ: Ի՞նչ վսաս, որ նշան են դըել,

պսակած էլ լինի, կը փախցնենք, եթէ կամենաս։ Ճազօն աչքի մազ կարող է փախցնել։

Սրբէն փախցնելու մասին ամենեւին չէր մտածել, ինքը բոլորովին այլ ծրագիր ունէր. Ճազօն աւելի խելացի է... փախցնել... ի՞նչ սիրուն բան կը լինի։ Մի բոպէ նա մոտածմունքի մէջ ընկաւ, երևակայութեան առաջ պատկերացաւ Մարօփ սիրուն պատկերը. ինչ և լինի, տէր դառնալ այդ պատկերին... բայց յանկարծ այս բանը նրան անհնարին թուաց։ Փախցնել... բայց ուր, ի՞նչպէս ծածկուել, չէ որ իրան հետաքրքրողը միայն Մարօն չէր. հապա նրա հօր հարստութիւնը, ի՞նչպէս կարող էր ձեռք գցել այն, ի՞նչպէս կարող էր գիւղ դառնալ. գիւղացիք, Մուսօն, մանաւանդ Մուսօն, սրանից ամենից աւելի էր փախենում Սրբէն. նրա հարուածները տեսել էր։ Մնում էր փախցնել Մարօփն և յաւիտեան քրդերի մէջ մնալ, նոյն իսկ քրդանալ. ի՞նչու, ի՞նչպուտ, երբ հնարաւոր չի լինի Սհօփ ժառանդը դառնալ։

—Ո՛չ, Ճազօն, ես փախցնել չեմ ուզում. այդ աղջիկն ինձ հարկաւոր չէ։ Նրա նշանածը, Զորանենց Մուսօն, ինձ թակեց, նրանից վրէժինդիր լինել եմ ուզում, թող այդ աղջիկը նրան բաժին չը լինի, խլենք այդ աղջիկը նրանից, տանք մի այնպիսի մարդու, որից մի բան էլ մենք շահուել կարողանանք։

Մտածելու հերթն այժմ Ճազօփնն էր. նա մի քանի բոպէ լուռ մնաց։

—Ապրես, Սրբէ, լաւ բան միտքս բերիր, այդ աղջիկը մեր Հիւմնի բէգին շատ լաւ ընծայ կը լինի. բէգը ձեր երկսից էլ լաւ է, դէ մենք էլ մի բան կը խփենք, երեւի մի քանի ոսկի էլ ինձ ու քեզ բաժին կը հասնի։

Սրբէի դէմքը պարզուեց, նա ձեռները շփեց, տրորեց, կարծես պատրաստում էր ոսկիներն ընդունել։ Միւս առաւօտ Ճազօփ վրանից երկու հօգի հեռացան, Սրբէն դէպի Գ. գիւղն եկաւ, իսկ Ճազօն գնաց դէպի Սիպանայ սարը։

Այնտեղ՝ ուր բարձրացնում են իրանց մշուշապատ գագաթները Սիպան, Ծաղկեայ և Նեմրուդ սարերը, որոնց հսկայական ստուերները լեռ ու գաշտ ոտնատակ տալով երեկոյեան պահուն ծարաւած վիշապների պէս ձգւում են դէպի ծովակը, ուր բլրակների և լեռների շղթաները քմահաճաբար իրար են փաթաթւում, որպէս կուփի բռնուած դալարուն օձեր և մերթ բաժանուելով կազմում են բիւրաւոր հովաշատ, կանաչազարդ ձորեր ու հովիտներ, այնտեղ՝ ուր լեռնային՝ ջրերը լիզում են լեռների կրծքերը և նրանց ստորոտներում կազմում են կարկաչիւն վտակներ և մոմուացող լեռնային գետակներ, այնտեղերում վաղուց է իշխում Հիւսնի բէգը իր «Էլիաթով», վաղուց է՝ ինչ այդ դրախտանման վայրերը մարդասպանների, աւազակների բոյն են դարձել:

Անհոգ և ուրախ է ապրում Հիւսնի բէգը, նա մի փոքրիկ անկախ թագաւոր է։ Սիպան ու Ծաղկեայ լեռների առջեւում փուռած, Նեմրուդ լերան ստորոտներում ձգուած հայ դիւղերը, Արծէշի և Ալշաւազի քրիստոնեայ ժողովուրդը վաղուց է, ինչ սովորել է կրկնակի հարկ վճարել—Հիւսնի բէգին և պետութեան։ Աշխատասէր ու խաղաղ է այդ ժողովուրդը։ Հարուստ է երկրը և Հիւսնի բէգը տէր է այդ ժողովրդին, այդ երկրին։ Քանի ձեռներ են աշխատում, որ Հիւսնի բէգն իր ամբողջ էլիաթով կուշտ լինի։

Գարուն էր, Արծիշու սարերի փարթամ գարունը։ Հիւսնի բէգը իր օբաներով գուրս էր եկել «եայլադ»։ Սիպանայ սալրն իր հիւրընկալ կրծքին վայրենի գաղանի հետ միասին օթեւան էր տուել նաեւ վայրենի մարդին։ Քրդերի սևսև մազէ վրանների մռայլ շարքերը պատել էին հովիտներն ու դարաւանդները։ Լերան ամենախոտառատ և ջրաշատ տեղը գրաւել է ինքը բէգը։ Նրա վրանը մի շարք վրանների ծայրումն է և իր մեծութեամբ ու փառահեղութեամբ իշխում է բոլորի վրայ։

Վրանի մուտքը զարդարուած է գոյնզգոյն փնջե-

րով. Փայտեայ բարակ սիւները ներկուած են խայտաշբէտ գոյներով։ Զորս կողմում խիտ առ խիտ գետնին տնկուած մանր ցիցերը, որոնցից կապուած է վրանը, նոյնպէս գունաւոր են։ Վրանի եղրի և գետնի մէջ բաց մնացած տարածութիւնը շրջափակուած է գոյնզդոյն չղով^{*)}։ Վրանը գեղեցիկ չղերով բաժանւում է մի քանի մասերի. ամեն մի չղէ պատ ներկայացնում է մի տեսակ կանգուն գորգ։ Ամենից շքեղ մասն է բէդի ընդունարանը։ Սա ներկայացնում է առաջը բաց մի սրահ, որի յատակը ծածկուած է թանկագին գորգերով և նըրանց վրայ փոռուած են խաս կտորից մինդարներ և նոյնպիսի բարձեր։ Ընդունարանի պատերը զարդարուած են բազմաթիւ հին և նոր հրացաններով, երկար, ծալրը փնջազարդ նիզակներով, քրդական շրջանաձև և կենտրոնն ուռուցիկ վահաններով, Դամասկոսի հին, կեռարերով։

Կէս օր էր, կուշտ ճաշից յետոյ՝ բարձերի վրայ թիկն տուած, բէդը ծխում էր իր նարգիլէն և ծուխը քուլայ-քուլայ դէպի վրանի ցածրիկ աւաստաղն էր արձակում։ Նա մօտ յիսուն տարեկան մարդ էր, կարճ միշրուք ունէր, փոքրիկ, նիհար դէմք, ճպճպան, վաւաշոտ աչքեր։ Բերանի շուրջը և աչքերի տակ դէմքի կաշին զզուելի ծալքերով կախուած էր, սեռական անժութկալութիւնը իր կնիքը դրել էր նրա դէմքին։ Բէդը շարունակում էր ծխել և միևնոյն ժամանակ կամ նայում էր վրանի առաջ արածող նժոյգներին, կամ նայում էր հեռուն, ուր տարածում էր վրանի առաջ ձգուած լեռնային դարատափը։ Յանկարծ նա թողեց նարգիլէն,

^{*)} „Զըղը“ կազմուած է բարսկ, լվկած, համաշափ ճիպոտներից մի արշին և առելի երկարութեամբ։ Քիւրդ կանայք այդ ճիպոտները վարպետութեամբ շարում են իրար կողքի և հիառում իրար հետ գոյնզգալն ըլլողեայ թելերով, և այս անում են այն ձևով՝ որ ստացում է մի տեսակ շիրմայ քիւրդ կանանց գործած գորգերի պատկերներով։ Ելդ չչղով են մաղէ մեծ վրանը բաժանում մասերի, սրանով են շրջապատում վրանի ստորին մասը։ Որքան հարուստ է վրանի տէրը, նոյնքան էլ ճոխ և շքեղ է լինում «չըղը»։

լարեց իր բոլոր ուշադրութիւնը և ուղղուելով նստեց.
ապա շտապով վերցրեց մօտը դրած դիտակը և նայեց
գէպի հօրիզոնը, ուր մի մութ շարժուն ստուեր սեւին
էր տալիս:

—Մստօ, ձայն տուեց բէգը:

—Բալէ, աղա, պատասխանեց վրանի յետեւից մի
ձայն և շուտով մի գեղեցկադէմ երիտասարդ քիւրդ
յայտնուեց վրանի առաջ. բէգի ծառան էր:

—Մստօ, մէկը գէպի մեր կողմն է գալիս, շուտով
ձի նստիր, ընդառաջ գնա և տես թէ ով է, հրամայեց
բէգը. արդեօք տղերից մէկը չէ:

Երեք օր առաջ բէգի էլիաթից մի արշաւախումբ
էր հեռացել, այդ խմբի մասին էր խօսում բէգը:

—Աղ խուլ ամէ տա մա (ծառադեմ), ասաց Մստօն
գլուխ տալով, պատից վերցրեց հրացանը, թռաւ մի
մերկ ձիու մէջքին և սրարշաւ հեռացաւ:

Կէս ժամ շանցած Մստօի հետ վրանի առաջ յայտ-
նուեց ձագօն և խոր գլուխ տալով բէգին՝ մնաց կանգ-
նած: Բէգը յօնքերի տակից ուշադրութեամբ նայեց
ձագօին և շուտով ճանաչեց. նա իր մարդկանցից էր,
իր նախկին հովուի որդին:

—Խէր հատի, ձագօ (բարի եկար, ձագօ), ասաց բէ-
գը. ո՞ր քամին քեզ այստեղ քշեց:

—Աղա, քո սէրն է ծառայիդ բերել քո ոտքը, պա-
տասխանեց ձագօն քրդական հաճոյախօսութեամբ:

—Տուն, տեղ, մալ, ընտանիք, ողջ, սալամաթ են:

—Քո սայից *), ողջ են, տէր, քո գլուխը ողջ լինի
մեղ համար:

—Տօ, անիրաւ, ասում են ֆլա կնիկ ես ճանկդ-
գցել, զօչազ ձագօ. որ այդպէս շնորհը ունես, ինչու
մէկն էլ աղայիդ չես բերում ընծայ:

Ձագօի սիրալ թրթռաց, իր նպատակին աւելի
յարմար խօսակցութիւն սկսել անհնարին էր:

*)Քո սայից = քո շնորհիւ

— Ճազօի գլուխը մատաղ լինի աղային, աղան որ կամենայ, որ միայն աչքով անի, ճազօն նրա համար երկնքից հիւրի ցած կը բերի, ուր մնաց թէ ֆլա կնիկ: Բա էլ Աստուած ինչու համար է ստեղծել ֆլային, որ մեր աչքի լոյս բէդը մի ֆլա կնիկ էլ չը կարողանայ ունենալ: Աղան որ կայ...

— Լաւ, լաւ, ճազօ, բաւական է ձաւար անես, քո բերանն էլ, որ բանան, էլ փակել չի լինի. հայրդ էլ քո խասեաթին էր: Դու այն ասա, ինչու ես եկել, թէ չէ դու որ հիւրի-փէրիից խօսել սկսեցիր, էլ չես վերջացնի:

— Տէր, հէնց հիւրի-փէրիի համար եմ եկել, հապա էլ ինչ խօսեմ: բէդը մեր դլիսի տէրն է, մենք էլ նրա ծառաներն ենք, նրա շուաքի տակ ապրում ենք, նրան ծառայելու պարտք ունենք, աչքեր ունենք, պիտի նայենք, ինչ-որ մի հատիկ է աշխարհում, ինչ-որ աննման է, այն բէդին պիտի հասցնենք, սա պարտք է, տէր: Դէր, ճազօն էլ աչքեր ունի, կրյո չէ: Տէր, բանի մի օր առաջ Դ... գիւղով անցնելիս մի աղջիկ տեսայ, ինչ աղջիկ, հրեշտակ, որ շլկուելով երկնքից երկիր է իջել. մի կատարեալ հիւրի: Ասացի գնամ բէդին ասեմ, փլային ինչ սազ կը գայ այնքան գեղեցկութիւն, այն բէդին է վայել:

Բէդի աչքերը վառուեցին վաւաշոտութեան կրակով: Նա մտածեց մի փոքր:

— Ասացիր սիրուն է:

— Աննման, տէր իմ, ջէննաթի հիւրի, իմ աղան դեռ երբէք այնպիսի կին չի ունեցել:

— Տօ, անպիտան, խանումներիդ չես հաւանում հաա, ասաց բէդը ժպտալով ներողամտաբար:

— Տէր, հաւանում եմ, բայց այն ֆլա աղջիկն ուրիշ բան է, թոռուն, թոռուն:

— Լաւ, ճազօ, բայց կարող ես առանց աղմուկի գործ տեսնել:

— Տէր, որ հրաման անես մեր տղերքից մի քանիսը

հետո լինին, մի երկու օրից ֆլա աղջիկն այստեղ կը լինի:

—Հաւատում եմ քեզ, ձազո, բայց եթէ զալմազալ հանես և բերածդ աղջիկն էլ ասածիդ չափ սիրուն չը լինի, հոգիդ կը հանեմ:

—Ծառադ եմ, տէր:

—Մնացածը քեզ եմ թողնում, առ հետդ, ում կամենում ես. իսկ բո բախչին էլ պարտքս լինի. գնա հանդստացիր:

Վարդավառի տօնն էր՝ Վաղ առաւօտից գիւղի բոլոր ջահէլ հարսներն ու աղջիկները ձորակումն էին: Այսօր նրանց նպատակը մենակ ջուր բերելը չէր, հապա և պէտք է Վարդավառ անէին, իրար թրջէին: Ամենքն էլ կուժեր ունէին, յրով լցրին ու վար դրին այստեղ, այնտեղ: Զէին շտապում վեր բարձրանալ, սպասողական դրութիւն էր: Դեռ ոչ ոք թրջուած չէր, դեռ չէր յայտնուել մի համարձակը, որ առաջին փորձն անէր: Այդ իսկ բոպէին ձորի լանջի վրայ յայտնուեց Մարօն: Ներքեւում խմբի մէջ ընդհանուր փսփսուկ բարձրացաւ, ինչոր ծրագիր էր կազմւում:

—Ամենից առաջ Մարօին թրջենք, թող նշանածը նրան տղկուած տեսնի, ասաց Բագօնց Գոհարը, մի փոքրիկ չարաճճի աղջիկ:

—Հա, հա, Մարօին, Մարօին, ձայն տուին այս ու այն կողմից մի քանի աղջիկներ:

Կազմուած դաւադրութեանն անտեղեակ, Մարօն ցած իջաւ, աղբրին հասաւ, կուժը լցրեց յրով. հէնց այդ բոպէին Գոհարը մօտեցաւ և երկու բռնով արագա արագ ջուր ցանեց Մարօի վրայ, գոռալով «Վարդավառու»: Ընդհանուր բըքիջ բարձրացաւ. «Վարդավառ», լսուեց այս ու այն կողմից: Մարօն իրան չը կորցրեց, նա բարձրացրեց իր կուժը և արագութեամբ դատարկեց Գոհարի գլխին: Վերջինս այնպէս թրջուեց, որ ասես աւազանի մէջ թաղուեց դուրս եկաւ: Ծիծաղն ու ուրա-

խածայն աղաղակներն այս անգամ կրկնապատկուեցին։ Էնդհանուր իրարանցումն սկսուեց։ Չորակը թնդում էր, բուն Վարդավառն սկսուեց։ Թրջում էր, ով ում կարողանում էր։ Մէկը կուժն առած հալածում էր իրան թրջողին, որ աշխատում էր ձորակի հեռաւոր կողմերն ապաստանել. միւսը փորձում էր միամիտ կանգնած ընկերուհուն հրել, վտակի մէջ ձգել. ոմանք քաշը ում էին իրար, ուրիշները ըռնով ջուր ցանում իրար վրայ. աւելի չարաճճիները, մանաւանդ նրանք, որոնք ամենից առաջ թրջուել, մուկ էին դարձել, մոել էին վտակի մէջ և աջ ու ձախ ջուր էին շփում և ամենքի ծիծաղն ու աղաղակը, ճիչն ու կանչւը ուսուցը լցրել էր ձորակն ու շրջակայրը։

Մարօի և Գոհարի վրայ այլ ևս ուշը դարձնող չք կար։ Աղջիկները միայն իրարանցման սկզբում տեսան՝ թէ ինչպէս Գոհարը խլեց ջրով լի մի կուլիկ և ընկաւ Մարօի յետելից, որ փախաւ դէպի ձորակի հակառակ կողմը, դէպի դաշտը։ Այստեղ երկու հակառակորդներն սկսեցին պտոյտներ կաղմել. Գոհարն աշխատում էր ջուրը ցանել Մարօի վրայ, իսկ սա խոյս էր տալիս Միենոյն ժամանակ մնացած աղջիկները աղբրի մօտ շարունակում էին իրանց Վարդավառը։ Յանկարծ մի զարմանալի բան պատահեց։ Այնտեղից, ուր Մարօն և Գոհարն էին, մի այնպիսի ճիչ լսուեց, որ ուրախ, աղմկուող խումբը սարսափից քար կտրեց և վայրկենապէս լռեց, ինչպէս ճնճղուկների ճռուղող երամը լռում է, երբ յայտնւում է բազէն։

Ամենքի հայեացքներն ուղղուեցան դէպի այն կողմը և նրանց աջքին հետեւեալ տեսարանը ներկայացաւ։ Աւազակների մի զինուած խումբ յարձակուեց երկու աղջիկների վրայ, Գոհարն ընկաւ ուշաթափ՝ հազիւ կարողանալով կոչել՝ «Եաման, տարան», մինչդեռ Մարօին ըռնեցին մի քանի հոգով և շտապեցին կապուտել ձիու վրայ։ Աղջիկների զարհուրած խումբը քար կտրած՝ պապանձուել էր, նոյն իսկ օգնութիւն չէր գոռում,

այն աստիճան արագ կատարուեց բոլորը, այն աստիճան անսպասելի և սարսափելի էր դիպուածը։ Երբ Մարօն ձիու վրայից մի անգամ ցած շպրտեց իրան և մնաց ուշաժափ, այդ ժամանակ միայն խմբի միջից մէկը յանկարծ գոռաց՝ «վայ, տարան Մարօին»։ Պապանձուած խումբը միաձայն ճշաց՝ «տարան, տարան»։ Ուրախութիւնը սուգի, ծիծաղը՝ լացի փոխուեց. էլի մի բոպէ և աղջիկների բոլոր բազմութիւնը վաղեց ձորն ի վեր գէպի գիւղը գոռալով՝ «տարան, տարան»։

Ամբողջ գիւղն իրար դիպաւ, մարդ. թէ կին, մեծ թէ փոքր միանգամից գուրս թափուեցին տներից և գէպի ձորակը գրոհ տուփն։ Ամեն մէկը կարծում էր, թէ եր քոյրը կամ աղջիկը տարան։ «Տարան» լսում էր ամեն բերանից. Օգնութեան վաղեցին գիւղի երիտասարդները՝ որը զինուած, որն անդէն, որը մահակով, որը որ և է կարասի ձեռփն բռնած։ Առաջին օդնութեան վազողներից մէկն էր նաև Մուսօն, ձորակի գլխից նա նոյն իսկ ազօտ կերպով նշմարեց, թէ ինչպէս մէկին կապեցին ձիու վրայ և սրարշաւ հեռացան աւազակները։ Ոչ մի կասկած անգամ չունէր որ տարուածը Մարօն էր. նա նոյն իսկ չէր հարցնում, թէ ում տարան, այլ խելագարի պէս ձորակի գլխից ցած գլորեց իրան և քանի ոյժ կար ոտներում վաղեց գէպի աւազակների զինուած մի խմբակ, որ աղջկան փախցնելուց յետոյ կանգնել էր՝ հետամուտ լինողների առաջը փակելու համար։ Իսքը չիմանալով թէ անդէն ինչ կարող է անել զինուած աւազակների խմբին, Մուսօն այնուամենայնիւ վազում էր ու վազում; յանկարծ մի քանի հրացաններ տրաքեցին և մի գնտակ Մուսօի կողքը ծակեց անցաւ. վիրաւորուած երիտասարդը կողքը բռնեց և սոսկալի ոռնոց արձակելով, գետին ընկաւ։ Միւս գիւղացիները շփոթուած կանգ առան, ոմանք Մուսօին շրջապատեցին. աւազակները Մարօին տարան անարդել։

Սհօն էլ լսեց սուգ ողբի ձայները։ Երբ առաջին անգամ նրա ականջում հնչուեց «տարան» բառը, սիրտն

այնպէս ճմլուեց, որ կարծես մէկը հզօր ձեռքով սղմեց և մի առժամանակ դադարեցրեց նրա թրթողը, կարծես մի բան կտրուեց և կախ ընկաւ նրա կրծքի տակ: Ոտները թուլացան, ճնկները գողում էին, բայց և այնպէս նա իր վերջին ճիգերը հաւաքեց և դէպի ձորակը վազեց:

«Տարան, տարան», գոչում էին չորս կողմից դէպի ձորակը վազողները:

—Այդ որին տարան, հայ քրիստոնեաներ, հարցրեց մահուան գունատութեամբ ծածկուած Սհօն առաջին պատահած մարդին հէնց ձորակի գլխին:

—Վայ, քո տունն աւերուի, Սհօ, Մարօին տարան քրդերը:

—Մարօին, հազիւ կարողացաւ բացականչել ծերունին նուաղած ձայնով և ընկաւ զառիվայրի վրայ կիսակենդան: Մարդիկ վազեցին, նրան ուշքի բերին: Նա ցնցւում էր բոլոր մարմնով գողոցքով բռնուածի պէս: Քիչ յետոյ հաւաքելով իր բոլոր ուժերը փորձեց իշնել դէպի ձորակը, բայց գարծեալ ընկաւ, մի փոքր տեղ ճեռների վրայ գնաց, յետոյ կանգնեց, մէկ էլ ընկաւ և այսպէս մերթ գլորուելով և մերթ սողալով՝ նա ձորի յատակին հասաւ: Նա ոտաբոբիկ էր ու գլխաբաց, ոտնամաններն ու գլխարկը թողել էր ճանապարհին, սպիտակ մազերն ու միրուքը խճճուած, աչքերը վառւում էին ճերմակ յօնքերի տակից: Նա գողդոջիւն ճեռները տարածեց օդի մէջ, երկնքին նայեց՝ «Մարօն», կոչեց: Կարծես աղերսում էր երկնքին յետ տալ իր Մարօն: Յետոյ նայեց իր չուրջը, մաղերը փետելով, գլխին տալով, մօտեցաւ աղբրին, տեսաւ Մարօի կուժը, երկու ձեռքով գրկեց, բարձրացրեց, ինչպէս մայրը գրկում է զաւակին. և այդ անշունչ առարկային նա հարցնում էր՝ ուր է Մարօն, ինչ եղաւ էս սարերի ջէլրանը, ձայն չես տալիս, «օֆ»: և նա թափով գետին զարկելով կուժը փշուր-փշուր արեց:

Նա մի առժամանակ սառած նայեց կժի կտոր-

ներին, յետոյ կամացուկ նստեց, հաւաքեց մի քանի կտոր և դառնադառն արտասուեց։ Խոշոր կաթինելը դլորւում էին նրա ծեր միրուքի վրայով. այդպէս կ'արտասուէր հին աշխարհի մի ծեր թագաւոր իր գահի և քաղաքի աւերակների մէջ։ Գիւղացիք շրջապատել էին նրան, ոմանք արտասուում էին, բայց ոչ ոք չէր համարձակուում մօտենալ, խանգարել այդ վսեմ ողբը, —մի ամբողջ երկրի սուդն էր կատարւում, ծերունու աչքերով մի ամբողջ ժողովուրդ էր արտասուում։

Քիչ յետոյ յուսահատ ու վշտահար գիւղացիների երկու խմբեր երկու կիսամեռ մարդիկ էին տանում դէպի գիւղ. մէկը վիրաւոր Մուսօն էր, իսկ միւսը՝ ուշաթափուած ու վշտաբեկ Սհօն։ Կարծես յուղարկաւորութիւն լինէր, սրտերի թաղում էր կատարւում։

Անցան օրեր և ոչ ոք չիմացաւ, թէ ովքեր և դէպի ուր տարան Մարօն։ Ծերունի Սհօն անկողնումն էր, ծանր վիշտը կամաց-կամաց քաղում էր նրա կենսական ոյժերը, աշխարհն ասես փուլ էր եկել նրա գլխին, նրան այլ ևս ոչինչ չէր հետաքրքրում; կամ աւելի շուտ նա ոչինչ չէր հասկանում։ Ոչ ոքի ոչինչ չէր ասում, կամ հասկանում էր ինքն իրան, կամ լուռ նայում էր առաստաղին։ Նրան գժուարութեամբ էին կերակրում։ Խնամողը նուբարն էր, որ մերթ տուն էր վազում Մուսօնն նայելու, մերթ գալիս էր Սհօն մօտ։

Սակայն Մուսօնի վէրքն այնքան էլ ծանր չէր, գընտակը շատ խոր չէր մտել, թէև տակաւին վիրաւոր, բայց նա շուտով վեր կացաւ, մինչդեռ Սհօն շարունակում էր մնալ անկողնում։ Այժմ մայր և որդի սկսեցին խնամել ծերունուն։ Երբ նուբարը գդալով կերակուրը մօտեցնում էր նրա շրթունքներին, նա յետ էր մղում գդալը, ասելով՝

—Էլի ապրեմ, որի՞ համար... վախ, Մարօ։

Թունն էլ փախաւ նրա աչքերից, ամբողջ ժամեր աչքերը յառած առաստաղի մի կէտին, նայում էր ան-

թարթ և յանկարծ չորացած մատը դէպի վեր մեկնելով ասում էր.

—Նայիր, Նուբար, Էս առաստաղն ինչքան սե է, սեւ, սեւ... Օ՛խ, Նուբար, Էս վէրան երկրի մէջ ամեն բան սե է. մեր վաթանը սեւ, մեր երկինքը սեւ, մեր օրեր սեւ, մեր արե սեւ, մեր բախտն էլ՝սե, մեր սիրալն էլ սեւ, մէկ իմ Մարօն էր պայծառ ու խօրօտ, մէկ նրա օրը սե չէր, այն էլ շատ համարեց Աստուած: Դէ, այդպէս էլ պէտք էր, ախր խօրօտը խեղճն ի՞նչ անի, խօրօտը զալումինն է, զալումն էլ եկաւ ու տարաւ, օճֆ...

Մուսօն էլ լոեց: Նրա քաղցր երգերի արձագանքն էլ չէր խնդացնում ձորակն ու դաշտերը, ուրախ խմբերի, խնջոյքների մէջ էլ չէր երևում նա: Գիշեր-ցերեկ անվերջ թափառում էր այն տեղերում; ուր դիպել էր Մարօն ոտքը, նայում էր այն ծաղիկներին ու խոտերին, որոնց նայել էր Մարօն, դիպել էր նրա ձեռքը, նստում էր այն աղքրի մօտ, որտեղից ջուր էր վերցնում Մարօն, ականջ էր դնում ջրի միակերպ քչքչոցին, ասես աշխատելով նրա ձայնից հասկանալ թէ ուր է Մարօն: «Ա՛խ, գոնէ իմանայի թէ ուր տարան, մրմնջում էլն նրա շըրժունքները. եթէ աշխարհի ծայրում էլ լինի, երկաթէ տրեխներ կը հագնեմ, պողպատէ գաւազան ձեռք կ'առնեմ և Մարօին կը բերեմ, կամ գլուխս մատաղ կը տամ նրանց: Եատ անգամ յուսահատուած սկսում էր բարձրագայն հեկեկալ, հսկայ տղամարդը իր անզօրութեան մէջ արտասում էր ինչպէս մի երեխայ, երբ անկարող էր լինում մի հնար գտնել: Ապա յոգնած գլուխը դնում էր հէնց աղքրի ափին, ջրերի կարկաչիւնը կամաց-կամաց թմրեցնում էր նրան, քունը գալիս էր մի առժամանակ ամոքելու նրա հոգին ալրող վշտերը: Ապա վերջապէս նա վեր էր կենում և գլխիկոր գնում դէպի գիւղ, սիրու կոտրուած, հոգին վշտահար ներս էր մտնում Սհօի տունը: Ծերունին սովորաբար քնած չէր լինում:

— է՛, որդի, եկար, դառնում էր նա դէպի Մուսօն.
տարար Մարօխն հաա... լայ, Մուսօ, ինչ բերախտ փե-
սայ եղար, ինչու մի չես բերում տեսնեմ Մարօխն...
Այստեղ ձայնը կերկերում էր, սիրտը փղձկում էր, ար-
տասուքները խեղղում էին նրա կոկորդը և ծեր աչքե-
րից թափւում էին կաթիլշկաթիլ. նրան միանում էր
նաև նուբարը:

Մուսօի սիրտը կտոր-կտոր էր լինում: Իր սիրելու
կորուստը, այս խղճալի ծերունու անհուն վիշտը ոչ մի
բոպէ նրան հանգիստ չէին տալիս և նա օր ու գիշեր
մտածում էր, թէ ինչ հնարքով գտնի Մարօխն: Ոչ մի
վտանդ նրան չէր վախեցնում, նա պատրաստ էր Մա-
րօի սիրուն՝ դժոխք իջնել. սարսափելին այն էր նրա
համար, որ չը գիտէր, թէ ուր գնայ, ուր հարցնի, որ
տեղ վնարի իր տարաբախտ Մարօխն: Երկար մտածեց
նա, վերջապէս մի օր Սհօի մօտ եկաւ ու ասաց.

— Ես էլ համբերել չեմ կարող, հայր, կ'երթամ
երկրէ երկիր կը թափառեմ, կամ գլուխս մատաղ կը
տամ, կամ կը գտնեմ, կը բերեմ Մարօխն:

Նրա ձայնը խիստ էր, խօսքերը վճռական. Երեսում
էր, որ նա մի յանդուզն ձեռնարկութեան վճիռ է կայ-
ացրել:

— Թայ հու, մեռնեմ բեզ, էս մութ աշխարհի մէջ,
էս սև օրերին որտեղից գտնես Մարօխն, զուլումը չորս
կողմերս բռնել է:

Նուբարն էլ մէջ ընկաւ. աղաչեց, պաղատեց, որ
չերթայ, միւնոյն է գտնելու չէ, գտնի էլ, չի կարող
յետ բերել. մինչև հիմա, որ փախցրած հայ աղջիկն է
յետ բերուել. զուր ինչու սեւացնել իր օրերը. մէկ էլ
սև կապի իր մայրը, մեղք չէ... Բայց իզնւր...

Մուսօն գնաց ու գնաց, ուր... այդ ոչ ոք չիմա-
ցաւ:

V

Ամառ էր։ Արճիշու սարերում մի վայրենի կինդասնութիւն էր տիրում։ ամեն մի հովում, ամեն մի լեռան լանջի վրայ, ամեն մի ձորում վիստում էին քրդերը։ Սևսև վրանների մուայլ շարքերը ձգւում էին անընդհատ շղթաներով։ մանր ու մեծ լամուկները ոտները մերկ, գլխաբաց, մի հատիկ կտաւէ շապիկ կեղտոտ մարմինների վրայ խաղում էին այդ վրանների առաջ հսկայական գամփիրների հետ, ոմանք էլ մագլցում էին լեռների ժայռոտ կատարները և զուարճանում էին մանր քարեր գլորելով վերից վայր։ Մի փոքր աւելի հասակաւորները իրանց կոպալներով զինավարժութիւն էին անում։ Անմիջապէս վրանների յետևում կամ քիչ հեռու մի հարթութեան վրայ, մի աղբրի գլխին համախմբուած և պար կազմած քրդուհիներ իրանց կաշուէ գոգնոյների վրայ պտտացնելով թէշիկների պոչերը, բրդէ թելեր էին մանում և այս ու այն արիւնալի կուսում ընկած քաջերին երգերով գովարանում։ Տղամարդիկ սակաւ էին երեսում վրաններում, ընդամենը մի քանի հօգի, որոնք արևելքին յատուկ ծովութեամբ ձգուել էին դալարաշատ թմբերի վրայ և անհոգ ու լուռ ծխում էին, երբեմն՝ երբեմն միայն մի-մի բառ ուղղելով մօտը պառկած հարևանին։ Մնացած տղամարդիկ ձիաւորուած գնացել էին աւարի ու կողոպուտիւն։

Այդ լեռներում յանկարծ յայտնուեց շատ հեռու երկրից եկած մի երիտասարդ քիւրդ սքանչելի ձայնով։ Նա սէր ու քաջութիւն էր երգում։ Քրդական իւրաքանչիւր օբայում նրա տիսուր, սրտաճմիկ երգերը գուրս էին քաշում վրաններից քրդուհիներին, որոնք իսկոյն շրջապատում էին անծանօթ երգչին և ձեռներն այտերին դրած, գլուխներն օրօրելով լսում էին զարմանալի երգչի վշտու երգերը։ Նա երգում էր աղդու, սիրտ պատառող ձայնով, երգում էր այնպէս, որ ասես

թէ իր հոգին մաս-մաս դուրս էր գալիս երգի իւրաքանչիւր բառի, իւրաքանչիւր հնչիւնի հետ. կ'ասես վշտերի մի ծով կար ներսում, որ թափուում էր ու թափուում, բայց վերջ չէր առնուում: Վայրենի աօէզիայի սիրահար քրդերի աշըերից նա քամուում էր արտասուքի կաթիլներ և այրում, փոթոթուում էր նրանց սրտերը:

Մի օբայումնա միայն մի քանի օր էր անցկացնուում նրան պատւում, հիւրասիրում էին, և յանկարծ նա անյայտանուում էր, երբ և ուր, այդ նա ոչ ոքի չէր ասում և ոչ ոք չէր իմանում: Շատ յետոյ միայն լսուում էր որ նա երգուում է յանորդ օբաներում: Այնտեղ էլ էր յուշում ամենքին, այնտեղ էլ էր լացացնուում իր ցաւոտ երգերով և կրկին անյայտանում: Ոչ ոք չը դիտէր, թէ ով է նա, ինչո՞ւ է թափառուում աշիրէթից աշիրէթ, օբայից օբայ, և այդ ինչ վիշտ է, որ կրծուում է այդ զարմանալի երգչի սիրտը: Նրա խորհրդաւորութիւնն ամենքին ճնշում, կաշկանդակուում էր, տխուր մելամաղձոտ երգերի բազցրութիւնը, գեղեցիկ գունատ գէմքը, բարձր հասակը ամենքին դիւթուում էր և ոչ ոք չէր հարցնուում նրանից իր դվիսի եկածները, ամենքը համոզուած էին, որ նա մի թշուառ է և այդքանով բաւականանուում էին: Ամեն անգամ երբ քրդուհիները նրան շրջապատուում էին կամ վրանների խորքից դաղտագողի աչք էին ածուում երգչի վրայ, վերջինս ուշադիր հայեացքով դիտուում էր իր շրջապատուղներին, ասես թէ վինտրուում էր մէկին. և երբ չէր դտինուում իր ուղածը, երբ յուսախաբւուում էր իր սպասելիքների մէջ, դադարեցնուում էր իր վշտոտ երգերը, և իր անբաժան կոպալը ձեռք առած շարունակուում էր իր խորհրդաւոր ճանապարհորդութիւնը գէպի այլ լեռներ, գէպի այլ աշիրէթներ:

Երկար թափառեց նա: Դրգուուից սկսեալ մինչև նեմրուդ, նեմրուդից մինչև Սիպան ու Ծաղկեայ սարերը ոտնատակ տուեց, ամեն տեղ լացացրեց: Ահա վերջապէս այս վշտի երգիչը Սիպանայ սարի վրայ է, Հիւսնի

բէդի օբայում։ Վրանների առաջ մի քարի վրայ նստած,
նա երգում էր բրդական հոչակաւոր պօէման «Մարէ-
Սիպանէն»։

Քրդուհիները և մեծ ու փոքր լամուկները շրջա-
պատել էին նրան։ Վրանները դատարկուել էին։ Միայն
ծայրի զարդարուած, մեծ վրանի մէջ միայնակ ու տը-
խուր նստած էր մի հատիկ քրդուհի և ձեռքը ծնօտին
դրած՝ նայում էր դէպի հեռուն, դէպի հորիզոնը, ուր
բարձրաբերձ լեռներն իրանց գագաթներն ամպերի մէջ
թաղելով՝ կ'ասես ջանք էին անում ձդուել, երկնքին
համնել։ Նա էլ հեռուից տեսաւ այդ համախմբումը,
հասկացաւ, որ այնտեղ ինչոր ուշագրաւ ու հետաքրքիր
բան է կատարում, քանի որ ամենքն էլ դէպի այնտեղ
են վազում, նոյն իսկ նրա ականջին էլ հասաւ աղուա-
ծայն սրնդի ձայնը, բայց և այնպէս նա տեղից չը շար-
ժուեց, այլ շարունակում էր յամառ կերպով նայել դէ-
պի հորիզոնը, կ'ասես թէ սպասելով մէկին, որ այդ հո-
րիզոնի վրայ պիտի յայտնուէր, որ այդ լեռներից պի-
տի իջնէր, երկնքից պիտի ցած գլորուէր։

Այդ վշտահար, այդ սգաւոր բրդուհին Մարօն էր
և մեծ, զարդարուած վրանը՝ Հիւսնի բէդի վրանն էր,
ուր բանտարկուած էր նա, որպէս թռչնակը ոսկեայ վան-
դակի մէջ։

Ճազօն ու Սրբէն իրանց զարհուրելի ծրադիրն ի-
րագործեցին։ Վարդավառի տօնի մասին Սրբէն յայտնեց
ձաղօին և սա մի խումբ քրդերի գլուխն անցած՝ փախ-
ցրեց Մարօնն և Հիւսնի բէդին յանձնեց, որ ֆլա գե-
ղեցիկուհուն իր կանանցի զարդը դարձրեց։ Ճազօն
չէր խարել։ Մարօն աննման էր, բէդը իր ցնծութիւնն ու
գոհունակութիւնն արտայայտեց այն առատաձեռնու-
թեամբ, որով նա լիառատ վարձատրեց ճազօին։ Սրբէն
էլ իր բաժինն ստացաւ։ Վաճառքը վերջացաւ, զոհը
յանձնուեց դահճին, որ նրա աղտեղի գրկի մէջ դան-
դաղ կերպով փշի իր շունչը։

Խաչպէս միշտ, այսօր էլ նրա սիրտը ու էր որպէս

ագռաւի թև և դէմքը սգաւոր ու թախծապատ: Նրա վառփռուն աչքերը խորն էին ընկել և անվերջ արտասուբքից ուռել, կարմրել. նրանց մէջ վառուող նախկին կուսական խանդը մարել էր, տեղի տալով մի անհուն վշտի արտայայտութեան, վիշտ՝ որ կաթիլ-կաթիլ քամուելով՝ քանզում էր նրա սիրոը մինչև յետին թելերը և թափանցում էր նրա հոգու խորքերը գերմարդկային ցաւեր պատճառելով: Նրա երկար, թաւ արտևանունք-ները մշտատե արտասուքից բաժանուել էին, ոլորուել երար, գեղափթիթ այտերը նիշարել և գունատուել էին, խակ կարմիր շրթունքները ծածկուել էին հիւանդոտ գեղնութեամբ: Դժուար էր նրան ճանաչել, նա այժմ նմանում էր մի մեղքամոմի, որ օր օրի վրայ այրուելով մօտ էր մարելու: Եւ սակայն ընդամենը ամիս ու կէս էր, ինչ նրան խլել էին իր հօրից և Մուսօից:

Իր անձնական դժբախտութեան, իր կուսական պատուի անարդանքի վրայ աւելացած էր նաև իր սիրելիների ցաւը. ինչ եղաւ հայրը, մեռմու արդեօք, թէ դեռ շարունակում է իր արտասուելի կեանքը, և միթէ կարող էր նա տանել այդքան ծանր հարուած, կարող էր նա առանց իր Մարօի արև տեսնել, օդ չնչել, կեանք վայելել: Հապա Մուսօն... ինչ է անում այժմ, ինչ է մտածում արդեօք, ուր է... գուցէ իր յետևից ընկաւ և այս գաղանները սպանեցին նրան, թէ յուսահատութիւնից վայր գլորեց իրան ժայռից և մահ գտաւ Մարօի սիրուն: Ո՞վ գիտէ, գուցէ և մոռացաւ Մարօին, մոռացաւ իր սէրը և այժմ կապուել է մի ուրիշի հետ, չէ օր ինքը մեռած է և ով է մեռած սիրելու համար իր գլուխը մատաղ տալիս... այսպէս էր մտածում Մարօն և օր ու գիշեր հանդիստ չունէր: Բէդի բոլոր գուրդուրանքները, նրա բոլոր ընծաներն ու զարդերը չը կարողացան մաղի չափ անգամ մեղմացնել Մարօի կըսկիծը, մի բոպէով ցամաքացնել նրա արտասուըները. ընդհակառակը բէդի ներկայութեամբ նրա տանջանք-ները կրկնապատկում էին, նրա զզուելի ու վաւաշոտ

դէմքի վրայ փայլող ժպիտը սպանում էր Մարօխն, որ պատրաստ էր իր կեանքն անգամ տալ, այդ դէմքն ու այդ ժպիտը չը տեսնելու համար։ Օ՛, ի՞նչ սիրով նա վայր կը գլորուէր այն բերան կատարից, բայց հնար չունէր, հսկում էին նրա վրայ, մենակ չէին թողնում դուրս գնալ։

Այսօր էլ միւնոյն մոքերն էին պաշարել նրան, զոհ էր իր միայնութեամբ, նրա մոքերը խանդարող չը կար։ Եւ ուր գնար նա, անծանօթ քիւրդ երգչին լսելու. չէ որ դրանով նա միայն իր հին ցաւերը կը նուրոգէր, պիտի յիշէր իր Մուսօի երգերը, և կայ աշխարհում մէկը, որ Մուսօի պէս երգել կարողանայ։ Մարօն մի ծանր և երկար ախ քաշեց, հեռաւում շարունակում էր հնչուել երգչի սրնգի դողդոջուն ձայնը։ Յանկարծ նրա առաջ կանգնեց բէգը։

—Մարօ, դու էլի տխուր ես, ասաց բէգը։

Մարօն լուռ էր. նա միշտ այսպէս էր, լռում էր, երբ բէգը խօսում էր, լռում էր, երբ բան էր հարցնում, երբ գուրգուրում էր. լռում էր, երբ բարկացած ժամանակ անարգում հայհոյում էր. նա մի զոհ էր, որ իր գահճի բոլոր գործողութիւնները տանում էր մահուան դատապարտուածի անտարբերութեամբ։ Միայն այդպիսի բոպէներում աչքերի մէջ միշտ մի այնպիսի ատելութիւն ու զգուանք էր փայլում, որ բէգն անգամ իր վաւաշոտ աչքերն աշխատում էր հեռացնել նրա հայեացքից, չը տեսնել, չը զգալ իր զոհի այդ ծակող զզըւանքը, այդ թունոտ ատելութիւնը, որպէսզի իր մէջ կիրքը չը թուլանայ, զոհի գրաւիչ մարմնի բուրմունքով արբենալ, թմրիլ կարողանայ։ Բայց Մարօն միշտ նայում էր, փնտրում էր բէգի աչքերը, որ այնտեղ թափի իր ատելութեան թոյնը, այդ անպաշտպան, թոյլ, անզէն գերին յանկարծ գտել էր իր գահին հակառակորդի թոյլ կողմը և նրա կրքերը սանձելու հրաշալի հնարը։ Ամեն անգամ երբ մօտենում էր Մարօխն, երկու հակառակորդների մէջ սկսում էր խուլ, կա-

կատաղի մրցութիւն։ Գերին, զոհը իր սպանիչ հայեաց-
քով աշխատում էր շանթահարել նրան, զսպել նրա մէջ
նստած դաղանը, մինչդեռ վերջինս լաւ զգալով այդ
ցուրտ հայեացքի բոլոր ոյժը, աշխատում էր չը նայել իր
ճիրանների մէջ թրապտացող զոհի աչքերին, նրանք
սարսափելի էին, նրանց մէջ այնքան ատելութիւն,
զգուանք, արհամարհանք կար, որ թոյլ զոհը յաղթում
էր։ Այդ դէպերում կատաղած բէդը իր պարտութեան
վրէժը լուծում էր անպատկառ հայհոյանքներով և հե-
ռանում էր։

Այսօր էլ սկսուեց նոյն խուլ մրցութիւնը երկու
անհաւասար ոյժերի մէջ։

—Ինչու չը գնացիր միւսների հետ այնտեղ, շա-
րունակեց բէդը առանց նրա աչքերին նայելու, ցոյց
տալով երդչի կողմը և նստեց նրա կողքին, ձեռքը ու-
սին գնելով։ Մարօն պատասխանի փոխարէն նայում էր
բէդի դէմքին, նայում էր նրա ցած կախած աչքերին,
նայում էր և միայն մի քան էր մտածում; թէ ինչ սի-
րով նա իր քնքոյց թուլացած բազուկներով կը խեղդէր
այդ զգուելի հրէշին և նոյն իսկ ատամներով կը կրծէր
նրա աղտեղի կոկորդը։

—Մարօ, ինչու չես խօսում, կ'ուզե՞ս ուղարկեմ
երդին այստեղ գայ, թէ ուզում ես ինձ հետ մենակ
լինել. հա, հա, հասկանում եմ միտքդ, գե՛ ֆլա, ասաց
բէդը ժպտալով և սիրտ արեց նրա աչքերին նայել։ Այս
անդամ գերերը փոխուեցին, ընկճուող, պարտութիւն
կրողը զոհն էր. բէդի այդ ժպիտը հոգեհան էր, Մա-
րօն այդ ժպիտը տանել չէր կարող. բէդի այդ դէնքն
անհամեմատ աւելի վտանգաւոր էր ու սուր, քան թէ
Մարօի ցուրտ, սպանիչ հայեացքը և եթէ բէդը կարո-
ղանար միշտ ժպտալ, Մարօն երբէք այդ մրցութեան
մէջ յաղթող չէր հանդիսանայ, ինչպէս այս անդամ:
Բէդը շարունակում էր ժպտալ և աւելի ու աւելի
մօտ նստել Մարօին, վերջինս այդ անտանելի ժպիտը
չը տեսնելու համար երկու ձեռքով ծածկեց դէմքը։

Այսուհետեւ երկար ժամանակ բէդը շարունակում էր փայփայել լուռ, սղաւոր զոհին, հազար ու մի խոստումներ էր անում. իզնւր, Մարօն մնաց լուռ, անտարբեր, և ձեռները չը հեռացրեց դէմքից:

Զանձրացած ու թուլացած բէդը ոտքի կանգնեց:

—Անզգամ ֆլա, մումուաց նա ատամները սղմած և դուրս գնալով հրամայեց երգչին իր մօտ կանչել:

Քիչ յետոյ բէդին խորը գլուխ տալով՝ առջել կանդ առաւ մի յաղթանգամ և գեղեցկադէմ երիտասարդ քիւրդ: Բէդը նրան նայեց փորձող հայեացը ըով:

—Անունդ ինչ է, կուռօ, ասաց նա:

—Ավգօ, տէր, ծառադ եմ:

—Ո՞րտեղացի ես:

—Ծառադ Սինակայ սարերիցն է, տէր:

—Ուրեմն Մոսկովի երկրիցն ես:

—Այն, տէր, Մոսկովի երկրից փախստական եմ:

—Ինչու համար ես փախել:

—Արունքի համար, տէր, արունք եմ արել և փախել եմ մշտապէս այս կողմերում մնալու համար:

—Կուռօ, ամօթ չէ քեզ, որ արունքի համար թողել ես տուն ու տեղ և փախել. դու աշխր չես, որ թշնամուդ առջելից խոյս ես տուել և չօլերն ընկել:

—Տէր, ծառադ ոչ իր թշնամուց է փախել և ոչ նրա վրէժխնդրութիւնից, այլ Մոսկովի օրէնքների երեսից: Այնտեղի օրէնքներն այս տեղի նման չեն, վատեն, արիւնն արիւնով լուանալ չը կայ այնտեղ, այլ արունքի համար մարդի պատժում են և այն ինչպէս—բռնում են, ոտները շղթայ են գնում, բշում են շատ հեռու տեղեր, այնքան հեռու, որտեղ մարդիկ սառցէ տների մէջ են ապրում: այնտեղ մարդին փակում են գետնափորերի մէջ, որ եղունգներով ոսկի և արծաթ հանի հողի միջից: Մոսկովի այդ օրէնքից եմ փախել, տէր:

—Հաա, գլխի ընկնելով և համաձայնելով ասաց բէդը. հաա, այդ օրէնքը լաւ օրէնք չէ, այդ լաւ չէ,

կորմանջը հափս չը պիտի մտնի. լաւ ես արել որ փախել
ես: Ասում են լաւ ես երգում, հապա մէկ երգիլ լսեմ
ձայնդ. նոտիր այնտեղ:

Անծանօթը ծունկ չոքեց վրանի առաջ, կոպալը
դրեց կողքին, սրինգը դուրս քաշեց գօտկից և հնչե-
ցրեց մի տխուր, ոլորուն եղանակ մեղմ ելեւէներով:
Նահապետական այդ պարզ գործիքից դուրս թափուող
գողդոջիւն հնչվանները նրա վարժ մատների տակ կ'ա-
սես թէ մեղմիկ ողբում, հառաջում էին. նրանք լացա-
ցնելու չափ գեղեցիկ էին: Ապա երգեց այն հոչակա-
ւոր երգը, որ հազարից մէկ թիւրդ հազիւ գիտէ,
բայց որ ամենքին էլ սիրելի, ամենքի համար էլ գրա-
ւիչ է. դա քրդական աննման պօէման էր, Սարէ-Սիպա-
նէն, կամ Սիամանդօն ու Խըջէղարէն:

Նա սրտառուչ ձայնով և ցաւոտ շեշտերով երգեց
ու պատմեց, թէ ինչպէս Խըջէղարէն և Սիամանդօն
միենոյն գիշերը երազով տեսան իրար և մատանիները
փոխանակեցին, թէ ինչպէս ապա Սիամանդօն իր հա-
ւատարիմ նժոյդը հեծած՝ գնաց Զոկանցոց էլը և գը-
տաւ իր սիրածին, մի պառաւի միջոցով հազորդեց նը-
րան իր ով լինելը և սէրը, ուզարկեց նրան իր մատա-
նին ճիշտ Խըջէղարէն հարսանիքի օրը. Խըջէղարէն ա-
ռաջարկեց Սիամանդօն՝ իր սիրուն արժանի լինելու
համար յաջորդ օրը փախցնել իրան այն ժամանակ, երբ
նա ձիաւորներով շրջապատուած՝ իր փեսացուի տունը
երթալու կը լինի:

Յաջորդ օրը Սիամանդօն իր նժոյդը հեծած, նետն
ու աղեղը ձեռին, կայծակի նման ընկաւ ձիաւորների
մէջ, մի ձեռքով բռնեց Խըջէղարէն քնքոյշ մէջը, գրեց
իր կոնակը և ձին շարժեց, ոլացաւ դէպի Սիպանայ
սարի կատարը, այնտեղ վար իջեցրեց իր սիրածին,
նստացրեց իր աբայի վրայ, յետ դարձաւ դէպի ձիա-
ւորները, որոնք, թուով յիսուն, հալածում էին նրան:
Նա բոլորին էլ իրար վրայ թափեց, կրկն դէպի Սիպա-

նայ գլուկիր դիմեց, ուր Խըջէզարէի ծնկի վրայ իր գլուկը դրեց և երանութեամբ հանգիստ առաւ:

Այս երգի հէնց առաջին բառերը ցնցեցին Մարօին. նա յիշեց իր և Մուսօի սէրը, յիշեց որ ինքն էլ այժմ Սիպանայ սարի վրայ է, և ի՞նչ տխուր, ի՞նչ սոսկալի զուգադիպութիւն. փոխանակ իր սիրածի գրկում լինելու, զզուելի բէզի հարեմումն է մաշւում: Մարօն սկըսեց սիրով ականջ գնել. երգը նրան հետաքրքրեց:

Երգիչը շարունակեց նկարագրել Սիամանդօի որսը Սիպանայ սարի վրայ:

«Չը համբերեց Սիամանդօն, խեց իր նետն ու աղեղ, վայրի եղան վրայ վագեց, զարկեց նետը նա անշեղ, Եզրն ընկաւ քարից ուժգին, վերից դէպ' վայր գըլորուեց, Սիամանդօն գանակն առաւ, չուտով դէպ' որսը վագեց: Բայց մեծ ոյժով եղջիւրները ցնցեց կատղած կենդանին, եւ անխոհեմ Սիամանդին սարից առաւ վար նետեց. Սիամանդօն կաղնի մի սուր ցցի վրայ վայր ընկաւ, եւ սուր ցիցը մէջքը մտաւ, կրծքից մէկ թիզ դուրս ելաւ:»

Մարօն ականջ էր դնում: Նրա դէմքի անտարբեր արտայայտութիւնը կամաց կամաց փոխում էր: Խըջէզարէի և Սիամանդօի սիրուն նմանեցնելով իր և Մուսօի սէրը, նա յուզուեց և էլ աւելի սիրով ու տխրութեամբ շարունակեց ականջ գնել: Այդ երգի պատճառած վիշտը որբան հաճելի էր նրա սրտին. իր ներքին հրդեհի վրայ զովացուցիչ կաթիների պէս ընկնում էին երգչի բերանից դուրս եկող բառերը և տխուր ցաւոտ հնչիւնները: Յանկարծ Մարօն ցնցուեց մէկէն քնից արթնացածի պէս, աշքերը լայն բաց արեց, ուշագրութիւնը սաստիկ լարեց և մոռանալով երգի բառերը, մոռանալով Սիամանդօին և Խըջէզարէին, բոլոր ուշագրութիւնը կենտրոնացրեց միայն երգչի ձայնի վրայ: Նա չը գիտէր՝ ինքը երազում է, թէ արթուն է, բայց նրան թւում էր, թէ Մուսօի ձայնն է լսում, նա կրկին լարեց ուշագրութիւնը, կրկին ականջ դրեց բերանաբաց. ոչ մի կամած չը կար, Մուսօի ձայնն էր, միայն Մուսօն կարող

էր այդքան արտասուզ քամել ունկնդիրների աչքերից։ Մարօն թողեց մենարանը, մոռացաւ ամեն ինչ, մոռացաւ իր ցաւերը և շտապեց միացաւ բազմութեանը՝ այս տարօրինակ երգչին տեսնելու, նրա դէմքը դիտելու համար։ Մարօն նայեց... հայեացը յամառ էր, կիզիչ, կարծես այդ հայեացըից ազդուած, երգիչն էլ գլուխը բարձրացրեց և նրան նայեց... Տէր Աստուած, այն ինչ պատահեց Մարօխն, քիչ մնաց թուլանար և վայր ընկնէր ուշաթափ։

Մարօն ճանաչեց. նա ինքն էր, իսկ և իսկ Մուսօն էր քրդի շորերով, ուրիշ ոչ ոք լինել չէր կարող, սա Մարօի Սիամանդօն էր։ Մարօն գերմարդկային ոյժ գործ դրեց իր վրայ, որ չը ճշայ, չը վազի և նրա վզովն ընկնի «Մուսօն» կոչելով. նա դողդողաց, ոտքերի վրայ կանգնել չէր կարողանում, կամացուկ յենուեց վրանի սեանը և մոռացաւ իրան, չը դիտէր ինքը երկնքհմն է, թէ երկրում, կենդանի, թէ մեռած։

Մարօն չը սխալուեց. անծանօթ երդիչը Մուսօն էր, նրա Սիամանդօն, որ վրկիչ հրեշտակի պէս յայտնուել էր յանկարծակի Սիամանայ սարի վրայ իր Մարօխն, իր Խըջէզարէին անօրէն բէգի ձեռքից ազատելու համար։

Մարօի վրկութեան մասին երկար մոածելուց, զանազան միջոցներ որոնելուց յետոյ, նա կանդ առաւ մի վերին աստիճանի յանդուգն և վտանգաւոր ծրագրի վրայ—նա վճռեց քիւրդ ձեանալ և շընել սարից սար, ձորից ձոր, թափառել բոլոր բրդերի օբաները, ամեն տեղ երգել իր աննման ձայնով և հզօր երդի հնչիւններով գուրս գրաւել վրաններից քրդուհիներին, յուսալով նրանց մէջ մի տեղ, մի օբայում տեսնել Մարօխն։ Ո՞րքան տանջուեց նա, ինչեր կրեց իր կեղծեքը չը յայտնելու համար։ Քանի՛ քանի անգամ քիչ մնաց յուսահատուէր, քանի՛ օբաներ և էլեր շընեց, իզուր, ոչ մի տեղ նա չը տեսաւ իր Մարօխն. նա տխուր ու յուսահատ հասաւ Սիամանայ սարին, և եթէ այստեղ էլ չը դտնէր,

պէտք է տխուր ու ձեռնունայն վերադառնար և իր սև
օրերին վերջ տար: Սիպան սարի անունը յիշեցրեց նրան
Սարէ-Սիպանէն. և Մուսօն երգեց այդ վշտոտ երգը,
երգեց և նայեց, աչք ածեց շուրջը. և ով զարմանք,
ով երջանկութիւն, նա տեսաւ Մարօին, նրանք նոյն խակ
նայեցին իրար ցաւի և կարօտի անհուն արտայայոււ-
թեամբ, երկու հայեացքները լարեցին իրար: Դժբախտ
երիտասարդը թիւ մնաց խելքը թոցնէր, նրա ձայնը
կերկերաց, արտասուքները խեղդեցին կոկորդը, յան-
կարծ նրա երգն ընդհատուեց, շարունակել անհնարին
էր, հերթը արտասուքին հասաւ, դառն աղի արտա-
սուքներ, որոնք աղբը պէս դուրս ցայտեցին աշքերից:
Ի՞նչպէս չարտասուէր, ի՞նչ օրի էր ընկել նրա հրեշտակ
Մարօն. Մուսօն հազիւ ճանաչեց նրան... և նա արտա-
սուեց, խակ Մարօն վազուց էր արտասուքի հեղեղներ
թափում: Երգչի արտասուքները էլ աւելի յուղեցին ա-
մենքին:

—Խելք մարդ, ասացին այս ու այն կողմից, ի՞նչ-
քան ցաւեր ունի, վաթանն է յիշում:

Երկար արտասուեց Մուսօն, ապա երբ մի փոքր
սիրտը հովացաւ, նա սրբեց արտասուքները և կրկին
շարունակեց ընդհատուած երգը, նկարագրելով այս
անդամ Խընէղարէի սուգը:

«Սիամանդօ, թիւ գնացիր վայրի եղան յետեից,
Ա՛խ, մի աքար, Սիամանդօ. ջան, մի աքար, սիրելիս»:
«Ա՛խ, մի թափիր, Խընէղարէ, գառն արցունքներքո աչքից,
Հառաչանք ու արցունք ծանր խոց է սև սրտիս:

Մի լար, իմ Խընէղարէ, մի լար»:

«Մի լար», այս երկու բառը Մարօի սիրտը ըլլ-
քրում, կտոր-կտոր էին անում: Նրան թւում էր, որ դա
երգ չէ, այլ որ խոկապէս Մուսօն իրան Մարօին է ա-
սում: «մի լար»: Մարօի ոտները կամաց-կամաց թուլա-
ցան, նա նուազում էր, մօտիկ կանգնած քրդուհին
գրկեց նրան, Մուսօն երգեց.

«Սէդ Սիպանայ սարի գլխին բուք-բորան է, փոթորիկ,

Սիամանդո, տես զէնքերդ, աղեղ ու նետ պողվատիկ,
Ախ, ինչու ինձ ականջ չարիր, չը ասացի մի երթար,
Վար զիր զէնքդ, լսիր դու ինձ, ասի՛ դարձիր, մի երթար,
Չար ու անգութ վայրի եղան յետքից դարձիր, մի երթար:
Աշխ, վայրի եղ, չար անսառն, ահաւոր ու անգութ եղ,
Քո եղջիւրներն երկաթէ, զաժան ու սոսկալի եղ,
Իմ սիրուցը ինձ բաժնեցիր էդ Սիպանայ սէդ գլխին,
Մինչև այօր ով էր տեսել որմն սպանի որսորդին,
Սիամանդո, քեզ ասացի լսիր ինձի, մի երթար»:

Մարօն այլ ևս երգի բառերը չէր հասկանում.
պատկերները խառնուեցին, շփոթ առաջ բերին նրա
դլխումք Մարօն տեսաւ, թէ ինչպէս բէդը մեծացաւ,
մեծացաւ, մի ահաւոր եղան կերպարանը առաւ, եղ-
ջիւրներն ահադին, աչքերն արիւնով լցուած, կատաղի,
ամենքը վախան, լերան լանջը դատարկուեց, մնացին
ինքը, Սիամանդոն և կատաղի եզր, որ ահաւոր մողն-
շիւնով եղջիւրները դէմ տուած վաղեց Սիամանդօի
վրայ «Փախիր, Սիամանդօ, կոչում էր Մարօն. Փախիր»,
բայց ձայնը կոկորդից դուրս չէր գալիս. եզր վաղեց,
եղջիւրների վրայ բարձրացրեց Սիամանդօին, Մարօն
մէկ էլ ճչաց, թոյլ, հաղիւ լսելի մի նուաղած ճիչ էր
այն, և ընկաւ ուշաթափի: Մուսօն լսեց այդ ճիչը, դար-
ձեալ ձայնը դողաց, դարձեալ սիրտը փողձկաց. նա տե-
սաւ նոյն իսկ, թէ ինչպէս մի քանի քրդուհիներ վերց-
րին Մարօն, տարան վրանի ներսը: Մարդկային ոյժից
վեր ջանքեր էր հարկաւոր, որ Մուսօն կարողանայ դըս-
պել իրան, որ չը վեր կենայ վաղի օդնութեան, որ չը
ճչայ «Մարօ» և նրան դրկի, բայց նա տարաւ այս ան-
ասելի փորձութիւնը. ջանք արեց, շարունակեց երգը ա-
ռանց սրբելու արտասուրի կաթիլները, որոնք կախուեցին
նրա արտեւանունքներից.

«Սև Սիպանայ ասրի կատար կարծր ժայռ է ու մացառ,
Ցուրտ քամի է փշում վերից և անցնում է սարից սար,
Սիամանդո, տուր ինձ մի ճար, մի ճանապարհ՝ քեզ մօտ դամ,
Յնյց տուր շուտով ինձ ճանապարհ՝ հասնեմ քեզ հետ հոգի
տամ:

Առէք փայտատ և թի բերէք, փորէք խորին գերեզման,
Խըշէզարէն, Սիամանդօն թաղէք մի տեղ անբաժան»:

Երգիչը վերջացրեց իր երգը. նոյն իսկ բէդն զգաց-
ուեց. տիրեց ընդհանուր լուսթիւն:

—Կուռօ Ավդօ, ասաց վերջապէս բէդը, մնա այս-
տեղ, լաօ, մնա իմ տանը, գիշերային պահապան եղիր
վրանիս Մստօի հետ, քեզ զաւակիս պէս կը պահեմ,
դու կը շրջես վրանի շուրջը, կ'երգես քո սրտառուշ եր-
գերը, և դրանց ձայնով մենք հանդիստ կ'առնենք: Հա-
մաձնյն ես, լաօ:

Այս առաջարկութեան վրայ Մուսօի ուրախութեանը
չափ չը մնաց: Արդէն առաջին րոպէից, երբ նա տեսաւ
Մարօին, սկսեց հնարներ մտածել Մարօի մօտ մնալ, որ
եթէ չը կարողանայ ազատել նրան, գոնէ տանջուի նրա
հետ, եթէ չը խօսի հետը, գոնէ հեռուից տեսնի նրա
պատկերը, այրուի նրա սիրով և այստեղ նրան մօտիկ՝
հոգին փչի: Մուսօն շտապեց յայտնել իր համաձայնու-
թիւնը:

—Ծառադ եմ, տէր, ասաց նա, ինձ մի կտոր հաց
է պէտք, այն էլ քո օջաղի յարկի տակ կը ստանամ, էլ
ինչու չը համաձայնեմ: Ո՞ւր գնամ այսուհետեւ, տէր, երբ
ամեն բան կորցրի. վաթանից դուրս ամեն տեղ մար-
դու համար վաթան է, օջաղից դուրս, ամեն օջաղ մար-
դու համար մի օջաղ է:

Եւ Ավդօ-Մուսօն մնաց Հիւնի բէդի տանը որպէս
նրա վրանի գիշերային պահապան Մստօին ընկեր:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Վերջը յաջորդ համարում)

I

ՆՈՎԱ ԼԱԼԻՍ ԵՆ

Նովա լալիս են դրունէ-դուռ ընկած,
Հայրենի երկրի քըււառ զաւակներ,
Ուղէս անկանաչ ոսերից պոկուած
Աշման ուժասպառ, դրժգոյն տերեւներ...

Նովա լալիս են... Եւ մենի անտարբեր,
Մենի անհոգ որդիի ծիծաղկոս բախտի,
Ո՞հ, լոկ խօսքով ենի նոցա եղբայրներ...
«Կոււը բաղցածին մանր կը բրի»...

II

Հ Ե Ր Ի Ք Ե

Հերիք է... եղբայր... Հերիք է, որքան
Անձնատուր եղած դու անզօր լացին,
Ողբացիր կեանիդ, սրգուորի նըման,
Զուր սպասելով վառ լուսաբացին...

Հերիք է... անբեկ, հաստատուն կամքով
Հարթի՛ր քո ուղին—վաղ թէ անազան—
Քո հարթած ուղին կը ծածկուի ծաղկով,
Ա՛յլ ուղի չունի քո լոյս-ապագան...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՀԱՅՈՐ ԼՃԵՐԻ ԵՒ ԿՊՁԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ

(Ճանապարհորդական նկատողութիւններ)

I

Ամառուայ օր է. հիւսիսային ամառուայ օր: Թէև կէսօր է, սակայն արեղակի ճառագայթները շատ քիչ ջերմութիւն ունեն, ծովային թեթև քամին նոյն իսկ մրացնելու չափ հով է: Բոլոր ճանապարհորդներս գուրս ենք եկել շոգենաւի տախտակամածը և տուրիստին յատուկ հետաքրքրութեամբ դիտում ենք մեր առջև բացուած ծովի անհուն տարածութիւնը: Շոգենաւը հետ լոված է լողում, իր ետևից թողնելով վրփուրներից կազմուած մի սպիտակ զիծ. թափանցիկ ջուրը նրա առջև կունում է կակուղ ապակու պէս:

Ճանապարհորդների մեծամասնութիւնը ֆինլանդացիներ են, որոնք Պետերբուրգից վերադառնում են Հելսինգֆորս: Ֆինական լուրջ և մտախոհ դէմքերը գերիշխող են, կան և շվեդներ, որոնք աւելի ուրախ բնաւորութիւն ունեն և դիրութեամբ են ծանօթանում օտարականների հետ:

Սհա հեռաստանում երեսում են սե բժեր ջինջ ծովի երեսին: Գրանիտեայ ապառաժների կտորներ են գրանք, գուրս ցցուած ջրի տակից քարերի սե, ողորկ ու փայլուն մակերեսովը յիշնցնում են լողացող վիթխարի կետերի մէջքեր: Շոգենաւը փոնչալով առաջ է ընթանում. մօտենում ենք քարքարոտ կղզիներին. տեղ-տեղ, ժայռերի ձեղքուածներից գուրս է ցցուել վտիտ ցրտենին, այդ տեսակ կղզիների միակ ծառը: Փոքրիկ, անշուք, բայց ամուր այդ ծառին համեմատում են ֆին ազգի հետ: Սհա ինչպէս է համեմատութիւն անում վիպասան Ահօն «Enris» վերնագրով մանր սպատմուածներից մէկի մէջ. «... Մենք ֆիններս կարող ենք լսել սառնաշունչ հողմերի շառաչիւնը նոյն սառնասրտութեամբ, որքան և ժայռի ծերպին բուսած ցրտենին *): Վերեից խփած կացծակը փշրում է քարեր և ապա-

*) Գենի, можжевельникъ.

ուաժներ, իսկ ցրտենու ծառաթուփն անվասս է մնում: Զինուուրականների ձիերը կոխիլրուում են նրան, թնդանօթների անիւները դէպի գետին են կորացնուում, բայց ձկուն ցրտենին չէ կոտրուում: Երբ անցնուում է փոթորիկը, այդ ցածրիկ թուփը բարձրացնուում է իր ուժեղ իրանը, և ոստերը միմեանց շնչուում են՝ «դու այդտեղ աճիր, իսկ ես այստեղ»: Եւ շատ ժամանակ չանցած, ոտերի և անիւների յետքերը ոչնչանուում, անհետանուում են, այնպէս որ անցորդն այլ ես ոչինչ չէ նկատուում...»:

Անապատ մանր կղզիներին փոխարինուում են անտառապատ մեծ կղզիներ, ուր մէկ-մէկ կարմրին են տալիս ամարանոցների տանիքները: Հաղի մի կղզի ծածկուում է շոգենաւի ետեսուում, իսկոյն ևնթ մեր աչքերի առջև բունուում է միւսը՝ նոյնպէս քարքարոս և անտառապատ: Կղզիներն իրարից այնքան մօտիկ են շարուած, որ շողենաւը մի տեղ համարեա կողերը քերելով է անցնուում երկու կղզիների արանքով: Այդ բազմաթիւ մանր ու խոշոր կղզիների հաւաքածուն և եղերքի երկար ու նեղիկ թերակղզիները միասին անուանուում են չէր (skäg, տշեր), որ մի յատուկ գեղեցիկութիւն են տալիս Ֆինլանդիայի ծովափերին:

Շողենաւն արդէն մօտենուում է Հէլսինգֆօրս քաղաքին: Իջնուում ենք ափ: Այստեղ մեզանից ոչ անցաթուղթ են պահանջուում և ոչ էլ նայուում են մեր իրերին, թէի իրաւունք կայ այդ անելու: Մաքուր հագուած, սպիտակ ձեռնոցներով ոստիկնուը մեզ տալիս է փոքրիկ թիթեղեայ տախտակներ դրոշմած համարներով. որ համարը ընկնուում է ձեղ, այդ համարի հանրակառքը ձեր տրամադրութեան տակ է և միշտ ձեղ կըսպասէ: Ամեն մարդ հեշտութեամբ գտնուում է իրան յատկացրած կառքը: Միծիսնի թենթե կառքը մեզ սլացնուում է մաքուր փողոցներով և կարծ ժամանակից յետոյ կանգ է առնուում մի հոյակապ հիւրանոցի տուած: Հիւրանոցի տէրը դուրս է դալիս և հաղորդուում, որ այժմ աղատ սենեակ չունի. միհնոյն ժամանակ նա քաղաքավարութեամբ առաջարկուում է մեզ իր պատրաստականութիւնը՝ հեռախօսով տեղեկանակ ուրիշ հիւրանոցներուում սենեակների մասին: Բայց իզուր ջանք Բանից դուրս է զալիս, որ քաղաքի բոլոր հիւրանոցներուում ոչ մի թափուր սենեակ չը կայ:

— Դիւղատնտեսական ցուցահանդէսն է դրա պատճառը,— փարատուում է մեր զարմանքը բարեսիրտ Փինլանդացին: — Ահա երեք օր է, ինչ բացել են ցուցահանդէսը, և մողովուրդը երկրի ամեն կողմերից հաւաքուել է Հէլսինգֆօրս, ուստի և հիւրանոցները լիքն են:

Նա մեզ խորհուրդ է աւալիս մտնել ոչ հեռու գտնուող

«Տուրիստների Ընկերութեան» բիւրօն, ուր կարելի կը լինի ի-մանալ կահազարդ սենեակների մասին։ Բիւրօյում ծառայող միակ օրիորդն ուրախութեամբ կատարում է մեր ցանկութիւնը և հեռախօսով հարցնում է զանազան մասնաւոր տեղեր *):

Մի քանի խօսք ասեմ այդ վերին աստիճանի հետաքրքիր և օգտակար ընկերութեան մասին։

«Տուրիստների Ընկերութիւնը» գոյութիւն ունի տաս տարուց ի վեր Եթէ մի օտարական կամ տեղայի ցանկանում է հեշտութեամբ ու յարմարութեամբ ճանապարհորդել երկրում, դիմում է այդ Ընկերութեան բիւրօյն (Norra Esplanadgatan, 15)։ Այսաեղ կարելի է ձեռք բերել երկաթուղու կամ շողենաւի տոմսակ, հարկաւոր քարտէզներ, երկրին վերաբերեալ զանազան գրքեր, հիւրանոցների հասցեներ, իսկ եթէ քնալու տևզը հիւրանոց չէ լինում, ցոյց են տալիս գիւղացիների տներ, ուր կարելի է համեմատաբար յարմարութիւններ գտնել։ Ընկերութիւնը հարատարակում է օգտակար քարտէզներ, ուղղեցոյցներ զանազան լեզուններով և մի ճանապարհորդական հանդէս։ այդ բոլոր հրատարակութիւնների վրայ նա մինչև այժմ ծախսել է 71 հազար մարկ։ Վերջին տարիները նա կառուցանում է իր սեփական հիւրանոցներ, ինչպէս օրինակ Խմատրա ջրվէժի հոյակապ հիւրանոցը։ Նա շինում է բարձր դիտանոցներ այնպիսի տեղերում, որտեղից երևում են գեղեցիկ տեսարաններ, նորոգում է մի քանի ճանապարհներ, հետազոտում է անյայտ, բայց տուրիստների համար հետաքրքիր տեղեր և այլն և այլն։ Ի հարկէ, այդ ամենը միանգամից չեն սկսել, այլ կամաց-կամաց, ֆինական տոկունութեամբ հասել են այսպիսի ցանկալի դրութեամ։ Բացի մայրաքաղաքից ընկերութիւնն ունի 9 օժանդակիչ ճիւղեր գաւառական քաղաքներում։

Մեր ճարած սենեակները գտնուում էին մի մասնաւոր պանսիօնում, ուր ասլրում են ուսանողներ և ուսանողուհիներ, ուրոնց հետ և անմիջապէս ծանօթանում ենք։ Բախտի բերմամբ հանդիպում ենք այսպիսի անձնաւորութիւնների, որոնք յետոյ շատ օգտակար են լինում մեզ Ֆինլանդիայի հետ ծանօթանալու գործում։

—Վաղը մեր առաջի գործն այն կը լինի, որ կ'այցելենք գիւղատնտեսական ցուցահանդէսը, —ի միջի այլոց ասում է մեր

*) Պէտք է նկատել, որ Հէլսինֆորսում խիստ տարածուած է տէլէ-ֆօնի գործածութիւնը։ Համարեա ամեն մի խանութ, նոյն իսկ աննշան մանրավաճառներ, հացթուխներ, կար-անողներ տէլէֆօն ունեն, և շատ էտան է տարեփարձը—մօտ 30 ոռուլի։

Նորածանօթ ուսանողուհի Այինո Կովկրօ: —Թէև մեր երկիրը հարուստ չէ բազմաթիւ բանջարեղիներով և այլ բոյսերի տեսառվ, ուստի և ցուցահանդէսն այնքան էլ ճռի չէ, սակայն հետաքրքիր և ուսանելի շատ նիւթեր կը գտնէք այնուեզ:

Հետեւեալ օրը, վաղ առաւօտեան, մեր նոր ծանօթների հետ միասին տնից գուրս եկանք և դիմեցինք դէպի ցուցահանդէսը: Չը նայած օրուայ վաղ ապահին, փողոցներն արգէն լիքն են ժողովրդով: Լուռ և մտախոհ, հիւսիսին յատուկ, մարդիկ անց ու գարծ են անում կարգապահութենամբ: Լուռթիւնը լիսնագարում են կառքերի աղմուկը և մի խումբ փոքրիկ երեխաների աղաղակները. սրանք լրազիր ծախողներ են, որոնք ամենուրեք վխտում են և առաւօտեան լրազիրները վաճառում: Ամեն մարդ շտապում է ձեռք բերել լրազիր, կառապաններն անդամ լրազիր են կարդում:

Ցուցահանդէսի շինութիւնը մեղանից այնքան էլ հեռու չէ, ուստի գնում ենք ոտով: Լաւ սալայատակած փողոցները չափազանց մաքուր են և ջրած: Տները զլխաւորապէս շինուած են սրբատաշ քարից և նշանաւոր փողոցների վրայ գեղեցիկ և մեծ են, առաւել ևս «Հսալլանալ» կոյուած ծառուղու վրայ:

—Այս հոյակապ տները, անշուշտ, պատկանելիս կը լինեն խոշոր գրամատէրերի, —հարցրեցի իմ ուղեկից ուսանողից. ուրեմն ձեր քաղաքում հարուստներ շատ կան:

—Երեակայեցէք, այդ բոլոր մեծ տները, որ անեսում էք, ի հարկէ, բացի հանրային շինութիւններից, պատկանում են զանազան ակցիօններական ընկերութիւնների, որոնց մէջ բաժին ունեն տմեն տեսակի և կարողութեան տէր մարդիկ, կան նոյն խալ և բանուորներ, մանր վաճառականներ և այլն... բայց ահա և ցուցահանդէսի շինութիւնը:

Վճարում ենք մի ջնջն գումար և ներս մտնում: Ցուցահանդէսում առաջին պահին ինձ զարմացրեց ծաղիկների առատութիւնը: Ամեն ինչ զարդարուած է ծաղիկներով և կանաչով. գիրլիսանդներին, պսակներին, փնջերին թիւ ու հաշիւ չը կայ: Այստեղ նշմարւում է այն սէրը, որ ծաղկազուրկ հիւսիսի մարդիկ տածում են դէպի կամաչը և ծաղիկը: Երիտասարդ, ծեր, կին, տղամարդ, երեխաց՝ բոլորը իրանց վրայ կրում են ծաղիկ, նոյն խակ աղախինները և բանուորները միշտ ծաղիկ են գնում առաւօտեան պաշարի հետ. և ծաղիկն այսուեղ համեմատաբար շատ էժան է:

—Տեսէք այն խոշոր կաղամբները, ասաց ուղեկիցս, նրանք բերուած են Ռւէաբօրդ նահանգի հիւսիսամասից, մի երկրից,

ուր մի քսան տարի սրանից առաջ նշ մի կուլտուրական բոյս չեր գտնվում Այնտեղ, հեռու հիւսիսում, մարդիկ տարին-տասներկու ամիս կերակրւում էին միմիայն ձկնով, այն էլ զլիսաւրապէս աղալի ձկնով, ուստի աղիքային և կաշուի հիւանդութիւններն անպակաս էին այդ տեղերից: Բայց մի անձնաւորութիւն ցանկացաւ անձամբ ապացուցանել, որ ցուրտ երկրներում ևս կարելի է մշակել մի քանի բոյսեր՝ կաղամբ, գետնախնձոր: Ծանր աշխատանքից յետոյ նրան յաջողւում է այդ վայրերում բանջարանոց գցել և գործնականապէս սովորեցնել զիւղացիներին բոյսերի մշակումն: Այժմ այդ զիւղացիները ձկնեղէն կերակրի հետ խառնում են և բանջարեղէններ, այդպիսով այդ երկրին յատուկ հիւանդութիւնները կամաց-կամաց չքանում են:

—Եւ այդ օգտակար գործ կատարողը, —վրայ բերեց ուսանողուհի Այլինօ Կօվերօ, —մի օրիորդ է, որ ուսանել է տեղական զիւղատնտեսական դպրոցում և արտասահմանում լրացրել իր ուսումը:

Ցուցահանդէսում պատուաւոր տեղ էր բռնում կաթնատնտեսական բաժանմունքը: Այստեղ կարելի էր տեսնել, թէ ինչ ձևով և ինչ մեքենաներով պատրաստում են կարագ ու պանիր: Ի ցոյց գրած են նմուշներ այն յատուկ վագօնների, որոնցով իւղը տանում են երկրի խորքից դէպի ծովեղերեայ քաղաքները: Այդ տեսակ վաղօններում իւղը երբէք չէ փշանում՝ ամառը չէ հալուում և չէ սառչում ձմեռը: Իւղն ածած է լինում միատեսակ վոքրիկ տակառների մէջ, իսկ տակառը կարում են կտաւի մէջ: Ամեն մի տակառի վրայ դրոշմուած է ուղարկողի տնունը և տակառի համարը, այնպէս որ եթէ իւղը վատ է դուրս գալիս, դրոշմուած անունից կարելի է իմանալ ով է ուղարկողը, նոյն իսկ՝ որ բանուորն է պատրաստել իւղը: Այդպիսով հնարաւոր է լինում միշտ վերահսկել իւղի որակութեանը:

Գիւղատնտեսութեան այդ ճիւղն այժմ արագութեամբ անում է և մեծ օգուտներ է բերում ֆիլանդիային: Առաջները իւղի և կարագի մեծ մասը տանում էին Պետերբուրդ, բայց այժմ ֆինական իւղն արտահանում են Անգլիա, ուր լաւ ընդունելութիւն է գտած: Հնդկանրապէս իւղի արտադրութիւնն արտայայտում է հետեւեալ թուանշաններով: 1875 թուականին երկրից դուրս է բերուած 4,805,000 քիլոդրամ իւղ. տարեց տարի աւելանալով այդ թիւը հասել է 1895 թ. 14,115,000 քիլոդրամի:

Կառավարութիւնն էլ իր կողմից նպաստում է այդ աճման: Նա բացել է կաթնատնտեսական դպրոցներ, վարձատրում է կաթնագործ վարպետներին և վարպետունիներին, որոնք շըր-

ջում են գիւղերը և սովորեցնում գիւղայիներին՝ իւղ ու պանիր պատրաստելու նորագոյն ձևերը, տաւար խնամելու և հիւանդացած ժամանակը բժշկելու եղանակը:

Երկրիս համար շահաւէտ են անտառները, որոնք բռնում են ֆինլանդիայի մակերեռոյթի մեծ մասը: Առաջները Փին գիւղային անխնայ կերպով ոչնչացնում էր այդ անտառները, բայց վաթսունական թուականներից սկսած, երբ երկաթուղիներ շինուեցին, ջրանցքներ փորուեցին, փայտի արտահանութիւնը սկսում է աճել: Ազգաբնակութիւնը հաւասարապէս օգտառում է այդ արտահանութիւնից, և դրամն առատօրէն մտնում է ամենուրեք, ամենախսաղաղ անիիւններն անդամ: Նիւթական այդ աշողութեան հետ միասին առաջանում է հասարակական և մտաւոր կեանքի շարժումը: Այժմ անտառները երկրին եկամուտ են բերում տարեկան մօտ 48 միլիոն մարկ:

Ցուցահաննդէսում կարելի է տեսնել փայտերի դանազան նմուշներ և ճիպոտներից պատրաստած կարասիքներ, որ վերջին ժամանակները մեծ քանակութեամբ արտահանում են զանազան երկիրներ: Կան վարպետներ, որոնք, ինչպէս և կաթնատեսները, շրջում են գիւղից գիւղ և ամենքին սովորեցնում ճիպոտաց կարասիք պատրաստելու արհեստը: Կառավարութիւնը կահագործ վարպետներից վրայ տարեկան ծախսում է մօտ 10 հազար ոուրլի:

Վերջին տարիները Ֆինլանդիայում սկսել են պատրաստել փայտից մեծ քանակութեամբ հաստ թուղթ (ցելուլօիդ):

Ցուցահաննդէս այցելողն իսկոյն նկատում է, որ հողագործութիւնը երկրի գլխաւոր պարապմունքը չէ: Ֆինլանդիայում, իբրև հիւսիսային մի երկրում, հողագործութիւնը ձևոնտուգործ չէ, որովհետեւ այստեղ ամառը կարծատելու մինում: Չը նայած դրան, հացարոյսերը կարողանում են հասունանալ այդ կարծ ամառուայ ընթացքում աւելի արագութեամբ՝ չնորհիւ ամառուայ լոյս գիշերներին, քան թէ միջին Եւրոպայում: Ֆին հողագործի ամենակարևոր հոգսը լինում է ճահիճներ չորացնելը (ճահճները բռնում են Ֆինլանդիայի ամբողջ մակերեսոյթի 200/0): Անհրաժեշտ է լինում ջրանցքներ փորել ոչ միայն վարելահողի չորս կողմը, այլ և ամբողջ դաշտը կտրել դուգընթաց փոսերով, որ ջուրը հաւաքուի և ցանքսերին չը վնասի: Քիչ մնաս չեն հասցնում արտերին և գիշերային սառնամանիքները, որոնք յաճախակի պատահում են ոչ միայն գարնանը, այլ և ամառն ու աշնանը: Այդպիսի պատահարների հետեանքը լինում է անբերիութիւն, որ պարբերաբար հասնում է երկրին 2—3

տարին մի անգամ։ Այսու հանդերձ ֆին գիւղացին ցանում է հաճար, գարի, ցորեն (վերջինս միայն հարաւային ծովեղերքում), վարսակ, սփսեռ, բակլայ. ամենակարեռը հաճարն է, որ կազմում է ազգաբնակութեան գլխաւոր հացը։ Բայց և այնպէս Ֆինլանդիան օտար հացի կարօտ է զգում։ Ծուսաստանից ներմուծում է Ֆինլանդիա տարեկան 30 միլիոն մարկի հաց։

Ի ցոյց զրած են երկրագործական կատարելագործուած մեքենաներ, ի միջի այլոց և շաքան, որ, երեխ, ապացուցանում է ֆիների արևելքից եկած լինելը։

Համեստ տեղ է բռնում ցուցահանդէսում պատուղների, ճիշտը՝ հատապտուղների (ԱԳՕՃ) բաժանմունքը։ Զուրկ չէ հիւսիսն իրան յատուկ մրգերից։ Ճիշտ է, այստեղ չեն բուսնում տանձ, նոյն իսկ խնձոր, բայց պակաս չեն «մամուրան», որ նման է մեր մոշին, միայն թէ նրանից աւելի համովհոտով է։ այս հրաշալի հատապտուղը բուսնում է միմիայն հիւսիսում, ուր, ինչպէս յայտնի է, ամառուայ գիշերները լոյս են լինում։ Միւս համեղ հատապտուղը «իւրդ-տրօն» է, մասր թթի նման և գեղնազոյն։ կան և մորի, մոռ, հազարձ, զօղնօշ (չերնիկա), կլիւկվա ևայլն։

Այդ հատապտուղներն էլ են արտահանուում երկրից։ Ի հարկէ, աննշան բաներ կը թուան մի ինչ-որ հատապտուղներ, մասուռ, կողովներ, փայտեայ ամաններ և սրանց նման իրեր, սակայն դրանցից այնքան են արտահանում Ֆինլանդիայից, որ տարեկան ստանում են մի քանի միլիոն մարկ։

Ցուցահանդէս այցելողին գիւրութիւն է տուած ուսումնասիրելու երկրի գիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացումը։ Ամեն մի բաժանմունքի մօտ ձրի տալիս են զրբոյիներ, տետրականեր, որոնցից կարելի է գաղափար կազմել երկրի բարդաւաճման մասին։ Այդ բարդաւաճման պակաս չէ նպաստում և կառավարութիւնը։ Բացի բարձրագոյն գիւղատնտեսական ձեմարանից, որ ընդօրինակութիւն է Պարիզի համանման ձեմարանի՝ տնտեսական և գործնական գասընթացքով, նա կառուցել է Յ միջնակարգ գիւղատնտեսական դպրոց տղամարդկանց և կանանց համար, 12 հողագործական և 17 կաթնատընտեսական ուսումնարան։ կան և այգեպահնական դպրոցներ։

Բայց կառավարութիւնից գիւղատնտեսութեան զարգանալուն օգնում են և մասնաւոր ընկերութիւններ, որոնցից ամենահինը և ամենազարգացածն է «Գիւղատնտեսական Ընկերութիւնը»։ 1891 թուականին նա տօնեց իր հարիւրամեակը։ Այդ ընկերութեան անդամակցում են նաև շատ գիւղականներ, պրօֆէսորներ, քահանաներ, պաշտօնեաններ, վաճառականներ։ Նա

աշխատում է ունենալ գործակալներ և թղթակիցներ աշխարհս
ամեն ծայրերում։ սրանց միջոցով տեղեկութիւններ է հաւա-
քում զիւղատնտեսութեան, անտառապահութեան, անամնաբու-
ծութեան մասին ամեն երկրներում։ Ժողովրդի խաւերում օգ-
տակար հասկացողութիւններ տարածելու նպատակով ընկերու-
թիւնը հրատարակում է բազմաթիւ տարրական գրքեր և գա-
սագրքեր զիւղատնտեսութեան և անամնապահութեան վերաբե-
րեալ Հէնց սկզբից նա աշխատում էր ազգաբնակութեան մէջ
տարածել ծաղկի պատուաստը, նոյնպէս և գետնախնձոր ու կը-
տաւհատի մշակելը, ուստի ծրիսպէս բաժանում էր սիճուկ և
սերմացու գետնախնձոր։ Ընկերութիւնը հիմնել է մի քանի ու-
սումնարան զիւղացի ջուրհակների համար և մրցանակ է նշա-
նակել տնայնագործական արդիւնաբերութիւնը զարգացնելու։ Ի
հարկէ Փին զիւղացին, ինչպէս և աշխարհիս բոլոր զիւղացիք,
պահպանողական էր և գծուարութեամբ էր ընդունում այդ նոր-
մուծութիւնները, բայց ընկերութիւնը տուիսնութեամբ և զոյչ
միջոցներով վերջ ի վերջոյ յաղթում է զիւղացու յամառութիւ-
նը։ Ընկերութեան օդնում են եռանդով զիւղական քահանաները.
սրանք էին, որ սկզբում սիրով պարապում էին կտաւհատի
մշակութեամբ և իրանց օրինակով ազգում էին զիւղացիների
վրայ։ Ընկերութեան ամենակարենը ծառայութիւնը եղել է
այն, որ 1836 թ. բացել է Մուստիալում զիւղատնտեսական
ճեմարան։ Դրամական կողմից նա ամենահարուստ ընկերու-
թիւնն է Ֆինլանդիայում՝ չնորհի մասնաւոր մարդկանց և կա-
ռավարութեան առատ նուիրատութիւնների։ Վերջինս մենակ
1881—1891 թուականների ընթացքում տուել է 275 հազար
մարկ։ Այժմ՝ այդպիսի ընկերութիւնների թիւը համառում է քսանի։

Ամենալաւ տրամադրութեան տակ գուրս եկանք ցուցա-
հանդէսից։ Դրսում երաժշտութեան քաղցր ձայնը մեզ գրաւեց
գէպի «Էսապլանադ»։ Նուազում են «Հայրենիք» ազգային օրհներ-
դը, որի հեղինակ՝ Ռունէրէրդի արծանը կանգնած է Էսպլանադ
ծառուղու մէջ տեղը։ Ամեն մի ֆինլանդացի անխտիր, լինի
նա ֆինախօս կամ չվէդախօս, պատկառանդով է արտասանում
ազգային բանաստեղծի և Ֆինլանդիայի ինքնանանաչութեան
քարոզողի անունը։ Երախտագէտ հայրենակիցները ժողովրդից
հաւաքած զրօններով 1885 թուականին կանգնացրել են այդ
պարզ, միաժամանակ հոյակապ կոթողը, որի բացման ներկայ
են գտնուել նոյն իսկ զօրքերը։ Բարձր պատուանդանի վրայ
կանգնած է Ռունէրէրդը երկար սև սիւրտուկ հագած և մտա-
խոհ նայում է իր առջև բացուած ծովի անհուն տարածութեան,
կարծես, հեռացած երկրի մանր կրքերից։ Արձանի պատուան-

դանի առջև կանգնած բրօնզեայ կինը բռնած ունի մի տախտակ, որի վրայ փորագրուած է «Հայրենիք» օրհներգը։ Այստեղ բերում ենք այդ երկի բառացի թարգմանութիւնը, որ կատարել է շվեդերէնից տիկին Ռ. Օ.

Մ Ե Բ Ե Բ Կ Ի Բ

(Պունկտորգի)

«Մեր երկիր, մեր երկիր, մեր հայրենիք։ Բարձր հնչիր, ու, թանկապին խօսք։ Զը կայ երկնքի տակին ոչ մի երկիր, ոչ մի հովիտ, ոչ մի եղերք աւելի սիրուած, քան մեր երկիրը հիւսիսում, քան մեր հայրենի հողը։

«Ազգատ է մեր երկիրը, և այդպէս նա կը մնայ ոսկի սիրողի համար. օտարը հպարտութեամբ մեր մօտովը կ'սնցնէ. իսկ մենք սիրում ենք այդ երկիրն իր անտառներով, իր ժայռերով, իր ջրերով՝ նա մեզ համար ոսկէ երկիր է։

«Մենք սիրում ենք մեր գետերի վշացը, աղբեւրների ոստիւնը, մութ անտառների տրտում աղմուկը, աստղային երկնքը, ամառուայ լոյս գիշերը՝ բոլորը, ինչ որ տալիս են զգացմունքը, երգը և ինչ որ մի անգամ մեր սրտին է դիպել։

Այստեղ մեր հայրերը կոռուել են մաքով, սրով և զութանով, այստեղ լոյս օրերին, ինչպէս և առերին նոյն անդորրութեամբ բարախում էր փին ժողովրդի սիրաը, այստեղ նա տանում էր իր ճակատագիրը։

Ո՞վ է համարել այդ ժողովրդի կոռուղների թիւը։ Կոռուի ճայնն անցնում էր մի հովտից միւս հովիտը. եկաւ սառնամանիքը և իր հետ բերաւ սովի տանջանքը. ով է չափել նրա սէրը և նրա թափած արիւնը։

«Ահա այստեղ նա մեզ համար արիւն է թափել և տանջուել. ահա այստեղ նա խաղաղութիւն է ճաշակել. ահա այստեղ նա համբերել է, հառաչել է աղջը, այստեղ մինչև մեր գալը նա տարել է իր ճակատագիրը։

Այստեղ է մեզ համար քաղցր, այստեղ է մեզ համար լաւ, այստեղ է մեզ տուած ամեն ինչ ինչ էլ որ լինի մեր վիճակը, մենք ունենք մի երկիր, մի հայրենիք. ինչ կայ երկրի երեսին աւելի թանկագին, աւելի սիրելի։

Ահա այստեղ է, ահա այստեղ է մեր երկիրը՝ մենք տեսնում ենք նրան. մենք կարող ենք մեկնել մեր ձեռքը

և ուրախութեամբ ցոյց տալ ծովն ու եղերքը և ասել՝ «Նայիր, այդ երկիրն է մեր հայրենիքը»:

Եթէ՝ մեզ տանէին ապրելու փայլի մէջ, ոսկէ սարերի վրայ, երկնքի կապուտակում, ուր մեր կեանքը դառնար փայլուն, ինչպէս աստղեր, առանց արտասուքի ու հառաշանքի, մեր աղքատ երկիր, հայրենեաց փափագը դարձեալ կը մնար մեր սրտում:

«Ահ, երկիր, դու հազար լճերի երկիր, ուր երդ և հաւատարմութիւն են ապրում. մեր մնցեալի և ասլագայի երկիր, դու չքաւոր ես, սակայն մի ամաչիր. եղիր ազատ, հանգիստ ու երջանիկ»:

«Քո ծաղիկը գեռ կոկոն է, նա դուրս կը գայ իր թագստարանից: Նայիր, թէ ինչպէս կ'ածեն մեր դէպի քեզ տածած ոէրը, քո լոյսը, քո փայլը, քո ուրախութիւնը, քո յոյսը: Եւ ապագայում աւելի բարձր ձայն կը տայ մեր հայրենեաց երգը»:

Առաջին անգամ այդ բանաստեղծութիւնը երգուեց 1898 թուականի մայիսեան տօնախմբութեան ժամանակ:

II

Շատ հետաքրքիր է ֆինլանդիայի մայրաքաղաքը: Եթէ մարդ ցանկութիւն ունի մօտիկից ծանօթանալու երկրի առաջադիմութեան պատմութեան հետ, նա պէտք է Հէլսինգֆորսից սկսէ իր ուսումնասիրութիւնը: Ամեն օր այցելում ենք թանգարաններ, գրադարաններ, հանրային հիմնարկութիւններ, ուսումնարաններ: Կամաց-կամաց ուսումնասիրում ենք երկրի պատմութիւնը, նրա կաղմակերպութիւնը, գրականութիւնը, մամուլը, ազգային շարժումը և այլն:

Փողոցները շրջադայելիս իսկոյն աչքի են ընկնում երկու հոյակապ շինութիւններ, իրար դէմ կանգնած, սրանք Սէյմի և համարանի շինութիւններն են: Ծովից ոչ հեռու, Սենատի հրապարակի վրայ, կառուցած է Սէյմի, Ֆինլանդիայի այդ պարլամենտի, շէնքը, որի գոները բաց են լինում ամեն մի այցելողի համար: Լայն սանդուղքներով բարձրանում ենք երկրորդ յարկը: Մանում ենք գիւղական դասակարգի գահինը: Ընդարձակ և լոյս սրահը, կարծես, դասարան լինի իր պարզութեամբ փայտէ հասարակ դասական գրասեղանները շարուած են երկու կարգով, որոնց առջե դրած են մի աթոռ և մի սեղան, ծածկած կանաչ մահուգով: Դահլիճի պատերը զարդարուած են նշանաւոր գիւղացի գործիչների ձիթանկար պատկերներով: Դահլիճին

կից սենեակում զետեղուած է ճոխ գրադարան, որից օգտուում են պատգամաւորները:

Աւելորդ չի լինի պատմական մի համառօտ ակնարկ անել Սէյմի ծագման և զարգացման մասին, որով միաժամանակ և պարզաբանած կը լինենք մասսամբ, թէ որտեղից է առաջացած այդ երկրի ուրոյն կազմակերպութիւնը:

Ֆինլանդիան պատկանում էր Շվեցիային սկսած 14-րդ դարուց և հաշտում էր տիրապետող երկրի հետ հաւասար մի երկրի: Նա իրաւունք ունէր պատգամաւորներ ուղարկել շվեցիական սէյմին և մասնակցել թագաւորների ընտրութիւններին: Սէյմում Ֆինլանդիայի դորձերը ընդհանուրներից առանձին էին քննուում: Դէպքեր են եղած, երբ թագաւորներն առանձին սէյմեր են հրաւիրած Ֆինլանդիայում: Շվեցիական իշխանութեան տակ նա պահպանել էր իր ֆինական ազգայնութիւնը:

Պետերբուրգ քաղաքի հիմք գնելուց ի վեր Ֆինլանդիայի նույնումն դարձել էր ոռուսաց քաղաքականութեան նպատակը Բալտեան ծովի վրայ: Եւ իրաւ, XIXIII դարի ընթացքում ծագում էին յամառ պատերազմներ ոռուսների և շվեդների մէջ Ֆինլանդիայի համար: Այդ ընդհարումները վերջացան նրանով, որ ըստ Ֆրիդրիխսմի հաշտութեան Ռուսաստանը ձեռք բերեց ամբողջ Ֆինլանդիան մինչև Տօրնէօ գետը: 1809 թուականից ի վեր, իբրև ինքնուրոյն երկիրը, Ֆինլանդիան Մեծ Իշխանութեան անուան տակ մտնում է Ռուսաց կայսրութեան մէջ:

Այդ միջոցներին ֆին հայրենասէրներն օգտուում են Ալէքսանդր Ա-ի ազատամիտ տրամադրութիւնից և կարողանում են համոզել նրան՝ պահպանել տալ իրանց լեզուն, կրօնը, սահմանադրութիւնը, օրէնքները, սեփական վարչութիւնը և պետական տնտեսութիւնը: Ալէքսանդր Ա հանդիսաւոր կերպով հաստատում է Ֆինլանդիայի այդ իրաւունքները 1809 թուականի Բօրդո քաղաքում կայացած Սէյմում:

Շուտով, ինչպէս յայտնի է, կայսրի տրամադրութիւնը վկոխում է, որ ազգում է և Ֆինլանդիայի վրայ: Սէյմ այլևս չէ ժողովում, նոյնպէս և Նիկոլայ Ա-ի թագաւորութեան ժամանակամիջոցում: Ըստ շվեդական հին սահմանադրութեան, որի պատճենն է կազմում ֆինլանդականը, սէյմ կանւելը կախուած է բարձրագոյն իշխանութեան կամքից:

Ուստի 1863 թուականին Ալէքսանդր Բ կայսրը ինքն անձամբ բացում է Սէյմի նիստը Հէլսինդֆորսում: Այդ ժամանակից ի վեր Սէյմերը սկսում են կանոնաւորապէս ժողովուել

սկզբներում հինգ տարին մի անգամ, իսկ 1883 թուականից՝ երեք տարին մի անգամ:

Ծնորհիւ իր կազմակերպութեան առանձնայատկութիւններին, այդ երկիրը սկսեց ապրել սեփական կենցաղով։ Խաղաղ գրսից, աղատ ներքուստ, նա հասել է այժմ կուլտուրական և տնտեսական խոշոր յաջողութիւնների։ Երա արդիւնաբերութիւնը, գիւղատնտեսութիւնը, առևտուրը զարգացել են, ժողովրդի հարստութիւնն աճել, ազգաբնակութեան մէջ տարածուել է լուսաւորութիւնը, արմատ են ձեւ օրէնքներին յարգանքով վերաբերուելը և օրինական զգացմունքը։

Չը նայած որ ֆինլանդիան իր քաղաքակրթութեամբ հասել է արեւտեան Եւրոպային, այնուամենայնիւ ժողովրդային ներկայացուցչութիւնը մինչև այժմ նա պահպանել է այն ձևով, որ մի ժամանակ տարածուած էր Եւրոպայում՝ ամենուրեք և այժմ ոչ մի տեղ այլև դոյցութիւն չունի,—այդ ձեւը դասակարգային ներկայացուցչութիւնն է։

Սէյմը բաղկացած է 315 պատգամաւորներից, որոնցից 62 գիւղացիների ներկայացուցիչներ են, 44 հոգևորականների, 64 քաղաքայինների և 145 «ասպետութեան ու աղնուակամութեան»։ Ամեն մի քաղաք ընտրում է մի կամ մի քանի պատգամաւոր, մինչև 6000 մարդ ունեցող քաղաքը մի պատգամաւոր, 6 հազար՝ երկու, աւելին ունեցողը—ամեն մի 6000-ին մի-մի պատգամաւոր։ 1500 մարդից պակաս ունեցող քաղաքը պատգամաւոր ընտրելու համար է միանալ ուրիշ քաղաքների հետ։

Ամեն մի դասակարգ միւսներից առանձին նիստ է կայացնում։ Բայ ցանկութեան, եթէ միայն ցանկացողները երկու դասակարգից պակաս չեն, բոլոր պատգամաւորները հաւաքւում են միահամուռ խորհրդակցելու, սակայն առանց իրաւունք ունենալու վճիռներ կայացնել։ Նիստերը հրապարակական են, բայց ամեն մի դասակարգ իրաւունք ունի պահանջել, որ գազնիքակ կատարուի նիստը։ Ժողովում ամեն մի անգամ կարող է աղատորէն խօսել, միայն թէ արդելուած է ծաղրել կամ վիրաւորել կառավարութիւնը և առանձին անհատներ, հակառակ դէպքում մեղաւորը պատժում է։ Վճիռները կայացնում է ամեն մի դասակարգ իր առանձին նիստում։ Կարևոր հարցերի վճումն համար պահանջւում է բոլոր դասակարգերի համաձայնութիւնը։

Հերթական Սէյմը կարող է շարունակուել չորս ամիս երբ կարևորութիւն զգացուի՝ կանչում են և արտակարգ սէյմեր։ Այս դէպքում քննուում են միայն այն խնդիրները, որոնք պատճառ են եղած սէյմ հրաւիրուելուն և որոնք, առհասարակ,

կայսրն է առաջարկում։ Սէյմի տեսղութեան ժամանակաշրնթադրում ամեն մի պատգամաւոր ստանում է իր ընտրողներից որոշ ոռօճիկ, 12—20 մարկ (մարկը=37 կոպ.) օրական, նոյնպէս և ճանապարհածախս։ Պատգամաւորի անձնաւորութիւնն այդ միջոցին անձեռնմխելի է։ Նրա վրայ բռնութիւն գործ զնողը ենթարկում է ծանր պատժի։

Ինչպէս վերև յիշեցինք, ժամանակներ են եղած, երբ Սէյմը գաղարեցրած է եղել Այդ միջոցներին երկրի ղեկավարութիւնն իր ձեռքն է առնում մի ուրիշ հիմնարկութիւն, որ պակաս օգուտներ չէ հասցնում երկրի գարգայման։ Դա համալսարանն է, որի շնորհիւնը գտնում է նոյն Սենատի հրապարակի վրայ։ Հրապարակի հիւսիսային կողմում բարձրանում է փինական հոյակապ տաճարը, ուր պատգամաւորները նաև քան Սէյմի բացուելը երդուում են։

Նոյն հրապարակի մէջ տեղը երախտագէտ Ֆինլանդիան գրել է Ալեքսանդր Բ-ի բրոնդէ արձանը։ Այդ գեղեցիկ կոթով կառուցած է ամրող ազգի նուիրատութեամբ և ներկայացնում է բարերար կայսրին այն դիրքում, երբ նա 1864 թուականին մի ճառով բաց է անում Սէյմը։ Արձանը շրջապատում են չորս այլաբանական արձաններ։ Առջեխց՝ մի կիս, որի մօտ կանգնած է առիւծ, բռնած ունի ձեռքին սուր և վահան։ որի վրայ գրած է «Lex». դա՛ Ֆինլանդիան է և իր հին օրէնքները, որոնց պաշտպան և հովանաւորող են համարում ֆինները Ալեքսանդր Բ-ին։ Աջ կողմից՝ գիտութեան և արտեստի արձանը։ Զախ կողմից՝ գիւղացի և գեղջուհի գիւղատնաեսական գործիքներով։ Ետեխց՝ խաղաղութեան աստուածունին արմաւենու ծիւղ ըըռնած։ Ժողովուրդը խորին յարգունքով է վերաբերուում դէպի իր բարերարի յիշատակը։ Ամեն տարի, արձանի բացման օրը, տօնում են մի առանձին շուքով։ Արձանը դարձրուում են թարմ ծաղիկներով, փնջերով, պսակներով, ժապաւէններով։ ուսանողական երգեցին խմբերը երգում են օրուայ պաշտած օրհներդ և այլն։

Արձանի աջ կողմը կառուցուած է համալսարանի շնէքը։ Ֆինլանդական համալսարանն ունեցել է երկրի համար իր յատուկ նշանակութիւնը։ Նա կենարոն է եղել ոչ միայն մտաւոր և գիտական կեանքի, այլ և հանդիսացել է իրեն ազգային վիրածնութեան և միութեան գործոն։

Առաջներն այդ համալսարանը գանւում էր Արծ քաղաքում և հիմնուել է 1640 թուականին։ բայց 1827 թ. այդ քաղաքում պատահած մեծ հրդեհից յիտոյ նրան տեղափոխում են մայրաքաղաք։

Սկզբում համալսարանը՝ ինչպէս և միւս կրթական հիմնարկութիւնները գտնուում էր հոգեորակականների իրաւասութեան տակ, բայց յետոյ աշխարհականների ձեռքն է անցնուում և 1869 թուականին ստանուում է մի կարեոր իրաւունք, այն է՝ Սէյմ ուղարկել երկու պատգամաւոր:

Համալսարանական վարչութիւնն ունի իր առանձին կազմը՝ Բարձրադիրութիւնը կարգադրիչ իրաւունքը պատկանուում է «կանցլէրին», որ անձամբ զեկուցանուում է կայսրին իրերի գրութեան մասին կանցլէրն ունի իր օգնականը, որ պարտաւոր է միշտ մնալ Հէլսինգֆորսուում: Ապա գալիս է համալսարանական վարչութիւնը՝ բէկտօրը և 12 պրօֆէսօր: Կարեոր գէպքերուում բէկտօրն իրաւունք ունի ժողովի հրաւիրել բոլոր միւս պրօֆէսօրներին:

Հէլսինգֆորսի համալսարանը տուել է և համաշխարհային նշանակութիւն ունեցող գիտնականներ, ինչպէս՝ պատմաբան Պօտտան, իրաւաբան Կօլոնիուս, լեզուագէտ Յ. Պօտ, աստղաբաշ Գիւլտէն և, վերջապէս, հիւսիսային ծովերը հետազօտող ականաւոր Նորդնշխօլլ:

Համալսարանուում գասախօսութիւններ լսելը ձրի է և աղատ, ամեն մարդ աղատ մուտք ունի գիտութեան տաճարը, միայն թէ մի քանի դործնական աշխատանքներով պարապելու համար (օրինակ՝ լաբորատորիաներ, լիլինիկներ) կողմանակի անձնաւութիւնները պէտք է ստանան պրօֆէսօրի թոյլաւութիւնը:

Թէև ուսումն ոչինչ չարժէ, սակայն միջոցներ են հարկաւոր ուսանողին համալսարանական քաղաքում ապրելու: Ուսանողների մեծամասնութիւնը սահմանափակ միջոցների տէր է, իսկ շատ-շատերը ոչինչ չունեն: Հէլսինգֆորսուում ապրելու համար մի ուսանողին հարկաւոր են 350—500 ռուբլի տարեկան: Ո՞րտեղից ճարէ այդ գումարը չքաւոր ուսանողը: Այսունզի ուսանողութեան մեծամասնութիւնն անկարող կը լինէր համալսարան վերջացնել, եթէ դոյլութիւն չունենար մի համակրելի սովորութիւն: Ամեն մի ուսանող կարողանում է երկու հոգու երաշխաւորութեամբ մասնաւոր մարդկանցից տոկոսով պարագ վերցնել (սովորաբար 60%) այն պայմանով, որ ուսումը վերջացնելուց և դորժի մասնելուց յետոյ մաս-մաս յետ դարձնէ վերցրած պարագը երկար տարիների ընթացքում: Ուսանողութեան 3/4 մասը համարեա պարտքով է ապրում: Այդպիսով Գինականդացի աղքատ ուսանողը կուչ չէ դալիս հինգ տարուայ ընթացքում միջոցների սղութիւնից և իր պատիւը չէ նսեմացնում ռէժանագին բարերարներից գրօչների առաջ:

Համալսարանն ունի 2150 ուսանող, որոնցից 300 ուսանողուհի: Առաջին ուսանողուհին համալսարան մտաւ 1870 թ. նրանք գիտաւորապէս սովորում են լեզուաբանութիւն:

Պէտք է յիշել, որ համարեա ամբողջ երիտասարդութիւնը, որ Հէլսինգֆօրս է գալիս գիտութիւն ձեռք բերելու, միջնակարդ գորոցը վերջացրած է լինում խաղաղ գաւառական քաղաքների ու գիւղերի նահապետական շրջաններում: Երեկուայ այդ աշակերտն այսօր ուսանող է գասում և սկսում է լիովին ազատ ասքել մի մեծ և իրան անծանօթ քաղաքում: Բնական է, որ այդպիսի ուսանողը վիճարում է մի յենակչա գտնել, ուստի ուրախութեամբ անդամակցում է իր համաերկրացիներից կազմուած ուսանողական ընկերութեան: Ընկերների շրջանում նորեկ ուստնողն անց է կացնում իր ազատ ժամանակը և հներից լսում է գործնական և օգտակար խորհուրդներ, վերջապէս ընկերութիւնը հեշտութեամբ և բարեկամաբար վերահսկում է նրա բարոյականութեան վրայ:

Երիտասարդութեան հաւաքուելու և զուարձանալու տեղը Ուսանողական Տունն է: Այդ հոյակապ շինութիւնը կառուցուած է ժողովրդից հաւաքուած զրամով, ուստի նրա ճակատին դրած է լատիներէն՝ Spei suaes patria dedit (հայրենիքը նուիրել է իր յոյսերին): Ուսանողական տունն ունի հարուստ զրադարձն 50 հազար հատորից կազմուած, ունի կօնցերտի դահիճ, բէստօրան, բիլիարդի սենեակ, ամեն մի ուսանողական ընկերութիւն իր մասնաւոր ժողովների համար ունի առանձին սենեակ. ընդհանուր ժողովներին յատկացրած է մի ահագին սրահ: Ուսանողները հալարտանում են իրանց տնով և սիրով են անցկացնում իրանց ազատ ժամերը այդտեղ, ուր կարելի է տեսնուել ընկերների հետ, զրուցել, կարդալ, խաղալ. ամենազլիսաւորն այն է, որ ուսանողն այդտեղ ստիպուած չէ զրամ ծախսել:

—Մեր համալսարանը սիրելի է ոչ միայն մեզ համար, — ասաց իմ ծանօթ ուսանողը, — այլ և նախկինները սիրով են յիշում իրանց alma mater-ը. զրան ապացոյց հետնեալ դէպքը. 1893 թ. մի ո՞մն Անտոլ, նախկին ուսանող, Պարիզում մեռնելիս, յիշում է իր Հէլսինգֆօրսի համալսարանը և նրան կտակում 800 հազար մարկ:

Ուսանողական տօներ շատ կան, բայց ամենանշանաւորը մայիսի մէկինն է: Այդ օրը նոր ուսանողները և ուսանողուներն իրաւունք են ստանում կրելու սպիտակ թաւշեայ փոքրիկ գտակը, որի վրայ, կօկարդի փոխարէն, պապղում է ոսկեայ փոքրիկ քնարը. ուսանողները ֆինլանդիայում առանձին համազգեստ չեն հագնում: Այդ օրը վաղ առաւօտից ուսանողներ

և աշակերտները ծաղիկներով և դրօշակներով զարդարուած դուրս են գալիս քաղաքից և ամբողջ օրը պարզ օգում անցկացնում. երգում են, խաղում են և խմում մեղրից ու սպիտակ ծաղկից պատրաստած մի ըմպելիք: Ամբողջ քաղաքը մասնակցում է նրանց ուրախութեան:

Վերջին տարիներն այդ ուրախութեան միանում են և բանւորները Այժմ մայիսի 1-ը յայտնի է մի ուրիշ կողմից: 1897 թուականից Ֆինլանդիայում սկսուել է մի օրիգինալ շարժում, այն է՝ «գործողութեան ոգելից խմիչքների դէմ»: Այդ «գործադուլին» մասնակցում են զիխտուորակէս բանուորները: Մայիսի 1-ին «Գործադուլ անողները» խօսք են տալիս ամբողջ տարուայ ընթացքում ոգելից ըմպելիքներ չը խմել: Այս տարի, մայիսի մէկին, համարեա բոլոր չը խմողները ցոյցեր էին սարքել քաղաքում. նրանք պահանջում էին Սէյմից, որ սա ոգելից խմիչքների վաճառումը բոլորովին արգելէ Ֆինլանդիայում: Խնդիրքին ստորագրել էին 140 հազար հոգի և 306 զիւղական համայնք: Որովհետեւ այդ խնդիրքը մերժեցին Սէյմում, ուստի ցուցարարները թուով վեց հազար հոգի, շարքերով, չորս-չորս, Սէնատի հրապարակից լնում են Դիւրգարդէն այդին, պահպանելով, որպէս միշտ լինում է այդպիսի հանգամանքներում, կարդապահութիւն և խաղաղութիւն: Այդում, ի հարկէ, ճառեր են արտասանում ալկօհօլի դէմ:

Ժուժկալութեան հետ Ֆինլանդիայում աճում է և ժողովրդի խնայողութիւնը: Այդ պարզ երեսում է հետեւեալ թուանշաններից: «Խնայողական արկղներում» 1892 թուականին կային 40 միլիոն մարկ, 1898 թ. այդ գումարը հասել է մինչև 67 միլիոն մարկի: Մինոյն ժամանակ մասնաւոր բանկերում հաշում էին 1892 թ. 105 միլիոն մարկ, իսկ 7 տարուց յետոյ բոլոր բանկերում կային 276 միլիոն մարկ: Առհասարակ ժուժկալութիւնը տարածուած է Ֆինլանդիայում, և երկրի օրէնքները նպաստում են զրան: Օղին և կօնսակը վաճառուում են միայն մինչև երեկոյեան ժամը 6-ը, որից յետոյ ոչ մի տեղ չէք կարող ձեռք բերել այդ խմիչքներից, ինչքան էլ դրամ վճարէք: Բացի զրանից օղին փոքր շիշերով չեն ծախում, այլ մեծ ամաններով, որոնցից ամենափոքր սլարունակում է երեք շիշ: Կիրակի օրերը բոլոր զինետները փակ են լինում: Երկաթուղու կայարաններում արգելուած է ոգելից խմիչքների վաճառումն և ոչ ամեն հիւրանոց իրաւունք ունի օղի պահել. դրա համար հարկաւոր է առանձին թոյլտութիւն: Հարբեցողութիւնը խիստ պատժւում է. եթէ մէկին հարբած դրութիւնն մէջ տանում են

ոստիկանատուն, դատարանը նրան և նթարկում է 50 մարկ տուգանքի, չքաւոր դէպքում բանտարկութեան:

Սրա հակառակ վերջին տարիների ընթացքում նկատելի կերպով նուազել է այն անձանց թիւը, որոնք ստանում են հասարակական օգնութիւն: 1894 թուին այդ մարդկանց թիւը ֆինլանդիայում համում էր 98 հազարի, 1895 թուին՝ մինչև 70 հազարի, իսկ ըստ վերջին վիճակագրական տեղեկութիւնների՝ 1898 թուին նուազել է մինչև 54 հազար հոգու, ուրեմն սրանք կազմում են ամբողջ ազգաբնակութեան 20/0 միայն: Այդ ուրախալի երեսյթի պատճառն աղքատներին խնամելու ֆինլանդական օրէնքն է, որի համաձայն աշխատում են, որքան հնարաւոր է, ամեն մէկին միջոց տալ ինքնազլուի աշխատելու իր օրուայ պարէնը:

III

—Շուտով տեղի կ'ունենան «երգեցողութեան և երաժշտութեան» տօնախմբութիւնները, ուստի աւելի լաւ է, որ յետածգենք տարրական դպրոցների ուսումնափրութիւնը,—ասաց մի անգամ իմ բարեկամ ֆինլանդային:

Եւ իրաւ, մի քանի ժամանակից յետոյ ականատես եղանք մի վերին աստիճանի համալրելի տօնի:

Առաջարարակ նկատելի է, որ որքան քաղաքակիրթ է մի աղք, այնքան բազմաթիւ են նրա ժողովրդական տօների թիւը: Նա սիրում է, պահանջ է զգում ընդմիջել առօրեայ աշխատանքն ուրսիս ժամերով, ոչ թէ կեր ու խումով, այլ զլիաւորապէս հոգուն և մտքին բաւականութիւն տուող ուրախ զըւարձութիւններով:

Ամեն տարի, մի անգամ ամառը, ֆինլանդիայի գանհազան քաղաքներում, հերթով, մի քանի օր շարունակ կատարւում են համազգային «երգեցողութեան և երաժշտութեան» տօներ: Ամսիս 16-ին, վաղ առաւոտեան, Սևնատի հրապարակում կայացաւ տօնախմբութեան բացումը: Այստեղ հաւաքուել էին ֆինլանդիայի ամեն անկիւններից եկած երգեցիկ և երաժշտական խմբեր և հասարակութիւն մօտ 20 հազար հոգի: Օտարաքաղաքայիների համար քաղաքը պատրաստել էր երկու հազար մարդկանց բնակարաններ: Տօնախմբութեան մասնակցում էին 47 խումբ երգիչներ և երաժշտներ, որոնցից 11-ը կանացից բաղկացած, ընդամենը 1506 հոգի: Կային նաև էստօնական երկու խումբ:

Միայն այս թուանշանները պարզ ապացոյց են, թէ որքան

լայն ծաւալով է դրուած մինլանդիայում ժողովրդի երաժշտական կրթութիւնը:

Հետեւեալ օրը, առաւօտեան 8 ժամին, Սենատի հրապարակը դարձեալ լցուած էր խիտ ամբոխով: Տաճարի առջև հաւաքուել էին երգեցիկ և երաժշտական խմբերը: Նախ սկսեցին երգել սաղմոս, քահանան կատարեց կարծ ժամասացութիւն, յետոյ սկսուեց տօնախմբութիւնը: Համրաքայլ և կարգապահութեամբ խումբ խմբի ետևից, զրոշակներ ծածանելով, անցնում էին հանդիսականները դէպի կայսանէմի արհեստական անտառը. ճանապարհին միմիայն ուսանողական երգեցիկ խումբն էր բարձրաձայն երգում:

Այդանո՞ւ կայսանէմի վիթխարի ծառերի տակ, երբ հաւաքուած էին խմբերը, պ. կաստրէմ՝ Հէլսինդֆօրս քաղաքի կողմից գեղեցիկ ճառավ հանդիպեց երկուորներին: Ճառից յետոյ բոլոր մասնակցողները սկսեցին երգել «Վօրտ Լանդ» (Հայրենիք) ազգային օրհներգը. այսախի մի վեհ և խորհրդաւոր երգեցողութիւն երգեք չէի լսած, տպաւորութիւնը մեծ էր: Երգեցին մի քանի ֆին-ժողովրդական երգեր և արտասանեցին մի քանի ճառերը: Սյդ օրը նոյնպէս կայսացաւ պատմական կօնցերտ ֆին-վիենուորական դահլիճում, ուր հաւաքուել էր ընտիր հասարակութիւն: Նախ յայտնի երգիչներ Շէմէյկի, Հարկանէն և Սույսամօ երգեցին հիանալի կերպով ֆին-ժողովրդական հին երգեր «Կալէվալայցից», ապա մի ուսանող սօլո նուազեց «Կանտէէց», որ տաւզի է նման, իսկ ձայնը յիշեցնում է մեր սապը: Երեք կին շատ քնքոյց կերպով նուազեցին հովուական սրինդ. մի ուրիշ կին ներկայացրեց ժողովրդական ողբը: Կօնցերտի վերջը նուազեցին ֆին զինուորական «Ամարչեր», իսկ փոքրիկ երեխաները յաջողութեամբ երգեցին աշակերտական երգեր:

Տօնախմբութեան երկրորդ և երրորդ օրերը նոյնքան ուրախ անցան. երգեցին ու նուազեցին անընդհատ: Իրանց վրայ ուշադրութիւն գրաւեցին հետեւեալ խմբերը. «Ժողովրդական ընկերութեան» խումբը, Կուոպի քաղաքից եկած ազատ հրեծների ընկերութեան խումբը, գրաշարների խումբը և, վերջապէս, գերձակների և կօշկակարների խումբը: Սրանից երեսում է, թէ սրբան ժողովրդական է դարձած կանոնաւոր երգեցողութիւնը Ֆինլանդիայում:

Վերջին օրը ի միջի այլոց կարդացուեց յայտնի վիպասանն Ահօի տօնախմբութեան նուիրած պատմուածքը և պրօֆէսօր Սէտէլի շարադրութիւնը: «Երգեցողութեան և երաժշտութեան» տօնախմբութիւնը վերջացաւ պ. Մօրմանի ճառով. նա կրթա-

կան ընկերութեան կողմից չնորհակալութիւն յայտնեց բոլորին, որոնք նպաստել են երաժշտական կրթութիւն տարածելուն ֆինլանդիայում: Ճառից յետոյ երգուեց ազգային օրհներգը: և սաղմոս հայրենիքի համար: Հասարակութիւնը օդը թնդացրեց երեք անդամ «ուռայով» և ուրախ տրամադրութեան տակ ցրուեց, ճանապարհին կրկնելով լած երգերի եղանակները:

Այս տեսակ բուն ժողովրդական տօնախմբութիւն կազմակերպելու համար անհրաժեշտ է, որ ժողովրդի ամեն խաւերը յայտնի աստիճանի կրթութիւն ունենան: Եւ իրաւ, ֆինլանդիայում մտաւոր զարգացումն այն ձևուի, ինչպիսին է Շվեյցարիայում և Միացնալ-Նահանգներում, այսինքն կրթութիւնը գետօկրատական է, այլ խօսքերով՝ այսուեղ բացակայում են խոշոր տաղանդներ, սակայն դրա փոխարէն կրթութիւնը համարեա միահաւասար բաժանուած է ամբողջ երկրի մէջ:

Այդ նպատակին համանելու համար կառավարութիւնը ոչինչ չէ խնայում: Նա ծախսում է կրթական հիմնարկութիւնների վը- բայ իր բիւջէտի մօտ մի քառորդը: (1899 թուականին բիւջէտ եղել է 88,509,000 մարկ, որոնցից աւելորդ է մեացել 20 միլիօն մարկ: այդ մեացած գումարով կառուցանում են ջրանցքներ, երկաթուղիներ):

Ամենահետաքրքիրը ժողովրդական ուսումնարաններն են, որոնց նախահայր անուանում է բիւջէկ իւսո Սիդնէուս. արան է յանձնուած լինում ուսումնասիրելու ֆինլանդիայի ժողովրդական կրթութեան գրութիւնը, և երբ նա մանրամանորէն կատարում է այդ յանձնարարութիւնը, սկսում է ճանապարհորդել Շվեյցարիայում, Դանիայում, Գերմանիայում և Շվեյցարիայում՝ այդ երկիրների գալուցները ուսումնասիրելու նպատակով: Արտասահմանում Սիդնէուս հանդիպում է յայտնի մանկավարժ Դիստերէգին, որ անշուշտ մնծ ազգեցութիւն է թողնում նրա հայեացքների վրայ: Ամենակատարիհալ ուսումնարանը Սիդնէուս գտնում է Շվեյցարիայում: Երբ նա հայրենիք է վերադառնում, ֆինլանդական սեյմը նրան առաջարկում է կազմել ժողովրդական ուսումնարանների ծրագիրը:

1860 թուականի վերջն այդ ծրագիրը պատրաստ է լինում, և Սիդնէուս նշանակում է բոլոր ուսումնարանների գըլ- խաւոր վերատեսուչ: Ժողովրդական գալուցների թիւը սկսում է տարէց տարի ածել: 1896 թուականին նրանց թիւը համառ է 1273-ի 1396 ուսուցիչներով և 97 հազար աշակերաններով: Բայց այդ մշտական ուսումնարաններից յետ ընկած գիւղերում գոյութիւն ունեն և չարժական գալուցներ: Այդ ուսումնարաններում անցնում են հետեւալ առարկաները. կրօն, մայրենի լե-

զու, թուաբանութիւն, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, ընդհանուր պատմութիւն, ֆինլանդիայի պատմութիւն, բնական գիտութիւններ, երգեցողութիւն, գծագրութիւն, ձեռագործ և արհեստներ:

Ուսումնարանների շինութիւնները կառուցուած են հիանալի կերպով, տեխնիկայի և առողջապահութեան բոլոր պահանջների համաձայն, դասարանները և միջանցքները ընդարձակ են, լուսաւոր և մաքուր:

Գարնան սկզբներին Վիբուրգ քաղաքումն էինք *), Սյցելցինք այստեղի ժողովրդական դպրոցը: Տեսուչն ամենայն քաղաքավարութեամբ յանձն առաւ մեզ անծանօթներիս ցոյց տալ իր իրաւասութեան տակ գտնուող ուսումնարանը, որի հէնց արտաքինն իսկոյն գրաւում է մարդուս. դպրոցի շինութիւնն ամենամեծը և ամենագեղեցիկն է քաղաքումը: Այդպիսի դպրոցներում տղաները և աղջիկները միասին են սովորում: Տեսանք և դպրոցի արհեստանոյը, ուր տղաները սովորում են առաջադադութիւն. վարպետը մեզ ցոյց տուեց աշակերտների շինած մի քանի իրեր, որոնք պատրաստուած էին մաքուր և գեղեցիկ: Աղջիկները պարապում են կար ու ձևով և խոհարարութեամբ: Դպրոցի ներքին յարկում զետեղուած են խոհանոցները, ուր աշակերտուհիները, ապագայ տանտիկինները, նշանակած ժամերին սովորում են կերակուր եփել: Մեր տեսած աղջիկները «տօլմի» նման մի բան էին տապակում (փակագծի մէջ նկատեմ, որ Փիները դրան նոյնպէս «տօլմա» են անուանում) և այնքան վարպետ կերպով, որ պատրաստած կերակուրները մօտիկ բէստօրանում վաճառում են այցելողներին:

Ժողովրդական ուսումնարանների արհեստանոցները և խոհանոցները մասնագիտական նշանակութիւն չունեն,—այդ նպատակի համար կան յատուկ հիմնարկութիւններ, —այլ դրանք գոյութիւն ունեն նրա համար, որ ապագայ ընտանիքի տէրն ընդունակ լինի գործիքներ բանեցնել առօրեայ պէտքերի համար, իսկ տանտիկինը կարողանայ իր ընտանիքի կերակուրն եփել:

Այդ օրը մենք ներկայ գտնուեցանք և աշակերտուհիների մարմնամարդութեան, որի դասաւուն մի օրիորդ է: Որովհետեւ եղանակն անձրեային էր, ուստի վարժութիւններն այդ օդը կատարուեցին ոչ թէ աղատ օդում, ինչպէս սովորաբար է լի-

*.) Տե՛ս «Եղակ» 1899 թ. № 157 «Թէպի Խմատրա» ճանապարհորդական նկարագրութիւնը:

նում, այլ մի առանձին գահվճում, որ բաւականին մեծ էր և յարմարութիւններ ունէր միջի օդը հեշտութեամբ նորոգուելու: Հէնց որ սկսուեց մարմնամարզական վարժութիւնները, վարժուհու դէմքը, որ մինչև այդ բարութիւն և հեղութիւն էր արտայայտում, իսկոյն ևեթ կերպարանափոխուեց է, կարծես, դա մի քնքոյց օրիորդ էր, այլ պրուսական մի իւնկեր, ձայնն էլ խիստ էր և հրամայողական: Աշակերտուհինները ծառութեամբ կատարում էին նրա հրամանները և ճարպիկութեամբ զանազան մարմնամարզական շարժումներ անում, այնպէս որ ոչնչով յետ չէին մնում տղամներից:

Մատանք և ուսումնարանի գրադարան-ընթերցարանը, ուր կային և մի քանի լրագիրներ: Այս երկում աշակերտներին արգելուած չէ լրագիրների ընթերցանութիւնը: Տեղիս մանկավարժներն իրաւամբ նկատում են, թէ ապագայ քաղաքացինները հէնց մանկութիւնից պիտի ծանօթանան երկրի խնդիրներին:

Բացի ժողովդական դպրոցներից, Ֆինլանդիայում կան ևս բազմաթիւ կիրակնօրեայ ուսումնարաններ, ուր սովորողների թիւը համառում է մինչև 200 հազար հոգու. սրանց մեծամասնութիւնն արդէն գրադէտ մարդիկ են, սակայն ուսումնարան են յաճախում իրանց յիշողութեան մէջ նորոգելու առաջուայ սովորած գիտութիւնները և նորերը իւրացնելու: Վերջին ժամանակներս աշխատում են այդ տեսակի ուսումնարանները վերածելու ժողովրդական համալսարանների, սակայն կառավարութիւնը, սուզ միջոցների պատճառով, անկարող է լինում օգնութեան գալու: Այդ գործի նախաձեռնութիւնը վերցնում է հէնց ինքը հասարակութիւնը, գլխաւորապէս Հէլսինգֆորսի երիտասարդութիւնը, որ մինչև այժմ հաւաքել է յօգուտ վերայիշեալ հիմնարկութեան 100 հազար մարկից աւել: Ժողովրդական համալսարաններին նուիրատութիւններ են անում, կօնցէրաններ և երեկոյթներ են սարքում և այն, վերջոյ գոյանում է մի պատկառելի զումար, որով բաց են անում մի քանի ժողովրդական համալսարան:

Ֆինլանդիայի միջնակարգ դպրոցները համարես նման են ուսուաց գիմնազիաններին և բէալական ուսումնարաններին, ուստի աւելորդ եմ համարում նրանց մասին տեղեկութիւններ տալ:

(Աերջը յաջորդ համարում)

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ...

(Ահրօնօսովի)

Ես սիրում եմ, երբ սըրտի հետ մի ներքին
կոխ մղելով, կոյսն է ժիկնում վարդի պէս.
Այդպէս եւ մեռա՝ ըսպասելով փորորկին,
Վերջարոյսն է շառագունում հրակէզ։

Ես սիրում եմ, երբ զիշերին լուսնավառ
Անտառի մէջ կոյսն է յուզուած հառաչում.
Այդպէս խօսուն եւ տափոն է ոսկէլար
Մեղմ նուագով ցուրտ բամու հետ ըրընջում։

Բայց առաւել հըմայի՛չ է իմ աչքին
Կոյսի արցունին, երբ աղօրք է նա անում.
Այդպէս վըկայ եւ Փրկչի լուռ տանջանին,
Քերովքն էր անմեղ լախ, վըշանում։

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դ Ր Ա Մ Ա

Գերհար Հառւպտմանի

Հ Ի Ւ Գ Ե Բ Ո Ր Գ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նոր դէպքերը համարեա անմիջապէս կապւում են չորրորդ գործողոթեան
մէջ պատահածներին: Սենեակը զառարկ է, վառուած լամպը դեռ մնում
է սեղանի վրայ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դրսի դոնից մտնում է հապճնպ եւ լի բար-
կուրեամբ): Մայր: (Բացում է նեղարանի դուռը): Մայր:

Տ. ՖՕԿԵԲՈՍ. (Դուրս է զալիս նեղարանից): Էլ ի՞նչ պա-
տահեց, աղայ: Մի աղմկիր այդպէս: Ֆիլիպպիկին կը զար-
թեցնս:

ՅՈՀ. Մայր, կ'ուզենայի իմանալ թէ ովքեղ իրաւունք
տուեց—հեռացնել իմ անից հիւրերին:

Տ. ՖՕԿԵԲՈՍ. Բայց, աղայ... այդ խոկի մտքովս էլ չի ան-
ցել, ես ոչ ոքի չեմ հեռացրել:

ՅՈՀ. (Բարկացած յետ առաջ բայլելով): Մայր, դու
ստում ես:

Տ. ՖՕԿԵԲՈՍ. Եւ դու թոյլ ես տալիս քեղ այդ ասել մօրդ
երեախն, Հաննէս:

ՅՈՀ. Ես պէտք է այդ քեղ ասեմ, որովհետեւ այդ այդպէս
է: Օրիորդ Աննան պատրաստում է գնալ և...

Տ. ՖՕԿԵԲՈՍ. Նա քեղ ասաց որ ես նրան տնից մերժեցի:

ՅՈՀ. Հարկ չը կար որ նա ինձ ասի: Այդ ես ինքս էլ զի-
տեմ:

Տ. ՖՕԿԵԲՈՍ. Ի՞նչ գիտես, աղաս:

ՅՈՀ. Նա գնում է: Դուք այնքան խօսեցիք, խօսեցիք որ

*) Տե՛ս «Սուլճ» № № 3, 4, 5, 6, 7.

վերջապէս հասաք ձեր նպատակին: Բայց ես քեզ ասում եմ. ես կը պառկեմ դռան առաջ: Ես կը վերցնեմ ատրճանակը, (վերցնում է գրեթի պահարանից մի ատրճանակ): — Ահա, կ'ուղղեմ այսպէս զիսիս: Եւ երբ նա գնայ, ես խկոյն կ'արձակեմ, երդւում եմ կեանքով:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Վախեցած եւ զինքը կորցրած կամենում է բռնել նրա ձեռքից). Հաննէս... Թող, թող այդ ի սէր Աստուծոյ:

ՅՈՒ. Ես քեզ խօսք եմ տալիս:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Կահցում է): Հայրիկ, հայրիկ, չուտ արա, եկ: Հեշտութեամբ կարող է արձակուել և... հայրիկ. եկ խելքի բեր տղիդ:

ՄԵՐ ՖՈԿԵՐԱՄԸ ՆԵՐԻ Է ՃՈՆՈՒՄ ՆՆՅԱՐԱՆԻՑ:

ՅՈՒ. ՀԱՅՐ: (Յանկարծ սրափուելով, վայր է զցում ատրճանակը):

ՖՕԿԵՐՍ. Այս, ես... այդ ես եմ—և այդպէս... այդպէս է վիճակուած ինձ քեզ հաղիպել:

ՅՈՒ. Այս ինչ է նշանակում, մայր:

ՖՕԿԵՐՍ. (Մօտենալով նրան, լուրջ է հանդիսաւոր ձեւով ասում է): Որ դու պէտք է խելքի դաս, որդի—ահա ինչ է այդ նշանակում:

ՅՈՒ. Ի՞նչը քեզ բերաւ այստեղ:

ՖՕԿԵՐՍ. Աստուծոյ կամքը, Աստուծոյ կամքը բերաւ ինձ քեզ մօս:

ՅՈՒ. Մայրս քեզ հրաւիրեց:

ՖՕԿԵՐՍ. Այն, Հաննէս:

ՅՈՒ. Ի՞նչու:

ՖՕԿԵՐՍ. Որ քեզ իրրե բարեկամ օդնեմ, այս:

ՅՈՒ. Բայց միթէ ես կարօտ եմ օդնութեան:

ՖՕԿԵՐՍ. Այն, Հաննէս, որովհետեւ դու թոյլ ես: Մի թոյլ մարդ, ինչպէս մենք ամենքս, այս:

ՅՈՒ. Եւ եթէ ես այժմ թոյլ եմ, ինչով ես ուզում ինձ օդնել:

ՖՕԿԵՐՍ. (Մօտենում է նրան, բռնում նրա ձեռները): Ե՞ս պէտք է քեզ ասեմ թէ ինչքան ենք բոլորս քեզ սիրում, այս: Եւ ապա պէտք է քեզ նաև ասեմ, որ Աստուծած զթառատ է դէպի մեղաւորը, այս, դէպի այն մեղաւորը, որ կը զզայ:

ՅՈՒ. Ռւրեմն ես մեղաւոր եմ:

ՖՕԿԵՐՍ. (Առաջուայ բնեութեամբ): Մեծ մեղաւոր, այս—Աստուծոյ առաջ:

ՅՈՒ. Բայց ինչ մեղք եմ ես գործել:

ՖՕԿԵՐԱՏ. Ով ցանկութեամբ է նայում, կնոջ, ասաց Քրիստոս, այն, իսկ դու աւելին ես արել, այն, այն:

ՅՈՀ. (Նարծում է անում, կարծես ուզում է ականջները փակել): Հայր...

ՖՕԿԵՐԱՏ. Մի փակուիր, Հաննէս: Տուր ինձ ձեռքդ, ինչպէս մեղաւորը մեղաւորին, և ընդունիր ինձ: Ընդունիր ինձ իբրև մի մարտակցի:

ՅՈՀ. Հայր, ես պէտք է քեզ ասեմ որ ես այլ գետնի վրայ եմ կանգնած քան դու:

ՖՕԿԵՐԱՏ. Դու կանգնած ես մի զառիվայր գետնի վրայ:

ՅՈՀ. Ի՞նչպէս կարող ես դու այդ ասել, հայր: Դու հօ չես ճանաչում իմ ճանապարհը:

ՖՕԿԵՐԱՏ. Օ, ի հարկէ. այդ մի լայն ճանապարհ էր ի կորուստ: Ես լուելեայն հետեւմ էի քեզ: Այն, և բայց ինձնից նաև աւելի մի Բարձր Էակ—Աստուած: Եւ որովհետեւ ես այդ գիտէի, ուստի ձգձգում էի կատարել իմ պարագը, այն: Բայց այսօր ես գալիս եմ քեզ մօտ Նրա անունից և ասում քեզ. Յետ կաց. դու կանգնած ես անդունդի առաջ:

ՅՈՀ. Ես պէտք է քեզ ասեմ, հայր... քո խօսքերը բարի են և անկեղծ մտածուած, բայց—Նրանք իմ մէջ արձագանք չեն գտնում: Քո անդունդներից ես չեմ վախոնում. բայց կան այլ անդունդներ, և որ դուք ինձ չը զլորէք այնտեղ—ահա զրանից դուք զգուշացէք:

ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, Հաննէս... ոչ...

ՅՈՀ. Ուղիղ չէ թէ ով կը նայի կնոջ վրայ ցանկութեամբ նա լուծում է ամուսնութիւնը: Ես մաքառեցի և մաքառեցի...

ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, Հաննէս: Ոչ: Ես յաճախ եմ քեզ խորհուրդներ տուել, և նրանք միշտ քեզ օգուտ են տուել: Այսօր ես քեզ ասում եմ, քեզ մի խաբիր, վերջ դիր: Մտածիր քո կնոջ մասին, քո Ֆիլիպափիլի մասին, և նմանապէս մի քիչ մտածիր և քո ծեր ծնողների մասին: Մի բաղմայնիր...

ՅՈՀ. Բայց չը պէտք է ինքս իմ մասին էլ մտածեմ, հայր:

ՖՕԿԵՐԱՏ. Դու միայն վճռիր և կը տեսնես թէ ինչպէս ազատ և թեթե կը զգաս քեզ:

ՅՈՀ. Իսկ եթէ այդպէս չը լինի:

ՖՕԿԵՐԱՏ. Ապալինիր ինձ և այդպէս կը լինի:

ՅՈՀ. Իսկ եթէ... Իսկ օրիորդ Աննան:

ՖՕԿԵՐԱՏ. Աշխարհիս զաւակները, Հաննէս, հեշտ են մօռնում...

ՅՈՀ. Իսկ եթէ նա հեշտ չը մոռանայ:

ՅՈԿԵՐԱԾ. Այն ժամանակ նշանակում է Աստուծոյ կամքն էր այդպէս:

ՅՈՀ. Դէ, հայր... ես այլ հայեացք ունեմ: Մենք իրար չենք հասկանում: Եւ ի հարկէ այդ խնդիրներում երբէք իրար չենք հասկանայ:

ՅՈԿԵՐԱԾ. (Դեռ լոս կարելոյն բարեհոգութեամբ): Այստեղ... այստեղ խօսքը բոլորովին հասկանալու մասին չէ: Դու սիալ ես ըմբռնում հանգամանքը, այն, այն Հանգամանքը բոլորովին այլ է: Այդ դու էլ առաջ շատ լաւ գիտէիր: Բանը այն չէ... բանը իմ հասկանալ չը հասկանալը չէ:

ՅՈՀ. Մի նեղանար, հայր, բայց ինչում է բանը:

ՅՈԿԵՐԱԾ. Հնազանդութեան մէջ է, ես կարծում եմ, այն:

ՅՈՀ. Այսինքն դու կարծում ես որ ես պէտք է անեմ ամեն բան, ինչ որ դու ուզում ես, թէկուզ այդ ինձ անարդար թուի անգամ:

ՅՈԿԵՐԱԾ. Ես քեզ անարդար բան խորհուրդ չեմ տալ, այս: Շատ ցաւում եմ, որ ստիպուած եմ քեզ ասել... ստիպուած եմ քեզ մի քանի բան յիշեցնել, այս: Մենք քեզ մեծացրինք ոչ առանց հոգասարութեան և անկուն գիշերների: Մենք քեզ ինսամեցինք և ոչ մի զոհաբերութիւն չը խնայեցինք, երբ դու հիւանդ էիր, իսկ դու քո տղայութեանդ ժամանակ յածախ ես հիւանդացել, Հաննէս, այս: Մենք ամեն ինչ արել ենք յօժարութեամբ և ուրախութեամբ:

ՅՈՀ. Այն, հայր, և այդ բոլորի համար ես շատ չնորհակալ եմ ձեզնից:

ՅՈԿԵՐԱԾ. Այդ միայն խօսքեր են, գործ, գործ եմ ես ուզում տեսնել: Բարեկապաշտ, մաքուր, հնազանդ մարդ եղիր, այս, ահա որն է իսկական չնորհակալութիւնը:

ՅՈՀ. Ուրեմն քո կարծիքով ես ապերախտ եմ. ես արժանի չեմ ձեր ջանքերին:

ՅՈԿԵՐԱԾ. Դու գեռ յիշում ես, ինչուս էիր երեխայ ժամանակդ միշտ աղօթում—մահճակալում, այն—երեկոյ և առաւօտ:

ՅՈՀ. Ի՞նչի՞ մասին, հայր:

ՅՈԿԵՐԱԾ. Ախ, Տէր Աստուած, աղօթում էիր դու, աղաշում եմ Քեզ, օգնիր ինձ լինել բարեպաշտ մանուկ: Իսկ եթէ ես չը դառնամ...

ՅՈՀ. Աւելի լաւ է ինձ վերցրու երկրից: Ուրեմն դու կարծում ես որ աւելի լաւ կը լինէր, եթէ դուք ինձ թաղէիք դեռ այն ժամանակ:

ՖՕԿԵՐԱԾ. Եթէ դու շարունակում ես ընթանալ զառիվայր ուղիով... այո... եթէ քո սիրտը մնում է յամառ...

ՅՈՀ. Այո, ես էլ եմ կարծում որ այդ աւելի լաւ կը լինէր:

Փոքր դադար:

ՖՕԿԵՐԱԾ. Ուշքի եկ, որդեակ, յիշիր նրանց, Հաննէս, այն, նրանց, որոնք քեզ յորդորել են. յիշիր պաստօր Պֆէյֆէրին, քո բարեպաշտ ուսուցչին և խոստովանահօրը: Յիշիր...

ՅՈՀ. (Դուրս գալով իրանից): Հայր. թնդ ինձ հանգիստ իմ այդ ուսուցիչներով, եթէ չես ուզում որ ծիծաղեմ: Մի յիշեցնիր ինձ այդ ոչխարագլուխների հասարակութիւնը, որ դաստիարակելու տեղ հանել է ծուծը իմ ուկորներից:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Օ՛, երկնային Հայր:

ՖՕԿԵՐԱԾ. Լոհիր, Մարթա, լոիր: (Յոհաննեսին): Քո ուսուցիչները և մենք այդ վերաբերմունքին չեինք արժանի:

ՅՈՀ. (Բղաւելով): Դուք ինձ սպանեցիք:

ՖՕԿԵՐԱԾ. Դու յանցանք ես գործում, Հաննէս:

ՅՈՀ. Ես զիտեմ թէ ինչ եմ ասում. դուք ինձ սպանեցիք:

ՖՕԿԵՐԱԾ. Այդպէս ես վարձատրում մեր սէրը:

ՅՈՀ. Զեր սէրը ինձ սպանեց:

ՖՕԿԵՐԱԾ. Ես այլ ևս քեզ չեմ հասկանում::

ՅՈՀ. Այդ ես ինքս էլ զիտեմ, հայր: Դուք երբէք ինձ չեք հասկացել և երբէք էլ չեք հասկանալ:

Փոքր դադար:

ՖՕԿԵՐԱԾ. Լաւ, լաւ, Հաննէս: Ես վերջացրի: Ես չը գիտէի որ բանը այդքան հեռու է զնացել: Ես յոյս ունէի, բայց իմ միջոցները սպասուեցան: Այստեղ միայն Աստուած կարող է դեռ օդնել: Գնանք, իմ պառաւ Մարթա, մենք այժմ աւելի բան չունենք այստեղ վնտրելու, այս: Մենք պէտք է մի այլ տեղ թագնուենք և սպասենք. մինչև որ ողորմած Աստուած մենք կը կանչէ: (Նորից դիմում է Յոհաննեսին): Բայց, Հաննէս. մի բան ևս պէտք է քեզ ասեմ. մի թաթախիր ձեռներդ արեան մէջ: Լսում ես: Այդ մեղքն էլ մի վերցրու քեզ վրայ:—Արդեօք լաւ մտածել ես և Կէթէի մասին: Դու զիտես որ մենք վախենում ենք որ նա խելազարուի: Նայել ես ուշագրութեամբ այդ խեղճ, սիրելի էակի վրայ, չէ: Արդեօք բաւականաչափ պարզ է քեզ համար թէ ինչ էք դուք արել նրա հետ: Թող մայրդ միայն պատմի թէ ինչպէս է խեղճ Կէթէն զիշերներով լալիս և հեկեկում քո պատկերի վրայ: Դէ միանդամ ևս կրկնում եմ, Հան-

նէս, մի թաթախիր ձեռներդ արեան մէջ: Եւ այժմ մենք վեր-
ջացրինք, այն: Եկ գնանք, Մարթա, գնանք:

ՅՈՀ. (Կարհատել մաքառումից յիշոյ): Հայր, մայր:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Յետ են նայում, Յոհաննեսը ընկնում է
ՖՕԿԵԼՍ. } նրանց գիրկը): Յոհաննէս:

Թաղում:

ՅՈՀ. (Ընկնուած ձայնով): Հիմա ասէք, ի՞նչ պէտք է ես
անեմ:

ՖՕԿԵՐՍ. Մի պահիր օրիորդին: Թող նա գնայ, Հաննէս:

ՅՈՀ. Խոստանում եմ քեզ այդ: (Ուժասպառ եղած, սիխ-
ուած է նսել աբովի վրայ):

Տիկին Ֆօկերատը ուրախացած շտապում է դէպի ննջարանը:

ՖՕԿԵՐՍ. (Եղում է Յոհաննեսին եւ համբուրում նրա նա-
կարը): Իսկ այժմ—թող Աստուած քեզ ոյժ տայ: (Գնում է
ննջարան):

Յոհաննէսը մի քանի վայրկեան նստում է հանդարտ, ապա ցնցում
է ամբողջապէս, դառնում է անհանգիստ, վեր է կենում տեղից, պատու-
հանից դիտում աղջամողչը, յետոյ բայց է անում դրսի դուռը:

ՅՈՀ. Ո՞վ է այդտեղ:

ՕԲ. ԱՆՆԱ. Այդ ես եմ, պարոն Յոհաննէս: (Ներս է
մենում):

ՅՈՀ. Դուք ուզում էք գնալ առանց մնաք բարեաւ ասե-
լու: (Յետ ու առաջ բայինով):

ՕԲ. ԱՆՆԱ. Իսկապէս մի բոպէ ես տատանում էի: Բայց
այժմ այդպէս լսու է:

ՅՈՀ. Ես սարսափելի դրութեան մէջ եմ: Իմ հայրը այստեղ
է: Ես նրան երբէք այդպէս չեմ տեսել: Միշտ ուրախ ու պարզ
մարդ... Ես չեմ կարողանում բաժանուել այդ տպաւորութիւ-
նից: Իսկ միւս կողմից պէտք է տեսնեմ, թէ ինչպէս դուք մեղ-
նից հեռանում էք, օրիորդ և...

ՕԲ. ԱՆՆԱ. Լսէք, պարոն դօկտօր, չէ որ ես այսպէս թէ
այնպէս պէտք է հեռանայի:

ՅՈՀ. Բայց դուք չը պէտք է գնաք. դուք չէք կարող գնալ:
Գոնեա այժմ, այժմ այս վայրկեանում: (Նսում է, նակարը
յենում ձեռներին, խոր հառաչ է դուրս գալիս նրա կրծքից):

ՕԲ. ԱՆՆԱ. (Յուզուած, հազիր լսելի ձայնով): Պարոն
դօկտօր: (Կամաց դնում է ձեռքը նրա մազերին):

ՅՈՀ. (Ուղղում է տեղում, հառաչելով): Ախ, օրիորդ Աննա:

ՕԲ. ԱՆՆԱ. Ցիշէք այն խօսքերը, որ մենք մի քանի ժամ

առաջ ասացինք: — Ստիպումը պէտք է առաքինութիւն գար-
ձնենք:

ՅՈՆ. (Վեր է կենում տեղից եւ յուզուած յետ ու առաջ
քայլում): Ես չը գիտեմ ինչի մասին ենք մենք խօսացել: Գլուխս
դադարկ է և ամայի և տանջուած: Ես չը գիտեմ անգամ թէ
ինչ եմ խօսել հօրս հետ: Ես ոչինչ չը գիտեմ: Դատարկ է և
ամայի իմ գլուխս:

ՕՐ. ԱՆՆԱ. Այս, շատ լաւ կը լինէր, պարոն Յոհաննէս,
եթէ մեր վերջին բոպէները լինէին պայծառ բոպէներ:

ՅՈՆ. (Կարեատեւ ներքին կոռուիզ յետոյ): Օգնեցք ինձ, օ-
րիսրդ Աննա: Այլ ևս ոչինչ վեհութիւն, ոչինչ հպարտութիւն չը
մնաց իմ մէջ: Ես այլ մարդ գառայ: Հէնց այժմ, այս վայրկեա-
նում ես արդէն այն չեմ, ինչ որ էի, մինչեւ ձեր մեզ մօտ գալը:
Ես միայն ունեմ զգուանք դէպի ինձ և հակակրթութիւն դէպի
կեանքը: Ինձ համար ամեն ինչ նուաստացաւ, պղծուեց, աղոտ-
տուեց, արատաւորուեց, յեխի մէջ արորուեց: Սակայն ես զգում
եմ, որ ես մի բան էի, ձեր չնորհիւ, ձեր ներկայութեան, ձեր
խօսքերի չնորհիւ—և եթէ ես կրկին չեմ կարող նոյնը լինել,
այն ժամանակ... այն ժամանակ ինչիս է պէտք միուս բոլորը:
Այն ժամանակ ես հաշիւը կը փակեմ ես... վերջ կը դնեմ:

ՅԵՏ ու առաջ է գնում և ապա կանգ առնում Աննայի առաջ:
Տուէք ինձ մի նեցուկ: Տուէք ինձ մի բան, որի վրայ ես կա-
րողանայի կանգնել: Մի նեցուկ: Ես ջախջախուած եմ ամբողջա-
պէս: Մի յենարան: Ամեն ինչ իմ մէջ, օրիսրդ, ջախջախուեց
իսպառ:

ՕՐ. Աննա. Պարոն գօկտօր: Ինձ մեծ վիշտ է պատճառում
ձեղ այդպէս տեսնելը: Ես չը գիտեմ ինչպէս ձեզ նեցուկ լինել:
Բայց մի բան պէտք է մտաբերէք: Մինք այս առաջուց գիտէինք.
մի որ առաջ, մի օր ուշ մենք պէտք է ամեն բանի համար պատ-
րաստ լինէինք, պարոն գօկտօր:

ՅՈՆ. (Կանգնում է լուռ եւ մածողութեան մէջ):

ՕՐ. ԱՆՆԱ. Մատաբերնեցիք հիմա: Ռւզում էք եկեք փոր-
ձենք զրա մասին: Դուք արդէն զիտէք թէ ինչի մաս ին:
— Ռւզում էք մենք մեզ համար մի կանոն դնենք—և նրա համե-
մատ վարուենք: Միայն մենք երկուսս, — մեր ամբողջ կեանքի
ընթացքում, եթէ մենք անգամ երբէք իրար նորից չը հանդի-
պենք—վարուենք մի յատուկ կանոնով: Ռւզում էք: Դրանից զատ
ոչինչ չը կայ, որ կարող լինի մեզ միացնել: Մենք չը պէտք
է մեզ խարենք այդ մասին: Ամեն ուրիշ բան մեզ բաժանում է:
Այդպէս շանենք: Համաձայն էք:

ՅՈՆ. Այս, ես զգում եմ որ այդ ինձ կարող էր պահել:

Ես կարող էի նոյն խև աշխատել առանց յոյսի թէ նպատակին կը հասնեմ: Բայց ով կը երաշխաւորի: Ո՞րտեղից վերցնեմ ևս հաւատ: Ո՞վ է ասում ինձ, որ ես ինձ չեմ տանջում ոչնչութեան համար:

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ մենք կ ա մենու մենք, պարոն դօկտօր, ինչի՞ են մեզ հարկաւոր հաւատ և երաշխաւորութիւն:

ՅՈՒ. Բայց եթէ իմ կամքը ամուր չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բոլորովին ցած ձայնով): Եթէ իմ կամքը թուլանայ, ես կը սկսեմ մտածել նրա մասին, որ նոյն կանոնի տակ է կանգնած: Եւ ես հաստատ գիտեմ որ այդ կ'ամրացնի: —Ես կը յիշեմ ձեր մասին, պարոն Ցովհաննէս:

ՅՈՒ. Օրիորդ Աննա.... Լաւ, ես կ ա մենու մենք, ես կ ա մենու մենք: —Նախազգացումը մի նոր, ազատ դրութեան, մի հեռաւոր այսպէս ասած երանելի երջանկութեան, որ մեր մէջ կար—այդ մենք կը պահպանենք: Այն ինչ որ մենք մի անգամ զգացինք, այն հնարաւորութիւնը, որ մենք զգացինք, այսուհետեւ չը պէտք է կորչի գնայ: Մի և նոյն է ունի նա ապագայ թէ ոչ, նա պէտք է մնայ: Այդ բոցը պէտք է շարունակ վառուի իմ մէջ և երբ նա մարի, կը մարի և իմ կեանքը: (Երկուսն ել լուռ ու ցնցուած): Շնորհակալ եմ ձեզնից, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Մնաք բարով, Ցոհաննէս:

ՅՈՒ. Ո՞ւր էք հիմա զնում:

ՕՐ. ԱՆՆԱ. Երեխ հիւսիս—երեխ հարաւ:

ՅՈՒ. Զբք ուղում ինձ ասել թէ ուր:

ՕՐ. ԱՆՆԱ.—Բայց աւելի լաւ չբր լինի որ դուք ինձ չը հարցնէք զրա մասին:

ՅՈՒ. Բայց միթէ մենք չենք կարող... գէթ մի երկու խօսք... գէթ կարձ տեղեկութիւններ զրել... թէ ինչ ենք անում, ուր ենք գտնուում...

ՕՐ. ԱՆՆԱ. (Նարժում է գլուխը, դառն ժամալով): Իրաւունք ունենք: Միթէ այդ ամենամեծ վտանգը չի լինի, թէ մենք ինքներս մեզ համար խորտակում ենք պատրաստում: Իսկ երբ մենք խորտակուենք—այն ժամանակ մենք նաև խարուած կը լինենք:

ՅՈՒ. Լաւ, լաւ,—ես կը կրեմ այդ բեռք: Ես նրան կը տանեմ հաստատուն կերպով—թէկուզ նա ինձ ճմլի: (Բունելով Աննայի ձեռքը):—Երջանիկ ապրէք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Իրան յաղթելով, մեր սպրենելով, մեր կամրելով, շփորուած եւ խոր յուզուած): Ցոհաննէս. մի բան ես... այս մատանին... հանուած է մի մեռած կող մատից, մի կող...

որ իր... մարդուն... իր մարդուն հետեւեց մինչև Սիրիք։ Հաւասարմութեամբ նրա հետ մինչև վերջը տարաւ բոլոր նեղութիւնները, (Կիսակատակ)։ Մեր գէպքում բոլորովին հակառակն է։

ՅՈՒ. Օրիորդ Աննաւ (Մօտեցնում է նրա ձեռքը իր երբունիքին եւ այդպէս պինդ պահում)։

ՕՐ. ԱՆՆԱ. Ես երբէք այլ զարդ չեմ կրել։ Երբ մարդ թուլանում է՝ պէտք է յիշի այն պատմութիւնը, որ կապուած է այդ մատանու հետ։ Եւ երբ դուք դրան նայէք—թուլութեան բոպէներում—այն ժամանակ... մտաբերէք նաև... նրա մասին... որ ձեզնից հեռու—մենակ ինչպէս դուք... մաքառում է նոյն խորհըրդաւոր կուռում—Մնաք բարով։

ՅՈՒ. (Զինեք կորցնելով)։ Ե բ բ է ք, ե բ բ է ք մնաք իրաք չը պէտք է կրկին տեսնենք։

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ մենք կրկին տեսնուենք, մենք կորած ենք։

ՅՈՒ. Բայց եթէ միայն ես այս կարողանամ տանել։

ՕՐ. ԱՆՆԱ. Այն ինչ որ մեզ չի յաղթում, այն մեզ աւելի ուժեղ է դարձնում։ (Նա ուզում է զնալ)։

ՅՈՒ. ԱՇԽԱ, քոյր։

ՕՐ. ԱՆՆԱ. (Արտասուալից)։ Եղբայր Յոհաննէս։

ՅՈՒ. Միթէ չի կարող եղբայրը համրուրել իր քրոջը—յափառեան բաժանուելուց առաջ։

ՕՐ. ԱՆՆԱ. Հաննէս, ոչ։

ՅՈՒ. Այն, Աննա, այս, այս (Նա գրկում է նրան եւ երկուսի երբունիները միանում են միակ, երկար բոցավառ համբոյրով, ապա ազատում է Աննան եւ անհետանում պատշկամբ)։

Յոհաննէսը մի վայրկեան կանգնած է շշմածի պէս, ապա ոկտում է մեծ քայլերով անց ու դարձ անել, ձեռքը քսում է մազերին, հառաչում է, հառաջում է աւելի ուժգին, մնում է կանգնած, ուշաղրութեամբ ականջ է դնում։ Յանկարծ հեռուից լսում է աղմուկ մօտեցող զնացքի, որ սրբնթաց անցնում է անտառի միջով։ Յոհաննէսը բաց է անում պատշկամբի գուռը և ականջ զնում։ Նղմուկը աւելի ասասոկանում է, չետոյ դադարում է։ Որոշ լսում է կալարանի զանգը։ Լսում է երկորդ և ապա երրորդ զանգը։ Խուլոցը վչում է։ Յոհաննէսը զիմում է զէպի իր սենեակը, բայց ճանապարհին ընկնում է աթոռի վրայ։ Նրա մարմինը ցնցում է լացից և հեկեկալուց։ Պատշկամբի վրայ ընկնում է լուսնի գժգոյն լուսը։ Հարեան սենեակնում լսում է աղմուկ։ Բարձր խօսում են։ Յոհաննէսը ցատկում է տեղից, ուղղում է զէպի իր սենեակը, կէս ճանապարհին մնում է կանգնած, մի վայրկեան մտածում է և սրբնթաց դուրս թռչում պատշկամբով։ Մեր Ֆօկերատը ներս է մտնում ննջարանից, տիկին Ֆօկերատը հետևում է նրան։ Երկուսն էլ զնում են զէպի դրսի դուռը։

ՖՕԿԵՐԱՏ. (Մնում է կանգնած)։ Հաննէս։ Ինձ այնպէս թուաց, որ այստեղ մարդ կայ։

Տ. ՖՕԿԵՐՍ. (Արդեն դրսի դռան մօս): ՄԷԿԸ բարձրացաւ սանդուղքներով:

ՖՕԿԵՐՍ. Այս, այս, տղան հանգստանում է: Նրան չը պէտք է խանգարենք: Գուցէ աւելի լաւ կը լինէր ուղարկե նրա մօտ բրատնին:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ի հարկէ, հայրիկ, Ես կ'ուղարկեմ որ նրան կանչեն:—Կամ գուցէ աւելի լաւ կը լինէր, հայրիկ, որ ես բարձրանայի Յոհաննէսի մօտ:

ՖՕԿԵՐՍ. (Մօտենում է պատշաճի դռան): Ո՞չ Մարթա, աւելի լաւ է չը գնաս: (Բաց է անում դուռը եւ ականջ դնում): Հիանալի լուսնեակ գիշեր: Լսիր:

Տ. ՖՕԿԵՐՍ. (Շատով մօտենում է): Այդ ի՞նչ է:

ՖՕԿԵՐՍ. Վայրի սագեր—տեսնում ես, այստեղ, լծի վրայ: Կէտեր, որոնք լուսնի դիմաց թուզում են:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ի՞ն, դու էլ, իմ աչքերը, այնքան էլ ջահէլ չեն: (Եթէ է զնում դեալի դրսի դուռը):

ՖՕԿԵՐՍ. Լսիր:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ախր ի՞նչ: (Մնում է կանգնած):

ՖՕԿԵՐՍ. Սսս, Մարթա:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ի՞նչ է, հայրիկ:

ՖՕԿԵՐՍ. (Փակում է դուռը, հետեւում է իր կնոջ): Ոչի՞նչ: Ինձ թուաց, Մարթա, որ մէկը՝ այստեղ ներքնում աղմկում է թիակներով:

Տ. ՖՕԿԵՐՍ. Ո՞վ կարող է այդ անել: (Երկուսն էլ հեռանում են մուտքի դռնով):

Մէկը պատշկամբից պատոհանի միջով նախում է ներս: Այդ Յոհաննէսն է: Դրանից յետոյ խոկոյն նա զգուշութեամբ ներս է մտնում: Նա փոխուած է երեսում, մեռելի նման գունատ, շնչում է բաց թիրանով: Նտապ և լի երկիւզակ, թէ մի՛ գուցէ յանկարծակի վրայ հասնեն, նայում է շուրջը, որոնում է թղթի կտորը, գորում է մի քանի խօսք, ապա հէնց որ աղմուկ է լսում, տեղից ցատկում, վայր է զցում գրիչը և դուրս փախչում պատշկամբով: Պարոն և տիկին Ֆօկերատը յետ են գալիս, շրջապատած տիկին նէթէին:

Տ. ՖՕԿԵՐՍ. Այդ ի՞նչ ես անում, ի՞նչու ես նստել մըթնումը:

Տ. Կէթէ. (Ձեռները բռնելով աշխերի առաջ): Աչքերս ծակում է լոյսը:

Տ. ՖՕԿԵՐՍ. Զէ, տեսէք, տեսէք ի՞նչպէս է այդքան երկար նստում միժնումը մեր չարաձձին:

Տ. Կէթէ. (Մի քիչ անվստան): Ի՞նչու... ի՞նչու այդքան քընքուշ էք ու սիրալիր ի՞նձ հետ:

ՖՕԿԵՐԱՏ. Որովհեան գու մեր միակ, սիրելի, անման աղ-
շիկն ես: (Համբուրում է նրան):

Տ. Կէթէ. (Թոյլ ծալտարլի): Այն, այո, դուք ինձ խղճում էք:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Էլի քեզ լաւ չես զգում, Կէթէ:

ՖՕԿԵՐԱՏ. Աստուծով լաւ կը լինես: Հիմա ամեն բան
գարձեալ իր սովորական ընթացքը կը ստանայ: Վատթարագոյ-
նը, փառք Աստուծոյ, անցաւ:

Տ. Կէթէ. (Նստելով սեղանի մօս եւ կար լուսքիւնից յե-
տոյ): Դիտես, մայրիկ... ախ, լոյսը գեռ կուրացնում է—ես ինձ
այնպէս եմ զգում, ինչպէս մէկը, որ մեծ անմտութիւն անելով
միայն նոր-նոր է խելքի գալիս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչ ես ուզում ասած լինես:

Տ. Կէթէ. Աննան գնաց, մայրիկ:

ՖՕԿԵՐԱՏ. Այն, Կէթէ, եւ այժմ... այժմ գու պէտք է
կրկին ուրախ և երջանիկ լինես:

Տ. Կէթէ. (Լուս է):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դու այլ ես չես սիրում Յոհաննէսին,
Կէթէ:

Տ. Կէթէ. (Կար մասնուրիւնից յետոյ): Այսու ամենայնիւ,
իմ կեանգստ այնքան էլ վաս չանցաւ: Ձաննի Շտէնցէլը մարդու
գնաց մի պաստօրի: Թէկուղ նա այնքան գոհ է և բախտաւոր,
կարծում ես թէ ես կը փոխէի նրա հետ իմ դրութիւնս: Ոչ, ի
հարկէ, ոչ—Այսուեղ ծխի հոտ է գալիս, չէ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ոչ, զաւակս, ես չեմ լսում հոտ:

Տ. Կէթէ. (Հեծենելով կոռաւում է ձեռները): Ախ, Աս-
տուած, ամեն ինչ վերջացաւ, ամեն ինչ վերջացաւ:

ՖՕԿԵՐԱՏ. Կէթիսէն, Կէթիսէն: Միթէ կարելի է այդքան
փոքրովի լինել: Ես գարձեալ հաւատս ու յոյսս դնում եմ Աս-
տուծոյ վրայ: Ողորմած Աստուծը ունի անսովոր միջոցներ և
ճանապարհներ մոլորուած հոգիները յետ բերելու համար: Ինձ
թւում է, Կէթիսէն, որ ես նրա տնօրինութիւնը թոփանցեցի:

Տ. Կէթէ. Տեսնում ես, մայրիկ, իմ առաջին զգացմունքը,
որ ես ունէի այն ժամանակ, երբ Հաննէսը եկաւ ինձ մօտ և
առաջարկութիւն արաւ—այդ զգացմունքը բոլորովին ուղիղ էր:
Յիշում եմ որ ամբողջ օրը պտտում էր իմ գլխում թէ ինչ կա-
րող է գտնել իմ մէջ այդպիսի զարգացած և ուսեալ մի մարդ:
Թէ սա ինչ ընդհանուր բան կարող է ունենալ ինձ հետ: Տես-
նում ես, բոլորովին ուղիղ էր իմ մտածմունքը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ոչ, Կէթիսէն, նա չէ բարձր կանգնած քեզ-
նից, այլ գու նրանից: Նա պէտք է քեզ նայի ներքեից վերև,
ահա ձշմարտութիւնը:

ՅՈԿԵՐԱԾ. (Թողդոշիւն ձայնով): Բայց հէնց այդ պատճառով ճիշտ այնպէս է, ինչպէս Մարթան ասաց, այս... բայց հէնց այդ պատճառով—եթէ դու կարող ես ներել... եթէ դու նրա միծ մուղքը կարող ես ներել...

Տ. ԿԵՐԵՒ. Ա՛յ, եթէ բանը ներելուն մնար... կարելի է ներել մի անգամ,—հարիւր անգամ—հազար անգամ:—Բայց Հաննէսը... Հաննէսը չի նուաստանալ: Ես ողորմելի արարածն ըան չունեմ Հաննէսին ներելու: Խնդիրը պարզ է. դու այս ես —և ոչ այն: Ես այժմ զիտեմ միայն, թէ ինչ եմ ես և ինչ չեմ: (Թրափ լաւում է կրկնաւելով «հօլօ պայ» օգնութեան կոչը):

Տ. ՅՈԿԵՐԱԾ. Կէթէ, սիրելիս, ես ուզում եմ քեզ մի առաջարկութիւն անել: Լսիր, եկ, գնանք. Ես քեզ կը պառկեցնեմ անկողնում և մի բան կը կարդամ քեզ՝ Գրիմի հէքեաթները. մինչև որ դու կը քննես: Եւ վաղ առաւօտ ես կը պատրաստեմ քեզ համար շօրվա և թերխաչ ձու, յետոյ դու կը վեր կմնաս և յետոյ մննք կը գնանք պարտէզ, իսկ այնտեղ կարմիր արեք շատ լաւ է լուսաւորում, և այնտեղ ամեն բան քեզ այլ կերպով կ'երեւայ քան այսօր երեկոյեան: Եկ, գնանք:

ԲԲԱՌԻՆ. (Մտնում է պատշկամբից): Բարի երեկոյ:

ՅՈԿԵՐԱԾ. Բարի երեկոյ, պարոն Բրատոն:

ԲԲԱՌԻՆ. Բարի երեկոյ, պարոն Ֆօկերստ: (Զեռք է տալիս): Յոհաննէսը տանն է:

ՅՈԿԵՐԱԾ. Կարծեմ վերևում է:

ԲԲԱՌԻՆ. Հա.—այսինքն, հաստատ,

ՅՈԿԵՐԱԾ. Կարծեմ: Մարթա, այդպէս չէ: Սակայն ինչ է պատահել:

ԲԲԱՌԻՆ. Ես ուզում եմ դեռ նրան տեսնել: (Արագ դուրս է գնում դրսի դռնով):

Տ. ՅՈԿԵՐԱԾ. (Թերեւ անհանգստութեամբ): Ի՞նչ է պատահել Բրատոնին:

Տ. ԿԵՐԵՒ. (Երկիւղից յուզուած): Սակայն ուր է Հաննէսը:

Տ. ՅՈԿԵՐԱԾ. Միայն մի վախիր, կէթէ, սիրելիս. ուր պէտք է լինի, ի հարկէ այստեղ է:

Տ. ԿԵՐԵՒ. (Արագ անող անհանգստութեամբ): Հա, բայց ուր է նա:

ՅՈԿԵՐԱԾ. Ի հարկէ վերևում... վերևում... բնականարար այնտեղ է:

ԲԲԱՌԻՆ. (Վերադառնում է: Սասիկ լարուածութեան վայրկեան: Լոռութիւն):

ՅՈԿԵՐԱԾ. Հը, ինչ է, այնտեղ է նա, պարոն Բրատոն...

ԲՐԱՅԻՆ. Ոչ, պարոն Ֆօկերատ, նա վերեռում չէ և... և...
ՖՕԿԵՐԱՏ. Հա, միթէ: Բայց ինչ է պատահել ձեզ:

ԲՐԱՅԻՆ. Ոչինչ, ոչինչ:

Տ. Կէթէ. (Վագելով Բրաունի մօս): Այս, դուք ինչոր բան
գիտէք:

ԲՐԱՅԻՆ. Ոչ, ոչ, իսկապէս ոչ, իսկապէս ոչ մի հիմք չը
կայ անհանգստանալու—միայն—ինձ թուռմ է, որ ոչ մի կերպ
չը պէտք է հիմա Հաննէսին մննակ թողնել: Եւ երբ ես հիմա
մի քիչ առաջ... ախ, ոչ՝ այդ իսկապէս անհեթեթ միտք է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հա, ուրեմն մի քիչ առաջ ինչ, ասացէք
շուտով:

ՖՕԿԵՐԱՏ. Դէ, շնուր ասացէք, ժամանակ մի կորցնէք:

ԲՐԱՅԻՆ. Իսկապէս ոչինչ առանձին բան: Երբ մի քիչ ա-
ռաջ ես բացի պարտէզի դուռը—ինձ թուաց, որ մէկը յետ է
անում նաւակը, և երբ ես աւելի մօտեցայ, մէկը ճիշտ որ հե-
ռանում էր նաւակով: Մէկը—ես չը գիտեմ ով—մի մարդ:
Այն ժամանակ ես վճռեցի նրան կանչել—բայց պատասխան չը
տուաւ: Իսկ Հաննէսը անշուշտ կը պատասխանէր:

Տ. Կէթէ. (Խելակորոյսի նման): Յոհաննէս: Այդ Յոհաննէսն
էր: Վազէք, շտապէք, ի սէր Աստուծոյ, որքան կարող էք արագ:
Մայր, հայր: Դուք նրան ծայրայեղութեան հասցրիք: Ինչու,
ինչու դուք այդ արիք...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց, Կէթէ:

Տ. Կէթէ. Այս, ես այդ զգում եմ: Նա այլ ես չէ կարող
ապրել: Ես պատրաստ եմ ամեն ինչ անել: Միայն այդ ոչ, մի-
այն այդ ոչ:

ՖՕԿԵՐԱՏ. (Վագում է պարտէզ, ժամանակ առժամանակ
կանչում է): Հաննէս, Յոհաննէս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վագում է բակը եւ կանչում): Հաննէս,
Հաննէս:

Տ. Կէթէ. (Դիմելով Բրաունին): Մի մարդ: Դուք նրան
կանչեցիք: Նա ոչինչ չը պատասխանեց: Վազէք, վազէք:

ԲՐԱՅԻՆ. (Գնում է):

Տ. Կէթէ. (Նրա հետեւից կանչում է). Ես էլ եմ գալիս:
(Կուրատելով ձեռները): Ա'խ Տէր Աստուած, Տէր Աստուած: Մի-
այն թէ կենդանի լինէր նա: Միայն թէ նա դեռ կարողանար
ինձ լսել:

Լաւում է լծի վրայից Բրաունի կոչը՝ «Հօլօ՛պպ», «Հօլօ՛պպ»:

Տ. Կէթէ. (Կանչում և դեպի գրսի դուռը): *ԱՌԱՄԱ, ՄԵՆՆԱ, ՂԱՊՏԵՐՆԿՐԸ պարտէզ տարէք: Շնուտ, լապտերնկրը:* (Ուզում է վագել դեպի պատշկամբը, նկատում է Յոհաննեսի գրած բղրիկը, կանգ է առնում մօմի նման ձգուած, մօտենում է սառածի պէս եւ դողդողալով վերցնում բղրիկը, մի քանի վայրկեան հարացածի նման մենում է բեւեռուած եւ ապա վայր է ընկնում։ Դրսից դեռ եւս շարունակ լսում են օգնութեան կանչող աղաղակներ)։

Թարգմ. Ե.—Ա.

(Ա, Ե բ 2)

Ի Մ Ե Ր Գ Ը

(Ուաս Ուիթման)

Ես ուզում եմ անվախ, մատղաւ սրտերին
Ներկայ պահուն իմ երգերը նուիրել,
Բայց ոչ յոգնած այն վեսաբեկ խաջերին,
Որնի՛ մարտում կորուսներ են շատ կրել.

Մեռելները մեռելներին քո՞ն սիրեն
Եւ հինաւուրց ժիրմները լան անվերջ.
Մենի ապրում ենի. մեր արիւնը ջերմօրէն
Եռ է զալիս, որպէս կրակ մի անչեզ:

Մարտում ընկած խաջերի սուրբ յիշատակ
Անացցունի էլ մենի կը պահենի մեր սրտում.
Պապակում ենի մեր ոյժն ու հոգին բովանդակ
Նոյն սեղանի վրայ զոհել անսրտում:

Ո՞վ վայր ձգեց մուրն ու բրիչն իր ձեռից.
Մենի նրանց տեղ պիտի գործենի անվիատ,
Եւ քարուխանդ փլուած պատի քարերից
Պիտի ժինենի ժողովրդեան մեծ պալատ:

Ո՞ւմ հայեացքն է տխուր գետին խոնարհած.
Մենի հետամուս դէպի առաջ ենի նայում:
Յամառօրէն մենի տենչորմ ենի մեր սիրած
Արեալոյսը տեսնել մռայլ խաւարում:

Թոփի՛ր, երգ իմ, ինչպէս բերկրանի խաղցրալուր
Դէպի անյայս եւ անծանօթ աշխարհներ:

Կեցցէ՛ կեանիք ծաղկափրիթ եւ մաքու՛
Եռուն աղբիւր մէծ զործերի անձնուէր։

Ինչպէս քազէ կապանիներից ազատուած,
Թռի՛ր, երգ իմ, մինչեւ երեր կապուտակ.
Կեցցէ՛ հանուր հրացների վեհ հաննար
Եւ մեծազօր սեղծազոր սուրբ վաստակ։

Թռի՛ր, երգ իմ, քռի՛ր կրկին եւ կրկին
Եւ որոսա՛ երկրի վրայ, որպէս փող.
Կեցցէ՛ մրցումն՝ աշխարհների ժիրուհին,
Կեանիք մայրը ամենազօր եւ կարող։

Ծայրից մինչեւ ծայր մեր հայրենի երկրի
Մենի բերում ենի միմեանց ողջոյն լի սիրով...
Մենի ծիծառն ենի սիրուն գաննան դալարի,
Առ ժաղադէմ գալիս է մեր հետերով։

Թռ' ձմեռը պատէ անխօս ողջ երկիր,
Սառուց կապէ կարկաչանոս պարզ վսակ,
Թռ' բառամեն տերեւները ցանուցիր,
Եւ դաշտերը ծածկուեն խորը ձիւնի տակ։

Արդէն անցաւ որոսմունիքը կատաղած
Անյայս լեռան գազարներից հեռաւոր.
Եւ հմայքի անկեանի ոյժը դողդողաց,
Տառանում է բռնորդիւնը ահաւոր։

Ահա՛ փչեց առաւօտեան տափ խամին.
Խաւարի մէջ իւրաքանչիւր մի խյուս
Վասկների պաղ ջրերը կեանի առած
Զիւների տակ փորփորում են ու հալում։

Կեցցէ՛ լրյուր. թռ' չխանայ մուր խաւար.
Մենի նոր կեանիք աւետին ենի լի յոյսով.
Հովանու տակ դրօւների անհամար
Պերն գարունը գալիս է մեր հետերով։

ՆՈՐԱՎԵՊԻՆ ՆՈՐԱՎԵՊԸ

(Հ. Պօլսի կեանքից)

Այդ կիրակի օրը շատ ուշ արթնցաւ. Ատոմ Որբունի: Փողոցը արդէն սկսած էր աղմկել և կեղեցիէն վերադառներու բազմութենէն՝ երբ ան գեռ անկողնին մէջ կոնակի վրայ երկնցած, աչքերը բաց՝ անհանդարա երազանքի մը մէջ էր: «Ե՞, ասանկ չըլլար, գոչեց յանկործ ընդուստ ոստումով մը մահակալէն վար ցատկելով՝ մինչև որ գրիչս ձեռքս չառնեմ, բան մըն ալ պիտի չկրնամ որոշել»:

Գուլպաներն ու տաբատը հագաւ ու մօտեցաւ լուացքի սեղանին, շապիկին թերը սօժտեց, բայց յանկարծ ետ դարձաւ քմծիծաղով մը. «Զէ, մուսաներն կը փախչին, աւելի աղէկ է լուացուելէ առաջ գործս վերջացնեմ»:

Ժակէտն ալ հագաւ և դիմայի պատին վրայ զետեղուած հայելիին առջև ձեռքի ինամոտ շոյանքով մը երկար մաղերն ու սիրուն, թարմ մօրուքը շտկելէ ետքը զրասնղանին գլուխն անցաւ:

Մօպասանի նորավէպերու հատոր մը և սի ու ճերմակ թղթի թերթեր ցիրուցան փառւած էին սեղանին վրայ՝ լապտերի մը շուրջը, որուն ցամքած պատրոյզը կը վկայէր, որ գիշերը մինչև ուշ ատեն տենդոտ տքնութիւն մը տեղի ունեցած էր հոն: Եւ իրօք, Ագոմ Որբունի՝ թէն նոր մտած զրական ասպարէզը, բայց արդէն փայլուն ներկայացուցիչներէն մէկը Պօլսոյ զրական նոր ուղղութեան՝ գիշերը Մօպասանի յուզիչ նորավէպերէն մէկը խոր հառաջանքով մը փակելէ ետքը՝ անոր ազգեցութենէն ներշնչուած՝ սկսած էր գրել նորավէպ մը, որ հակառակ կէս գիշերը երկու ժամ անց երկար հսկումի մը՝ գեռ չէր վերջացած: Գիշերը շատ խոռվ քուն մը ունեցած էր. իր գեռ կիսատ նորավէպին հերոսները՝ մէկը իր գէմքին նկարագրութենէն գժգոն, միւսը իր զգացումներուն ոչ-բաւական զօրաւոր պատկերացումէն նեցացած՝ քանի մը անդամ խթած ար-

թընցուցած էին խեղճ գրագէտը, որ ամեն անգամ բարձին տակէն թուղթ ու մատիտ մը հանելով, իր սնարին քով պստիկ սեղանի մը վրայ սպասող մոմին լոյսին տակ՝ թելազրուած սըրբագրութիւնները կը նօտագրէր։ Սակայն զինքը ամենչն աւելի առնջողը նորավէպին վերջաւորութիւնն էր։ Քանի մը տեսակ վերջարան միենոյն ժամանակ եկած պաշարած էին իր բազմաչարչար երեակայութիւնը, մէկը միւսէն աւելի «աղուոր», մէկը միւսէն աւելի սրտայոյզ ու հիմա չէր գիտէր թէ որը ընարէր։ Եւ սակայն պէտք էր վերջապէս աւարտել գրութիւնը, ամիս մը կար, որ իր ստորագրութիւնը չէր երեցած թերթերուն մէջ։

Գրասեղանին առջև անցնելով Ատում Որբունի ձեռքին մէջ հաւաքեց անթիւ անգամ ջնջուած ու սրբագրուած թղթերը, զորս ինքն իսկ զժուար պիտի կարդար, եթէ արդէն յաճախսակի ընթերցումով գոց ըրած չմինէր։ Ամբողջութիւնը անգամ մը աչքէ անցուց, գիշերուան նօտագրութեան համաձայն անգամ մըն ալ սրբագրեց, յետոյ կրկին կարդաց ու աթոռէն վեր ցատկեց, հիացումէն չլրնալով ինքզինքը բռնել։

— Հսելիք չի կայ, աղուոր է. ախ, մէյ մը սա անպիտան վերջաւորութիւնն ալ յարմարցնէի...

Ու անմիջապէս երեակայեց իր այդ խաղխղուած էջերը թերթի մը առաջին սիւնեակներուն մէջ մաքուր ու մասնաւոր խնամքով մը տպուած ու տակը խոչոր տառերով Ա. ՈՐԲՈՒՆԻ...

Հապա այն ահագին տպաւորութիւնը զոր իր շուրջը պիտի սփուէր։ Քանի ծանօթներ փողոցին մէջ ձեռքը պէտի սեղմէին՝ Աս ինչ աղուոր գրած էիք, միւսիւ Որբունի», բացականչելով. քանի՞շանի աղջիկներ պիտի արտասուէին ծածուկ ու քանի՞ անուշ ժափիտներ պիտի քաղէր ծանօթ օրիսրդներէ։ Ու վաղուան այս երանաւէտ հեռանկարէն զգլիսած՝ Ատում Որբունի սկսած էր սենեակին շրջանը ընել աւելի ցատկելով քան վազելով, երբ յանկարծ սենեակին գուոը բացուեցաւ։

— Մեղայ, գոչեց տարիքը առած կին մը ներս մտնելով կէս ժամ է գուոը կը զարնեմ, չես իմանար. ինչ կ'ընէիր։

— Գործ ունիմ, մայրիկ, մի խանգարեր զիս, պասասխանեց բանաստեղծը սրտմտած ձայնով մը։

— Կիրակի օրով ինչ գործ է նորէն, աղայ. ժամ ալ չեկար. Աստուծմէ չնս վախնար, մինչև այս ատեն քնանալ կ'ըլլայ։

— Զիս հանդիսատ ձգէ կ'ըսեմ, մայրիկ, չես հասկնար։

Մայրը յանկարծ սեղանին վրայի լապտերը նկատելով.

— Վայ, ձունը գլխուս, զիշերը նորէն լուսցուցեր ես. պիտի մեռնիս դուն, տղայ, կամ պիտի մեռնիս կամ պիտի խենթա-

նաս աս կարդալուն երեսէն. քեզի քանի անգամ ըսեր եմ, որ կէս գիշերուընէ առաջ տեղդ պառկիս:

—Տէ, լաւ, մայրիկ, հա հերիք է, ալ Աստուածդ սիրես գնա, քու խելքդ ամեն բանի չի հասնիր», վրայ բերաւ Աստոմ ձայնը աւելի բարձրացնելով:

Խեղճ կինը լապտերը առաւ ու գուրս ելաւ. «Դուն մենակ քու խելքիդ ես հաւներ, խօսք մտիկ չես ըներ», մրմրալով քթին տակէն:

—Ուփ, դէ եկուր գրականութեամբ պարապէ ասանկ մարդոց մէջ, զայրացած աղաղակից Որբունի սենեակին դուռը ետևէն փակելով և կրկին գրասեղանին առջև անցաւ:

Գլուխը ձեռքերուն մէջ առած՝ պահ մը յուզումը հանգարտեցուց, մտածումները ամփոփեց ու գրիչը ձեռք առաւ: Քանի մը տող գրեց, ջնջեց, նորէն գրեց, սակայն անիծուած վերջաւորութիւնը չէր կաղապարուիր, ու միաքը հետզհետէ լարուելով՝ բանաստեղծը սկսաւ բարձր ձայնով մենախօսել.

—Ամուսնացնեմ թէ չամուսնացնեմ, ամուսնացնեմ թէ չամուսնացնեմ... ամուսնացնեմ... չէ չամուսնացնեմ...

Բայց ձայն մը յանկարծ սթափեցուց զինքը... սենեակին դուռը կրկին կը բաղխուէր, արագ ու ամուր հարուածներով:

—Տէր Աստուած, պոռաց Աստոմ բարկութեամբ աթոռը տակէն քաշելով.—Ենչ է նորէն, մայրիկ, զիս հանգիստ չպիտի թողուա:

—Դուռը չբանաս, ծօ, լսուեցաւ դուրսէն:

Աստոմ ճանչցաւ անմիջապէս իր ընկեր Տիգրան Ասապետեանին ձայնը. աճապարանքով մը թղթերը հաւաքեց զգրոցին մէջ խոթեց ու զնաց դուռը բացաւ:

—Ատ ինչ կ'ընէիր ներսը, ծօ, հարցուց նորեկը իր ձեռքի նուրբ ձեռնափայտին զիսովը Աստոմին մօրուքը խառնելով.— դուռը կը զարնեմ, կը զարնեմ, չես իմանար, ետևէն ալ ամուր մը փակեր ես:

—Խելքը վրան է քի դուռին ձայնը իմանայ, ձայն տուաւ մայրը, որ միջանցքին մէջն էր. զաղէթային բան կը գրէ նորէն:

—Զգէ, ափրար, մի հարցներ, պատասխանեց Որբունի դուռը գոցելէ յետոյ՝ զլուխը թօթուելով. բան մը սկսած եմ գրել չեն թողներ որ վերջացնեմ. մէկը կ'ելնէ, միւսը կը մտնէ սենեակս...

—Զըլլայ թէ ես ալ կը խանգարեմ քեզ:

—Չէ, չէ, ամենեին. կ'աղաչեմ նստէ, աղէկ որ եկար. գրութիւնս վերջացնելու վրայ եմ, միայն թէ վերջաւորութիւնը չեմ գիտեր ինչպէս բերեմ. հիմա դուն խորհուրդ տուր ինձի:

— Շատ աղէկ, գրածդ մէյմը կարդա նայինք:

Ատոմ թղթերը գլուցէն հանեց, ձեռքին մէջ այս կողմ, այն կողմ գարձուց տատամսոտ շարժումներով ու պատասխանեց.

— Զէ, բարեկամ, երէկ գիշեր սանկ կէս ժամուան մէջ աճապարանքով մը գրած եմ, դեռ չեմ ալ սրբագրած՝ աւելի աղէկ է չկարդամ:

— Վնաս չունի, ճանրմ, կարդա, ես ալ բան մը գրած եմ, բերի, որ կարդամ քեզի:

— Անանկ է նէ առաջ դուն կարդա:

— Ա'լ շատ նազ չեն ըներ, կարդայիր պիտի կարդա:

— Զէ, չէ, հրատարակուելէն ետքը կարդաս աւելի աղէկ կ'ըլլայ. տպագրուածը աւելի գօրաւոր աղգեցութիւն մը կ'ընէ մարդու վրայ, քան ձեռագիրը: Հիմա մենակ սկիզբը կարդամ, ետքէն ալ պարունակութիւնը բերանացի պատմեմ. դուն կարծիքը յայտնէ:

Ատոմ իր աթոռին վրայ աւելի լաւ տեղաւորուեցաւ, քանի մը անգամ հազարով կոկորդը մաքրեց ու սկսաւ.

— Առտուան անուշիկ զովութիւնը հեշտօրօր զեփիւոին թեթև թեներովը ամառուան աղուոր բնութիւնը սկսած էր գրդուել և արեց իր մօրը արգանդը արիւնելով դուրս կը սողար ու պուրակին սաղարթախիտ ծառերուն մէջէն պրիսմակուելով իր բոց ասեղները կը ցրցքնէր ծովուն շուրթ հայելիին վրայ: Օդին մէջ յասմիկի ու մեխակի գինովցնող բոյր մը ցանցնուած էր ու թռչունի աղուոր այգերգներ գարձարձիկ պառյտներով խոլ հոսանք մը կը վազցնէին եթերին մէջ: Այդ պահուն համակ թողը ու բոյր էակ մը՝ ծովուն եզերքը ժապաւինող արահետին նուրբ փոշիները իր երկնային ոսքերուն քնքուշ հպումովը սարսուցնելով կը ճնմէր: Կարծես Սստղիին ըլլար, որ առտուան մշուշն մէջ իր լոգանքը առնելէ ինքը իր շրջագայութիւնը կը կատարէր: Արշալոյսի մեղկ ճառագայթ մը կը համբուրէր իր կնոջական կաթ ծոծրակը, ուր ինկած մազի սիրուն զանգուրները իրենց գինով, հեշտանքոտ շոյանքը կուտային անոր փափուկ միսերուն:

— Ինտոր է, հարցուց Ատոմ Որբունի, թղթերը գրպանը խոթելով:

— Զշարունակէս:

— Սկիզբը աս է, մնացածը բերանացի պիտի պատմեմ, դուն հիմա ասչափին համար կարծիքդ յայտնէ:

— Փէք խըյախ է, անկեղծօրէն կ'ըսեմ. մանաւանդ սա արեի ծագումի պատկերը սքանչելի է. սակայն «իր շրջագայութիւնը կը կատարէր» նախադասութիւնը աղուոր չէ փախեր.

գրուածքին «effet»-ը կը կոտրէ կոր. ատանկ հինցած, խալ բացատրութիւններ գործածելէ պէտք է խուսափիլ: Բոլորովին նոր, պատկերաւոր ոճեր ստեղծելու է: Զորօրինակ ատ նախադասութիւնը սապէս փոխես, ինտոր կ'ըլլայ. «իր գեղեցկութիւնը կը թափօրէր բնութեան մէջէն»:

—Ո՞հ, ատիկա հրաշալի պատկեր մըն է, գոչեց Որբունի տեղէն վեր յատկելով. իր գեղեցկութիւնը կը թափօրէր. այսինքն թափօրի մը հանդիսաւորութիւնովն ու սրբութիւնովը կը պարտինէր բնութեան մէջէն... սակայն «թափօրել» բառ կայ:

—Ատ ալ իսօսք է, պատասխանեց Տիգրան Ասապեան քիչ մը վիրաւորուած. եթէ չի կայ, կը շինենք, ուրիշ բառ շինողները մեզնէ աւելի գրագէտ չեն են:

—Ատոր տարակ՞յս կայ, ըսաւ Ատոմ ու անմիջապէս գըրպանէն թուղթը հանելով որոշուած սրբագրութիւնը կատարեց. և լսած գովեստներէն ոգեսրուած ոտքի ելաւ ու ձեռքը Ասապեանի ուսին դնելով.

—Հիմա նորավէպիս պարունակութիւնը պատմեմ, մտիկ ըրէ: Աս՝ ինչպէս շատ գեղեցիկ կերպով գտար՝ իր գեղեցկութիւնը թափօրող աղջիկը, որուն անունը Նուարդ դրած եմ՝ զաւակն է հարուստ ընտանիքի մը, որ ծովեզերեայ զիւզ մը ամառանոց ելած է: Նուարդ, որ կրթուած, զգայուն ու բանատեղծական սրտի տէր աղջիկ մըն է (կ'երևակայես, անսնկ չէ, մեր... Վարդանուշին պէս հրեշտակային բան մը), սովորութիւն ունի ամեն առառու պատյա մը կատարել ծովուն ափը: Ատ պըտուտներէն մէկուն միջոցին կը հանդիպի Մուշեղին, ձկնորս երիտասարդ մը, որ իր առնական ու արևելեան տիպար գեղեցկութեամբ կազմուածքովը Նուարդին սիրտը կը գերէ: Տըզան ալ աղջկան աղուորութենէն կը յափշտակուի և վերջապէս օր մը պուրակին մէկ առանձնութեանը մէջ իրարու սիրտ կը բանան: Սակայն աղջիկը երբ իր սէրը ծնողքին կը յայտնէ, ասոնք սաստիկ կը բարկանան ու խատիւ կը մերժեն իրենց հաւանութիւնը: Հիմա, իշտէ, հոս ևկեր կեցեր եմ. չեմ գիտեր ամուսնացնեմ թէ չամուսնացնեմ: Մէյ մը սապէս կը մտածեմ, աղջիկը օր մը նաւարկելու երթայ, յանկարծ նաւակը շրջուի և Մուշեղ ալ, որ մօտերը ծուկ կ'որսայ՝ արկածը տեսնելով ծովը նետուի և աղջիկը աղատէ. ու ասոր վրայ ծնողքը յուզուած իրենց աղջիկը իր աղատարարին տան: Մէյ մըն ալ կը մտածեմ սանկ tragique կերպով վերջացնեմ: Նուարդ իր ծնողքին հետքաղաք վերադառնայ, ծնողքը խիստ հսկողութիւն. ընեն վրան. անսնկ որ ալ Մուշեղը չկրնայ տեսնալ և սրտին ցաւէն թռքախտի ենթարկուելով մեռնի: Մուշեղն ալ իր սիրուհին մահ-

ուան լուրը առնելուն ինքզինքը ծղվը նետէ կամ խենթենայ...

—Ատ խենթենալը ձգէ, գոչեց յանկարծ Տիգրան Ասապեան, որ բաւական սրտնեղութեամբ մտիկ ըրած էր ամբողջ պատմութիւնը:

—Ինչու, ի՞նչ կայ որ, հարցուց Ատոմ զարմացած:

—Բան մը չի կայ, միայն թէ իմ նորավէսլս ալ խելազարութեամբ կը վերջանայ, դուն ուրիշ բան մը ընտրէ: Արդէն քուկինդ տեղատեղ անչափ նման է իմ նորավէսլիս, որ կարծես թէ ինձմէ առած ըլլաս:

—Ինչպէս կրնամ քեզմէ առած ըլլալ, ծօ խըյանէթ, երբ գեռ երեսը չեմ տեսած զրածիդ:

—Հսել չեմ ուզեր թէ ինձմէ առած ես: Աս նմանութիւնը երկուքնուս ալ գրական նոյն դպրոցին պատկանելսէս յառաջ կուզայ. և արդէն տարբերութիւններ ալ շատ կան. զորօրինակ. իմ նորավէսլիս աղջկան անունը Սաթենիկ է, տղուն անունը Միհրան. իմ նորավէսլիս մէջ աղջիկն ու տղան վերջալուսին կը սիրահարին, մինչդեռ քուկինդ մէջ արշալոյսին. դուն անտառի մէջ ես սիրահարեցուցեր, մինչդեռ ես նաւակին մէջ եայն: Սակայն վերջաւորութիւնները իրարու նման ըլլան նէ աղէկ չըլլար:

—Ե՛, ի՞նչ կ'ըսես հիմա, ի՞նչպէս ընենք:

—Ի՞նչպէս պիտի ընես. իմ կարծիքովս ամուսնացնելը պաղ կը փախչի. ատ տեսակ վերջաւորութիւնը հին ոօմանթիկ գըպրոցին յատուկ է, մինչդեռ նոր, իրապաշտ ուղղութիւնով վէպերը միշտ tragique վերջաւորութիւն մը կ'ունենան:

—Ուրեմն չամուսնացնեմ, կ'ըսես. խենթեցնելն ալ քու նորավէսլիդ մէջ կայ. հապա ի՞նչպէս ընեմ. ծովուն մթջ խեղեմ տղան:

—Ատիկա էն աղէկն է, քանի որ տղան ալ ձկնորս է արդէն:

—Իսկ աղջիկը. թոքախտէ մեռնի թէ ատրճանակով ի՞նքնքը սպաննէ:

—Ատրճանակով, ատիկան ալ գէշ չէ, սանկ դիւցազներգական բան մըն ալ կը մտնայ մէջը... սակայն չէ, թոքախտէ թող մեռնի, ատանկ աւելի քնքուշ կ'ըլլայ և աւելի սրտառուչ. մանաւանդ նկարագրական աղուոր պատկեր մըն ալ կրնաս դնել մէջը, թէ ինչպէս աղջիկը հիւանդութենէն սանկ մեղրամոմի պէս կը հատնի:

—Իրաւ, ատիկա խըյախ վերջաբան մը կ'ըլլայ, ուրեմն լինցաւ, հիմա քուկինդ կարդանք, գոչեց Ատոմ ուրախութենէն չափ զարներով:

Ու երկու բարեկամներ սկսան կարդալ միւս նորավէպը, որ իսկապէս հեղինակին քիչ առաջ թուած տարբերութիւններով միայն կը զանազանէր առաջինէն, Եւ աւելորդ է յիշել թէ ընթերցանութեան պահուն Ատոմ Որբունի տոկոսով հանդերձ կը հատուցանէր իր ընկերոջ գովեստները:

* *

Երկու օր յետոյ խմբագրատունէ մը կ'ելնէր Ատոմ Որբունի, թերթ մը ձեռքը և երանութեան ժպիտը շրթունքներուն: Փողոցներէն յաղթական քալուածքով մը կ'անցնէր և իրեն այնպէս կը թուէր թէ բոլոր անցորդներուն ուշագրութիւնը իր վրայ դարձած էր, այդ պատճառով գետին կը նայէր համեստութեան դէմ չը մեղանչելու համար: Նորավէպը այդ օրը լոյս տեսած էր թերթի մը մէջ, խմբագրութեան կողմէ հետեւալ ծանօթութեամբ.

«Մեր ներկայ թուով կը հրատարակենք մեր տաղանդաւոր աշխատակից Ա. Որբունիի մէկ հոյակապ ու գողարիկ էջը, որ վստահ ենք թէ յուզումի արցունքներ պիտի խլէ մեր զգայուն ընթերցողներու աշքերէն»:

Եւ միևնոյն թերթի միենոյն համարին մէջ հետեւալ ծանօթութիւնն ալ կար.

«Մեր վաղուան թուով պիտի հրատարակենք մէկ վսեմ նորավէպը մեր հանրածանօթ աշխատակից Տիգրան Ասապետնի»:

Ա.ՌԱՆՉԱՐ

ԿՈՐՈՒՍՏԻ ՄԱՏՆՈՒԱԾ ՀԱՅԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Սուլդուզ գաւառը գտնվում է Ռումիոյ լճի և Քիւրդիստանի (պատմական Մարաստանի) համարեա թէ մշջաեղում. նրա սահմանները կազմում են արեւելեան կողմից Քիւրդիստանի Սովորդ-բուլաղ քաղաքը իր շրջակայրով. հարաւային կողմից՝ Քիւրդիստանի Լաշմն գաւառը, արևմտեան կողմից՝ Քիւրդիստանի Ռւչնի քաղաքը, հիւսիսից՝ Ռումիայի լիճը:

Սուլդուզի հողը արգաւանդ է, ջուրը առողջարար, կլիման բարեխառն. աղդաբնակութիւնը բազկացած է պարսիկներից, քրդերից, հրէաներից, հայերից և ասորիներից. պարսիկները կոչում են «Ղարափափախ» և մօտ 10,000 են հաշւում, քրդեր՝ 5,000, իսկ հրէաները, հայերը և ասորիները միասին մօտ 5,000:

Հայերը Սուլդուզում և նրա շրջակայրում հազիւ լինեն 1,200: Բայի միքանի հոգուց, բոլոր այդ հայերը մոռացել են իրանց մայրենի լեզուն և խօսում են թիւրքերէն և քրդերէն. զրանց բոլոր սովորութիւններն էլ պարսկական են, իսկ հագուստը՝ զուտ քրդական: Խաւարը այդ կողմերում թագաւորում է անսահման, վայրենիութիւնը կատարեալ է. զպրոյներ գոյութիւն ունեն միայն անուամբ. գասատութիւնը բոլոր զպրոյներում էլ տեղի է ունենում անկանոն, հին, խալիֆայական ձևով. աշակերտները երբ կամենում են, այն ժամանակ են գնում զպրոյ. օրինակ, 1 օր գնում են զպրոյ, 3 օր չեն գնում. 5 օր գնում են, 2 շաբաթ չեն գնում. մի ամիս յաճախում են, 3 ամիս ոչ: Այսպիսին կայ, որ 1 օր զալիս է, 6 ամիս չի զալիս. իսկ երբ ուսուցիչը փորձում է սահպել որ աշակերտը կանոնաւոր յաճախէ—հայրը գնում է զիւղի տիրոջ մօտ և ասում. Շիմ աղէն դու ես թէ նա է. տես ի՞նչ է ուզում. ով է, ինչացու է...»: Այսպիսի պայմանների մէջ ուսուցիչը ի՞նչ աստիճանի էլ որ եռանդուտ լինի, ոչինչ արդիւնք չի ստացուի, որովհետև աշակերտը սովորածը մոռանում է:

Հայերը Սուլդուզում ապրում են հետնեալ գիւղերում.

			Սուլդուզի շրջակայքում.
Նաշադէ գիւղում	54	տուն.	Դարալաք գիւղ. 24 տ.
Մահմադեար	»	25 »	Լաջ » 3 » (Միւթիւ-
Ռահտանա	»	9 »	Կջաւա » 3 » րիւ գա-
Թօբուզաւա	»	7 »	Թաղիապատ » 33 » սառակ).
Գևոռնաւա	»	6 »	Սօլութափա 4 » (Միւն-
Քեարվանսարա»	5	»	Քեալբահրզախան 7 » դարի
Գեօլ	»	4 »	Լարավերան » 6 » գաւառ).
Չայանա	»	3 »	Սովուղ-բուլաղ ք. 6 »
Առնա	»	1 »	Միւնտար գ. 19 »

Կամ թէ ուրիշ խօսքերով Սուլդուզում և նրա շրջակայքում թիւքքախօս հայերի թիւն է մօտ 1200 (միջին թուով իւրաքանչիւր տունը կարելի է 5 հոգուց աւելի հաշուել); Թիւքքախօս հայեր կան և Սուլդուզից ոչ-շատ հեռու Բարանդուզ գաւառում, որոնք գտնուում են հետեւեալ գիւղերում*).

		Բաբառի գիւղում 50 տուն	Սարդարութ գիւղ. 15 տ.
Դիզաթաքա	»	40 »	Ղասըմլու » 10 »
Թումաթար	»	35 »	Շէյթանաւա » 10 »
Դարբառի	»	32 »	Մասալան » 10 »
Բալանիշ	»	28 »	Քիւքա » 8 »
Թազագիւղ	»	25 »	Թասմալու » 3 »
Սահաթլու	»	15 »	

Ուրեմն բոլորը՝ Սուլդուզում, նրա շրջակայքում և Բարանդուզում թիւքքախօս հայերի թիւն է մօտ 2700:

Սուլդուզի շրջակայքում՝ Միւնտաբում, Թաղիապատում, Սոյուլթափայում և կարավերանում հարկերը քիչ են. այն է՝ իւրաքանչիւր ընտանիք պարտաւոր է վճարել տարեկան 3 «բէյար». ցորենի, գարու և կորեկի արդիւնքի կէսը գիւղացունն է, կէսը աղային, ծախսը և ջանքը գիւղացիներից. իսկ բամբակ և զանազան ընդեղէններ ցանելու համար իւրաքանչիւր բանաֆին (10 պուդ ցորեն ցանելու տեղ) 2 ռ.։ Քեալբահրզախան գիւղում աւելի քիչ է. այն է՝ ցորենի, գարու և կորեկի արդիւնքի ոչ թէ կէսն է աղային, այլ 10-ից 2-ը։ Ծախսը և ջանքը գարձեալ գիւղացուց։

Սուլդուզի գլխաւոր գիւղ Նաշադէում հարկերը շատ են.

*) Բարանդուզի հայերի թուին վերաբերեալ տեղեկութիւնները մենք քաղել ենք պաշտօնական աղբիւրից՝ Աւրմիալի հալոց առաջնորդարանից, իսկ Սուլդուզում և շրջակայքում եղել ենք անձամբ։ (Համեմ. „Մշակ“ 1898 թ. №№ 149, 172).)

այն է՝ ցորենի, գարու և բրնձի 2 բաժինը աղայինն է, 1 բաժինը գիւղացուն, բամբակից և ուրիշ ընդհանուրից իւրաքանչիւր թանափին 2 ոռորդի. իւրաքանչիւր տանից իրրե հարկ 3—5 դռան, 20—25 բէյար, 5 հաւ. իսկ ձու, իւղ, պանիր և այլն որքան ինքը կամնայ. Կովից 2 դռան (1 դռանը=20 կ.) գոմէշից 3 դռան, ձիուց 3 դռան և այլն:

Սուլդուզի Մահմադքեար գիւղում աւելի շատ են հարկերը. ցորենի, գարու, բրնձի աւելի քան 2 բաժինն աղայինն է, 1 բաժինը գիւղացունը, բոլոր ծախսը և ջանքը գիւղացիներից. բամբակը, լորին, գերչաղը և այլն յանելու սերմը և բոլոր ջանքը իւրանցից, արդիւնքի կեսը էլի աղայինն է. բացի զրանից իւրաքանչիւր թանափին էլ 5 դռան պէտք է վճարել. իւրաքանչիւր տանից իրրե գլխահարկ առնելում է 4 զլուխ շաբար. իւրաքանչիւր ընտանիքից տարեկան 200 բէյար. այնպէս որ բոլոր տուրքերը հաշուած իւրաքանչիւր տանից օգուտ է ստանում տարեկան 300 ռ. (150 թուման պարսից): Մնացած գիւղերի հարկերն էլ սրանց չափ են, մի փոքր աւել կամ պակաս զանազանութեամբ:

Գուցէ գուշ, ընթերցող, վրդովուէք, տեսնելով այսրան հարկերի շատութիւնը. բայց համբերութիւն ունեցէք, սրանից աւելի սարսափելին էլ կայ. թիւրքախօս Բարանդուզ գաւառի Բարառի-Սարդարութ գիւղերում հարկերը այնքան շատ են, որ երկրագործութեամբ պարագող համարեա թէ չը կայ. այդ 2 գիւղերի (որոնք համարեա թէ կազած են իրար) 185 տուն բընակչից երկրագործութեամբ են պարագում ընդամենը 9 հոգի. բամբակ ցանելու համար իւրաքանչիւր թանափից վերցնում են 3 ռ., այզի տնկելու համար թանափից 16 դռան. Ժողովրդի մեծ մասը իր պարէնը հայթայթում է Կովկաս և Ռուսաստան պանդըխտելով կամ մշակութեամբ և այգեպանութեամբ: Այզի աընկելու համար հողը տալիս է աղան, իսկ գիւղացին 4 տարի շարունակ պէտք է չարչարուի և ծախսեր անի, մինչեւ որ ստացուի խաղող. յետոյ այզին կիսում են. իւրաքանչիւր տանից իրրե հարկ առնում են 9 դռան, իւրաքանչիւր տղամարդից՝ 6 դռան. Կովից 2 դռան, գոմէշից, էշից, ձիուց-4-ական դռան. նաև իւրաքանչիւր ընտանիքից 3—5 հաւ, 15—20 ձու, 8—10 դռանի ցախ և այլն. բէյար 20—30. տասը տարեկանից սկսած աընդաները ենթարկում են բէյարի (1 բէյարը արժէ 2 դռան օրեկան). կամ թէ չէ ուրիշ խօսքերով գիւղացիները տարին 12 ամիս շարունակ աշխատում են, իսկ աղաները կլանում: Թըշուառութիւնը, աղքատութիւնը աղաղակում են բարձրածայն. իմ այնտեղ եղած ժամանակ շատ ընտանիքներ գտնուում էին.

սովի ժամանակուայ դրութեան մէջ. այն է՝ 1 բուռ ալիւր գը-
ցում էին պղնձի եռացող ջրում և խառնում, յետոյ գցում էին
մի փոքր իւզ և քիչ եփելուց յետոյ բաժանում էին ընտանիքի
անդամներին հացի փոխարէն...

Դիւղացիների համար աւելի անտանելի է բէյարը. գիւ-
ղացուն ձրի բանացնելը կոչւում է ր է յ ա ր: Գիւղացիները հա-
մարեա թէ տարուայ մեծ մասը ստիպուած են ձրի աշխատել
գիւղական աղաների համար. օրինակ, գիւղի աղան ուզում է
խանութներ ու տներ շինել, պէտք է շինեն իր հապատակ գիւ-
ղացիները՝ ձ ր ի. պէտք է աղայի տան համար շինել սեղան,
աթոռ և այլն. պէտք է շինեն աղայի հպատակ հիւմները՝ ձ ր ի.
հարկաւոր է ջրել աղայի բաժին արտք—պէտք է ջրեն գիւղա-
ցիները՝ ձ ր ի. հարկաւոր է ցախ բերել որ և է մօտիկ կամ
հեռու գիւղից—պէտք է բերեն գիւղացիները իրանց արարա-
ներով, կտրատեն և դարսեն տեղը՝ ձ ր ի. հարկաւոր է գիցուք
ջրաղացի քար բերել Ռւրմիից (80 վերստ է հեռաւորութիւնը),
պէտք է բերեն գիւղացիները իրանց արարաներով և տեղաւո-
րեն՝ ձ ր ի. բուրդ կամ բամբակ է հարկաւոր մանել—պէտք է
մանեն կանացք՝ ձրի. աղայի աւելի քան տաճնեակ կտրւըների
ձիւնը ձմեռը պէտք է սրբեն գիւղացինը՝ ձ ր ի. հարկաւոր է
ծեծել աղայի բաժին «չալթուկը»—որը մի չափաղանց տաժա-
նակիր աշխատանք է—պէտք է ծեծեն գիւղացիները՝ ձ ր ի
և այլն և այդպէս, տարուայ մեծ մասը ձրի աշխատելով
գիւղական աղայի համար յետ են մնում իրանց գործերից, կամ
թէ ժամանակ չեն ունենում փողով բանելու ուրիշի համար,
որպէսզի մի կերպ կարողանան ապրել, հայթայթել իրանց
ապրուստը, հոգալ զաւակների կրթութեան համար...

Բէյարից աւելի անտանելի են հայհոյանքները և միւս հա-
րըստահարութիւնները. ամեն մի մուսուլման, մանաւանդ պար-
սիկները, նոյն իսկ որ և է մահմեդականի լակոտն մնդամ իրան
իրաւունք է համարում հայհոյելու հայի հաւատը, հոգին, եկե-
ղեցին, խաչը, Քրիստոսին և ուրիշ նշանաւոր սրբութիւններ.
իսկ խեղճ թիւրքախօս հայը պատասխանել չէ կարողանում
երբ պատասխանում է, տանում են և կապում փայտի ու սկր-
սում ծեծել ճիպոտներով. ծեծում են մինչև «մահուան դուրը
հասցնելը», յետոյ 10—20 թուման էլ տուգանք առնում, ապա
արձակում:

Սունգումներն ու բռնաբարումները աչքի են ընկնում
ամեն անդամ. բաւական է, որ գիւղացին դժբախտութիւն ու-
նենայ՝ գեղեցիկ կին, հարս կամ աղջիկ ունենալու. գիւղական
աղան տեսնելով պէտք է վերջ ի վերջոյ տիրանայ իր ուզածին.

սկզբներում առևանգումները և իսլամացումները կատարուել են մեծ չափերով, իսկ վերջին ժամանակներս բաւականին պահանջել են:

Դրանից պակաս սարսափելի չէ աղայի թշնամանալը զիւղացու հետ. վայր եկել է տարել այն զիւղացուն, որի հետ աղան կը թշնամանայ. այն ժամանակ նա կ'ուղարկի իր ծառաներից միքանիսին քրդի շորերով, կողոպտելու զիւղացու երկրադործական կենդանիններից կամ ուղղակի սպանել նրան. առաւոտեան, գողացուածի կամ սպանուածի տէրը գնում է զիւղի աղայի մօտ գանգատուելու. իսկ աղան պատասխանում է՝ «յանցաւորին բռնիր բեր, վասադ առնեմ տամ». խեղճ զիւղացին հրտեղից բռնի յանցաւորին աղային յանձնի, քանի որ գողը կամ մարդասպանը իր՝ աղայի ծառաներն են կամ թէ հէնց ինքը՝ զիւղի աղան:

Կաշառակերութիւնը տարածուած է չափազանց մեծ չափով. ուուր հոտառութեամբ մաս են գալիս ամեն կողմ, որպէս զի գտնեն ամենաշնչին պատճառ՝ առնելու մեծ չափով կաշառք. և այդ որքան հնարաւոր է շատ և շուտ, որովհետեւ երկիւղ են կրում պաշտօնանկ լինելուց:

Անբարոյականութիւնը խստիւ արգելուած է և առ երես գոյութիւն չունի. բայց գաղտնի կերպով բաւականին տարածուած է. այդ տարածուելու պատճառը հէնց իրանք զիւղերի տէրերն են. բաւական է, որ որ և է կին—ինչ ազգութեան ուղում է պատկանի—բռնուեց անբարոյականութեան մէջ. կնոջ ամուսինը կամ տէրերը իրանց այդ թշնամուց վրէժ լուծելու համար գնում են ու յայտնում զիւղի աղային. աղան էլ, որ այդպիսի մի բանի համար էր մնում, զաղտնի կերպով մարդ է ուղարկում կնոջ մօտ, որպէսզի գայ իր մօտ... հակառակ դէպքում սպանում է զցել խաշայի մէջ *):

Հասկանալի է, որ հարստահարսուած և անպաշտպան քրիս-

*.) Խաշայի մէջ զցելը մի սարսափելի բարբարոս պատիժ է, որ սովորութիւն էր մինչեւ վերջին ժամանակներս Յանցաւոր կնոջը զցում էին խաշայի՝ մեծ և սև տոպրակի մէջ, նախապէս կնոջ վարափելի մէջ զցելով կատու, յետոյ խաշայի բերանը կապում էր և կինը ծեծում բարակ վայտերով. պատահում էր, որ կինը մեռնում էր խաշայի մէջ կամ ամօթից, կամ վախենալուց և կամ ճիպոտի հարուածներից. իսկ եթէ չէր մեռնում, հանւում էր խաշայի միջից, մաղերը կորսում, նստեցնում էշի վրայ հակառակ կողմից, պոչը տրւում էր կնոջ ձեռքը, երեսի մէկը ներկում էր ածուխով, միւսը մածունով և էշը պտուեցնում զիւղի կամ զիւղերի վտղոցներով. իսկ ժողովուրդը շարտնակ թքում էր կնոջ երեսին. կինը ալդ ամենախայտառակ դրութեան չը համնելու համար համաձայնում է զիւղի աղայի պահանջի հետ..

տոնեայ ժողովուրդը Ուրմիոյ և Բարանդուզի գաւառներում իրանց բազմաչարչար անձը ազատելու համար ընդունում են ուղղափառութիւն՝ Խուսաստանից պաշտպանութիւն գտնելու յոյսով։

Անշուշտ ընթերցողը կը հետաքրքրուի իմանալ թէ ինչ է արել և մեր հոգեոր իշխանութիւնը իր «հօտի» համար—համարեա թէ ոչինչ. կջմիածինը ոչինչ չարեց. իսկ Թաւրիզի առաջնորդարանը 2 հոգեորականներ ուղարկեց իբրև թէ ժողովրդին պաշտպանելու և դաւանափոխութիւնների առաջն առնելու. բայց աւելի լաւ կը լինէր որ չուղարկէր ոչ ոքի, քան թէ ուղարկէր այդ տեսակներին։ Ուղարկուած այդ 2 հոգեորականներից մէկը ամենից առաջ ինքը դաւանափոխ եղաւ, իսկ միւսը իր հարստահարութիւններով նպաստաւոր հող էր պատրաստում մեացածների դաւանափոխութեան համար։

Սակայն շատ բան կարելի էր անել, եթէ սրտացաւ և եռանդոտ մարդիկ դտնուէին, եթէ մեր հոգեոր իշխանութիւնը այնքան ապիկար և անընդունակ չը դտնուէր, եթէ ինտելիգէնցիան իրան նեղութիւն տար մի քիչ էլ այդ իր թշուառ եղբայրակիցների մասին մտածել. բայց մենք ում ննք դիմում...

ՈՌԻՍՏԱՄ

Կ Ա Բ Մ Ի Բ Շ Ի Պ Ո Տ Ը

(Պատկեր իրական կետնից)

Յունիսի վերջերն էր ու օրը կիրակի։ Կէսօրեայ առևլը վառում, տժտժացնում էր։ Գիւղամիջի տօթը մարդ էր խեղզում։ Թէ գաղան, թէ թռչուն, թէ սողուն բուլորն էլ ձէն ու ծպտունները կտրել, ծակ ու ծուկերն էին մտել։ Անգործութիւնն ու թմրութիւնը տիրապետում էր ամենքին։ Մինչև անդամ գիւղացի երկրագործը, որի համբերատար անդամները սովոր չեն խոյս տաւում ոչ ամառնային արեգակի կիզիչ ճառագայթներից և ոչ ջրօրհների կապտացնող ցրտից, նա անդամ աշխատում էր օգտուել կիրակնօրեայ աղատ ժամերից, որ մի փոքր հանդիսաւ չնորհէ ՚իր վաստակաւոր ու չարդուած անդամներին։

Մի շաբաթ էր, ինչ հունձը ընկել էր։ Դա գիւղացու այն ժամանակն է, երբ, ինչպէս ասում են, փայտի գլուխը շոր են փաթաթում ու բանեցնում։ Հնձի ժամանակ գիւղացու ոտի տակ կրակ է վառում։ Նա մի բոպէ դադար չի առնում։ Արտերը մէկը միւսի յետեւից հասնում, հնձող են կանչում։ Բոպէն թանգ է. պէտք է շտապել, եթէ ոչ արտը կը կծղի *), գիւղացու տարէն ապրուստը ձեռքից կը գնայ, նրա թափած արիւն քըրտինքը անօգուտ կը կորչի, կը ոչնչանայ։ Եւ ահա եր-

*) Երբ որ հասած արտի հնձելու ժամանակը անցնում է և հատիկները սկսում են հասկերից թափուել, ասում են՝ „արտը կծղել է“։

կրագործը կրկնապատկում, լարում է իր ոյժերը, իր եռանդը և օր ու գիշեր գերանդին ձեռքից վայր չի գընում։ Ուրիշ հարց է երբ այդպիսի նեղ ժամանակ կիրակի է մէջ ընկնում։ Կիրակի օրը Աստծունն է և շերմեռանդ հայ գիւղացին չի համարձակուի պապենական այդ սուրբ օրէնքը խախտելու, թէկուզ ինչ էլ որ լինի։

Ահա մի այդպիսի կիրակի օր էր։ Պարապ գիւղացիներից մի քանիսը մանդաղ ու գերանդի էին սրում և կարգի գցում, ուրիշները խանութների հովերում նստուած՝ գէսից գէնից զրոյց էին անում, իսկ շատերն էլ քնահարամութիւնից շշմած գլուխները մի պատի շուաքում վեր էին դրել ու անուշ քուն մտել։

Տառմօր Սիմօնն էլ քնահարամներիցն էր։ Նա փափախը գլխատակն էր դրել ու իրանց մութը տան խոնաւ գետնի վրայ պատնուգուս պառկել։ Օ՛, որքան քաղցր, որքան անուշ է ջարդուած ու վաստակած երկրագործի քունը, մանաւանդ մի քանի անքուն գիշերներից յետոյ։

Սիմօնը խոր քնի մէջ էր, նրա գէմքը խաղաղ էր ու վերին աստիճանի անվրդով։ Վշտի ու հոգսի, գիւղացու այդ երկու անբաժան ընկերների, հետք անդամ չէր նշմարւում Սիմօնի անխոռվ գէմքի վրայ։ Ընդհակառակը, երբեմն թեթե ժպիտը վայրկենապէս փայլում էր նրա արևառ կոշտ գէմքի վրայ ու անմիջապէս անհետանում։

Երևում էր, որ քնովը երջանիկ երազների աշխարհումն է գտնւում։

Եւ իսկապէս, որքան մեծ բախտաւորութիւն կը լինէր Սիմօնի համար, եթէ մի գերբնական զօրութեամբ իրականանար այն բոլորը, ինչ որ այդ ըոպէին նա տեսնում էր երազում։ Սկզբում Սիմօնին թւում էր, իբր թէ գարուն է և ինքը դաշտ է դուրս եկել վարելու. նա աշխատում է մեծ եռանդով. բայց վարում է ոչ թէ առաջուայ պէս օտարի գութանով. ոչ, այժմ գութանը Սիմօնի սեփականն է։ Այդ գութանին լծուած են եօթ

զոյդ՝ նոյնպէս սեփական՝ եղներ. այն էլ ի՞նչ տեսակ եղներ՝ — ամեն մէկը մի մարալ. մարդ չի ուզում ոչ ուտել, ոչ խմել, այլ միայն ուզում է օրերով կանգնել ու այդ սիրուն կենդանիներին նայել: Սիմօնը հասել է իր իսկական նպատակին. սեփական գութանը եօթ զոյդ եղներով նրա միակ տենչանքն էր կազմում: Սիմօնը իրան կատարելապէս երջանիկ է համարում, նա քաղցր ձայնով հօրօլ է կանչում և մէջէմէջ ծրւծրւացնում է եղներին ու փայփայում. «Եէ, մեռնիմ Զէյրանիս: Ծաղիկ ջան, մէջ արի, Ծաղիկ: Գլխին մատաղ Արաբիս, հօրօլ»... Եւ ոզքան լաւ են քաշում անիրաւ կենդանիները. ահագին գութանը փետուրի թեթեւութեամբ է առաջ լրդում և փիրուն հողի հասողիկ շերտերը շարէշար դիզում:

Ժամանակը երազում զարմանալի արագութեամբ է սլանում:

Մէկ էլ տեսնում է Սիմօնը, որ արտը հասել է, գեղնել ու նրա տոռուղ հասկերը ոսկու պէս շողշողում են նորածին արեւի թոյլ ճառագայթների առջև: Եւ այնքան մեծ, այնքան ընդարձակ է արտը, որ նրա մի ծայրից միւսը չի երեւում. այնքան լաւ ու այնքան բարձր է ցորենը, որ եզր նրա մէջ կորչում է: Սիմօնը անմիջապէս վերցնում է գերտնդին ու սկսում է հունձը: Գործը զարմանալի արագութեամբ է առաջ գնում: Մի քանի վայրկեանից ետոյ ծեծած ցորենի հսկայական թեղը կալում պատրաստ է: Գիւղացիք բոլորը, մեծ ու փոքր, մէր ու մանուկ հաւաքուել են կալի շուրջը և բերանքաց զարմանքով Սիմօնի թեղին են մըտիկ տալիս: Ահա վչեց արեւելեան մեղմ քամին, Սիմօնը մի ակնթարթում ահագին թեղը բամուն տուեց և սրսուռ ու սպիտակ ցորենը գարմանից զատեց: Նայում է Սիմօնը ցորենի հսկայական կոյտին, հըրծում է նրա սիրտն ու լեզուն փառք է տալիս Աստըծուն:

Ահա կալը շրջապատեցին գիւղի աղքատներն ու

ՄՅԱԿ մուրացկանները իրանց պարկ ու տոպրակով։ Սիմօնը մի ակնարկ գցեց այդ թշուառ արարածների վրայ և ինչ տեսաւ. ցնցոտինիրի մէջ փաթաթուած՝ մաշուած ու սովորացած մարմիններ, մարած ու անփայլ աչքեր, նիհար ու դժգոյն դէմքեր, մի խօսքով՝ շարժուն ու խօսուն դիակներ, որոնք՝ օրհնութեան մրմունջը շըրթունքներին՝ իրանց դողդոջիւն ձեռքերը անվստահ կերպով մեկնել էին Սիմօնին։ Սիմօնի ջիգարի ծայրը մըղկտաց. նա բոլորի պարկ ու տոպրակը պոնկէ-պոռունկ լցրեց ու բարձրածայն աւելացրեց.

— Տարէք, խեղճ եղբայրներս, տարէք. Աստուած սիրողը թող տանի տոպրակը դատարկի ու մէկ էլ, երկու էլ, տասն անգամ էլ գայ բաժին տանելու։ Գիտեմ, սիրելիններս, աղքատի երեսը սե ու ձեռը կարճ է լինում, բայց ես ձեզ ինգրում, աղաչում եմ, մօտեցէք աղատ ու համարձակ և տարէք ամեն մէկդ այնքան, որ բաւականացնի ձեղ ու ձեր երեխաներին մի ամբողջ տարի։ Ա՛խ, աղքատութեան տէրը մեռնի, ես էլ եմ էդ օրը տեսել, էդ ցաւը քաշել, տարէք, աղքատ եղբայրներս, տարէք. փառք Աստծու, այնքան է տուել, որ կալիս տականքը միայն՝ ինձ տաս տարի կը բաւականացնի։

Մուրացկանները զարմանքից շուարել են ու չը դիտեն, ինչպէս արտայայտեն իրանց գոհունակութիւնը. Նրանք հաղար ու մի խօսքերով, բազմատեսակ դարձուածներով օրհնում են իրանց բարերարի ծնունդն ու կեանքը, իսկ Սիմօնը ձեռները կանթած, կալի մէջ կանգնած ժպտալի դէմքով ցորնին է նայում ու Ողորմած Տիրոջը փառաբանում...»

Որքան բախտաւոր կը լինէր Սիմօնը, եթէ այս բուլորը երազ չը լինէր։

Լուռ էր խրճիթն ու խաղաղ։ Տանը ոչ ոք չը կար։ Սիմօնի կինը երեխաներին ժողովել ու հարեւանի տունն էր գնացել, որպէս զի փոքրիկները իրանց զալմաղալով յոդնած ամուսնու քաղցր քունը չը խանդարեն։ Խրճի-

թում մնացել էր միայն սև կատուն, նա էլ Սիմօնի գլխավերեւը կծկուել ու իր կիսափուփ աչքերի թոյլ հայեացը տիրոջ երեսին էր ուղղել:

Խրճիթում տիրող խորհրդաւոր լուսթեան մէջ լսում էր միայն քնողի միակերպ ու հանգիստ շնչառութիւնը:

Շը՛խկ, շը՛խկ, շը՛խկ,—լսուեց Սիմօնեաց բակի դըռան ամուր թակոցը:

Սիմօնին երազում այնպէս թուաց, թէ կալի հարեւանը մուրճով ամրացնում է կամերի վրայի թուլացած որձաքարերը և նա մնաց ընկզմուած երազի մէջ:

Շը՛խկ, շը՛խկ, շը՛խկ, շը՛խկ,—նորից կրկնուեցին դռան հարուածները, որից յետոյ բակի հին դուռը, մի աղեկտուր ճիչ արձակելով, կրնկի վրայ պտըտուեց ու թակոցին ներս թողեց: Դա դզիր Գեւօն էր, երկար ու բարակ մի մարդ, գերամաստի *) ծուռ ճիպուրը ձեռին:

—Կ'ասես խօլէր է ընկել աւերակ դառածը, մարդահոտ չէ. գալիս,—բեղի տակ մըթմըթաց նա, մօտենալով խրճիթի դռանը.

—Տատմօր տղայ, հէյ, —գզըին յատուկ սուր ու ձիգ ձայնով դուռաց նա, տան դուռը ծերպ անելով:

Սիմօնը պառկած տեղից ծուլ ելաւ ու ջղաձդական շարժումով սկսեց քնաթաթախ աչքերը տրորել: Քազզը երազների դրաւիչ տասարանները մի ակնթարթում խորտակուեցին ու նրանցից մնացած ոզորմելի աւերակների վրայ խալոյն ոտի կանգնեց կտոն ու ախուր իրականութիւնը իր բոլոր խեղճութեամբ: Ահա նրա ուռած ու կիսաբաց աչքերին երեւում են պապենական հին խրճիթը, հարիւրամեայ սև սիւները, բլբլոտած պատերըն ու մրոտ առասատղը. ահա խրճիթի մի անկիւնում պըպղած՝ հացի դատարկ տաշտը, իսկ միւսում ալիւրի

*) Վայրի ծառ է:

սովատանջ փեթակը, երկուսն էլ Ալիսքը ծուռ՝ աղա-
չական հայեացըով նայում են Սիմօնին...

— Իսկ ինչ եղաւ գութանը, մոտածում էր Սիմօնը,
ինչ եղան իմ սիրուն եղները, իմ կալը, իմ թեղը,
ցորենի ահագին կոյտը. միթե այս բոլորը երազ էր,—
ինքն իրան բարձրաձայն հարցրեց նա:

— Ադա, ինչ ես արջաքուն մտել,— գոռաց գզիր
Գևոն, գոռան շէմքից գլուխը երկարացնելով,— մեռլի
պէս ես չնթռուկում, տնաքանդ, բա դու սկի ցաւ ու
կրակ չունեաւ Հլա տես ոնց ա շարժուում, կ'ասես կուռն
ու ճուռը կարմիր քամի ընկած լինի։ Վեր կաց, իշշի
գլուխ, վեր, տանուտէրը կանչում ա, շնւտ:

Սիմօնը դեռ նոր էր ուշքի գալիս. երազը այնքան
գրաւիչ էր, ու թողաց տպաւորութիւնն այն աստիճան
խոր, որ նա չէր կարող հեշտութեամբ հաշտուել նրա-
նից բաժանուելի մտքի հետ։ Բայց գզիր Գևոն ատելի
երեսը, նրա ծուռտիկ գերամաստի ճիպոտը, որի մզկտա-
ցնող հարուածները շատ արգամ էր կերել Սիմօնը, և
մէկ էլ տանուտէրի ահեղ անունը վերջնականապէս
սթափեցրին նրան ու միանդամայն մոռանալ տուին
երջանիկ երազի քազցր յիշողութիւնը։

— Հը, ինչ կայ, Գևո ջան. լինչի ես կանչում, խէր
լինի,— աղաչական տոնով հարցրեց նա գզրին, թէե լաւ
գիտէր, որ գզրից ու տանուտէրից ոչինչ խէր բան չէ
կարելի սպասել:

— Զոռ ու ցաւ կայ, քո գլխիդ ու արևիդ. կորիր,
տես ինչ եմ ասում. ես հօ խմաստուն չեմ,— կոչտ ու
կոպիտ պատասխանեց գզիրը։

Սիմօնը շտապով արխալուղը կոճկեց, փափախը
ծածկեց ու ոտաբորիկ հետեւեց գզիր Գևոին։

Տէր Աստուած, — մտածում էր Սիմօնը ճանապար-
հին, — տեսնես ինչի համար են կանչում էս նեղ ժա-
մանակին։ Թէ ասեմ հարկ են պահանջում, ախար ան-
ցեալ կիրակի առան. թէ կոռ են ուղարկում, ախար
երէկ չէ մէկէլ օրը կոռատեղից վերադարձայ, մինչեւ

հերթը ինձ հասնելը դեռ շատ ժամանակ կայ: Ե՛հ, ով
է իմանում, երեխ կամ գիշերապահ են նշանակում, կամ
մի ուրիշ գործի են դնում. վերջապէս, շատ չի քաշի,
հիմի կ'իմանանք:

Երիկնապահի հովը արդէն ընկել էր: Դիւղամիջին
մարդիկ խմբուել էին տանուտէր Սեփանի շուրջը, որ
իր հսկայական կոկորդի ամբողջ ոյժով գոռում էր մի
աղքատ գիւղացու վրայ ու թափահարում ձեռքի կար-
միր ճիպոտը:

Տանուտէր Սեփանի կարմիր ճիպոտը անճար աղ-
քատների հոգեառ հրեշտակն էր:

—Լիրը, անամօթ, շմա որդի, —ըղաւում էր տա-
նուտէրը, —ձեզ պէս լուացուած *): Ճների համար իմ ե-
րեսը ամօթանք է գալիս ու մեծերիս առջև անպատիւ
եմ լինում, ինչու, պատճառը՝ հարկ չը տուողը դռւ լի-
նես, ամօթանք քաշողը՝ ես...

Այդ րոպէին տանուտէր Սեփանի մաքուր ածելած՝
կլոր երեսը այնպէս էր կարմրատակել, որ քիչ էր մը-
նում նրա կզակից արիւն կաթկաթէր. իսկ նրա փափլիկ
ուժեղ մատները՝ անգործութիւնից ձանձրանայով՝ բո-
լոր ոյժով սեղմում էին կարմիր ճիպոտի ուռած գը-
լուխը:

Լուռ ու մունջ ամբոխը վախկոտ հայեացըով նայ-
ում էր տանուտէրի բարկացած դէմքին ու նրա ձեռքի
կարմիր ճիպոտին և ոչ ոք նրանցից չէր համարձակում
ձէն ու ծպտուն հանել: Հազի ձայն անգամ չէր լսում:

Արդար է խօսում էս մարդը, —վերջապէս միջա-
մտեց հարկածողով Յաթօն, ցանցառ մօրուքով, կեղտոտ
օձիքով, կարճահասակ ու տգեղ մի վաճառական, —մեր
գիւղացիք օրէցօր ամօթն ու պատկառանքը կորցնում,
լուացւում են: Եղբայր, ով է տեսել՝ հարկը ամիս-
ներով ուշացնել: Արքունական հարկ է, դա էլ հօ ու-
տելու բան չէ. պիտի տաք, շնուտ տուէք, թող վերջա-

*.) Նրեսի մեռոնը թափած, —ամօթ ու պատկառանք կորցրած:

նայ կորչի էլի. ինչու էք աննամուսութիւն անում, որ համ գուք խայտառակուէք, համ էլ մեր տանուտէրի երեսը թուք ու մուք գայ:

—Տեսնենք ունեն, որ չեն տալիս,—լսուեց ամբոխի խորքից մի երկշու ու թոյլ ձայն, որպէս պատասխան հարկաժողով Յաթօխն:

Տանուտէրը արագութեամբ երեսը չուռ տուեց ու մի կատաղի հայեացք գցեց չորս կողմը, աշխատելով գտնել յանդուգն ընդդիմախօսին: Բայց նրա հարցական հայեացքին իբրև պատասխան՝ լսուեցին ամբոխի զանազան ծայրերից կեղծ հազի զսպուած ձայներ:

Այդ միջոցին Սիմօնը գողդոջուն սրտով՝ գզրին հետևելով, մօտենում էր գիւղացիների կազմած շրջանին:

—Տատմօր տղին բերի, տանուտէր աղա,—ասաց գզիր Գևոն, Սիմօնի թեւեց քաշելով ու տանուտէրին մօտեցնելով:

Տանուտէր Սեփանը, որ այդ ժամանակ բարկութիւնից պոօշներն էր կրծոտում, կարմրատակած խոշոր աչքերի այլող հայեացքը մեխեց ուղիղ Սիմօնի ճակատին և իր որոտաղ ձայնով հարցրեց.

—Այ անամօթ, շան որդի, ինչու չես հարկդ տալիս:

Տանուտէրի աչքերի վայրենի ցուքը անմիջապէս շփոթեցրեց Սիմօնին, որ մեքենաբար իր մորթէ փափախսը յօնքերի վրայ իջեցրեց, աշխատելով պաշտպանել իր մանր ու սե աչքերը տանուտէրի հալեցնող հայեացքից: Սիմօնը մինչև անդամ չը հասկացաւ, թէ ինչ հարցրին իրան ու չը գիտէր ինչ պատասխանէր: Նա սաստիկ անյարմար դրութեան մէջ գտնելով ինք իրան, նախ մի փոքր կարմրեց, ապա ուսերը վեր քաշեց ու սկսեց ծոծրակը քորել:

—Խլացել ես, թէ պապանձուել, իշխ քուռակ,—աւելի բարձր ձայնով գոռաց տանուտէրը, —ինչու չես հարկդ տալիս, լիրը, լրբի զաւակ:

Այդ խօսքերի հետ նա թեքելը վեր քաշեց ու կարմիր ճիպոտը բարձրացնելով, լարձակուեց անպաշտապան զոհի վրայ։ Մի քարի ըովէ լոեց ամեն ինչ։ Լզուում էր միայն կարմիր ճիպոտի անողորմ շրպշրպոցը, որի ամեն մի հարուածին յաջորդում էր ամբոխի ցաւակցական շուկը՝ «ծփ»։

Լուռ էր և Սիմօնը. նա ոչ ճչում էր, ոչ փախչում, այլ մի տեսակ անսուռնչ արհամարհանքով տանում էր անտեղի պատիժը։ Այդ սառը անտարբերութիւնը աւելի ևս զայրացնում էր տանուտէրին, և սա կրկնապատկում էր կարմիր ճիպոտի ոյժը, որ կարողանայ անպատճառ մղկացնել ու լացացնել Սիմօնին։ Սիմօնը միայն աշխատում էր ձեռքերով պաշտպանել իր խեղճ ու անբախտ գլուխիը, իսկ նրա թիկունքը իր ամբողջ լայնութեամբ բացուած էր կարմիր ճիպոտի առջե, որի ամեն մի հարուածը մի երկար՝ կապուտակ շերտ էր դրոշմում այդ բազմաչարչար թիկունքի վրայ։

Ծանր, շատ ծանր բան է, երբ մարդ պատժւում է ը գործած յանցանքի համար, բայց գրանից տասնապատիկ աւելի ծանր է, երբ արդար մարդը պատիժ է կրում, չիմնալով մինչեւ անդամ, թէ որ յանցանքի մէջ է մեղադրւում։

Վերջապէս տանուտէրը հասաւ իր նպատակին. երբ որ կարմիր ճիպոտը բամում էր նրա սրտում լճացած թոյնի վերջին մնացորդները, այդ ժամանակ նա նկատեց, որ Սիմօնի կոշտոցած ու մազապատ դէմքի վրայով մի կաթիլ բիւրեղանման հեղուկ գլորուեց դէպի գետին։ Աղի հեղուկի այդ նշն կաթիլը մի վայրկեանում հանգցրեց բարկացած սրտում բորբոքուած կրակը։

Մաղձը թափուեց. սիրտը նստեց։

Այժմ բաւական էր մի թեթև միջամտութիւն, որ կարմիր ճիպոտը դադարէր գործելուց. այս բանը լաւ հասկացաւ սուդեա Սաքօն, որ իշխանաբար մօտենալով Սեփանին, ասաց.

—Բաւական է, տանուտէր, սպանեցիր մարդին: Յետոյ նա ընկնելով ծեծողի ու ծեծուողի մէջտեղք, բաժանեց նրանց ու մի քիչ հեռացրեց Սիմօնին:

Ասենք, տանուտէրը գագարեցրեց ծեծը, բայց անմիջապէս սկսեց ամենակեղոտոտ ու զզուելի յիշոցներ թափել իր հոտած բերանից: Դա ծեծի վերջաբանն է: Ոչ Սիմօնի հէրը, ոչ կաղ տատմէրը, ոչ մեռածը, ոչ կենդանին՝ ոչ ոք ազատ չը մնաց տանուտէրի անսպառ հայհոյեանքից:

—Այ ժողովուրդ, այ գիւղացիք, այ հարևան, այ բարեկամ, —յանկարծ գոչեց Սիմօնը մի անսովոր զիլ ձայնով դիմելով շրջապատողներին, —դուք հայքիմսոնեայ էք, դուք Աստուած էք պաշտում, մի ասացէք տեսնեմ: Ինչ է իմ մեղքը, որ տաւարի պէս ջարդ...

Դառը արցունքի առատ հոսանքը խեղդեց Սիմօնի կոկորդը. նա չը կարողացաւ վերջացնել կիսատ խօսքը, այլ երկու ձեռքով երեսը ծածկեց ու սկսեց դառնագին հեկեկալ:

Սուգեա Սաքօն ու հարկաժողով Յաթօն փորձեցին իրանց բրգիջով խեղդել Սիմօնի հեկեկանքի սրտակոտոր հնչիւնները, բայց տեսնելով որ այդ վրբ բրգիջը արձագանք չը գտաւ շրջապատողների մէջ, խկոյն սըստուեցին ու գլուխները կախեցին:

—Հարկս անցած կիրակի օրն եմ տուել. ուրեմն ինչո՞ւ էք իզուր տեղը ինձ ջարդ ու փշուր անում, —շարունակեց Սիմօնը հեկեկանքը զսպելով ու արխալուզի թեքով արտասուքը սրբելով:

—Զայնդ, անամօթ շուն, թէ չէ լեզուդ կը կտրեմ այս րոպէիս, —որոտաց տանուտէրը, կարմիր ճիպոտը թափահարելով ու երկու քայլ առաջ գալով: —Յաթօքիձա, —դիմեց տանուտէրը հարկաժողովին, —այս մարդը հարկը տուել է:

—Ասենք, այս տարուանը տուել է, —ծանր ու բարակ պատասխանեց հարկաժողովը, —բայց անցած տա-

րուայ ապառիկը մնում է, տասնուշորս մանէթ ու քսան կոպէկ է, կարծեմ:

—Ի՞նչպէս, —ճշաց Սիմօնը, սոսկալով:

—Այնպէս, —անվրդով սրտով պատասխանեց հարկաժողովը:

—Ես հերուայ հարկը չեմ տուել:

—Ո՞չ. թէ չես հաւատում հարկի ցուցակը տես:

—Եղբայր, ինչու էք շատախօսութիւն անում, —մի առանձին համոզիչ ու հեղինակաւոր ձայնով սկսեց օրէնսդէտ սուդեա Սաքօն. —տէրութիւնը հաստատ լինի, ամեն բանի համար մի լաւ օրէնք է դրել. առանց օրէնքի ոչ մի գործ եօլա չէր գնալ: Փառք Աստծու, հարկը տալու համար էլ կարգ ու կանոն կայ դրուած. օրէնքով հարկը պիտի տաս հարկաժողովին ու անդորրագիրն առնես, դնես ծոցդ: Ով որ անդորրագիր ունեցաւ, երանալն^{*)} էլ իր երանալ տեղովը չի կարող նրանից կրկին անգամ հարկ պահանջել. իսկ ով այդ թղթի կտորը չունեցաւ, խօսիլն աւելորդ է, տիկ հանելով հարկը կ'առնեն:

Այդ բոպէին ամբոխի մէջ մի շարժում սկսուեց. նրանցից որը գրպանն էր պտոււմ, որը ծոցը, որը վազմատեղը ու որը փափախածալը:

—Հա, խօսքը Տատմօր տղի վրայ եկաւ, —շարունակեց սուդեան, —հիմի եթէ այս մարդը անդորրագիրը ցոյց տուեց, կը նշանակի հարկը տուել է, իսկ եթէ ոչ, ուրեմն հոգին դուրս գալով պիտի տայ. օրէնք է հանաքմասխարութիւն չէ, —վերջացրեց Սաքօն իր ազդունակը. հազար ու սկսեց մի պապիրոս փաթաթել:

—Լաւ է ասում սուդեա Սաքօն, եթէ հարկդ տուել ես, անդորրագիրը ցոյց տուր, —ժպտալով աւելացրեց հարկաժողովը, լաւ իմանալով, որ Սիմօնից հարկը ստացել է, բայց՝ օգտուելով նրա միամտութիւնից, անդորրագիրը չի տուել:

*) Երանալ—գեներալ. գործ է ածում նահանգապետ բառի մտքով:

—Ես հերուայ հարկը չեմ տուել, Յաթօ բիծա,—
ձեռքերը խաչելով հարցրեց Սիմօնը, ուղիղ հարկաժո-
ղովի աչքերին նայելով։

—Ոչ, —պատասխանեց Յաթօն, գլուխը կախելով։

—Դու ու քո Աստուածը, դու ու քո միակ որդու
արեց՝, չեմ տուել։

—Այ, իշխ գլուխ, ինչու ես երգում տալիս, եթէ
տուած լինես, անդորրագիր կ'ունենաս, և վերջապէս
ցուցակումն էլ նշանակուած կը լինի։

—Յաթօ բիծա, դու քրիստոնեայ ես. ախար էսօ-
րուայ պէս միտս է. երկու խալվար հաղող ծախեցի Բա-
րիլուսենց Վարդանին՝ կիսագին, ու բերի տասն ու չորս
մանէթ քսան կոպէկ քեզ տուիր։ Դու էլ այդ ժամանակ
Ուկանենց խանութումն էիր. այ, սուդեա Սաքօն էլ
այնտեղ էր՝ տալու ժամանակ։ Դու հոգի ունես, դու
Աստուած ես պաշտում ախար։

—Է՞ն, դատարկ բաներ ես խօսում, —ասաց հար-
կաժողովը ու շարունակեց շրմիկ-շրմիկացնել սե տէրո-
ղորմեայի խոշոր հատերը։

—Սուդեա Սաքօ, դու լինես՝ էս բարի իրիկունը,
անարատ Մայր Աստուածածինը, —ասաց Սիմօնը, ձեռ-
քը մեկնելով գէպի Աստուածածնի եկեղեցու գմբէթը, —
ճշմարիտն ասա, քո աչքի առջե չը տուի՞ հարկը։

—Ի՞նչ ասեմ, եղբայր, միտս չի դալիս, համա իմ
կարճ խելքովը ես էնքան եմ հասկանում, որ եթէ տուած
լինես, անդորրագիր կ'ունենաս. սա օրէնք է, հանաք-
մասիարութիւն չէ, —ասաց սուդեա Սաքօն ու վրդով-
ուած խճմտանքը հանդստացնելու համար ադահութեամբ
ներս ծծեց մախորկի դառը ծուխը։

—Այ գեադա, բաւական է, —դարձաւ Սիմօնին
տանուտէր Սեփանը, որ մինչեւ այդ լուռ կանգնած՝
եղունգներն էր կրծոտում, —դու ինքդ էշ ես ու էդ էշ
տեղովդ ուղում ես էստեղ մարդ խաբել։ Ես քեզ ասում
եմ հարկ ես տալու, քո կամքովդ հանիր ու տուր, տամն

ու չորս մանէթ քսան կոպէկ՝ էս ըոպէիս հանիր ու համ-
րեր, թէ չէ, կաշիդ քերթելով կ'առնեմ:

— Տանուտէր Սեփան, թէ Աստուածդ կը սիրես,
ձեռք քաշիր ինձանից. ես իմ հարկը տուել եմ համ էս
տարուանը, համ էլ անցածինը. Աստուած, երկինք, գե-
տինք վկայ, որ տուել եմ: Այդ խօսքերի հետ Սիմօնը
իր մորթէ փափախը վերցրեց ու բոլոր ուժով գետնին
խփեց: Յետոյ նա վերցրեց գետնից մի կից հող և օդի
մէջ վերև ցանելով, աղաղակեց.

— Թո՞ղ էս հողը իմ Աստուածը լինի, թող ես կնորք
պաշտած լինեմ, թող իմ տունս բրիշակ լինի ու իմ որ-
դիքս ջարդուեն, թէ ես այդ փողը չեմ տուել: Այ մար-
դիկ, ախար դուք Աստուած էք պաշտում... Արտասու-
քը կրկին խեղդեց, Սիմօնի կոկորդում կիսատ մնացած
նախագասութիւնը և նա սկսեց հեկեկալ:

Օդի մէջ ցանած հողի թեթև մասնիկները, բաժա-
նուելով ամենամանը հիւլէների սկսեցին անհոգաբար
լողալ Սիմօնի գլխի վերել, մինչեւ որ արեելքից սլացող
մի բարակ քամի յափշտակեց նրանց ու անյայտացտւ
ոլորապտոյտ փողոցի հեռաւոր ծայրում:

— Տատմօր տղայ, Տատմօր տղայ, ինձ լսիր,—ասաց
տանուտէրը մի քիչ մեղմութեամբ,—առաջին՝ լաց լինելը
կինարմատի արհեստ է և շատ ամօթ է, որ քեզ պէս
մաղ ու մօրուքով տղամարդը հրապարակի մէջ արտա-
սուք թափէ. իսկ երկորդ՝ ոչ խօսելը և ոչ արտա-
սուելը մի կոպէկի օգուտ չի բերիլ. Այս ըոպէիս ես քե-
զանից հարկ եմ պահանջում, անցած տարուայ ապա-
ռիկը՝ տասն ու չորս ոռուբլի քսան կոպէկ, տալիս ես,
թէ չէ:

— Տուել եմ, Աստ...

— Զայնդ կտրիր, անպատկառ շնչն, թէ չէ բիբիկդ-
կը հանեմ,—բղաւեց տանուտէրը, կարմիր ճիպոտի սուր
ծայրը մօտեցնելով ուղիղ Սիմօնի աջքին, — ես քեզ ա-
սում եմ հարցիս պատասխանիր. հարկդ տալիս ես,
թէ չէ:

Սիմօնը ուզեց նորից պնդել, թէ տուել է, ուզեց կրկին ու կրկին երգուել, ուրիշ զօրաւոր սուրբերի աշնուններ հրապարակ բերել, բայց, վախենալով կարմիր ճիպոտից, որի բարակ ծայրը դեռ ևս ցցուած էր նրա աչքի առջե, շուարեց ու չիմացաւ, թէ ի՞նչ պատասխանի:

— Այ տղայ, դու ինչո՞ւ ես կոպտութիւն անում, — նորից հնչեց օրէնսդիր սուդեայի հեղինակաւոր ձայնը, — գիւղի մեծն է հարկ ուզում, հանիր ու տուր իսկ եթէ առաջուց մի անդամ տուել ես, կարող ես գանդատուել ու յետ ստանալ: Փառք Աստծու, դատաւոր կայ, դատաստուն կայ. սա օրէնք է, հանաք~մասխարութիւն չէ:

— Տալի՞ս ես, թէ չէ, — կրկին դոչեց տանուտէրը իր կրակոտ աչքերը լայն չռելով Սիմօնի վրայ:

Սիմօնը լուռ էր: Այդ րոպէին նա այնպէս վրդովուած էր, որ եթէ սրտին դանակ տայիր, արիւն չէր կաթիլ:

Հարկաժողով Յաթօն, լոռութիւնը համաձայնութեան նշան համարելով, ներքուստ ուրախացաւ ու զզուելի ժպիտը շրթունքներին՝ ասաց.

— Կը տայ, տանուտէր, կը տայ, ոչինչ չի ասիլ. Սիմօնը խելօք տղայ է, սա ուրիշների պէս ուրացող ու աննամուս չէ. իր պարտքն է, կը տայ, ոչինչ չի ասիլ: Բայց ես քեզ ինդրում եմ, որ մի քանի օր ժամանակ տաս, մարդ է, կարելի է հիմք ձեռքին չունի:

Սիմօնը երեսը Յաթօն գարձրեց ու մի թունալից ակնարկ գցեց նրա վրայ: Օ՛, որքան տգեղ, որքան զզուելի էր այդ գեղնադոյն ու կնճռուած գէմքը, որի վրայի ցանցառ մօրուքն ու շրթունքների դիւային ժողուար դժոխային ստանայի տեսք էին տալիս նրան: Սիմօնը ուշի ուշով տնտղում էր այդ հրէշային այլանդակութիւնը և նրա ատելութիւնը աւելանում, նրա զզուանքը ծայրայեղութեան էր հասնում: «Իր պարտքն է, կը տայ», նորից հնչեցին նրա ականջում Յաթօն արտասանած խօսքերը: Եւ Սիմօնի դէմքը սպրդնեց, բռունցը

ները իրանք իրանց սեղմուեցին ու նրա սև սաթի պէս
աչքերը այնպէս պլազմացին իրանց նեղ բնում, որ, կ'ա-
սես, ուզում էին գուրս թռչել այնտեղից:

—Հրեղէն սուրը մտնի քո տունը, —ճշաց Սիմօնը
ու բռունցըները բարձրացրած յարձակուեց Յաթօխ վրայ:

Դա մի յուսահատական յարձակում էր, որ գործեց
հարստահարուած խեղճութիւնը հարստահարող անիրա-
ւութեան դէմ: Բայց թոյլի առաջին հարուածն էլ դեռ
չէր հասել իր նպատակին, երբ գղիր Դեօխ երկար բա-
զուկը սեղմեց նրա կոկորդը ու տապալեց գետին:

Այնուհետև ճիպուների, քացիների ու բռունցը-
ների անողորմ հարուածները կարկտի արագութեամբ
սկսեցին թափուել խեղճ Սիմօնի գլխին: Ծեծում էր
տանուտէրը, ծեծում էր գղիրը, ծեծում էր և հարկա-
ժողովը. իսկ սուգեա Սաքօն քիչ հեռու կանգնած՝ խրա-
խուսում էր նրանց ու ասում:

—Խփէ՛ք, խփէ՛ք, դրա լիրբ հէրն անիծած. ջար-
դեցէք, որ խեղը գլուխը գայ ու խրատուի: Սա օրէնք
է, հանաք~մասսարութիւն չէ:

Ծեծը դադարեց միայն այն ժամանակ, երբ տա-
նուտէրը համոզուեց, որ ծեծուողը արդէն ուշագնաց է
եղել:

Կէս գիշերը մօտ էր, երբ Սիմօնը աչքերը բացեց
ու ինքն իրան գտաւ միայնակ գիւղական բանտի դար-
շահոտութեան ու խաւարի մէջ թաղուած: Նախընթաց
օրուայ տխուր պատահմունքը իր բոլոր մանրամասնու-
թիւններով մի բոպէում պատկերացաւ նրա մտքում:

—Տէր Աստուած, այս ինչ փորձանք էր, որ իմ
գլխիս եկաւ, —յուսահատութեամբ բացականչեց Սիմօ-
նը, մթութեան մէջ ջուխտ ձեռքով ծնկներին խփելով,
վայ գլխիս, արտս կը կծղի, տունս կը քանդուի...

Հետևեալ օրը իրիկնապահին տանուտէր Սեփանը
կարմիր ճիպոտը ձեռին մօտեցաւ գիւղական բանտին
ու դռան գլխի փոքրիկ ծակից ներս նայելով, ասաց,

—ՀՇ, Տատմօր տղայ, եթէ արձակեմ՝ կիրակի օրը
կը տաս հարկիդ ապառիկը։

Պատասխանելը դժուար էր։ Սիմօնը մտածեց։ Կծզող
արտը, դատարկ տաշտը, կարմիր ճիպոտը և սրանց պէս
հազար ու մի դառն ու տխուր մտքեր չորս կողմից պա-
շարեցին նրա ուղեղը, և այդ մոքերի սարսափելի ծան-
րութեանը չը դիմանալով, Սիմօնի փոքրիկ դլուխը կա-
մաց կամաց խոնարհուեց դէպի ցած ու այդպիսով հա-
մաձայնութեան նշան տուեց տանուտէրի առաջարկու-
թեանը։

Զուր չէ ասած. «Անճարը կերել է բանջարը»...

Ա. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

Մ Ա Ս Ն Ե Բ Բ Ո Ր Դ

IV

Կայարանում

«Այս, սիրում եմ քեզ, սիրում... աւելի քան երբ և իցէ
և ընդմիշտ... ի՞նչ միաք ունի մաքառելը և դիմադրելը: Մեր
ոճիրը մեզնից զօրեղ է... Եւ վերջապէս, յանցանք է արդեօք
այն, որ մենք իրար սիրում ենք... Մենք վիճակուած էինք մի-
մեանց: Միթէ իրաւունք չունենք միանալ, չը նայելով, որ
կեանքը անջատել է մեզ: Ուրեմն եկ: Վճռուած է. գնում ենք...
Վաղը երեկոյ, Լիօնի գծի կայարանից, ժամի տասի գնացքով...
Տոմսակները կ'առնեմ ու կը սպասեմ քեզ...»

«Ֆրանց»

Ամբողջ մի ամիս Սիդօնին սպասում էր այդ նամակին,
ամբողջ մի ամիս նա գործ էր զնում իր բոլոր գգուանքներն ու
խորսմանկութիւնները, որպէս զի սահաէքր տեղրին գրաւոր
կերպով արտայացտել իր բուռն սէրը: Նա շատ էր չարչարուել
այդ նպատակին հասնելու համար: Հեշտ բան չէր յանցաւորու-
թեան հասցնել ֆրանցի սրտի պէս մի աղնիւ ու երիտասարդ
սիրտ, և այդ տարօրինակ մաքառման մէջ, ուր՝ իսկապէս սիրո-
ղը կուռում էր իր սեփական շահերի գէմ, Սիդօնին յաճախ ու-
ժապառ էր զգում իրան և գրեթէ վհատուած: Երբեմն, երբ նա
արդէն կարծում էր, թէ ֆրանցը բոլորովին ընկճուել է, յան-
կարծ նրա երիտասարդական շիտակ բնաւորութիւնը վրդովւում
էր և քիչ էր մնում, որ նա վախչէր այդ կնոջից, նորից ազա-
տուէր նրա ձեռքից:

Ի՞նչ ցնծութիւն պէտք է զգար ուրեմն, երբ մի առաւօտ
օդապուս, 1901.

բերին նրան այդ նամակը։ Տիկին Դօմսօնն էլ մօտն էր այդ ժամանակի Նա հէնց նոր էր եկել, մի բնոր գանգառներ բերելով Փօրժից, որ սրանեղում էր, իր սիրուհուց հեռու ապրելով, և սկսում էր անհանգստանալ շնորհիւ այդ տեղիքի, որ աւելի յաճախ էր լինում նրա հետ և աւելի խանդու էր ու պահանջող, քան լինում են նոյն իսկ ամուսինները։

— ՅՇ, խեղճիկը, խեղճիկը, — ասում էր սանտիմէնտալ ամերիկուհին, — եթէ տեսնէիր, թէ որքան տանջւում է նա։

Եւ թափահարելով խոպոպները, նա բայ արեց փաթաթած նօտաները ու մէջիցը հանեց «վանդիկի» նամակները, որ ամենայն հոգատարութեամբ պահում էր իր ուսմանների թերթերի մէջ, երջանիկ զգալով իրան, որ խառն էր այդ սիրային պատմութեամն մէջ և որ կարող էր յափշտակուել այդ՝ ինարդիգայով ու խորհրդաւորութեամբ լի մթնոլորտում, որ քնքշութիւն էր տալիս նրա սառն աչքերին և չոր ու ցամաք չէլ գոյնին։

Սմննատարօրինակն այն էր, որ ամենայն պատրաստականութեամբ յանձն առնելով սիրային նամակներ տանողը բողոք գերը, այդ սիրուն ու ջահէլ ամերիկուհին ինքը անձամբ երբէք ոչ գրել էր, ոչ էլ ստացել մի սիրային նամակ։

Շարունակ գնալ-գալով Պարիզից Անիէր և Անիէրից Պարիզ, միշտ մի սիրային նամակ թնի տակին, այդ տարօրինակ թղթատար աղաւնին հաւատարիմ էր մնում իր աղաւնատանը և մնչում էր միայն մաքուր դրդումից։

Երբ Սիդօնին ցոյց տուց Ֆրանցի նամակը, տիկին Դօմսօնը հարցրեց։

— Ի՞նչ ես զրելու։

— Արդէն գրել եմ։ Դրական պատասխան տուի։

— Ի՞նչպէս, վեր կը կենաս, կ'երթաս այդ գժի հետ։

Սիդօնին սկսեց ծիծաղել։

— Այդ էր պակաս Դրական պատասխան տուի, որ գնայ սպասի ինձ կայարանում։ Պրծաւ, գնաց, թող մի քառորդ ժամ տանջուի իմ պատճառով։ Դեռ այդ քիչ է նրան։ Մի ամբողջ ամիս հոգիս բերանս բերեց։ Ամբողջ կեսնկոս փոխել էի այդ պարոնի պատճառով։ Ստիպուած էի վերջ տալ ընդունելութիւններիս, դուռս փակել բարեկամներիս առաջ, այն ամենքի առաջ, որոնք ջահէլ են ու սիրելի, սկսած ժօրժից և վերջացրած քեզնով։ Որովհետև գիտես, սիրելիս, դու էլ դուր չէիր գալիս նրան և, եթէ նրանով լինէր, քեզ էլ կը հեռացնէր ուրիշների նման։

Սակայն Սիդօնին չասաց նրան այն, որ ամենից շատ էր գրգռել նրան Ֆրանցի դէմ, այսինքն այն, որ նա վախ էր ազ-

գել իրան, սաստիկ վախ, սպառնալով, որ ամեն բան կը յայտնի ամուսնուն: Այդ բոպէից սկսած նա շատ վատ էր զգում իրան և նրան թում էր, թէ իր կեանքը, իր քաղցր, իր այնքան փայտայած կեանքը լուրջ կերպով վահանդի է ենթարկուած: Ռիսլէրի նման սաստիկ շէկ ու սառնատեսիլ մարդիկ սարսափելի բարկութիւններ են ունենում, որոնց հետեանքները անկարելի է նախատեսել, նման այն անգոյն ու անհամ պայթուցիկ փոշիներին, որ վախենում են գործ ածել, որովհետև յայտնի չէ նրանց ոյժը: Եւ այն միտքը, թէ մի օրից մի օր Ֆրանցը կը յայտնէր ամուսնուն նրա վարք ու բարքը, սարսափեցնում էր նրան:

Նրա յիշողութեան մէջ զարթնում էին պատկերներ իր առաջուան կեանքից, այն օրերից, երբ նա ապրում էր խտաքնակ թաղում,—պառակտուած ընտանիքներ, ամուսնական վրիժառութիւններ, չութեան խայտառակութիւնը շաղախուած արեան մէջ: Մահուան տեսիկները հանգիստ չէին տալիս նրան: Եւ մահը, յաւիտենական հանգիստը, անհուն խաղաղութիւնը, ի հարկէ, չէր կարող չը սարսափեցնել այդ՝ զուարճութիւնների պապակող և աղմուկի ու շարժման մոլի փոքրիկ արարածին:

Այդ երանելի նամակը չքացնում էր այդ բոլոր ահերը: Այսուհետև անկարելի էր, որ Ֆրանցը, իմանալով, որ նրա ձեռքին այդպիսի գենք կայ, մատնէր նրան, նոյն իսկ, եթէ կատաղութիւնից փրփրէր, զուր տեղը սպասելով նրան կայարանում: Վերջապէս, եթէ մատնէր էլ, նա ցոյց կը տար նրա նամակը և նրա բոլոր մեղադրանքները այնուհետև բացարձակ զրպարտութիւն կը թուային Ռիսլէրին: Օ՞հ, պարոն դատաւոր, դուք մեր ճամսկումն էք այժմ:

Յանկարծ կատաղի ուրախութիւն եկաւ նրա վրայ:

—Նորից յարութիւն եմ առնում... կենդանանում եմ... ասաց նա տիկին, Դօրսօնին:

Եւ թռաւ գնայ պարտէզը, սկսեց վազվել ծառուղիներում, ահազին փունջեր կազմեց գահլիճի համար, լուսամուտների երկու փեղկերն էլ բաց արեց արեի առաջ, պատուէր տուեց խոհարարուհուն, կառապանին, պարտիզպանին: Պէտք էր սուն ու տեղը զարդարել, որովհետև ֆօրթը նորից գալու էր, իսկ առաջուան կեանքը վերսկսելու համար նա մեծ ճաշկերոյթ էր տալու շաբաթուայ վերջին: Տեսնելով, թէ ինչպէս նա, ձեռք ու ոտք ընկած, աշխատում է շարժում ու կեանք վերահաստատել իր շուրջը, մարդ, յիրաւի, կարող էր կարծել, թէ նա մի ամրող ամիս գործով բացակայ է եղել և այժմ նոր վերադարձել է ճանձրացուցիչ ու յոզնեցուցիչ ճանապարհորդութիւնից:

Միւս օրը, երեկոյեան, Սիդօնին, Ռիսլէրն ու տիկին Դօրսօնը՝ երկըն էլ դահլիճումն էին։ Ռիսլէրը մեզենագիտութեան վերաբերեալ ինչ որ հաստ զիքք էր թերթում, իսկ տիկին Դօրսօնը նուագակցում էր Սիդօնին, որ երգում էր Յանկարծ, երբ ժամի տասը խփեց, Սիդօնին ուսմանսի կէսումը կանդ առաւ ու սկսեց սաստիկ քրքջալ։

Ռիսլէրը շտապ շարժումով քիթը բարձրացրեց։

—Ի՞նչի՞ վրայ ևս ծիծաղում։

—Ոչինչ... միաքս մի բան ընկաւ... պատասխանեց Սիդօնին, աչքի թեթև թարթումով պատի ժամացոյցը ցոյց տալով տիկին Դօրսօնին։

Պայմանաւորուած ժամն էր այդ, և նա մտածում էր, թէ ինչպէս է այժմ տանջւում իր սիրահարը, կայարանում սպասելով նրան։

Այն րոպէից, երբ թղթատարը վերադարձաւ, բերելով Սիդօնիի տենդօրէն սպասուած համաձայնութիւնը, ֆրանցի յուզուած հոգին սաստիկ հանգստացաւ, ինչպէս թէ մի ձգուած լար յանկարծ թուլանար։ Զքացաւ տարուբերումը, չքացաւ մաքառումը կրքի և պարտականութեան մէջ։ Ռոպէաբար նա թեթևացած զգաց իրան։ կարծես թէ այլ ևս խղճմտանք չը կար նրա մէջ։ Ամենայն հանգստութիւնամբ սկսեց ճանապարհի պատրաստութիւններ տեսնել, պայուսակները դարսեց, կողպեց, պահարանները դատարկեց, և գեռ շատ ժամանակ առաջ այն ժամից, երբ վարձած կառքը գալու էր իրեղէնները տանելու, նա արդէն բոլորովին պատրաստ նոտած էր սենեակի մէջին մի արկղի վրա։ և զիտում էր իր առջնի քարտէզը, որ մեխուած էր պատին, իրրի մի նշանակ իր թափառական կեանքի, աչքը ման ածելով ճանապարհների ուղիղ գծով և ովկիանոսը պատկերացնող ալիքանման խազերով։

Ոչ մի անգամ նրա մտքովը չանցաւ, որ գաւթի միւս կողմում կայ մի արարած, որ լալիս ու հառաջում է նրա պատճառով։ Ոչ մի անգամ նա չը մտածեց իր եղբօր յուսահատութեան մասին, այն սոսկալի դրամայի մասին, որ ինքն ու Սիդօնին թողնելու էին իրանց յետնում։ Նա շատ հեռու էր այդ բոլոր բաններից։ նա արդէն երեսակայութեամբ ճանապարհ էր ընկել և հանդիպել էր կայարանի առաջ Սիդօնիի հետ, որ ճանապարհորդի ու փախստականի մուգ-գոյն շորեր ունէր հագին, արդէն կապուտակ ծովի ափն էր հասել, ուր նրանք դադար էին առնելու առժամանակ իրանց հետքերը կորցնելու համար, և, այդպէս շարունակելով, նա վերջապէս հասել էր նրա հետ մի անյայտ երկիր, ուր ոչ ոք չէր կարող պահանջնալ ու խլել նրան

իր ձեռքից երբեմն էլ նա երևակայում էր, թէ վագօնում նըստած սլանում են խաւարի և ամայի դաշտի մէջով։ Նա տեսում էր մի սիրունիկ ու գունատ գլուխ կոթնած իր զլխի կողքին բարձերի վրայ, վարդափթիթ շրթունքներ իր շրթունքների մօտ և մի զոյգ խորունկ աչքեր, որոնք նայում են իրան լամպի մեղմ լոյսով, անխիների ու շոգու օրօրի մէջ։

Եւ այժմ՝ սուլիր ու մռնչա, մեքենայ, ծնցիր գետինը, կարմրացրու երկինքը, ծուխ ու բոց ժայթքիր վերև։ Սուզուիր տուննէների մէջ, անցիր լեռներ ու գետեր, թռիչք գործիր, բոցալառուիր, պայթիր, բայց տար մեզ քո հետ, հեռացրու մեզ մարդաբնակ աշխարհից, նրա օրէնքներից, նրա մտերմութիւններից, կեանքից և նոյն իսկ մեղնից։

Որոշուած գնացքի տոմսարկղի բացուելուց երկու ժամ առաջ՝ Ֆրանցը արդէն լիօնի գծի կայարանումն էր, այդ տիուր կայարանում, որ գտնւում է Պարիզի հեռաւոր մասում և այնպիսի տպաւորութիւնն է դործում, կարծես պրօվինցիայի սկզբնաւորութեան կէտը լինի։ Նա նստեց ամենամութ անկիւնում և մնաց այնտեղ անշարժ, շշմածի պէս։ Այդ ժամանակ նրա ուղեղը նոյնքան աղմկայոյզ էր, որքան և կայարանը։ Նրան պաշարել էին հազար ու մի կցկատուր մըտքեր, անորոշ յիշողութիւններ, տարօրինակ զուգորդութիւններ։ Մի րուկէում նա այնքան հեռանում էր երևակայութեամբ իրականութիւնից, որ երկու երկու անգամ հարց տուեց ինքն իրան, թէ ինչու էր եկել այդտեղ և ում էր սպասում։ Բայց Սիդօնիի մտապատճերը դուրս էր ժայթքում այդ կցկատուր մտքերի մէջից և լուսաւորում էր նրանց պայծառ լոյսով։

Նա շուտով գալու էր։

Եւ թէն պայմանադրած ժամը զեռ շատ հեռու էր, բայց և այնպէս Ֆրանցը մեքենաբար նայում էր այդ շտապող ու իրար կանչող մարդկանց, տեսնելու՝ հօ Սիդօնիի գողտրիկ սիլուէտը յանկարծ դուրս չի գալիս բազմութեան մէջից, ամեն քայլում ճանապարհ բանալով իր առաջ իր զեղեցկութեան ճաճանչներով։

Մի քանի գնացքներ գնացին, մի քանիմն եկան, մի քանի անգամ հնչեցին սուլիչները, որոնց ձայնը՝ ծածկի կամարների տակ մորմոքի էր նման, և միանդամից կայարանը դատարկուեց ու դարձաւ ամայի, ինչպէս եկեղեցիները լի օրերին։ Մօտենում էր՝ նրանց գնացքի ժամը։ Նրանից առաջ այլ ևս ուրիշ գնացք չը կար։ Ֆրանցը վեր կացաւ տեղիցը։

Այժմ այդ այլ ևս երազ չէր, ցնորք չէր, կորած՝ ժամա-

նակի ընդարձակ ու անորոշ սահմանների մէջ։ Մի քառորդ ժամից, ամենաշատը կէս ժամից յետոյ նա գալու էր։

Եւ ահա մրանցի համար սկսուեց սպասողութեան սոսկալի տանջանքը, այդ՝ ամբողջ էութեան առկախ վիճակը, մարմնի և հոգու տարօրինակ գրութիւնը, երբ սիրտը չէ բարախում, երբ չնչառութիւնը հեռում է մտքի նման, երբ շարժումները ու խօսքերը մնում են անսաւարտ, երբ՝ ամեն ինչ սպասողութեան մէջ է Բանաստեղծները հազարաւոր անգամ նկարագրել են այդ տանջալից անձկութիւնը սիրահարի, որ ականջը սրած լսում է ամայի փողոցով անցնող կառքի դղրդոցը կամ սանդուխով բարձրացող դաղտագողի քայլերի ձայնը։

Բայց շատ աւելի ծանր է սպասել սիրուհուն կայարանում, ուղեղիների սպասարանում։ Աղօտ լամպերը, որոնք չողք չեն զցում փոշոտ յատակի վրայ, ահազին պատուհանները, քայլերի և գոների անընդհատ աղմուկը, որ դադար չի տալիս անհանդիստ ականջներին, բարձր ու լերկ պատերը, նրանց զարդարող յայտարարութիւնները՝ «Չքոսանքի զնացք դէպի Մօնակօ, մի պտոյտ Շվեյցարիայում», ճանապարհորդութեան, փոփոխութեան, անտարբերութեան և անկայունութեան մթնոլորտը, այդ բոլորը կարծես յատկապէս յարմարեցրած է մարդուս սիրտը ճմիկու և թափիծը սաստկացնելու համար։

Մրանցը զնում-գալիս էր, աչքը սրած նայելով եկող կառքերին, նրանք կանգ էին առնում երկար քարէ աստիճանների առաջ։ Նրանց գոնակները աղմկալից բաց ու խուփ էին լինում, և գրսեի խաւարի մէջից լուսաւոր չէմքի վրայ երևում էին հանդիստ կամ ցաւատանջ, երջանիկ կամ աղիողորմ դէմքեր, բացդոյն քողքերի մէջ սղմուած փետրաւոր զիխարկներ, գեղջկուհիների զիխանոցներ ու քնած երեխաներ, որոնց, ձեռներիցը բռնած, քաշ էին տալիս իրանց հետ մեծերը Ամեն մի նոր կերպարանք երեալիս Ֆրանցը գողդողում էր։ Նրան թւում էր, թէ Միդօնին է այդ, որ, երեսը քօղով ծածկած, ներս է մտնում վարանելով ու փոքր ինչ շփոթուած։ Ա՛խ, ինչպէս կը թռչէր նա նրա մօտ՝ սիրտ տալու, պաշտպանելու համար։

Քանի լցուում էր կայարանը, այնքան զժուարանում էր Ֆրանցի գործը։ Կառքերի տուտը այլ ես չէր կտրւում։ Նա ստիպուած էր վազել մի գոնից միւսը։ Այն ժամանակ նա դուրս եկաւ կայարանից, վճռելով, որ աւելի լաւ է գրսեից զիտել, և չը կարողանալով այլ ես տանել սպասարանի ծամր ու ճնշիչ օդը, որ սկսում էր խեղզել նրան։

Սեպտեմբերի վերջն էր և եղանակը՝ խոնաւ, թեթև մշուշ էր կանգնած օդում, և մօտեցող կառքերի լապտերները աղօտ

ու անփայլ էին երեսում խճած զառիվայրի ներքեսում։ Նրանցից իւրաքանչիւրը կարծես ասում էր գալիս՝ «Ես եմ... ես ինքս»... Բայց մէջիցը իջնողը երբէք Սիդօնին չէր լինում, և կառքը, որին մի քիչ առաջ ֆրանցը այնպէս էր սպասում, կարծես թէ նա պարունակելիս լինէր աւելի քան իր կեանքը, վերադառնում էր Պարիզ ամնասովարական կերպով, թեթև ու գատարկ։

Ճանապարհուելու ժամը մօտենում էր Նա նայեց պատի ժամացոյցին։ Մնում էր ոչ աւելի, քան քառորդ ժամն Այդ սարսափելի ժուռաց նրան, բայց նրան կանչում էր նոյն րոպէին բացուած տումսարկղի զանգը։ Նա վազեց այնտեղ ու տեղ բըռնեց սպասողների երկար շարքի մէջ։

—Երկու առաջին կարգի տումսակ մինչև Մարտէյ, —պահանջեց նա։ Նրան թւում էր թէ իր յոյսերի իրագործման սկիզբն է այդ արդէն։

Նա վերադարձաւ իր դիտողական կէտը ծանրոցներով քարձած ձեռնասայլակների և իրար հրհրող ուշացած ճանապարհորդների միջով։ Կառապանները գոռում էին նրան զզոյց։ Բայց նա, խլացած ու ալինապիշ, մնում էր կանգնած կառքերի ճանապարհի վրայ և քիչ էր մնում ձիերի տակն ընկնի։ Աւելի քան հինգ րոպէ նա սպասեց այդպէս։ Գրեթէ անկարելի էր այժմ, որ Սիդօնին համսէր գնացքին։ Մարզիկ շտապ-շտապ մանում էին ներքին գահլիճները Ծանրոցները տանում էին լցնելու վագօնները և սպիտակ սաւանի մէջ փաթաթիած ահագին կապոցները, պղնձէ մեխաւոր արկղները, շրջիկ գործակատարների կախովի գզրոցները և ամնն ձեր ու ամնն մեծութեան զամբիւղներ անհետանում էին միևնույն շտապողութեամբ։

Վերջապէս նա եկաւ...

Այո, նա է, նա, սեազգեստ, բարակ, նրբակազմ, մի աւելի փոքրահասակ կնոջ ուղևեկցութեամբ, որ անշուշտ տիկին Դօրսօնն է։ Բայց երկրորդ անգամ նայելով՝ նա հասկացաւ, որ սիսլուել է։ Մի ջահել կին էր այդ՝ նման Սիդօնիին, նրա պէս գողտրիկ ու պարիզատիպ, նրա պէս երջանիկ դէմքով։ Մի երիտասարդ պարոն մօտեցաւ նրան։ Հարսանիքային ճանապարհորդութիւն էր, երեկ, այդ, նորահարսի մայրն էլ հետներն էր։ Եկել էր անշուշտ ճանապարհ գնելու, վագօնում տեղաւորելու նրանց Նրանք անցան ֆրանցի առաջով, ծրարուած՝ երջանկութեան այն հոսանքի մէջ, որ մզում, տանում էր նրանց։ Կատաղութիւն և նախանձ զգաց նա, տեսնելով, թէ ինչպէս նրանք ներս մտան դռնով, անցնելով բազմութեան միջով՝ սղմուած իրար, յենուած միմեանց վրայ։

Նրան թւում էր, թէ նրանք կողոպտել են իրան, թէ նըրանք գնում են բռնելու այն տեղը գնացքում, որ իրան ու Սիդօնիին էր պատկանում...

Բայց ահա սկսուեց ուղևորման իրարանցումը: Զանգակը հնչում է վերջին անգամ, շոգին աղմկում է խուլ հեքով, որին խառնում են ուշացած ուղեորների ոտնաձայնը, դռների շառաչը և ծանր հանրակառերի դղրդոցը: Խոկ Սիդօնին չը կայ ու չը կայ: Սակայն ֆրանցը սպասում է դեռ ևս: Այդ միջոցին մէկը ձեռքը դնում է նրա ուսին:

Տէր Աստուած:

Նա շուռ է գալիս: Առջեք ցցւում է պ. Գարդինուայի ահագին գլուխը՝ ականջնոցաւոր զլխարկով:

— Չեմ սիսալուել, պ. Ռիսէրն է: Մարտէլի ճեպընթացնլ էր գնում դուք: Ես մօտիկ տեղ եմ գնում:

Նա բացատրեց ֆրանցին, որ ինքը ուշացել էր Օրլէանի գնացքին և այժմ ուզում է Լիօնի գծով գնալ Սավինի. յետոյ նա սկսեց խօսել Ռիսէր աւագի մասին, գործարանի մասին:

— Ինչպէս երեսում է, գործերը մի ժամանակից ի վեր լաւ չեն գնում... Բօննարդէլների մնանկութեան չորչոփը դրանց էլ դիպաւ... Օհ... մեր երիտասարդ պարոնները պէտք է զգոյշ լինեն... Այնպէս, ինչպէս նրանք են տանում իրանց գործը, նրանց գլուխն էլ կարող է նոյնը գալ, ինչ որ եկաւ Բօննարդէլների գլխին... Բայց ներողութիւն: Կարծեմ, տոմսարկոց փակելու են իսկոյն: Ցտեսութիւն:

Ֆրանցը հազիւ էր լսում ծերուկի ասածը: Թէկուզ եղբայրը մնանկանայ, թէկուզ ամրող աշխարհը կործանուի, այժմ ոչ մի բան նշանակութիւն չունի նրա համար: Նա սպասում է, սպասում է...

Բայց ահա տոմսարկոց փակուեց թափով, ինչպէս մի վերջին խոչընդուն նրա յամառ յոյսի դէմ: Կայարանը նորից դատարկուեց: Ժխորը այժմ լսում է երկաթուղու գծի վրայ, և յանկարծ հնչում ու կորչում է խաւարի մէջ մի ուժգին սուլոց, իբր հրաժեշտի հեղնական ողջոյն՝ ուղղուած սիրահարին:

Ժամի տասի գնացքը գնաց:

Նա փորձում է հանգիստ մնալ, սառը դատել: Անկասկած՝ Սիդօնին ուշացել է Անիէրի զնացքին, բայց, իմանալով, որ ինքը սպասում է նրան, նա անպատճառ կը գայ գիշերուայ որ ժամին էլ լինի: Սպասենք ուրեմն: Կայարանի դահլիճը հէնց դրա համար է շինուած:

Խեղճը նստում է նստարանի վրայ, Փակեցին պատուհանները, որոնց ահազին ապակիների վրայ ստուերը փակչում է

փայլուն թղթի ցոլքերով։ Կիսանինջ գրավաճառուհին սկսում է գրքերը դարսել պահարանը։ Ֆրանցը մեքենայօրէն նայում է գոյնզգոյն հատորների շարքերին, այդ երկաթուղիական գրադարանի գրքերին, որոնց անունները նա անգիր է արել արդէն սպասողութեան չորս ժամուայ ընթացքում։

Այստեղ կան դրքեր, որ նա կարդացել է Խսմայիլիայում վրանի տակ կամ այն չողենաւում, որով նա վերադառնում էր Սուէցից, և այդ գոեհկանաշակ ու գատարկ վէպերը գրա չնորհւ բոլորն էլ մի ինչ որ ծովային կամ տարաշխարհիկ բոյր են պահպանել նրա համար։ Բայց չուտով փակուեց նաև գրախանութը, այնպէս որ նա չունի նոյն իսկ այդ միջոցը խարելու իր յոդիածութիւնն ու տենդը։ Խաղալիքների գարակներն էլ արգէն ծածկուեցին տախտակէ կափարիչից տակ։ Ամարանոյում ապրող պարիզեցի երեխաների այդ բոլոր գործիքները, չուփկները, ձեռնասայլակները, ցնցուղները, բահերը, փոցխերը, — անյայտանում են մի բոպէում։ Վաճառող կինը, հիւանդու ու տիսրադէմ, փաթաթում է իր հին վերակուի մէջ ու գուրս գնում, ուսնաջեռուցիկը ձեռքին։

Այդ բոլոր մարդիկի վերջացրել են իրանց աշխատութեան օրը, ձգձել են նրան մինչև հնարաւոր վերջին րոպէն՝ Պարիզին յատուկ արիութեամբ ու յամառութեամբ, Պարիզին, որի լապտերները հանգինում է միայն լուսաբացին։

Մտածելով Պարիզի աշխատաւորների տքնութեամբ անցրած գիշերների մասին, Ֆրանցը յիշում է մի վազուց ծանօթ սենեակ, ուր լամպը հանգչում է այդ ժամին կօլիբրիներով ու փայլուն միջաներով ծանրաբեռնուած սեղանի վրայ։ Բայց այդ պատկերը շուտով չքանում է նրա մտքում, որ ընկղմուած է սպասողութեան տևնդից առաջացած խանուշփոթ մտածմունքների քաօսի մէջ։

Յանկարծ նա զգում է, որ ծարաւից մեռնում է։ Կայարանին կից սրճարանը գեռ բաց է։ Նա գնում է այստեղ։ Գիշերահերթ սպասաւորները պառկել, քնել են նստարանների վրայ։ Յատակը թաց է բաժակների լուայուկներից։ Ահազին ժամանակ է անցնում, մինչև որ պահանջուծը տալիս են, իսկ երբ արդէն պատրաստում է խմել, յանկարծ մտածում է, թէ դուցէ Սիդօնին եկել է նրա բայակայութեան ժամանակ ու փնտում է իրան դահլիճում, և մտածելով այդ՝ իսկոյն վեր է թուզում տեղից ու գժի նման գուրս վազում, թողնելով սեղանի վրայ լիքը բաժակը և փողը։

Սիդօնին չի գալու։

Նա զգում է այդ։

Նրա քայլերը միակերպ ու կանոնաւոր կերպով հնչում են կայարանի գաւթի ամբողջ երկարութեամբ, գրգռելով նրան, իբր ապացոյց նրա միայնութեան և անաջողութեան:

Ի՞նչ պէտք է պատահած լինի ի՞նչ բան կարող էր նրան արգելք լինել: Չը լինի հիւանդ է կամ զուցէ խիղճը սկսել է վաղօրօք տանջել անելիք յանցանքի համար Բայց, եթէ այդպէս լինէր, նա իմաց կը տար, կ'ուղարկէր տիկին Դօրսօնին: Կամ զուցէ Ռիսլէրի ձեռքն էր ընկել նրա նաւակը: Այնքան խննի, այնքան անխոհեմ է այդ կինը:

Եւ մինչ նա այզպէս մտաւանջուում էր հազար ու մի ենթադրութիւններ անելով, ժամանակը անցնում էր: Մազափ չէնքերի ստուերամած կատարները արդէն սպիտակում էին ու որոշուում: Ի՞նչ պէտք էր անել: Պէտք էր խսկոյն և եթ գնալ Անիէր, փորձել իմանալ, տեղեկանալ նա կ'ուզէր հէնց այս բոպէին այնտեղ լինել:

Վճռելուն պէս նո արագ քայլով իջաւ կայարանի սանդուխներով, հանդիպելով ճանապարհին դզբոցները շալակներին կապած զինուորների և չքաւոր ուղեսորների, որոնք շտապում էին առաւտուան զնացքին, վաղ զարթնող խեղճութեան զնացքին:

Լուսադէմին նա անցաւ ամբողջ Պարիզը, տխուր ու մրսուկ Պարիզը, ուր թաղական ոստիկանատների լավտերները հեռուսից հեռու ձգում էին իրանց կարմրագոյն ցոլքը և ոստիկանները երկւերկու չափչփում էին փողոցները, կանգ առնելով անկիւններում և սուր հայեացք գցելով ստուերամած խորչերը:

Ոստիկանատներից մէկի առաջ մարդիկ կային կանգնած, ցնցոտի հաւաքողներ, գիւղացի կանացք: Անշուշտ մի զիշերային դրամա էր այդ, որի վերջաւորութիւնը տեղի էր ունենալու ոստիկանական պաշտօնեայի մօտ: Ա՛խ, եթէ ֆրանցը իմանար, թէ ի՞նչ դրամա՝ էր այդ. բայց նա չէր կարող գուշակել այդ և նայեց այն կողմը հեռուսից ու անտարբեր կերպով:

Բոլոր այդ տգեղութիւնները, այդ յունատանջ գունատութեամբ սկսուող արշալոյսը, այդ լաստերները, որոնք փայլիլում էին Սենայի ափին, իբրև գիշերը զագաղի կողքին վառուող մոմեր, այդ անքուն գիշերուայ ջարդուածութիւնը՝ պաշարել էին նրան խորին տիրութեամբ:

Երբ երկու-երեք ժամ քայլելուց յետոյ Անիէր հաստաւ, նա այնպէս զգաց, կարծես քնից նոր է զարթներ:

Արեւ, որ այդ բոպէին ծագում էր իր ամբողջ փառահեղութեամբ, շոշտղացնում էր գաշտավայրն ու ջրերի երեսը: Կամուրջը, տները, գետափը, և ամեն ինչ առնաօարակ փայլում էր վազորդեան յստակութեամբ, որ այնպիսի տպաւորութիւն է

կործում, թէ նորածին օրը, լուսաճաճանչ ու ժպտուն, դուրս է գալիս գիշերուայ թանձր մշուչներից Հեռուից նա նշմարեց իր եղբօր տունը և տեսաւ, որ տնեցիք արդէն զարթնել են, որովհետեւ պատուհանածածկերը բաց էին և ծաղիկները դուրս էին դրուած լուսամուտների նզերքներին։ Բաւական ժամանակ նա թափառեց, չը համարձակելով ներս մտնել:

Յանկարծ մէկը ձայն տուեց նրան դարափից։

—Վա, դուք էք, պարոն ֆրանց... Ի՞նչքան վաղ էք եկել այսօր։

Սիդօնիի կառապանն էր այդ, որ ձիերին տանում էր լողացնելու։

—Հօ նոր բան չի պատահել տանը... դողդողալով հարցրեց ֆրանցը։

—Ոչինչ չի պատահել, պարոն ֆրանց։

—Եղբայրս տանն է։

—Զէ, պարոնը գործարանումն է գիշերել։

—Ոչ ոք հօ չի հիւանդացել։

—Զէ, պարոն ֆրանց, ոչ ոք, որքան ինձ յայտնի է։

Եւ ձիերը կրծքահան մտան գետը, փրփրացնելով ջուրը։

Այն ժամանակ ֆրանցը սիրտ արեց խիել փոքրիկ դուռ զանգը։

Պարտիզպանը փոյխում էր ծառուղիները։ Տունը արդէն աղմկւում էր, և, չը նայելով կանուխ ժամին, լուսում էր Սիդօնիի ձայնը, պարզ ու հնչուն, ինչպէս տան սուջիի վարդենիներում երգող թռչունների գեգգեղանքը։

Նա խօսում էր մոծ աշխոժով։

Ֆրանցը, սաստիկ յուզուած, աւելի մօտեցաւ ու սկսեց ականջ գնել։

—Զէ, կրեմ պէտք չէ... պարթէն *) բաւական է... Միայն թէ պէտք է լաւ սառցրած լինի, և ժամի եօթին պատրաստ լինի... Հա, իսկ իբր նախակերակուր (entréе)... անսնենք ինչ կարելի է ընտրել...։

Նա ծանր ու բարակ խորհրդակցում էր իր սպասուհու հետ վաղուան երեկի ճաշկերոյթի մասին։ Տեղի յանկարծական երեսումը չը շփոթեցրեց նրան։

—Ահ, բարի լոյս, ֆրանց, տսաց նա կատարեալ հանդստութեամբ... Խսկոյն և եթ ձեր տրամադրութեան տակ կը լինեմ։ Վաղը հիւրեր ունենք ճաշին, ասեալրատան կլիինտները կը լինեն, դործի ճաշկերոյթ է. կը ներէք, այնպէս չէ։

*) Կրէմ և պարթէ քաղցրեղէններ են։

Երկարատուտ ու փոթփոթազարդ սպիտակ տնազգեստը հազին և փոքրիկ ժանհակազործ գլխանոցը գլխին, թարմ ու ժպտուն, նա շարունակեց կազմել իր ճաշացոյցակը, չնչելով մարդագետիններից ու գետից բարձրացող զով օդը: Նրա անգորը դէմքի վրայ չէր երևում ամենաչին հետք վշտի կամ անհանգստութեան: Կոկ ճակատը, սքանչելի զարմացկոտ հայեացքը, որ այնքան ջահելութիւն էր տալիս նրան, և վարդագոյն ու կիսաբաց շրթունքները՝ տարօրինակ հակապատկեր էին կազմում սիրահարի կերպարանքի հետ, որ ծամածուուած էր ամբողջ գիշերուայ անձկութիւնից ու յոդնութիւնից:

Մի ամբողջ քառորդ ժամ նստած հիւրասենեակի անկիւնում, ֆրանցը ստիպուած էր լսել, թէ ինչպէս հարսը իրար յետեից շարում էր, իրանց մշտական հերթով, բուրժուական ճաշի սովորական կերակուրները, սկսած փոքրիկ տաք կարկանդակիներից, նօրմանդական ձկից ու այն բոլոր նիւթեղինից, որոնցով պատրաստուում է նա, և վերջացնելով Մօնտոնեօլի դեղձով ու Ֆօնտէնբլօյի խազողով: Ոչ մի թեթև կերակուր անզամ հարսը բաց չը թողեց նրա սիրուն:

Վերջապէս, երբ նրանք մենակ մնացին, ֆրանցը, հնարաւորութիւն ստանալով խօսելու, հարցրեց նրանից խուլ ձայնով: — Ուրեմն չէք ստացել իմ նամակը...

— Ինչպէս չէ, ստացել եմ:

Միդօնին վեր կացաւ՝ հայելու առաջ շիտկելու մազերի խոսպանները, որոնք խառնուել էին սաւառուն ժապաւէնների հետ:

— Այո, այո, — շարունակեց նա, նայելով հայելու մէջ, — ստացայ ձեր նամակը, և պէտք է ասել հիացայ... Այսուհետեւ, եթէ սիրտներդ ուզի յիմար-յիմար բաներ ասել ձեր եղբօրը, ինչպէս մի ժամանակ սպառնում էիր ինձ, ևս ամենայն հեշտութեամբ կը համոզեմ նրան, որ այդ սուտ մատութեան միակ պատճառը եղել է ոխը, այն, որ ես, ինչպէս վայել էր, մերժել եմ ձեր յանցաւոր սէրը: Իմացած եղէք այդ, սիրելիս... և ցտեսութիւն:

Երջանիկ, ինչպէս մի գերասանուհի, մի սասաիկ տպաւորիչ հատուած արտասաննելուց յետոյ, նա անցաւ տեզրի առաջով ու դուրս եկաւ հիւրասենեակից ժպտուն, բերնի անկիւնը բարձրացրած, յաղթական ու մնզայրոյթ:

Եւ ֆրանցը չը սպանեց նրան:

V

Մի պատահար

Այդ չարաբաստիկ օրուայ նախընթաց օրը, մի քիչ անց այն րոպէից, երբ ֆրանցը գաղտագոզի կերպով հեռացաւ Բրաբի փողոցում վարձած սենեակից, հոչակաւոր Դըլօբէլը վերադարձաւ տուն, բոլորովին այլայլուած և այն յոգնած ու հիասթափ կերպարանքով, որ նա ընդունում էր միշտ ձախորդ հանգամանքներում:

—Տէր իմ Աստուած, ինչ է պատահել քեզ, խեղճ ամուսինս... իսկոյն և եթ հարցրեց տիկին Դըլօբէլը, որի զգայնութիւնը չէր բթացել, չը նայելով, որ նա քսան տարի շարունակ տեսնում էր այդ չափազանցրած ու գրամմատիկական դիմախաղը:

Նախ քան պատասխանելը՝ ԹՀ-կերասանը, որ ամենաչընչին խօսք անգամ արտասանելուց առաջ դէմքին տալիս էր այն կերպարանքներից մէկը, որ երբեմն սովորել էր քեմի համար, կախ գցեց բերանը ի նշան զգուանքի և սրտախառնութեան, որպէս թէ մի րոպէտ առաջ մի շատ գաոը բան կուլ տուած լինէր:

—Այն է պատահել, ասաց նա, որ մեր պարոն Ռիսլէրները կատարեալ ապկրախտներ են, եսամոններ և, յամենայն դէպս, սաստիկ անբարեկիրթ մարդիկ: Գիտեք ինչ իմացայ ներքեսում դռնապանուհուց, որ աչքի պոչով նայում էր ինձ, քմծիծաղ տալով... Ֆրանց Ռիսլէրը գնացել է: Նա մի րոպէտ առաջ հեռացել է տնից, իսկ այժմ գուցէ և Պարիզից, առանց հարկաւոր համարելու գալ սղմել ձեռքս, չնորհակալութիւն անել ինձ այն ընդունելութեան համար, որ նա գտնում էր այստեղ... Ի՞նչպէս է դուք գալիս ձեզ այդ... Ես զիտեմ, որ ձեզ հետ էլ մնաս բարեած չի լինի, այնպէս չէ: Եւ առկայն, երեսովը չեմ ուզում տալ, բայց ինչպէս չասեմ, որ մի ամիս չը կայ ինչ ամբողջ օրերով ցցուած էր լինում այստեղ:

Տիկին Դըլօբէլը մի բացականչութիւն արձակեց, որի մէջ լսում էր անկեղծ վիշտ ու զարմանք: Դէզիրէն, ընդհակառակը, ծառուն անգամ չը հանեց, ոչ մի շարժում չարեց: Կատարեալ սառցակտոր: Նոյն իսկ արոյրէ թելը, որ նա ոլորում էր, կանգ չառաւ մի րոպէտ նրա ճարտար մատների մէջ...

—Դէս սրանից յետոյ գնացէք ու մարդկանց հետ բարեկամութիւն արէք, շարունակում էր հոչակաւոր Դըլօբէլը: Մէկ հարցնող լինի, ինչ էի արել ես այդ մարդուն:

ԵՀ-կերասանի մշտական տրտունջներից մէկն էլ այն էր,

թէ ամբողջ աշխարհը ատում, հալածում է իրան։ Այդ էլ մի մասն էր կազմում այն դերի, որ նա վերցրել էր իր վրայ կեանքում, —գեղարուեստի համար նահատակուղի դերի։

Տիկին Դըլօբէլը քաղցրութեամբ, գրեթէ մայրական քընքը շուղութեամբ —որովհետեւ միշտ մի տեսակ մայրութիւն կայ այն ներողամիտ սիրոյ մէջ, որ ներչնչում են այդպիսի հասակաւոր երեխաները —սիրովեց իր ամուսուն, զգուեց նրան, մի քաղցրեղէն աւելացրեց ճաշին։ Խսկալէս խեղճ մարդը ճիշտ որ վըշտացած էր։ Թրանցի գնալուց յետոյ նորից թափուր էր մնում մշտական ամֆիտրիօնի պաշտօնը, որ մի ժամանակ կատարում էր Ռիսլէր աւագը, և խեղճ գերասանը մտածում էր այն զուարծութիւնների մասին, որոնցից զրկուած էր լինելու այսուհետեւ։

Եւ ինչ. այդ եսական ու վայրիվերոյ վշտի կողքին կար մի անսահման կսկիծ, կսկիծ, որ ընդունակ է սպանել մարդուս, և կուրացած մայրը չէր նկատում այդ։ Մէկ նայիր աղջկանդ, թշուառ կին։ Տես այդ թափանցիկ գունատութիւնը, այդ անարդունք աչքերը, որոնք վայլում են յառած, կարծես իրանց մտածմունքն ու հայեացքը կենարոնացրած լինեն մի առարկայի վրայ, որ միան նրանց է տեսանելի։ Բանալ տուր առջեղ այդ խուփ սիրտը, որ տանջւում է սաստիկ։ Հարց ու փորձ արա զաւակիդ։ Խօսեցրու նրան, աշխատիր մանաւանդ լայացնել նրան, որոյէս զի նա թեթեսնայ այն ծանրութիւնից, որ խեղդում է նրան, որպէս զի արցունքից մթագնած աչքերը չը նայեն այլ իս ղէպի գատարկութիւնը, սենոուած այն զարհուրելի անյայտ բանի վրայ, որին փարում են նրանք յուսահատօրէն։

Աւազ...

Կան կանայք, որոնց մէջ մայրական զգացմունքը մնուցնում է ամուսնական զգացմունքը։ Սրա մէջ ամուսնական զգացմունքն էր մնոցը մայրականը։ Դարձած Դըլօբէլ աստուծուք բրմուհին, ուշ ու միաքը տուած իր կուռքին, նա կարծում էր, թէ իր աղջիկն էլ ծնուել է միմիայն նոյն պաշտամունքին անձնատուր լինելու, նոյն սեղանի առաջ ծունկ չոքելու համար։ Նրանք երկումն էլ միայն մի նպատակ պէտք է ունենային կեանքում, այն է՝ աշխատել մեծ մարդու փառքի համար, մխիթարել նրա չը ճանաչուած հանճարը։ Դրանից դուրս ոչինչ գոյութիւն չունէր։ Տիկին Դըլօբէլը երբէք չէր նկատել, թէ ինչպէս էր յանկարծ կարմրատակում Դէզիրէն, հէնց որ Թրանցը մտնում էր արհեստանոցը, թէ ինչպէս, բոլոր սիրահարուած օրիորդների նման, խեղճ աղջիկը տեղի-անտեղի խօսքը դարձնում էր նրա վրայ, հաղար ու մի հնարք գործ զնելով, որ աշխատութեան ժամերին նրա անունը շուտ-չուտ յիշուփ իրանց զրոյցի ժամա-

նակ, և այդ՝ քանի՛-քանի՛ տարիների ընթացքում, սկսած այն հեռաւոր ժամանակներից, երբ Ֆրանցը առաւտները մութէ մութ գնում էր կենտրոնական դպրոցը, մինչ իրանք վառում էին լամպը իրանց աշխատաւոր օրը սկսելու համար։ Երբէք նա չէր հարցնում աղջկանից այն երկարատև լութիւնների պատճուր, որոնց մէջ խորասուղւում է զիւրահաւատ ու երջանիկ երիտասարդութիւնը, պինդ-պինդ փակուելով այնտեղ և անձնատուր լինելով երազանքների՝ ապագայի մասին։ և եթէ երբեմն նա, ձանձրացած Դէզիրէի անխօսութիւնից, ասում էր՝ «Ի՞նչ է պատահել քեզ», բաւական էր, որ աղջիկը պատասխանէր՝ «Ոչնչ, մայրիկ», որպէս զի մօր միտքը, մի րոպէ այդպիսով ցրուելուց յետոյ, նորից անձնատուր լինէր իր սիրած մտածունկներին։

Եւ այդպէս, այդ կինը, որ կարողանում էր կարդալ իր ամուսնու սրտի մէջ, նրա օլիմպիական ու սին ճակատի ամենամար ծալքի մէջ, երբէք աղջկայ վերաբերմամբ չէր ունեցել այն գորովք, որ գուշակում է սիրելի էակի գաղտնիքները և որի չնորհիւ բոլորովին պառաւած ու թառամած մայրերը ջահէլանում են և ընդունակ են դառնում մանկական բարեկամութեան՝ իրանց զաւակների մտերիմը և խորհրդականը լինելու համար։

Եւ հէնց այդ է ամենաղաժան բանը Դըլօրէլի նման մարդկանց անգիտակից եսամոլութեան մէջ։

Այդպիսի եսամոլութիւնը ուրիշ եսամոլութիւններ է ծնեցնում իր չուրջք։

Մի քանի ընտանիքներում գոյութիւն ունեցող սովորութիւնը—ամեն ինչ կենտրոնացնել մի էակի գլուխն՝ հարկազրաբար ստուերի մէջ է թողնում այն բոլոր ուրախութիւններն ու վշտերը, որոնք խորթ են և անօգուտ այդ էակին։

Իսկ ինչ նշանակութիւն կարող էր ունենալ մեծ զերասանի փառքի համար այդ կուսական ու կոկծալից դրաման, որ արցունքի ծով էր դարձրել խեղճ սիրահարի սիրտը։

Եւ սակայն, սաստիկ տանջւում էր Դէզիրէն։

Մօտ մի ամսից ի վեր, այն օրից ի վեր, երբ Սիդօնին կառքով եկաւ տանելու Ֆրանցին, Դէզիրէն հասկացել էր արդէն, որ Ֆրանցը այլ ես չի սիրում իրան, և զիտէր, թէ ով է իր ախոյեանը։ Դէզիրէն ոխ չէր զգում նրանց դէմ։ նա աւելի խղճում էր նրանց, Բայց ինչո՞ւ էր Ֆրանցը վերադարձել։ Ինչո՞ւ էր այդպէս թեթեօրէն այդ սիրտիր յոյսը ներշնչել նրան։ Ինչպէս զնդանի խաւարում ապրելու դատապարտուած թշուառները ընտելացնում են իրանց աչքերը մթութեան զանազան

աստիճաններին և իրանց անդամները բանտի նեղ տարածութեանը և յետոյ, եթէ մի բոպէով նրանց դուրս են քերում լոյս տեղ ու նորից յետ տանում բանտը, զնդանը աւելի տխուր է թւում նրանց և խաւարը՝ աւելի թանձր, այնպէս էլ այդ խեղճ աղջկայ արենը աւելի սեացաւ, երբ այն պայծառ լոյսը, որ յանկարծ երեացել էր նրա կեանքում, չքացաւ, թողնելով նրան իր նախլին կապանքներում: Ո՞րքան արցունքներ էր կուկ տուել նա լրիկ-մնջիկ այդ բոպէից յետոյ: Ո՞րքան դարդեր էր պատմել իր փոքրիկ թռչնիկներին: Որովհետեւ այս անգամ էլ նրա փրկողը աշխատանքն եղաւ, մոլեգին, անընդհատ աշխատանք, որ իր կանոնաւորութեամբ, իր միակերպութեամբ, մինոյն հոգսերի, մինոյն շարժումների կնկնութեամբ, իրը չափաւորիչ ոյժ էր ծառայում նրա մտքի համար:

Եւ ինչպէս մեռած թռչնիկները կարծես կենդանութիւն էին ստանում նրա մատների տակ, այնպէս էլ նրա մեռած յոյսերն ու երազանքները, որոնք տողորուած էին շատ աւելի նուրբ, շատ աւելի թափանցուն թոյնով, քան այն, որ փոշիանման ծփում էր նրա աշխատութեան սեղանի շուրջը, գեռ ևս ժամանակ առժամանակ թափահարում էին թևերը անձկալից ձիգով և յարութիւն առնելու բուռն ցանկութեամբ: Ֆրանցը գեռ բոլորովին կորած չէր նրա համար: Թէև ֆրանցը շատ ուշուց էր գալիս նրան տեսնելու, բայց չէ որ նա զիտէր, որ ֆրանցը այնտեղ է, չէ որ լսում էր, թէ ինչպէս է նա ներս մանում, գուրս գալիս, անհանդիստ քայլերով չափչում իր սենեակը, իսկ երբեմն նա նոյն իսկ՝ կիսաբաց դռնով՝ տեսնում էր սիրելի սիրուէտը սանդուխներով վազէվազ իջնելիս: Երջանիկ կերպարանք չունէր ֆրանցը: Ասենք ինչ երջանկութիւն կարող էր սպասել նրան: Նա սիրում էր իր եղբօր կնոջը: Եւ այն միտքը, թէ ֆրանցը երջանիկ չէ՝ զրեթէ մոռացնել էր տալիս այդ բարի աղջկան իր սեփական վիշտը, և նա մտածում էր միմիայն ֆրանցի վշտի մասին:

Նա շատ լաւ հասկանում էր, որ այլ ևս անկարելի է, որ ֆրանցը վերադառնայ նրա մօս՝ նորից սիրելու նրան: Բայց նա մտածում էր, որ գուցէ մի օր նա կը մտնի իր մօս, նուազուն ու խոցուուած սրտով, և նստելով ցածիկ աթոռի վրայ ու գլուխը դնելով նրա ծնկներին, դառն հառաջանքով կը պատմի իր դարդն ու կ'ասի՛ «Միսիթարիի ինձ...»

Այդ ողորմելի յոյսովն էր ապրում նա երեք շարաթից ի վեր: Ո՞րքան քիչ բան էր հարկաւոր ինչնին:

Բայց չէ: Այդ փոքրիկ բանն անգամ շատ էր համարուել նրա համար: Ֆրանցը գնացել էր, գնացել՝ առանց մի հայեացք

գցելու նրա վրայ, առանց մնաս բարեւ ասելու նրան: Իբր սիրահար նրան դաւաճանելուց յետոյ՝ նա դաւաճանել էր այժմ նրան նաև իբր բարեկամ! Սոսկալի էր այդ...

Հօր առաջին խօսքերը լսելուն պէս նա զգաց, որ գահավիժուեց մի խոր, սառուցեալ ու խաւարամած անդունդ, ուր իջնում է արագութեամբ ու անզգայաբար, շատ լաւ իմանալով, որ այստեղից վերադարձ չը կայ դէպի լոյս աշխարհ: Նա խեղդւում էր: Նա ուզում էր դիմագրել, մաքառել, օգնութեան կանչել:

Բայց ում:

Նա լաւ գիտէր, որ մայրը չի լսի նրա ձայնը:

Սիրոնիին... Օ՞հ, նա ճանաչում էր այժմ նրան: Նա աւելի օգուտ կ'ունենար, եթէ զիմէր այդ շողունափետուր ուսկեթըռչնիկներին, որոնց խորամանկ աչքերը նայում էին նրան ուրախ ու անտարբեր հայեացքով:

Ամենասարսափելին այն էր, որ նա հասկացաւ իսկոյն, որ այս անդամ իրան չէ կարող փրկել նոյն իսկ աշխատանքը, որ կորցրել էր իր բարերար ազգեցութիւնը: Թմրած կոները ոյժից ընկել էին, յսգնած, չը կցուող ձեռները անջատուել էին իրարից սաստիկ վհատութեան անդործութեամբ:

Ել ովկ կամ ի՞նչ կարող էր նեցուի լինել նրան այդ սոսկալի գժրախտութեան մէջ:

Աստուած: Ա՞յն, որ երկինք են կոչում:

Նրա մտքով անգամ չանցաւ այդ: Պարիզում, մանաւանդ բանուորական թաղերում, տները շատ են բարձր, փողոցները՝ շատ նեղ, օգը՝ շատ պղտոր, որպէս զի մարդիկ կարողանան տեսնել երկինքը: Նա կորչում է գործարանների ծխում և խոնաւ տանիքներից բարձրացող մշուշի մէջ: Եւ բացի դրանից, կեանքը այնքան ծանր է այդ մարդկանց մեծամասնութեան համար, որ եթէ նախախնամութեան գաղափարը խառնուէր նրանց թշուառութիւններին, այդ պիտի լինէր նրան բռունցք ցոյց տալու կամ անիծելու համար: Ահա թէ ինչու այզքան շատ ինքնասպանութիւններ են պատահում Պարիզում: Այդ ժողովուրդը, որ ազօթել չը զիտէ, ամեն բռպէ պատրաստ է մեռնելու: Իր բոլոր տանջանքների խորքում նա տեսնում է մահը, աղատարար ու սփոփիչ մահը:

Ահա թէ ուր էր նայում կաղիկը յառած աչքերով:

Պէտք էր մեռնել, այդ նա վճռել էր հէնց առաջին բռպէին:

Բայց ի՞նչպէս:

Անշարժ նստած իր բազկաթոռում, մինչ յիմար կեանքը

Օգոստոս, 1901.

շարունակւում էր նրա չուրջը, մինչ մայրը պատրաստում էր ճաշը, իսկ մեծ մարդը մի երկար մենախօսութիւն էր արտասանում մարդկային ապերախտութեան դէմ, Դէզիրէն մտածում էր, թէ մեռնելու որ միջոցն ընտրէր իր համար։ Գրեթէ հնարաւորութիւն չունենալով երբէք մենակ մնալ, նա չէր կարող մտածել ածուխի մասին, որ վառում են կրակակալում, նախապէս դռներն ու պատուհանները պինդ փակելուց յետոյ։ Տանից երբէք գուրս չը գալով, նա չէր կարող մտածել նոյնպէս և թոյնի մասին, սպիտակ փոշեղէնի փոքրիկ ծրարի մասին, որ առնում են գեղավաճառից ու խրում գրպանը ասղամանի ու մատնոցի հետ Բացի գրանցից՝ կար լուցկիների ծծումքը, հին սև փողի ժանգը, փողոցի սալայատակին նայող բաց պատուհանը. նա ձեռք քաշեց այդ միջոցներից, մտածելով, որ այդպիսով ստիպելու է ծնողներին ներկայ լինել իր կամաւոր մահուան հոգեվարքի սարսափնի տեսարանին, և նրանց համար սոսկալի է լինելու տեսնել իր ճիւլուած դիակը, որ բարձրացնելու են խոնուած ամբոխի մէջից։

Մի միջոց էր մնում նրան—գետը։

Այդ միջոցի լաւն այն է գոնէ, որ ջուրը երբեմն այնքան հեռու է տանում մարդուս, որ ոչ ոք չի կարողանում գտնել, և մահը մնում է շրջապատուած խորհրդաւորութեամբ...

Գետը...

Նա սարսում էր գետի մասին մտածելիս։ Սակայն խոր ու խաւար ջրի պատկերը չէր, որ նրան սարսափեցնում էր։ Պարիզի աղջիկների հոգը չէ այդ։ Գոզնոցները գցում են զըլուխներին, աչքերը ծածկելու համար, և թրը՝ մի։ Բայց պէսք էր փայր իջնել սանդուխներով, մէն-մենակ գնալ փողոցներով, իսկ փողոցը երկիւղ էր աղդում նրան։

Արդ, մինչ խեղճ աղջիկը նախօրգք գերագոյն թոփչք էր գործում այդպէս դէպի մահն ու մոռացութիւնը, մինչ նա այդպէս հեռուից նայում էր դէպի սև անդունդը շաղուած աչքերով, ուր արդէն ցոլում էր ինքնասպանութեան խելազարութիւնը, հոչակաւոր Դըլօբէլը աշխուժանում էր փոքր առ փոքր և աւելի քիչ գրամատիկական կերպով էր խօսում. իսկ յետոյ, երբ ճաշին բերեցին նրա սիրած կաղամբը, նա սկսեց խանդաղատուել ուտելով, սկսեց յիշել իր հին յաղթանակները, ոսկէ պասկը, Ալանսօնի թատրոնի յաճախորդներին, և ճաշը վերջացնելուն պէս գնաց Օդէօն, ուր Խօբրիկարի դէքիւտների համար ներկայացնում էին «Միզանթրօպը», կոկուած, սղմուած, թենոցները սիփ-սպիտակ, և գրպանումը մի բոլորովին նոր ու փայլուն

հարիւր ոռւանոց, որ կինը տուել էր նրան, որպէս զի քէֆ անի երիտասարդի նման:

— Շատ ուրախ եմ, ասում էր տիկին Դըլօբէլը ամանները հաւաքելիս: Հայրիկը լաւ ճաշեց այս երեկոյ: Այդ մի-քիչ սփոռփեց խեղճ մարդուն: Թատրոնում բոլորովին կը բացուի սիրտը: Խեղճը շատ է տիրում, շատ կարիք ունի գուարծանալու:

... Այն, ամենասարսափելին այն էր, որ պէտք էր մէն-մենակ գնալ փողոցներով: Պէտք էր սպասել, որ գաղը հանդինեն, այնուհետև, մօր պառկելուց յետոյ, ամենայն զգուշութեամբ իշ-նել սանդուխներով, ներքեի դրուը բաց անել տալ և դուրս դալ Պարիզի փողոցները, ուր մարդիկ երբեմն այնքան անամօժաբար են նայում կանանց երեսին, և անցնել սրճարանների առաջով, որոնք շողջողում են փայլուն լուսաւորութիւնից: Դէ-զիրէն, երեխայութիւնից սկսած, այդպէս վախենում էր փողոցից: Փոքրիկ ժամանակը, երբ նրան ուղարկում էին որ և է տեղ, փողոցային լակոտները յետեկցն ընկած ծաղրում էին նրան, և խեղճը կը դժուարանար ասել, եթէ ինչն է աւելի դաժան նրա վերաբերմամբ, այն, որ այդ բլուզաւոր աներես լակոտները, իր անկանոն քայլուածքը ներկայացնելով, անզի էին տալիս յետեկց, թէ այն, որ անցորդներից շատերը խղճում էին իրան և կարեկցութիւնից շուռ էին տալիս երեսները իրանից: Բացի զրանից, նա վախենում էր կառքերից, ձիերից: Գետը հեռու էր: Նա շատ կը յոգնէր: Եւ սակայն ոչ մի ուրիշ միջոց չէր մնում...

— Գնում եմ քնելու, աղջիկա, իսկ դու ինչպէս՝ կը քնիս, թէ դեռ կ'աշխատես:

Առանց աչքը աշխատանքից կտրելու, աղջիկը պատասխանում է, որ ինքը դեռ բանելու է, ուղում է վերջացնել տասներկեակը:

— Ուրեմն բարի գիշեր, ասաց տիկին Դըլօբէլը, որի լոյսապակաս աչքերը այլ ևս չեն կարողանում երկար ժամանակ տանել լամպի լոյսը: Հայրիկիդ ընթրիքը դրել եմ կրակի կողքին: Պառկելուց առաջ ակը տուր:

Դէզիրէն սուտ չասաց: Նա ուզում է վերջացնել տասներկեակը, որպէս զի հայրը միւս առաւօտը կարողանայ տանել խանութը: Եւ եթէ մէկը տեսնէր, թէ ինչպէս էր նա, փոքրիկ գլուխը հանգիստ կախ գցած, աշխատում լաւնպի սպիտակաղոյն լոյսով, երբեք չէր կարող երևակայել, թէ ինչ սե-սե բաներ էին անցնում նրա մոքով:

Վերջապէս ահա և տասներկեակի վերջին թոշնիկը, մի

հրաշալի թոշնիկ, որի կաս-կանաչ և սաֆիրագոյն թևերը կարծես թաթախուած լինեն ծովային ջրի մէջ:

Դէզիրէն հոգատարութեամբ և կօքէտաբար ցցում է նրան արոյրէ թելի վրայ, խրտնած ու թոփչք գործող թռչունի գեղեցիկ դիրքով:

Օ՞հ, ինչպէս լաւ թոփչք է գործում այդ կապտագոյն թըռչնիկը: Ի՞նչ մոլեգին թափով է ալանում դէպի անհուն տարածութիւնը: Ի՞նչպէս լաւ զգացուում է, որ այս անգամ երկար, շատ երկար ճանապարհորդութիւն է լինելու, յաւիտենական ու անդարձ ճանապարհորդութիւն...

Գործը վերջացնելուց յետոյ՝ սեղանը կարգի բերեց, մետաքսէ թելերի վերջին կտորտանքները հոգատարութեամբ հաւաքեց ու գնդասեղները խրեց բարձիկի մէջ:

Հայրիկը, վերագառնալիս, կիսովչափ իջեցրած լամպի լոյսով կը գտնի իր ընթրիքը տաք մոխրի վրայ. և այս սոսկալի ու չարաբաստիկ երեկոն նոյնպէս անդորր կը թուայ նրան, որքան և ուրիշ երեկոները՝ չնորհիւ բնակարանի սովորական կարգ ու սարքին և նրա մշտական սովորութիւնների ճիշտ պահպանութեամս: Կամացուկ բանում է Դէզիրէն պահարանը և, մի փոքրիկ շալ հանելով, փաթաթւում է մէջը ու դուրս դալիս սենեակից:

Ի՞նչպէս Ո՞չ մի հայեացք մօր վրայ, ոչ մի ողջոյն լոփի հրաժեշտի, ոչ մի խանդաղատանք... Զէ, ոչնչէ: Մերձիմահ մարդկանց սոսկալի պարզատեսութեամբ նա հասկացաւ յանկարծ, թէ ինչ եսամոլ սիրոյ են զոհուած եղել իր մանկութիւնը և իր ջանէլութիւնը: Նա շատ լաւ զգում է, որ իրանց մնե մարդու մի հատիկ խօսքը բաւական կը լինի սփոփելու այդ քնած կնոջը, որի դէմ գրեթէ զայրոյթ է զգում, որ նա չէ զարթնում, որ նոյն իսկ նրա թերթերունքները չեն ցնցւում, երբ ինքը գնում է տնից ընդ միշտ:

Երբ մարդ, նոյն իսկ կամաւոր կերպով, մեռնում է շահէլ հասակում, նա անպատճառ զայրոյթ է զգում, և Դէզիրէն հեռանում է կեանքից, վրդովուած իր ճակատագրի դէմ:

Արդէն փողոցումն է նա: Ո՞ւր է գնում: Շուրջը ամեն տեղ ամայի է արդէն: Այդ թաղերը, որոնք այնքան ազմկայոյդ են լինում յերեկը, շատ վաղ են խաղաղւում երեկոյեան: Այդ տեղ մարդիկ շատ շատ են աշխատում, ուստի և շատ շուտ են քնում: Մինչ դեռ ևս կենսալից բուլվարները ամբողջ քաղաքի վրայ հեռաւոր հրդեհի վարդագոյն ցողեր են սփռում, ալատեղ բոլոր դարպանները կողպուած են, խանութների և պատուհանների բոլոր տախտակածակերը՝ փակուած: Երբեմն-երբեմն խա-

զաղութիւնը վրդովում է մի ուշացած մարդ, խփելով դարպասի մուրճը, կամ փողոցապահ ոստիկան, որ չի երևում, բայց որի ոտնաձայնը լսւում է, կամ մի հարթեցող, որի մենախօսութիւնը ընդհատում է իր քայլերի սայթաքումներով։ Կամ թէ յանկարծ մօտակայ գետափից փչում է քամին, չխչխացնում է լապտերի ապակին, շառաչեցնում է ճախարակի հին չուանը, կտրւում է փողոցի պտուտանքում և, սուլոց հանելով, մեռնում է մի խախուտ շեմքի տակ։

Արագ-արագ քայլում է Դէզիրէն, պինդ փաթաթուած իր փոքրիկ շալի մէջ, զլուխը բարձրացրած, աչքերը ցամաքած։ Ճանապարհը չիմանալով, նա գնում է ուղիղ դէպի առաջ։

Մառէյի նեղ ու մութ փողոցները, ուր գազի լոյսը փայլ-փլում է հեռուից հեռու, անցնում են իրար միջով, պտոյսներ են տալիս, և այդ տենդուտ որոնման ժամանակ խեղճ աղջիկը առաջ զնալու փոխարէն շարունակ յետ է գառնում արդէն զնացած տեղով։ Միշտ մի բան ցցում է նրա ու գետի մէջ։ Եւ սակայն փչող քամին նրա երեսովն է խիում գետի խոնաւ զովութիւնը։ Կարծես իսկապէս ջուրը յետ-յետ է նահանջում, շրջապատւում է պատնէներով, կարծես հաստ պարիսպները ու բարձր տները զիտմամբ բռնում են մահուան ճանապարհ։ Բայց կաղիկը շատ արի է և հին փողոցների խորդուբորդ սալայատակով նա քայլում է անընդհատ...»

Տեսած կաք երբ և իցէ, թէ ինչպէս որսի վերջում, երեկոյեան, մի որեէ վիրաւոր կաքաւ փախչում է ակօսի միջով։ Նա տափիւում է, գրեթէ փորսող է տալիս, քաշ տալով իր արիւնաթաթախ թել մի որեէ ապաստարան, ուր կարող է հանգիստ շունչ փչել։ Բոլորովին նոյն տպաւորութիւնն է գործում այդ փոքրիկ սառւերը, որ պատերին քսքսուելով, գնում է մայթերով երերուն քայլերով։

Նոյն ժամին, գրեթէ նոյն թաղում մի ուրիշ մարդ էլ թափառում է փողոցներում, աչքը յառած մէկի ճանապարհին, ուրին նա սպասում է յուսահատ։ Ա՛խ, ինչ լաւ կը լինէր, եթէ նրանք իրար հանդիպէին, եթէ Դէզիրէն մօտենար այդ տենդուտ անցորդին ու ճանապարհ հարցնէր նրանից։

—Ի՞նպրեմ, պարոն։ Ի՞նչպէս պէտք է գնալ դէպի գետը...»

Անցորդը իսկոյն կը ճանաչէր նրան։

—Վա, դուք էք, օրիորդ Զիզի։ Ի՞նչ բան ունէք փողոցում այսպէս ուշ։

—Գնում եմ մեռնելու, Ֆրանց։ Դուք էք պատճառը, որ ես ճանձրացել եմ կեանքից։

Այն ժամանակ Ֆրանցը, սաստիկ զգացուած, կը բռնի

նրան, կը գրկի և այդպէս գրկած կը տանի կոների վրայ, ասեւ լով.

— Օ՞հ, ոչ, մի մեռիր! Դու ինձ պէտք ես՝ ինձ միսիթարեւ լու և այն բոլոր ցաւերը դարմանելու համար, որ պատճառել է ինձ այն կինը:

Բայց բանաստեղծի երազ է այս, այնպիսի հանդիպումներից մէկը, որ կեանքը չը գիտէ առաջացնել: Սարսափելի անողոք է գաժան կեանքը, և երբ այնքան չնչին բան է հարկաւոր մի գոյութիւն փրկելու համար, նա զլանում է այդ չնչին բանը: Ահա թէ ինչու միշտ այնքան տխուր են լինում իրական վէպերը...

Փողոցներ, կրկին փողոցներ, յետոյ մի հրապարակ ու մի կամուրջ, որի լապտերները մի ուրիշ լուսաշող կամուրջ են գծագրում խաւար ջրի մէջ: Վերջապէս ահա և գետը: Աշնանային այդ մեղմ ու խոնաւ երեկոյի մշուշը ցոյց է տալիս նրան նրա համար անյայտ ամբողջ Պարիզը մի տեսակ անորոշ ծաւալով, որ աւելի ևս մեծ է թւում նրան, որովհետև նա բոլորովին անծանօթ է տեղին: Իսկ և իսկ մեռնելու տեղ է այս:

Նա իրան սաստիկ փոքրիկ, սաստիկ միայնակ ու կորած մոլորած է զգում այդ լուսավառ ու ամայի ահապին քաղաքի անհունութեան մէջ: Նրան թւում է, թէ ինքը մեռել է արդէն: Նա մօտենում է գետափին և յանկարծ նրան մի րոպէով ճանապարհին կանգնեցնում է ծաղիկների, սաղարթների և քանդած հողի բուրմունք: Նրա ոտների տակ, ջրափի մայթի վրայ, վազուայ վաճառանոցի համար արդէն շարուած են ահագին թուով յարդապատ մացառներ և ծաղկամաններ սպիտակ թղթից շենած կոների մէջ: Վաճառողուհիները, քնից ու գիշերուայ զովից թմրած, թիկն են տուել իրանց աթոռներին, շալերի մէջ փաթաթուած ու ոտները ջեռուցիկների վրայ դրած: Ամեն զոյսի չինաստղիկներ, յափրուկներ և աշունավերջի վարդեր, տեղահան ու տարաշխարհիկ, լուսաւորուած լուսնի շողերով և շըրջապատուած իրանց թեթև ստուերով, բուրմունք են սիռում օդի մէջ, սպասելով քնած Պարիզի վաղուան քմահաճոյքներին:

Խեղճիկ Դէզիրէ: Կարծես նրա ամբողջ ջահէլութիւնը, բերկութեան հազուադէպ օրերը և յուսախաբ սէրը լինում են նրա սիրտը այդ շարժուն պարտէզի բոյրերի հետ: Նա յուշիկ քայլերով անցնում է ծաղիկների միջով: Երբեմներքեմն քամին իրար է դիպցնում այդ մացառները՝ ինչպէս մի թաւուտի ճիւղքեր և մայթերի եզրերին շարուած զամբիւղները, լի գետնահան արած տունկերով, թաց հողի հոտ են տարածում:

Նա յիշում է այն արտաքաղաքեան զրօսանքը, որ Ֆրանցը

սարքեց իրանց համար: Բնութեան այն շունչը, որ նա ներս ծծեց այդ օրը առաջին անգամ, նորից զգում է նա այժմ, մեռնելու րոպէին: «Յիշիր», կարծես ասում է նրան այդ շունչը, և նա պատասխանում է: «Օ՛, ի հարկէ յիշում եմ»:

Նա չափազանց լաւ է յիշում: Համսելով այդ՝ կարծես տօնախմբութեան համար զարդարուած գետափի ծայրին, զաղտափայլ փոքրիկ ստուերը կանգ է առնում դէպի գետը տանող սանդուխի գլխին...

Գրեթէ նոյն րոպէին աղմուկ ու աղաղակ է բարձրանում գետափի ամբողջ երկարութեամբ: «Շուտով մի նաւակ, ճանկաձողեր»: Ամեն կողմից կիտում են նաւակավարներ ու ոստիկաններ: Մի նաւակ սկսում է առաջ խաղալ դէպի գետի մէջերը, մի լավուեր առջեին:

Մաղկավաճառ կանաքը զարթնում են, և երբ նրանցից մէկը, յօրանջելով, հարցնում է, թէ ինչ է պատահել, կամուրջի անկիւնում պայզած սրճավաճառ կինը հանդիսա կերպով պատասխանում է:

—Մի կին իրան ջուրն է գցել:

Բայց չ: Գետը չուղեց ընդունել այդ մատաղ մարմինը: Նա խզմաց այդչափ հեզ ու չնորհալի էակին: Ահա ներքեւում, գետի եղերքին, տատանուող լապտերների լոյսում կազմւում է մի սե խումբ, որ սկսում է քայլել Խեղդուողին փրկել են... Մի աւաղափոր գուրս է ճանկել նրան ալիքների մէջից: Նաւակավարներով ու լաստավարներով շրջապատուած ոստիկանները բերում են նրան, ձեռների վրայ դրած, և խաւարի մէջից մէկը, բիրտ ու խոպոտ ձայնով հոհուալով, ասում է.

—Չատ չարչարեց ինձ այդ ջրսուզիկը: Զեռներիս մէջից սպլուզով գուրս էր պրծնում... իրան որ թողնէի, մրցանակավարձից կը զրկէր ինձ անպատճառ...

Հետզհետէ աղմուկը հանդարտուում է, հետաքրքիրները՝ ցրւում են, և մինչ սե խումբը հեռանում է դէպի մօտակայ ոստիկանատունը, ծաղկավաճառ կանաքը նորից քուն են մտնում, և ամայի գետափում չինաստղիկները գողգոջում են գիշերային հովից...

Օ՛հ, խեղճ աղջիկ, գու կարծում էիր, թէ հեշտ է հեռանալ կեսնաքից, անյայտանալ յանկարծ: Դու չը գիտէիր, որ փոխանակ իսկոյն դէպի քո որոնած չքութիւնը տանելու քեզ, գետը գուրս էր նետելու քեզ, զոհ զարձնելով անաջող ինքնասպանութիւնների խայտառակութեանն ու անարգանքին: Ամենից առաջ՝ ոստիկանատունը, գարշելի ոստիկանատունը՝ իր կեղտոտ նստարաններով, իր տախտակամածով, որի վրայի թըր-

ջուած փոշին փողոցի ցեխ է յիշեցնում: Այդտեղ պէտք է Դէզիրէն լուսայնէր գիշերը: Նրան պառկեցրել էին մի բանակային մահճակալի վրայ՝ վառարանի առջև, որ լիքը լցրել էին նրա համար և որի վատառողջ ջերմութիւնը գոլորշի էր բարձրացնում նրա ջրաթաթախ ծանր հագուստներից: Ո՞րտեղ էր նա: Նա լաւ չէր կարողանում հասկանալ այդ: Նրա շուրջը նոյնպիսի մահճակալների վրայ պառկուած էին զանազան մարդիկ, լերկ պատերից տիրութիւն էր փշում, միւս սենեակում փակուած երկու հարբեցողներ՝ ուսալով ծեծում էին ներսի դռւոր, և խեղճ կաղիկը լսում ու անսնում էր այդ բոլորը անորոշ կերպով և չէր կարողանում հաշիւ տալ իրան:

Նրա կողքին, մի գգգղուած կին, մազերը ուսին շաղ տուած, պպղել էր վառարանի առաջ, որի կարմիր ցուկը չէր կարողանում սակայն գոյն տալ նրա վայրագ ու գունատ գէմքին: Մի խելագար էր այդ, որին բռնել էին գիշերը, մի խեղճ արարած, որ մեքենայօրէն տարուքերում էր գլուխը, անգիտակից կերպով ու դրեթէ շրթունքների շարժումներից անկախ ձայնով արտասանելով անդագար. «Օ՛ս, ինչեր եմ քաշել... ինչեր եմ քաշել... Եւ այդ չարագոյժ արտունջը, խառնուելով քնած տղամարդկանց խոռոցին, սարսափելի տանջանք էր պատճառում Դէզիրէին նա փակում էր աչքերը, որպէս զի չը տեսնէր այդ խելացնոր գէմքը, որ սարսափենում էր նրան, իբր մարմնացումն իր սեփական յուսահատութեան: Երբեմն երբեմն փողոցի դուռը բացւում էր, լսւում էր ոստիկանական պաշտօնեայի ձայնը, որ ինչ որ անուններ էր տալիս, և երկու ոստիկաններ դուրս էին զալիս, իսկ երկուսը ներս էին մտնում ու իսկոյն փոկւում մահճակալների վրայ, յոդնած, ինչպէս հերթապահ նաւաստիններ, որոնք գիշերը արթուն անցրել են նաւի վրայ:

Վերջապէս լոյսը բայցուց՝ իր սարսուացնող զովութեամբ, որ այնքան ծանր է տկարների համար: Յանկարծակի սթափուելով իր թմրութիւնից, Դէզիրէն վեր կացաւ, նստեց անկողնում, դէն շարտեց կապան, որի մէջ փաթաթել էին նրան և չը նայելով յոդնութեանն ու տենդին, աշխատեց ոտքի կանգնել, ուզգելով նորից տիրանալ իր անձին ու կամքին: Մի բան էր միայն մտածում նա, —փախչել իր շուրջը հետպհետէ բացուող աչքերից, հեռանալ այդ զարհուքելի տեղից, ուր քունը այնքան ծանըր է չնչում և այնքան ցաւատանջ դիրքեր է ընդունում:

—Խնդրում եմ, պարոններ, —ասաց նա ամբողջ մարմնով դողալով, —թողէք զնամ մօրս մօտ:

Ինչքան էլ ընտելացած լինէին ոստիկանները պարիգեան դրամաներին, այնուամենայնիւ նրանք հասկանում էին, որ այն,

ինչ կատարւում էր այժմ նրանց առաջ, սովորականից աւելի ազնիւ ու աւելի սրտայոյգ մի բան է։ Սակայն նրանք դեռ չեին կարող տանել նրան իր մօր մօս։ Պէտք էր առաջ դնալ թաղական ոստիկանի մօս։ Այդ անհրաժեշտ էր։ Կարեկցելով Դէզիւրէին՝ մի փակ կառք կանչեցին։ բայց չե՞ որ նախ պէտք էր դուրս գալ ոստիկանատնից, իսկ դուսն մօս մարդիկ էին հաւաքուել նայելու, թէ ինչպէս է անցնելու կաղիկ աղջիկը իր թրջուած ու քունքերին կպած մազերով և զինուորական կապայով, որի մէջ սակայն նա գողղողում էր ամբողջ մարմնով։ Թաղական ոստիկանատնը նրան վեր բարձրացրին մի մուժ ու խոնաւ սանդուխով, որով զնում-գալիս էին զանազան թուկից փախած անձնաւորութիւններ։ Մի բացխփիկ դուռ, որ իբր հասարակական հիմնարկութեան դուռ, ամեն բովէ բաց ու խուփ էր լինում, ցուրտ ու աղօտ լուսաւորուած սենեակներ, նստարաններ, որոնց վրայ շարսւած են լուռ, շմած ու քնած անհատներ, թափառաշրջիկներ, գողեր, մնապակ կանաքը։ Կին կանաչ մահուգով ծածկուած մի սեղան, որի վրայ զրում էր «թաղական ոստիկանի որսկանը», վերակացուի զլիով ու հնամաշ սիւրտուկով մի ահապին մարդ։ Իսկ և իսկ թաղական ոստիկանատուն։

Երբ Դէզիրէն ներս մտաւ, ստուերի մէջից վեր կացաւ մի մարդ և եկաւ նրա առաջը ու ձեռքը մեկնեց նրան։ Մրցանակ ստացած մարդն էր այդ, քսան հինգ ֆրանկի համար իր ազատիչը դարձած այլանդակ արարածը։

—Հը՞, մեր բարեկամ, —ասաց նա նրան իր լսիրց ծիծառով և խոպոտ ձախոնվ, որ մտածել էր տալիս ջրի վրայ անցրած մառախապատ գիշերների մասին, —ինչպէս է քէֆդ մեր կապարալողից յետոյ։

Եւ սկսեց պատմել ներկայ եղողներին, թէ ինչպէս էր դուրս ճանկել նրան, թէ առաջ այսպէս էր բռնել, յետոյ այսպէս, և թէ, ինքը որ չը լինէր, նա անպատճառ հիմա ջրի հետ գնալիս կը լինէր գէպի Խուան։

Խեղճ աղջիկը կարմրատակել էր տենդից ու ամօթից և այնպէս յուղուած էր, որ նրան թւում էր, թէ ջրիցը աչքերը շաղուած են մնացել ու ականջները գեռ տժժում են։ Վերջապէս, նրան ներս տարան մի աւելի փոքր սենեակ, ուր մի վեճ ու շքազարդ մարդ, ինքը պարոն թաղապետը, նստած՝ կաթով սուրճ էր խմում և «Դատաստանական թերթը» ձեռքին կարդում։

—Ա՛խ, դուք էք... ասաց նա զաժան կերպով, աչքերը

լրագրից չը հեռացնելով և հայի պատառը սուրճի մէջ թաթախելով։

Եւ Դէղիրէին բերող սստիկանը իսկոյն և եթ սկսեց կարդալ իր գեկուցումը։

«Կէս գիշերից մի քառորդ պակաս, Մէժիսըրի գետափում № 17-ի առաջը, մի ոմն Դըլօբէլ, քսան չորս տարեկան, ծաղկագործուհի, որ ապրում է Բրաք փողոցում, իր ծնողների մօտ, փորձեց անձնասպանութիւն գործել իրան գցելով Սենա գետը, որտեղից նրան ողջ-առողջ դուրս հանեց պարոն Պարշը մինէ, որ աւազափոր է և կենում է Բիւտ-Շօմօն փողոցում»։

Պ. թաղապետը մի կողմից ուտում էր հայը, մի կողմից լսում՝ հանգիստ ու ձանձրացած կերպարանքով, իր մի մարդ, որին ոչինչ այլ ուս չէ զարմացնում կեանքում։ Վերջը նա բարձրացրեց աչքերը և մի ոմն Դըլօբէլի վրայ խիստ ու զաման հայեացք գցեց ու գորս դու պատուիրեցեր նախատեց նրան։ Սաստիկ վատ, սաստիկ անսպիտան բան էր նրա արածը։ Ի՞նչն էր զրդել նրան այդպիսի վատ քայլ անելու։ Ինչո՞ւ էր ուղում նա իր արեց սեացնել։ Հը՞ պատասխանեցէք տեսնենք, մի ոմն Դըլօբէլ։

Բայց մի ոմն Դըլօբէլը յամառ կերպով լսում էր։ Նրան թւում էր, թէ իր սէրը կը պղծուի, եթէ նա խոստովանի այսպիսի տեղում։ «Չը գիտեմ... չը գիտեմ...», դողդողալով ասում էր նա կիսաձայն։

Բարկացած ու համբերութիւնը հատած, պարոն թաղապետը յայտնեց նրան, որ նրան իսկոյն կը տանեն ծնողների մօտ, բայց այն պայմանով, որ նա խոստանայ, թէ այլ ևս չի կրկնի արածը։

—Հը՞ խոստանում էք...

—Այո, այո, պարոն...

—Այլ ևս չէք կրկնի արածք...

—Զէ, ի հարկէ, չեմ կրկնի... երբէք... երբէք...

Զը նայելով նրա այդ խօսքերին, պարոն թաղապետը թափ էր տալիս գլուխը, որպէս թէ չէր հաւատում նրա խոստմանը։

Վերջապէս ահա նա փողոցումն է, գնում է տուն, գնում է իր ապաստարանը։ բայց նրա նահատակութիւնը գեռ չէր վերջացնել։

Կառքում՝ նրան ուղեկցող սստիկանը չափազանց քաղաքավարի, չափազանց սիրալիր էր պահում իրան։ Դէղիրէն ձեացնում էր, թէ չէ հասկանում նրա միտքը, մի կողմ էր քաշւում, յետ էր քաշում ձեռքը։ Ի՞նչ սարսափելի տանջանք... Բայց ամենասարսափելին այն բոպէն էր, երբ հասան Բրաք փողոցը

և Դէղիրէն տեսաւ տան իրարանցումն ու հարեանների բազմութիւնը, որոնց հետաքրքրութեան առարկան էր դառնալու ինքը:

Առաւօտուանից ի վեր ամբողջ թաղը գիտէր, որ նա անհետացել է: Լուր էր պտտում, թէ նա փախել է Ֆրանց Ռիսլէրի հետ: Վաղ առաւօտեան տեսել էին հոչակաւոր Դըլօբէլին-տանից դուրս գալիս, սաստիկ այլայլուած, զլսարկը ծուռ դըրած, շապկաթերը ճմուտուած, որ նշան էր արտասովոր մտահոգութեան. դռնապանուհին էլ, մժերքները վեր տանելիս, խեղճ մօրը տեսել էր կիսախելագար դրութեան մէջ սենեակէ սենեակ վազելիս, աղջկանից մնացած մի խօսք, մի ամենաչնչին հետք ինտոնելիս, որի հիման վրայ կարելի լինէր գոնէ մի ենթադրութիւն անել:

Դժբախտ մօր աջքերը, թէն շատ ուշ, յանկարծ բացուեցին, և նա յիշեց իր աղջկայ տարօրինակ վարմունքը վերջին օրերի ընթացքում, նրա լուսթիւնը ֆրանցի գնալու մասին «Մի լար ամուսինս... կը գտնեմ, կը բերեմ նրան...», ասաց պարոն Դըլօբէլը ու դուրս գնաց տանից, մասամբ տեղեկանալու, մասամբ էլ այդ սարսափելի դարդը չը տեսնելու համար, և կինը սպասելով նրան՝ միալար գնում-գալիս էր գաւթից լուսամուտը և լուսամուտից գաւթը: Հէնց որ մի ամենաթեթև ոտնաձայն էր լուսում սանդուխի վրայ, նա բարախուն սրառվ բանում էր դուռը ու դուրս պրօնում սենեակից, իսկ յետոյ, երբ ներս էր մըտնում յուսախար, աղեկտուր լաց էր լինում՝ տեսնելով բնակարանի դատարկութիւնը, սաստկացած չնորհիւ Դէղիրէի թափուր մնացած մեծ բաղկաթուի, որ կիսովին դարձած էր դէպի աշխատութեան սեղանը:

Ցանկարծ մի կառք կանգ առաւ ներքեի դուն առաջ: Նեքսենում խօսակցութիւն ու ոտնաձայն լսուեց:

—Գտանք ձեր աղջան, տիկին Դըլօբէլ... Ահա...

Այս, Դէղիրէն էր դա, որ, դունաւ ու նուազուն, բարձրանում էր մի անծանօթ մարդու թեն ընկած, առանց շալի, առանց զլսարկի, փաթաթուած մի ահագին դորշ վերարկուի մէջ: Մօրը տեսնելով, նա ժապաց՝ գրեթէ անմիտ կերպարանքով:

—Մի վախեցիր, ոչինչ չը կայ... փորձեց նա խօսել ու իսկոյն թուլացած նստեց աստիճանների վրայ: Երբէք տիկին Դըլօբէլի մաքով չէր կարող սնցնել, թէ ինքը այդքան ուժ ունի: Մի չնչում գրկեց աղջկան, տարաւ նեքսեն, պառկացրեց, ու սկըսեց խօսել հետք, պաշպան անվերջ:

—Վերջապէս տեսայ քեզ այստեղ: Ո՞րտեղից ես գալիս, խեղճ աղջիկս: Ճիշտ է, որ ասում են, թէ ուզեցել ես քեզ սպա-

նել... Սաստիկ դարդ ես ունեցել ուրեմն... Հապա ինչու էիր ծածկում ինձնից:

Տեսնելով մօրը այդ զրութեան մէջ, արտասուաթաթախ ու մի քանի ժամուայ ընթացքում պառաւած: Դէղիրէն սկսեց սաստիկ խղճահարուել: Նա յիշեց, որ ինքը հեռացել էր տանից առանց նրա հետ մնաս բարև անելու և որ սրտի խորքումը մեղադրում էր նրան, թէ չի սիրում իրան:

Չէր սիրում:

—Ես դարդամահ կը լինէի, եթէ մահդ իմանայի,—ասում էր խեղճ կինը... Օ՛ֆ, երբ առաւօտեան վեր կացայ և տեսայ, որ տեղերդ չի բացուած ու ինքդ էլ արհեստանոցումը չես... պտոյտ եկայ ու կանգնած տեղս գետնովը դիպայ... Հիմա տաքացար մի քիչ... Լաւ ես հիմա... Էլ չես աշխատի մնոնել, այնպէս չէ...

Եւ, այդպէս խօսելով, ծալում էր վերմակի եղբները, տաքացնում էր ոտները, սղմում էր կրծքին ու օրօրում:

Աչքերը խուփ՝ անկողնում պառկած, Դէղիրէն վերատեսնում էր իր ինքնասպանութեան փորձի բոլոր մանրամասները, այն բոլոր զազրելի բաները, որոնք նրա զլխովն անցել էին մահի ճանկից ազատուելուց յետոյ: Զը նայելով տենդի սաստկանալուն, չը նայելով, որ ծանր քունը յաղթում էր նրան, այնուամենայնիւ նրան յուզում, տանջում էր իր խելագար վաղքը Պարիզի միջով: Հաղար ու մի մութ-մութ փողոյներ էին բացւում նրա առաջ, որոնք բոլորն էին գնում վերջանում էին Սենայի ափին:

Այդ սոսկալի գետը, որ նա չէր կարողանում գտնել զիշերը, այժմ հալածում էր նրան:

Խեղճ աղջիկը զգում էր իրան թաթախուած նրա տիզմի ու ցեխի մէջ, և խեղդուելով այդ կօշմարից, այդ չար քնից, ու չիմանալով, թէ ինչպէս աղատուի իրան պաշարած այդ սիյիշողութիւններից, չնչում էր, դիմելով մօրը՝ «ծածկիր ինձ, մայրիկ... ծածկիր... ամաչում եմ»:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԽՎԻՆ ԴԱՐՈՒՆՄ

Գև. Դ.

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

I

Պատմութեան ընթացքը այժմ մեզ հարկադրում է թողնել բուն Հայաստանը և գնալ մի բուռն հայերի ետեից, որոնք բնակութիւն հաստատեցին Հնդկական թերակղզու զանազան անկիւններում։ Վաճառականներ են դրանք, բայց մեր ազգի մտաւոր և քաղաքական պատմութեան մէջ առանձին տեղ և առանձին ուշադրութիւն գրաւելու իրաւունքն են ստացել իրանց գործերով։ Ահա թէ ինչպէս

Մենք տեսանք հայութեան երկու խոչոր մասերում սկըսուած շարժումները, արեմուտքում—գրական, արևելքում—քաղաքական։ Մանրամասն նկարագրելով այդ երկու շարժումները, մենք ընդգծեցինք այն շատ կարեոր և բնորոշ հանգամանքը, որ դրանք չը միացան իրար հետ, մնային առանձնաշած, կղզիացած, և պարսկա-թիւրքական մշտական սահմանագլուխը այն մեծ անջրակետն էր, որի մի կողմում գրական շարժումն էր, առանց քաղաքական գաղափարների, իսկ միւս կողմում քաղաքական շարժումն էր, առանց գրական գործունէութեան։ Հարկաւոր է ուշադրութեամբ վերաբերուել այս հանգամանքին։ Միիթար Սեբաստացին և Խարայէլ Օրին իրար չնն ճանաչում, գրիչը և սուրբ չեն միանում, թէև երկուսն էլ հաւասար չափով հարկաւոր են հայերին, իբրև քաղաքական մարմին կազմող մի համայնքի, որ արեւելեան հարցի մէջ այնքան աղէտալի ճակատագիր ունէր։ Եւ այդ կղզիացումը, ինչպէս կարող ենք եղրակացնել մինչև այժմ պատմածներից, իր խիստ

կնիքն է դնում երկու շարժումների վրայ էլ՝ Գրական շարժումը, խորթ մնալով այն սկզբունքներին, որոնք քարոզւում էին Հայաստանի արևելքում վառողի միջոցով, շարունակեց հին ուղղութիւնը, ամփոփուած մնալով համարեա միմիայն կրօնականբարոյական նեղ շրջանների մէջ, չը համապատասխաննելով ազգի իրական պահանջներին, ժամանակի ոգուն և տրամադրութեան։ Միւս կողմից էլ քաղաքական շարժումը, չունենալով իր հետ այնպիսի հզօր գործօն, որպիսին է իրականութիւնը, չը կարողաւ ժողովրդականութիւն ստանալ իր սահմաններից դուրս, դառնալ հանրային գաղափար, զինուորազրել մեծ մասսաներ, տարածել, լայնացնել շարժումը։ Ու այդ շարժումը, ինչպէս տեսանք, ամփոփուած մնաց միայն Ղարաբաղի և Սիւնիքի լեռներում։

Այս դրութիւնը—կարելի է համարձակ անդել—պիտի երկար շարունակուէր Հայաստանի հողի վրայ։ Բայց ահա XVIII դարի երկրորդ կէսից երեան է գալիս հեռաւոր Հնդկաստանում մի փոքրաթիւ հայ գաղթականութիւն, որ սկսում է կատարել արեմտեան և արեւելեան հայութիւնների շարժումները միացնողի դեր։ Այդ գաղթականութիւնը հասկանում է երկու կողմերի պակասութիւնները, որոնք առաջանում էին միակողմանիութիւնից և տպիտութիւնից, մի հզօր խթան է հանդիպանում մտաւոր գարգացումը և քաղաքական ազատութիւնը միմեանց մօտեցնելու, միմեանց հետ եղբայրացնելու համար։ Այս է ահա հնդկական գաղթականութեան ամենախոշոր երախտիքը։ Նրան հետևում է, նրա պէս գործում է և մի այլ հայ գաղթականութիւն—Խուսաստանի հայ գաղթականութիւնը։ Եւ համարեա ամբողջ մի դար, XVIII-ի կէսից մինչև XIX-ի կէսը, այդ երկու հայկական հատուածների ազգեցութիւնը ահազին է եղել։ Անտես անել կուլտուրական այդ մնծ ոյժը, չէ կարելի առանց դրա հետ ծանօթանալու չէ էլ կարող լինել ամբողջացրած, լիակատար պատմութիւն։

Ո՞րտեղից էին Հնդկաստանի հայերը։ Այս հարցը մեզ տառում է նոր-Զուզա։ Պարսից մայրաքաղաքին կպած այս վաճառականական գաղութի կատարած դերի հետ մենք ծանօթ ենք արդէն *։ Անա այդ վաճառականներից էլ զլիսաւորապէս կազմուեց հնդկական գաղթականութիւնը։

Հետևելով ջուղայեցի հայերի ճակատազրին, մննք տեսանք մի զարմանալի գիծ։ Դա այն է, որ այդ ընդունակ, ժիր վա-

*.) „Հայկ. Ցպ.“, հատ. I.

ճառականները ստեղծում են իրանց համար նախանձելի բարեկեցութիւն, բայց հէնդ այդ բարեկեցութիւնն էլ գառնում է նրանց դժբախտութիւնների պատճառ։ Այդքանը բառական չէ։ Դժբախտութիւնները չեն ոչնչացնում նրանց, այլ կարծես շատ հարկաւոր են, որպէս զի նրանք աւելի առաջադէմ, աւելի գործունեայ և հոչակաւոր դառնան։ Քանի որ Զուղան իր հին տեղն էր, Արաքսի միերկ ու ժայռոտ ափի վրայ, նա տալիս էր անվախ, համարձակ վաճառականներ, որոնք պատում էին աշխարհի չորս կողմում և ոսկի ու փարթամութիւն էին հաւաքում իրանց տների մէջ։ Այդ հարստութիւնն էլ պատճառ դարձաւ որ Զուղան աւերուի Շահ-Արասի ձեռքով և փոխադրուի Պարսկաստանի սիրտը, Սպահան։ Լացով ու կոկիծներով թողեց ժողովուրդը իր բնակութիւնը. և իր Արաքսի, իր ժայռոտ զետափի սիրով էր տոշորում հեռաւոր, անդարձ պանդխտութեան մէջ։ Բայց նոր հայրենիքում նա դարձաւ աւելի բարեկեցիկ, աւելի փարթամ։ Նրա առևտրական ընդունակութիւնները գնահատուեցան Շահ-Արասի կողմից։ Նրան փաղաքչում էին, նրան ամեն տեսակ արտօնութիւններ էին տալիս Սկսուեց ջուղայեցիների հանրային գործունէութիւնը։ Նրանք բաց են անում իրանց քսակը Հայաստանի ժողովրդի համար, հանդիսանում են մեկենասներ, զարգացնում են իրանց մէջ ազգային կրթութիւնը, իրանց փողով, իրանց ձեռք բերած մեծ հեղինակութեամբ ազդում են հայերի մեծ մասի վրայ, դառնում են զեկավարող, ուղղութիւն տուող իշխանաւորներ։

Բայց ջուղայեցու ճակատագիրը չը փոխուեց։ Այդ բացառիկ, ամեն կողմով նախանձելի դրութիւնը չէր կարող մշտատելինել Պարսկաստանի պէս մի երկրում։ Որքան աճում ու զարգանում էր Զուղայի հարստութիւնը, այնքան ակներև էր գառնում, որ այդ հայ վաճառականներին սպասում է մի գառն ու վշտալի ապագայ։ Առատ դիզւում էին հարստութիւնները վաճառականական գաղութի մէջ։ Փառաւոր ապարանքներ էին կառուցւում, մի-մի պալատներ, զարդարուած ոսկով ու արծաթով, գեղեցիկ նկարներով։ Այդ ապարանքներում յաճախ հիւրենիալուում էին պարսից թագաւորները, որոնք գտնում էին այդտեղ ամեն երկրաւոր բարիքների առատութիւն, արևելեան ճոխ փարթամութիւն։ Բայց իրանի տէրերը գեռ չէին նախանձւում իրանց հովանաւորութեան տակ այդքան անօրինակ բարեկեցութեան հասած գեաւուրներին։

Այդպէս շարունակուեց մինչև XVII դարի վերջերը։ Երբ Պարսկաստանն ընկաւ, մնանկացաւ և պարսից արքունիքը կարօտողի, մուրացկանի օրին հասաւ, փոխուեց, ի հարկէ, և Զու-

զայի դրութիւնը։ Դժբախտ և ապուշ Շահ-Հիւսէինի ժամանակից Զուղան դառնում է պարսկական արքունիքի համար դեռ չը շահագործուած մի ոսկեհանք։ Սպահանի կառավարիչները չին կարող չը տեսնել իրանց աշքի առջև փոռուած անպաշտպան, բայց շատ ճոխ բարեկեցութիւնը մի այնպիսի ժամանակ, երբ իրանի արեգակնախայլ վեհապետը փող չունէր իր զինսեխմութիւնների, իր հարէմի, իր անթիւ մօլլաների համար։ Եւ Զուղայում բարձրանում են հեծեծանքներ. այստեղ է մտնում պարսկական հարստահարութիւնը՝ զոռով յափշտակելու, խելու համար։ Այդ օրուանից Զուղայի աւերումը միայն ժամանակի հարց էր դառնում։

Դժբախտութիւնները հէնց սկզբից հայերի ձեռքով մտցրուեցին Զուղայի մէջ։ Կրօնամոլ Շահ-Հիւսէինը, ի հարկէ, աշխատում էր որ իր երկրում ամենքը մահմեղական լինեն։ Հին կրակապաշտ պարսիկների (գեաբրների) մի մասը կրօնափոխ անսելուց յետոյ, նա ուշադրութիւնը հայերի վրայ դարձեց։ Զը դիմելով բռնութիւնների, նա առաջարկեց հայերին ընդունել մահմեղականութիւն։ Մէջ տեղ պիտի գործէին յօժար կամքը, համոզմունքը։ Անշուշտ Հիւսէին-Շահը այստեղ զեկավարւում էր այն համոզմունքով, որ քրիստոնէութիւնը մնանկութեան է հասել, որ նա չէ կարող իսլամի վարդապետութեան պէս հաստատուն ու որոշ սկզբունքներ պաշտպանել։ Այդ մասի մէջ նրան հաստատում էին, երկի, կրօնական կատաղի կոփւները, որոնք տեղի ունէին նրա ժամանակ Զուղայում։ Ոչնչ հեղինակութիւն չէր կարող ունենալ քրիստոնէութիւնը պարսից արքունիքի առաջ, քանի որ կաթոլիկ քարոզիչները և հայ վարդապետները իրար գզգզում էին, իրար անիծում, իրար հերձուածող, կուապաշտ անուանում։ Եւ այդպիսի ժամանակ բնական էր մօլլաներով շրջապատուած մի Շահի համար բացարձակ ասել հայերին թէ կայ աւելի լաւ և բարձր կրօն և դա—իսլամն է։ Համոզմունքով աղղելու համար Շահը սարքում էր կրօնական վիճարանութիւններ վարդապետների և մօլլաների մէջ, որոնք պիտի հաստատէին թէ որ կրօնն է կատարեալ։ Բայց երբ պալատական մօլլաները անկարող եղան յաղթել հայ վարդապետներին, Շահը սկսեց անցկացնել այն միտքը, որ իրան պարզապէս ցանկալի է մահմեղական տեսնել իր բոլոր հաւատարիմ հպատակներին։

Եւ իսլամը բաւական լաւ որս ունեցաւ Զուղայեցիների մէջ։ Գործ էին աեսնում քաղաքական այն միջոցները, որոնք գեռ իսլամի առաջին գարերում էին մշակուած՝ մահմեղականութիւն ընդունելը ամեն կողմով ձեռնտու և շահաւէտ դարձնելու համար։ Փառքի և նիւթական շահի խոստումներով կուրացած

շատ հայեր իսլամացան։ Մրանց միջոցավ մօլլաները գեղեցիկ պատրուակ գտան միջամտելու հարուստ հայերի գործերի մէջ։ Ուրացողները, իրանց նախկին դաւանակիցներին կեղեքելու նպատակով, ամեն տեսակ սուոր մատնութիւնների, զրպարտութիւնների էին դիմում։ Նրանք ունեին սուտ վկաների բազմութիւն, մանաւանդ զիտէին, նեղը ընկած ժամանակ, բարձրածայն, ամբոխի և իշխանութեան առաջ, արտասանել «հաւատս հայ-հոյեց» խօսքերը, որոնք այնքան սարսափելի են մահմեդական աշխարհում։

Ու Զուղայի մէջ բոյն դրին սանձարձակ բռնութիւնները։ Կառավարութիւնը, կրօնափոխ հայերի մատնութիւնների վրայ հիմնուելով, տուգանքների էր ենթարկում հայերին, գրաւում էր նրանց հարստութիւնները։ Աւելի սարսափելի էին այդ հրամանները կատարող պաշտօնիանները։ Նրանք սոված գայլերի նըման ընկնում էին այնքան չաղ պատառներ ներկայացնող հայերի վրայ, մէկին երկու երեք էին առնում, չարչարում, տանջում էին իրանց զոհերին։ Հարստահարութիւնների ընդարձակ ասպարէզ դարձած Զուղան այլ ևս չէր կարող պահել էր մէջ մի վաճառականական համայնք։ Եւ նա ընկնում էր, դատարկում։ Հալածանքները, ալէտք է ասել, զեռ ընդհանուր չէին, նրանք ուղղուած էին զեռ անհատների դէմ Բայց այդ հանգամանքը մեծ նշանակութիւն չունէր, գլխաւորն այն էր, որ ոչ ոք աւգահով չէր կարող լինել թէ կեղեքումների զոհ չի դառնայ. ամեն ինչ ցոյց էր տալիս որ այլ ևս չէ կարելի յոյս զնել պարսից կառավարութեան վրայ։ Եւ զուղայեցինները սկսեցին որոնել բնակութեան այլ տեղեր։ Նրանք սկսեցին գտպիել։

XVIII դարի սկզբում գաղթականութիւնը արդէն զգալի չափեր ընդունած ենք տեսնում։ 1705 թուականին Զուղայում գատարկ մնացած տների թիւը հասնում էր 159-ի *): Նրանց տէրեւը հեռացել էին, վերադարձի մասին չէին էլ մատածում, ուստի երկուորներ բնակուեցան նրանց մէջ։ Գաղթականութիւնը բացարձակ կերպով չէր տեղի ունենում, ոչ էլ մեծ-մեծ խըմբերով։ Հատճատ մարդիկ, ծածուկ կերպով, թողնում էին իրանց տաքացրած բոյները ու փաչում էին պարսկական իրականութիւնից։ Բայց նրանք ցիրուցան չէին դառնում. վաճառականութեամբ յարմար տեղեր որոնելով, նրանք ուղերձուում էին դէպի վաճառաշահ կենտրոնները։ Մեծ մասը դիմում էր դէպի հարաւ, դէպի Բուշիր, Պարսից Ծոցի այդ նաւահանգիստը, իսկ այնտեղից անցնում էր Հնդկաստան։

*.) «Պատմ. Դ. Զուղայուս հատ. I, կր. 293։

Այդ խաղաղ դաղթականութիւնը գուցէ այնքան չը փութացնէր Զուղայի քայրայումը, եթէ Շահ-Հիւսէինի անպէտք կառավարութիւնը քաղաքական տագնապների դուռ բացած չը լինէր: Զուղան Սպահանի արուարձանն էր, իսկ Սպահանը, ինչպէս զիտենք, այն զիխաւոր բեմն էր, ուր տեղի ունեցան այնքան սասանեցնող գէպքեր և յեղափոխութիւններ: Սպահանի այս վիճակը սաստկացրեց այն աղէտները, որոնք թափւում էին Զուղայի զլիին և շարունակ աւերում էին նրան:

Այստեղ շատ հետաքրքրական կը լինէր լուծել մի հարց.— Բնչպէս վերաբերուեցան Զուղայեցի հայերը գէպի հսրայէլ Օրին և նրա գործը: Բայց ցաւելով պէտք խօստպահնել որ այս հարցի վերաբերմամբ չը կան որոշ վլայութիւններ և մնում է փոքրի շատէ հաւանական ենթադրութիւններին գիմել: Անշուշտ Օրին, մանաւանդ Սպահանում եղած ժամանակը, չէր կարող անտես անել Զուղայի հարուստ, հեղինակաւոր հասարակութիւնը: Նա, երեխ, յարաբերութիւններ ունէր ջուղայեցիների հետ և, հաւանական է, վայելում էր նրանց համակրութիւնը: Հաւանական է որ ջուղայեցիներն էին դիւրայնում Օրիի յարաբերութիւնները Ղանդահարի Թօրգին-խանի հետ: Միայն այն համոզամանքը, որ ջուղայեցի վաճառական Պետքոս զի-Սարգիս Գելանենց այնպիսի սիրով նուիրուեց հայրենիքի ազատութեան գործին, զոհեց իր կարողութիւնն ու անձը, բաւական աչքի ընկնող ապացոյց է, որ հաստատում է թէ ջուղայեցիները անտարբեր չէին գէպի հայկական շարժումը: Գոնէ չէ կարելի ասել թէ ջուղայեցիներից ոչ ոք չէր համակրում Հայաստանի ազատութեան մտքին: Որ ջուղայեցիները մասնակից էին այն շարժման, որի նպատակն էր ջնջել պարսից իշխանութիւնը Հայաստանում: Պրա մի ապացոյցն էլ այն կարող է համարուել, որ նրանց համարում էին աւղաններին Սպահան բերողներ, այսինքն պարսից իշխանութեան անկումը ցանկացող մի տարր: Թէև այդ մեղադրանքը ոչ մի հիմք չունէր, որովհետև հայերը աւղանների կողմնակից լինելու ոչ մի պաճառ չունէին, բայց ճիշտ է և այն, որ առանց կրակի ծուխ չէ լինում: Այդպիսի մի մեղադրանքը, երեխ, հիմք էր գտնում այն բանի մէջ, որ ջուղայեցիները ցանկանում էին տեսնել ուռաններին տիրած Պարսկաստանի վրայ:

Այսպէս թէ այնպէս, Զուղան երկու կրակի մէջ ընկաւ, երբ Միր-Մահմուդը պաշարեց Սպահանը: Նախ քան պաշարումը ջուղայեցիները շատ էին աղաչել, որ թոյլ տաճ լրանց տեղափոխուել Սպահան, որովհետև Զուղան բոլորավին անպաշտպան էր, չունէր նոյն իսկ պարիսաններ: Սակայն պարսից կառավարութիւնը մերժեց այդ թափանձանքները: Պատճառներից

զլսաւորը, ի հարկէ, այն էր որ Սպահանը, չունենալով ուտեւ-
լեղէնի պաշար, չէր կարող ընդունել իր մէջ մի նոր մեծ բազ-
մութիւն։ Բայց կար և մի բնորոշ պատճառ էլ։ Պարսից մեծա-
մեծներից մէկը այսպիսի դատողութիւններ յայտնեց. աւղան-
ները աւաղակներ են, նրանք չեն եկել երկիրներ նուածելու,
այլ հարստութիւններ հաւաքելու. թող նրանց լինի փարթամ
Զուղան, գուցէ զրանով կշտանան և յետ դառնան։ Եւ այդ միտ-
քը հաւանութիւն գտաւ Շահի մօտ. Զուղան զոհւում էր Շահ-
Հիւէինի փատած գահի փրկութեան համար։ Բայց ջուղայեցի-
ներից մի քանի ընտանիքներ տարուեցան Սպահան։ իբրև պա-
տանդներ։ Բայցի զրանից, պահանջեցին որ 300 երիտասարդ
ջուղայեցիներ զինուեն և գնան Շահի պալատը պահպանելու։
Վաճառականները զէնք գործ ածել էլ զիտէին. 300 ջուղայեցի-
ներ, զինուած անզիփական և հօլանդական ընտիր հրացաննե-
րով և ատրճանակներով, մտան Սպահան, բայց տեսան որ ի-
րանք չեն հարկաւոր պարսիկներին, այլ իրանց զէնքերը։ Այդ
զէնքերը խլուեցին և ջուղայեցիները վերադարձան իրանց անե-
րը։ Հայ վաճառականներին այլ ևս ոչինչ չէր մնում անել, բայց
միայն փակուել աներում և սարսափիանար սպասել թշնամուն։

Աւղանները, առանց, ի հարկէ, որ և է զիմադրութեան
հանդիպելու, զրաւեցին Զուղան և շրջականները։ Ի՞նչ պի-
տի անէին հայերը։ Խսկոյն հպատակութիւն յայտնել Մահ-
մուդին, նշանակում էր ցոյց տալ անհաւատարմութիւն զէպի
պարսիկները, իսկ անտես անել Մահմուդին, նշանակում էր
ենթարկուել բարբարոս յաղթողի բարկութեան։ Մինչդեռ նը-
րանք տարուելուում էին այդ երկու կրակների մէջ, անցան մի
քանի օրեր. Մահմուդը ինքը կանչել տուեց հայերին և հարցրեց
պատճառը, թէ ինչու նրանք չեն գալիս յաղթողի ոտները։ Հայ
քալանթարը և քէթխուղանները ասացին, թէ թշնամութիւնից
դրդուած չեն իրանք այդպէս արել. հայերը ստրուկներ ևն մի-
այն, և նրանց համար մի և նոյն է, թէ ով կը լինի իրանց տէ-
րը։ Այդ միանգամայն ճիշտ իրողութիւնը համոզեցուցիչ էր և
բռնաւորի համար, մանաւանդ որ նրա մօտիկ մարդկանցից
մէկը, անշուշտ լաւ տուրք ստացած լինելով հայերից, բարեխօ-
սի գեր էր կատարում։ Եւ Մահմուդը կետանք չնորհեց ջուղայե-
ցիներին, բայց պահանջում էր, որ նրանք իրանց արեան զինը
տան։ Խսկ այդ արիւնը գնահատուեց 120 հաղար թուման։
Այդ գումարը լացարեց հայերին. և լաւ հասկանալով, որ ու-
րիշ կերպ չէ կարելի համոզել աւղանցուն, թէ այդ տուգանքը
սոսկալի ծանրութիւն է նոյն իսկ Զուղայի համար, նրանք ա-
ռաջարկեցին, որ աւղանները իրանք գնան ու մտնեն աները,

վերցնեն ինչ տեսնում են: Վերջը Մահմուղը սակարկութեան դիմեց և կանգ առաւ 70 հազար թուման գումարի վրայ: *) Զուղայեցիները յանձն առան վճարել այդ գումարը: Քալանթարը Մահմուղի մարդկանց հետ մասն էր գալիս տնէ տուն, որքան ուկի, արծաթ, թանկագին քարեր և իրեր էր տեսնում, վերցնում էր: Հարցը այնպան տուգանքի քանակութեան մէջ չէր, որքան այդ տուգանքը առնելու ձեի մէջ, քանան հազար թումանի արժէք ունեցող հարստութիւնը գնահատում էր ինն հազար թուման և այդպէս էլ հաշուի էր զնուում: Աւելացրէք զրա վրայ հայերի տներից հանած 5000 հատ «աթլաս, զութնի, մահուգ և շալ կապայ, 8000 չուխոյ կապայ» առանց կարի, որպէս զի աւշան զինուորները շորեր կարեն իրանց համար, մեծ քանակութեամբ վերմակ, ներքնակ, բարձ, «բոլորն էլ զառ ու զումաց», աւելացրէք բացի զրանից և 12 հատ աղջիկներ,—և դուք մի մօտաւոր հասկացողութիւն կը կազմէք, թէ ինչ ահագին գնով ջուղայեցիները գնեցին իրանց զիլսի ողջութիւնը: Թէ Զուղայից և թէ ուրիշ տեղերից խլած այդքան գանձերը Մահմուղը ուղարկեց Դանդահար և դրանց հետ նաև 60 տուն հայեր, որոնք պիտի բնակուէին Աւղանիստանում՝ այդ երկրին իրանց խներով և ընդունակութեամբ ծառայելու համար **):

Կարելի է ասել, որ Զուղայի մահուան դատավճիռը առաջին անգամ ստորագրողը աւղանական արշաւանքն էր: Մահմուղը այսպէս էր զատում: «Փողը հային հարկաւոր չէ. փողը հարկաւոր է աւղան զինուորին, որ կուում է. հայը պիտի ստրուկ լինի և վար ու ցանք անէ. ապա ուրեմն, փողը, հարուստ տունն ու տեղը բոլորովին աւելորդ են նրա համար»: Այդպէս էլ նա վարւում էր հայերի հետ. կեղեցել, առնել ամեն մի արժէքաւոր բան և փոխարէնը թոյլ տալ որ կաթնատու կովը ալպէ—այս էր նրան զեկավարող միտքը: Բայց տեսէք թէ որքան սև է ստրուկի բախտը. այն հանգամանքը, որ աւղանները հայերին չէին կոտորում, տեղային պարսիկ ազգաբնակութեան համար մի ապացոյց էր որ աւղանները հայերի գանձակիցներն են և հայերն են աւղաններին բերել Պարսկաստան:

Եւ հանգամանքները, հակառակի պէս, գալիս էին այս ան-

*) Պարսկական թումանը այն ժամանակներում, ինչպէս վկայում է Յակոբ Շահամիրեանը անոր Տեղորակ զրքի մէջ, հաւասար էր 20 հնդկական ոսովիի: Մի ոսովիին 50 կոպէկից աւել արժէք. հետևաբար պարսկական թումանը այն ժամանակ արժէք 10 ոսովուց աւել: Այս հաշուով Մահմուղը ջուղայեցիներից պահանջում էր 1,200,000 ոսովի, բայց յետոյ բականացաւ 700,0 0 ոսովով:

**) Գետրոս Գիլանենց, Կոռուկ», 1863, եր. 188.

հեթեթ զրագարտութիւնը հաստատելու Այսպէս, երբ պարսիկ խաներից մէկը, Ֆրիդօն-խանը, մեծ քանակութիւնը զօրք հաւաքելով, դուրս է գալիս Մահմուղի դէմ, Փէրիայի զաւասում պարսիկները նրան համոզում են թէ բոլոր գժբախտութիւնների պատճառը հայերն են: Այդ գաւառում Շահ-Արասի տարած զալթականութիւնից կազմուել էին հայ գիւղեր, Ֆրիդօն-խանը վճռում է բնաջնջ անել չորս հատ այդ գիւղերից և մի զօրաբաժին է ուղարկում այդ նպատակով: Բայց կոտորածը տեղի չէ ունենում այս անդամ. հանդիպում են աւղան զօրքեր, որոնք փախցնում են պարսիկներին և աղատում հայ գիւղերը: Այս պատահական օգնութիւնը այլ ևս ոչինչ կասկած չէ թողնում պարսիկների մէջ. ուստի երբ նոյն Ֆրիդօն-խանը, օգուտ քաղելով աւղանների հետանալուց, կրկն երեսում է Փէրիայի զաւառում, նրա առաջը դուրս եկած պարսիկները օձիք պատելով, գլուխներին մոխիք ցանելով հաւատացնում էին նրան թէ աւղանների կատարած արիւնահեղութիւնների, աւերմունքների բուն պատճառը հայերն են, որոնք բերել են նրանց պարսիկ երկիրը: Այս անդամ աւղան զօրքեր չը կային և Ֆրիդօն-խանի զօրքերը անպատճիժ սրի քաջնորդն չորս հայ գիւղերի բնակիչներն, իսկ սրից ազատուածներին զերի տարան: Այդ գերիններին աղատեց Մահմուղը իր մի արշաւանքի ժամանակ: Դա էլ մի նոր փաստ էր, որ գալիս էր կատարելապէս հաստատելու պարակական այն առասպելը, թէ աւղանները հայերի բարեկամներն ու դաշնակիցներն են:

Այդ առասպելը սարսափելի աղէտներ ոլատճառեց մանաւանդ ջուղայեղիններին, երբ Պարսկաստանի տէրը Նազիրը դարձաւ: Ահարկու բոնաւորը իր ամբողջ կատաղութիւնը թափեց հայ վաճառականների վրայ. նրա առաջ կրկնում էին նոյն չարախօսութիւնը հայերի մասին և նա հաւատում էր դրանց կամ գոնէ շատ. ձեռնուու էր համարում հաւատացողի նման երիալ: Փառասէր իշխողին հարկաւոր էին դրամական ահազին միջոցներ իր աշխարհակալական ձգտումները իրադորելու և «երկրորդ Ալեքսանդրի» փառքին վայել ճոխութիւններ ցոյց տալու համար: Ուստի նա անողորմ կերպով քամում էր ջուղայեցի վաճառականներին, դուրս էր ծծում այդ երբեմն փարթամ զաղութի վերջին հիւթերը: Նոյն իսկ Հնդկաստանից անհուն հարստութիւններով վերագանալուց յնտոյ էլ նրա աչքը ջուղայեցինների սոկու վրայ էր: 1739 թուականից մինչև իր մահուան տարին, 1747-ը, Նազիրը ստանում էր Զուղայից տարեկան ոչ պակաս քան 10 հազար թուման. բայց եղան ժամանակներ էլ, երբ Զուղան մի տարուայ մէջ տուեց նրան 45 հազար թուման:

Հասկանալի է որ այսքան հարստութիւններ ժողովրդի մէջքից հանելը հեշտ չէր լինի առանդ բռնութիւնների զիմնելու: Եւ Նազիրը, ինչպէս զիտենք, պատիժներ ու գաղանութիւններ խնայողներից չէր մանաւանդ այն միջոցին, երբ նա ընկաւ զարհուրելի կասկածութեան մէջ և ամենայն հեշտութեամբ ստորագրում էր ամբողջ քաղաքներ, ամբողջ համայնքներ բնաջինջ անելու վճիռներ: Դեռ Զուղան, անշուշտ, բախտաւորներից մէկն էր. նրան կողոպատում, մերկացնում էին, նրա մէջ սովորական էր դարձել բնակիչներին տանջելը, ամնն տեսակ բարբարոսական անզթութիւններով փող, հարստութիւն խլելը, բայց և այսպէս, գոնէ թոյլ էին տալիս ջուղայեցիներին ապրել, գոնէ կեանք էին չորհում նրանց, անդադար հարստահարուղի, կողոպտուղի կեանք: Սարսափահար ժողովուրդը անիծում էր «երկրորդ Ալկսանդրին», թէև նա էր իրանին վաղեմի փառք ու մեծութիւն տուղը: Զուղայեցիների զգացմոնը կրնում է ժողովրդական բանաստեղծ Բաղեր օղու երգերի մէջ: Այսպէս է սկսում այդ երգերից մէկը.

Թիւն ձև. *) շուն նագիր սարվանն վեր առեց կրակն,
Ոչ միայն երկումս մարդ չեթող, այլ թամամ աշխարհիս էրվու
մին մին մահակն:
Մահակն էրիտ ողջին մին մին լուծեց լուծ,
Ել ոչ զրուց իմացաւ ոչ ահվալ հարցուց,
Տեծ ու պստիկ ողջին խեղդեց քօռացուց **):

Ի՞նչ էր մնում անել: Փէրիայի գաւառում դանուող միքանի հայ գիւղեր մահմեղականութիւն ընդունեցին: Իսկ ջուջայեցիները հեռանում էին իրանց դժբախտ քաղաքից, լաւ հասկանալով որ Պարսկաստանի մէջ իրերի զրութիւնը ոչինչ լաւ ապագայ չէ խոստանում: Եւ իրաւ, Նազիրի մահից յետոյ երկիրը մատնուեց կատարեալ անիշխանութեան. Իրանի գահը կոռուածաղիկ դարձաւ բազմաթիւ թեկնածուների ձեռքին. ով վրայ էր հասնում, փոքր իշտէ աջողութեամբ գործում, նա էլ ժողովրդի տէրն էր, մասնաւանդ ժողովրդի կեղեքողը: Աւազակութիւնները սոսկալի սանձարձակութեան հասան: Մինչև այդ Զուղան կողոպտողները պարսից Շահերն էին. այժմ զանազան աւազակ ցեղեր, ինչպէս, օրինակ, վայրենի լոսերը, նոյնպէս ձեռք էին հասցնում նրան, աւերում, թալանում: Հեռանալու, անդարձ գաղթելու անհրաժեշտութիւնը գնալով աւելի ստիպողական էր դառնում ջուղայեցիների համար:

*) Ազարիայի թուականն է, որ սկսում է Զուղայի: Հիմնարկութեան օրից:

**) Պատմ. Նոր-Ձաւալու, հատ. I, եր. 268.

Բայց պէտք է նկատել որ պարսից կառավարութիւնը այնքան լաւ էր հասկանում Զուղայի նշանակութիւնը, որ չէր ուղղում զրկուել նրա վաճառականներից։ Գաղթականութիւնը խստութեամբ արդելուած էր և սակայն այդ արդեկքը կարող չեղաւ կանգնեցնել գաղթականութիւնը։ Հայերը տեսակ-տեսակ միջոցների էին դիմում։ հարուստ ընտանիքները երուսաղէմ ուխտ գնալու պատրուակով թոյլտութիւն էին ստանում օրը ցերեկով ճանապարհորդելու և այդ իրաւունքը, ի հարկէ, մեծամեծ կաշառքներով էին ձեռք բերում։ Խակ շատերը պարզապէս փախչում էին. վարձելով հմուտ ջորեպաններ, նրանք գիշերը դուրս էին գալիս իրանց տներից, փակում էին դռները, թողնելով սենեակների մէջ տնային բոլոր իրերն ու կարասիները, բանալին զցում էին կտուրը և վերցնելով իրանց հետ զրաժ, գոհարեղէն և այլ թեթև քաշ ունեցող հարստութիւններ, նըստում էին ջորիների վրայ և սրարչաւ փախչում։

Մէջ տեղ փառաւոր կերպով օգտառում էր Զուղայի քաղաքար Սարգիսը։ Սա, 1739-ին ստանձնելով իր պաշտօնը և տեսներով որ ալան-թալանի ժամանակներ են, ինքն էլ մի կողմից հանդիսացաւ մի բռնաւոր և սկսեց անինայ կեղեքնել իր ազգակիցներին։ Եթէ պէտք էր լինում արքունիքի համար մի քանի հազար թուման հաւաքնել, քալանթար Սարգիսը մի հազարն էլ իր համար էր առնում։ Ազահութիւնը հասցնում էր նրան մատնութի նների, որոնք լաւ միջոց էին խանական անզթութիւններով կաշառքներ կորզելու համար։ Մի կողմից էլ այս վատ մարդն էր փութացնում ջուղայեցիների գաղթականութիւնը, որ նրա համար եկամուտների մի առատ ազբիւր էր։ Բոլոր հեռացողները, մանաւանդ փախչողները, պիտի նախ կաշառքներով փակէին նրա բերանը և ապա մտածէին ձանապարհուելու մասին։ Գաղթականների զգացմունքները, զրութիւնը նկարագրելու համար բերում ենք այստեղ կտորներ մի նամակից, որ գրել են երկք գաղթական եղբայրներ իրանց մօրը, Բասրա քաղաքից, 1753 թուականին *).

Նրաի որ ճշմարիտ կասէք թէ եթէ ձեղ համար լինէինք նեղութիւն քաշում, Աղ բօլբօլ փող կուղարկէինք որ խարջէք և տաք աղա Սարգիս քաղանթարին, որ ձեղ չը նեղացնէր, և մենք կը դաշինք ձեղ զուլուղ, որ ուրախ ապրիք։ Ապա մենք էլ զրոյց ունենք ասելու, այն է թէ մեր պատկենական, հօրենական էսչանք տարէն դատած գովլաթ հանգերձ մեր տաստունքուն երեք չորս տարումն տուինք զալըմին (բռնասորին), հէրիք չէր որ մեր հէր էղ երկրին զօլմին ֆիքրիցն, զասիցն (մտատանջութիւն)

*) Պատմ. Դոր-Ձուղալու, II, էր 296։ Մենք թեթև փոփոխութիւններ մտցրինք՝ գուսածքը աւելի հասկանալի դարձնելու համար։

և երկիողիցն մեռաւ, մեզ եթիմ անմխիթար թողեց, էս էլ դեռ հերիք չեր, որ մարդաղ էր թորքի, վրացուանմխիթար մնացինք, էղ երկրէն փախանք, էսօր քանի տարի է Աստուծոյ ողորմութեամբն և ձեր սուրբ աղօթիւքն էսշանք հոգի քուրդի, հայի, Գրանկի զուլուղ անելով զատեցինք տուինք մեր պարտքերն հաւատացէք ալեսրուել ենք, որպէս ինձ տեսել էք, տասն անզամ աւել եմ ալեսրուել Մին որտիսութիւն չենք տեսել և ուրախութիւն չենք արաբել, ի՞նչ սրտով պիտի զանք էղ երկիւն կամ ինչ ումիտով զանք, երբ տարէն և ամսէն մին թագասուր է նստում, և մի քանի զօվրանայ՝ զուլմն մեղանէ պակաս չէ. էս էլ մեր ազգն յողորովին տեսնում ենք և լսում ենք որ միրա չունեն գան ծուզալ. մենք ինչո՞ւ զանք, չորս հինգ տանում հօ ծուզան տասդ (շէն) չէ մնալու հապէս բաներ տեսնելով և լսելով յուսահասուել ենք մնացել. և ձեր հրամանոց որ խարջուզ չենք ուղարկում և ձեր զրած բարաթները (փոխանակադիր) որ չենք ընդունում, շատ պատճաներ ունենք. որպէս առաջ արդ եմ արել, մէկ էլ արզ անեմ, տեսնում ենք որ իդուր պարտք ենք անում, ձեզ ուղարկում, բայց ձեզ չէ համառում, ձեռներիցդ ուժով կամ յօժար կամքով խլում են և բարաթը որ գրում էք, տասն թուման առնում, քանի էք գրում, տասին հինգն էլ տալիս էք զալբմին, որ տանի քուրթի փոր կոխի, մեզ վրայ մեծութիւն ծախի...

Զեղ ամենքիդ լաւսնի է որ էղ երկիրն մեզ համար իէլ չի տուում. ի՞նչ եղան Խալդարենց երեք օջախն, Շարիմսնենց, Սալընջենց, Զախաթունենց, Բըզզենց, Զամալենց, Գերաքենց, Քատասանենց, Քամալենց, Խօջա-Պօղոսնենց, Խօջա-Նարփակենց, Ֆրանցիստենց, այս Դաւութենց, Խօջա-Նիկողոսնենց, Զիդ-Մուքելենց, Աղա-Բարենց, Փարապանենց, Մէծ-Զահենց և այլ միւս օջախները, որ ձեր հրամանքն էլ, առաւել պատուելի մայրս, լաւ ես տեղեակ! Մէկն էլ չէ մնացել մենք հօ նրանց նօրարը չենք դումայ, չնպէս ասադ և մարդաշատ ու հաստատ թափաւորութեամ ժամանակումն որ նրանք փչացան, մենք մի չորս հինգ տուն էս խարաբ և անհաստատ ժամանակումն ի՞նչպէս պիտի ապրենք, նահի ջան... Մատածիր մեղ և քոյրերիս խոշնա, զնա՛ Մեհրաբ խանի ոտներն ընկիր, պապէ էլ աղաչանք եմ արել որ Մեհրաբ խանի զուլուղումն արդ առի, որ ձեզ դուրս ուղարկի. ի՞նչպէս և լինի, յուսացէք Աստուած, զուր եկէք որ համ քուերք իրանց մուկադիին համեն, համ մենք և համ հրամանքդ ուրախանաս հանգստունս, համ Աստուծով մենք... Առաջ մենակ էլ, չեիր լսում, հիմա երեք եղբայր միատեսն ենք զուր, էլի լսում չես, իրաւունք ունիս, ի՞նչ կը գայ մեր ձեռքից, զոնէ Հափիսիմէն և Մարփամ ջանն ուղարկիր և եթէ Կորելի կը լինի, երկու լաւ աղջիկ էլ հրամանող ձեռքովն նշանիր, ողորկիր մինը պարոն Պօղոսի, մինը պարոն Յոհաննիսի համար. թէ որ չը լինի, թոյլաւորութիւն զրիր որ տեսու համատանիցի և հալէպցի և Զուղաւու Սալցէ-եանց աղջկերք կոն, պատկել տամ: Ի՞նչ էլ լինի, ի՞նչ որ հրամանոցդ կամքն է զրիր և ապա որ իմանանք, ամեն հրամանդ կը պահենք, բայց էն որ գրում ես թէ եկէք Սպահան, չենք լսում... Աղվանի գալը և ծուդու տառապանքն լսեցինք, քանի բուելով զրեցինք որ մտածէշ տեսնէք որ միշտ էղ երկրի զալբմը չէ պակասելու, մի օր առաջ զուրս Ակողը շատ հանգիստ կը լինի:

Այս անսպուեստ, իրական պատիերը Նկարում է մեր տուջն քայքայուած, աւերակնացած բարեկեցութեան ցաւալի տեսարանը: Զուզան երկրորդ անդամ մոխիրների կոյա էր գառ-

նում. այս անդամ նա այլ ես ողոկ չէր գալիս իր տեղից, չէր փոխադրւում օտար, հեռառոր աշխարհ։ Նա մնում էր իր տեղը. բայց ինչ դրսթեան մէջ.—աղքատ, փոքրացած, տխուր ու լալկան։ Փառուոր ապարանքները դատարկ էին կանգնած. այլ ես մարդիկ չը կային որ բնակուէին այդ թափուր ու չքեզ աներում և նրանք քանդուում էին, այդիների տեղեր գառնում։ Քարն անդամ չէր կարողանում պահպանել վաղեմի փարթա- մութեան յիշատակը։ Մնում էր, ինչպէս և Արաքսի ափում, մի մեծ զերեզմանատուն միայն, որ վկայում էր թէ Զուզան ունեցել է մի նախանձելի անցեալ։ Հարիւր և տւելի տարիներ էին անցել այն ողբարի օրերից, երբ Շահ-Արաք զերեվարութեան ականատես երգիչը *) ողբում էր ջուզայեցիներին այսպիսի խօսքերով.

Սիսոս քեզ, Հալոց խեղճիկ ժողովորդ,
Ցիր ու ցան եղաք անմեղ անխորհուրդ...

Այժմ էլ ճիշտ նոյնն էր Զուզայի վիճակը. այժմ էլ ափսոս- սելի էր այդ խեղճիկ ժողովուրդը։ Բայց մենք թողնենք աւե- րակների սրտաճմլիկ տեսքը, աւերուածների ցաւերն ու կսկիծ- ները։ Զուզայեցիների ճակատագրի ներքին խորհուրդն է հե- տաքրքրականը. մենք զիտենք, որ գիրախտ պատահարները, հալածելով նրանց, պատճառ էին գառնում որ այդ մարդիկ օգ- տակար հանգիսանան հայ ազգի համար։ Այս տեսակէտից Զու- զայի զլիին թափուած հարուածները մի-մի գեղեցիկ ժպիտ էին հայութեան համար։

Տարօրինակ չէ այս հանգամանքը։ Ահա Նազիր-Շահի բըռ- նութիւնների ժամանակ, 1743 թուականին, Զուզայի առաջնա- կարդ, հարուստ վաճառական Աղաղարը կամ Եղիազարը ուղար- կում է իր Յաղնաննէս որդուն Ռուսաստան, որպէս զի իմանայ՝ յարմնոր է արգեօք տեղափոխուել այնտեղ և աղատուել անսահ- ման հարստահարութիւններից։ Յովհաննէսը լաւ լուր է բերում և Աղաղարը 1747-ին ընդմիշտ թողնում է Զուզան ու ընտանի- քով գնում Ռուսաստան Այգտեղ նա Լաղարեան տոհմի նա- խայրն է դառնում, այն տոհմի, որի անուան հետ կտպուած են այնքան փառաւոր գործեր և որ մեր պատմութեան մի ամբողջ շրջանն է զրաւում։

Բայց մենք թողնենք առայժմ Լաղարեաններին։ Զուզա- յիցի գողթականների մեծ մասը Հողկասամն է գնում, և մենք նախ այդ մասին պիտի հետեւենք։

*) Ստեփան վարդապետ Տե՛ս օքնար Հալկական», Պետերուրուրդ, 1868, Եր. 134:

II

Հայերը նոր չէին ծանօթանում Հնդկաստանի հետ։ Արևելքի այս ճոխ ու քաղաքակիրթ երկիրը ամենահին ժամանակներից էր հաշակուած իր բնական հարստութիւններով, իր զարմանալի արդիւնագործութեամբ։ թէ աշխարհակալ և թէ վաճառական ազգերի համար զա եղել է նախանձ շարժող, ախորժակ գրգռող մի շքնաղ պատառ։ Դէպի Հնդկական թերակղզին էին գնում մնծամեծ զինուորական բանակներ՝ նուաճումների համար, այնտեղ էին դիմում և առետրական կարաւաններ՝ հընդկական թանկադին ապրանքներ գուրս բերելու և համաշխարհային վաճառանոցներում ցրուելու համար։

Հայերն էլ շատ վաղուց ճանաչում էին Հնդկաստանի ճանապարհը։ Հայաստանը հէնց հնդկական մեծ առետրական ճանապարհի վրայ էր գտնուում^{*)}։ Դեռ Քաենոփոնը պատմում է^{**)} որ պարսից թագաւորը, կամենալով զեսպանութիւն ուղարկել Հնդկաստան, գիմեց հայերին, իբրև ճանապարհը լաւ ճանաչող մարդկանց և առաջարկեց այդ զեսպանութեան ուղեցոյցը լինել։ Պատմում են որ քրիստոնէութիւնը առաջին անգամ Հընդկաստան մտցնողը մի շատ հարուստ վաճառական հայ էր, որ ապրում էր IV դարում և որի անունն էր Մար Թովմա Կանա։ Իբրև թէ այս Թովման էր, որ ընտելանալով բնիկներին, բերել տուեց եպիսկոպոսներ և քահանաներ, նոյնպէս և քրիստոնեայ գաղթականութիւն ասորիներից և այժմեան Մադրասի մօտ շինեց մի փոքրիկ քաղաք եկեղեցիներով ու գարոցներով^{***}։ Բագրատունիների ժամանակ էլ հայ վաճառականները մտնում էին Հնդկաստան։ յայտնի է, որ Սմբատ Երկրորդ թագաւորը Ասիր մայր եկեղեցու համար Հնդկաստանից բերել տուեց մի հիանալի բիւրեղեայ ջահ, որ արժէր 80 հազար ոսկի։

Առետրական յարաբերութիւնները Արևելքի և մասնաւորապէս Հնդկաստանի հետ հայերը զարդացրին միջին գարերից սկսած, երբ կորցնելով իրանց անկախութիւնը և հայրենիքը, գաղթականական կենաքին սովորեցին և առետրին նուիրուեցին։ Նրանք մտան նոյն իսկ Զինաստան, ուր XIV դարի սկզբում մի հայ տիկին կառուցանում է մի մեծ և գեղեցիկ եկեղեցի և մեռնելիս կտակում է նրան ֆրանցիսկեան կրօնաւորներին։ Այս

^{*)} «Հայկ. Տպ.» I, եր. 291.

^{**)} «Եփուոպեղիա», III, գլ. II.

^{***)} «Սիսական», եր. 469։

գէպքը ցոյց է տալիս որ հայ վաճառականը շատ անզամ մենակ չէր կատարում իր համաշխարհային թափառութները. նրա հետ երբեմ գնում էր և նրա կինը, հարկաւոր էր վճում հիմնել փոքրիկ գաղութներ: Այդ տեսակ գաղութներ կային և Հնդկաստանում ու նրա սահմանակից երկիրներում. գեռ 1563 թուականին Հնդկաստանի Աքբարաբատ քաղաքում հիմնում է հայկական եկեղեցի, Հնդկաստանը նոյն իսկ լեհական հայ գաղթականութեան շատ լաւ ծանօթ չուկայ էր: Բայց այստեղ ամենից յաճախ երեացողները ջուղայեցի վաճառականներն էին դեռ այն ժամանակ, երբ բնակուած էին Աքբարի ափին: Իսկ երբ հիմնուեց Նոր-Ջուղան և Շահն-Աբասի պէս հզօր բռնակալը իր հովանաւորութեան տակ առաւ նրան ու ոչինչ չէր խնայում երկրի վաճառականութիւնը զարգացնելու համար, ջուղայեցիները, ի հարկէ, անտես չէին կարող անել իրանցից այնքան մօտիկ գտնուող հոչակաւոր երկիրը, որ ժիր ու խիզախս վաճառականների համար մի կատարեալ ուսկեհանք էր ներկայացնուում:

XVII գարի սկզբից, այսինքն Նոր-Ջուղայի հիմնելու ժամանակից, հայկական յիշատակները բազմանում են Հնդկաստանի սահմաններում և այդ սահմաններից դուրս: Վաճառականութիւնը հային տանում է Բիրման, Սիամ, Հնդկական ովկիանոսի կղզիները — Եաւա, Սումատրա, Փիլիպեան արշավելագոսը, մանաւանդ Մանիլլա քաղաքը: Արգելքները կարծես գոյութիւն չունէին հայ վաճառականի համար. Սպանիան համարեա արգելում էր օտարների մուտքը Փիլիպեան կղզիները, բայց հայերը մտնում էին. Չինաստանի մէջ անզամ, ուր այնքան գտուարութիւններ և արգելքներ կային դրսեցիների, մանաւանդ քրիստոնեանների գէմ, հայ վաճառականները այն աստիճան սովորական երևոյթ էին, որ եզուիտ քարոզիչները այդ վաճառականների պէս էին հաղնուում, որպէս զի կարողանան աղատ մոււաք և աղատ երթեւեկութիւն ունենալ երկրում: Իրանց եռանդուն գործունէութեամբ հայ վաճառականները այնքան կարենոր զիրք բռնեցին Հնդկաստանի տակարի մէջ, որ երկար ժամանակ նրանք համարում էին այդ տուարի գլխաւոր տէրեր, թէև նոյն Հնդկաստանում աւելի մեծ չափերով և աւելի լուրջ կազմակերպութեամբ հայ վաճառականները այնքան կիրք բռնեցին Հնդկաստանի տակարի մէջ, որ երկար ժամանակ նրանք համար հետաքրքրական է թէ ինչպէս եւրօպացիները, դարերի անխոնչ աշխատութեամբ, բոլորովին նուածնեցին Արևելքի այս հրաշալի կտորը. հետաքրքրական է այն պատճառով, որ այդ դանդաղ կատարուող նուածումը հայ վաճառականութեան փարթամ զարգացման հետ զուգընթացաբար էր գնում, իսկ երբ նուածումը

կատարուած իրողութիւն դարձաւ, հայ վաճառականութիւնն էլ մատնուեց անկման և անզառնալի կորստի:

Հնդկաստան անունով սովորաբար կոչւում է այն լայնատարած աշխարհը, որ պարունակում է իր մէջ ամբողջ Հնդկական թերակղզին մինչև Հիմալայեան լեռները: Հին ժամանակներից այդ տարածութիւնը ներկայացնուած էր առանձին անկախութիւնների մի ցանց, ցեղերի, լեզուների և կրօնների մի մեծ խառնարան: Քանի որ նաւադրացութիւնը չէր զարգացած, Հընդկաստանը երեք կողմից յարձակումներից պաշտպանուած էր ծովով: Նուաճողների արշաւանքները գալիս էին ցամաքով, հիւսիսից, ուր թէն բարձրացած են մեր երկրագնտի ամենաբարձր լեռնաշղթանները, բայց դրանց մէջ կան անցքեր, որոնք Հնդկաստան մասնող գոների պաշտօն են կատարուած: Այս պատճառով էլ արշաւանքների ենթարկուած էր զլիսաւորապէս երկրի հիւսային մասը, բուն Հնդկաստանը (իսկական թերակղզին կոչուած է Դէքքան), այսինքն Հինդոս և Գանդէս գետերի հովիաները (Փէնջաբ և Բենգալիա):

Թողնելով աւելի հին արշաւանքները, յիշենք որ Քրիստոսի VII դարից Հնդկաստանում ակսում է հաստատուել մահմետական տիրապետութիւնը: Հետեւեալ դարում արաբները նորից իրանց իշխանութեան ենթարկեցին Փէնջաբը: Բայց այդ փորձերը աջողութիւն չունեցան մինչև X դարը, երբ Ղազնա քաղաքի աւլան-թիւրքական իշխանութիւնը սկսեց հաստատուն հիմքերի վրայ զնել իսլամի տիրապետութիւնը Հնդկաստանուած: XI դարում, Ֆիրդուսիի մեկենաս Մահմուդ-Շահը 17 անզամ արշաւեց գէպի Հինդոսի հովիոր, նուաճումներ արաւ, ահազին հարստութիւնների տիրացաւ: Նրանից յետոյ մահմետականների տիրապետութիւնը զանազան փոփոխութիւններով շարունակուեց մինչև XVI դարը, երբ Հնդկաստանը նուաճեց Աէնկթիմուրի ցեղից առաջացած մէկը, Բաբես անունով, որ հիմնեց «մեծ մօղօնների» թագաւորութիւնը, որ երկարատև գոյութիւն պահպանեց և մի քանի նշանաւոր թագաւորներ առուեց:

Մինչեւ Բաբեսի մօնզօլական զօրքը առաջանում էր հիւսիսից, ծովի կողմից էլ հնդկական ափերին մօտենում էին քրիստոնեայ եւրօպացիները: Դրանք պօրտուգալացիներն էին, այն ժամանակուայ ծովային նշանաւոր պետութիւններից մէկի հպատակները, որոնք դրանից առաջ գտել էին ծովային ճանապարհը Եւրօպայից մինչև Հնդկաստան, որ պատում էր Ս.Քրիկայի արևմտեան, հարաւային և արևելեան ափերով: 1510 թուականին այդ համարձակ ծովագնացները ձեռք գցեցին Գօա նաւահանգիստը Հնդկաստանի արևմտեան ափում, իսկ 1538 թ. նրանք

արդէն անցել էին Հնդկաստանի հիւսիս-արևելեան ծովավը, ուր առևտրական կայարան հաստատեցին այժմեան կալկաթայի մօտ: Պօրտուգալացիների այդ արշաւանքները առևտրական նպատակ ունէին: Բայց դա մի նոր տեսակի առևտուր էր. պօրտուգալացի վաճառականների հետեւում էր հրազէնքը: Հնդկացիները դիմագրութիւն ցոյց տուին, բայց եկոււոր եւրօպացիների թնդանօթները հարկադրեցին նրանց լուել: Այդ սպառազինուած վաճառականութիւնն էր, որ այսուհետեւ սկսեց կամաց-կամաց կլանել հնդիկների մեծ աշխարհը: Նա, այդ նոր երևոյթը, հրաշճներ էր գործում. տիրացաւ ամբողջ առևտրին և Ասիայի ճոխ մթերքներն ու զարմանալի առատ հարստութիւնները լցրեց կիսսաբօն, որ սկսեց ծաղկել, մեծանալ և եւրօպայի ամնաղեղեցիկ կենտրօններից մէկը զարձաւ: Միայն տօրտուգալացին իրաւունք ունէր ծովային ճանապարհներով առետուր անել Հնդկաստանի հետ. և մեացած եւրօպական ազգերը, հնդկական ապրանքներ գնելու համար, պիտի գնային կիսսաբօն:

Բայց անվերջ չէր պօրտուգալացիների տիրապետութիւնը: XVI դարի վերջից նրանց տեղը սկսեց բոնել փոքրիկ, զարմանալի աղքատ և անհիւրասէք բնութիւն ունեցող Հօլլանդիան: Երկու եւրօպական ազգերի մրցութիւնը ուժեղ էր. բայց հօլլանդացիները զլուխ հանեցին այդ մրցութեան մէջ: Նրանց նաւերը տիրապետող հանդիսացան ծովերի վրայ և զէնքի ոյժով հեռացրին պօրտուգալացիներին շատ տեղերից: 1603-ին Հընդկաստանի հետ առևտուր անող մանր վաճառականական ընկերութիւնները միացան, կազմեցին մի մեծ ընկերութիւն, որ ստացաւ «Հնդկական» անունը: Թէ ինչ վիթխարի ձեռնարկութիւն էր դա, երկում է նրանից, որ ամբողջ հարաւային Ասիան, Արաբիայից մինչև Եապօնիա, հօլլանդական վաճառականների ձևոքին էր գտնուում Հնդկական ընկերութիւնը մի ամբողջ պետութիւն էր. նա պահում էր զինուորական գնդեր, իրաւունք ունէր պատերազմ հրատարակել արենելեան իշխողների դէմ, շինել մարտկոցներ և բերգեր, դաշնակցութիւններ կապել, հաշտութեան պայմաններ թելազրել և այլն:

Այդ առևտրական ընկերութիւնը անօրինակ բան չէր այն ժամանակուայ եւրօպայում: Գաղթականական քաղաքականութեան այն ժամանակներն էին, երբ մեծամեծ գործ եր կատարւում էին մասնաւոր առևտրական ընկերութիւնների միջոցով: Անդիմայում էլ գոյութիւն ունէին այդպիսի ընկերութիւններ, որոնք իրանց մէջ բաժանել էին համաշխարհային վաճառանոցները: Այսպէս, XVI դարի կէսից գործում էր Լեվանտեան ընկերութիւնը, որ առևտուր

Էր անում Թիւրքիայի հետ: Արևելքում հօլլանդացիների ձեռք բերած ահազին աջողութիւնները մրցութեան ասպարէզ համեցին անգլիացիներին և այս ընդունակ ազգը հանդէս հանեց իր առևտրական հանճարը՝ բախտաւոր ախոյեանին յաղթելու համար: Անգլիացի վաճառականներն էլ հիմնեցին «Հնդկական Բնկերութիւն», որ հաստատուեց Եղիսաբէթ թագուհու կրովարտակով 1601-ին: Դա այն հոչակաւոր ընկերութիւնն էր, որ վերջ ի վերջո բոլորովին նուանեց ամբողջ Հնդկաստանը և գարձեց նրան բրիտանական ամենագեղեցիկ կայուածներից մէկը:

Սկզբից, երկար ժամանակ, Հնդկական Բնկերութեան գործերը շատ գանդաղ էին առաջանում: Մօնզօլական թագաւորութիւնը այնքան զօրեղ էր, որ եւրօպացիները չէին կարողանում չափից աւել գլուխ բարձրացնել գոնէ այն երկիրներում, որոնք նրա սահմանների մէջ էին գտնում կամ ճանաչում էին նրա իշխանութիւնը: XIV դարի կէսից մինչև XVII-ի սկզբը թագաւորեց Բաբենի թոռն Աքբար-Շահը, որի ժամակ մօնզօլական թագաւորութիւնը հասաւ բարեկեցութեան բարձր աստիճանին: Աքբարը հոչափաւոր է մանաւանդ նրանով, որ անունը միայն մահմեդական էր, իսկ իրօք մի շատ լաւ մարդ էր և ազատամիտ թագաւոր, որ աշխատում էր դրաւել իր բոլոր այլագաւան հպատակների սրտերը, վերացնել կրօնական խարութիւնները. դրա համար նա նոյն իսկ փորձեց հիմնել մի նոր կրօն, որ պիտի եղբայրացնէր կուպաշատ և իսլամ հնդկիներին: Բայց այդ իրավէս մեծ թագաւորը ունեցաւ թոյլ ժառանգներ և ահա միայն սրանց ժամանակ եւրօպացիների և մանաւանդ անգլիացիների գործերը աջող ընթացք ստացան: Անգլիական Բնկերութիւնը իրաւոնք ստացաւ մի քանի տեղերում ֆակտորիաներ (պահեստների, գրասենեալների տեղեր) հիմնելու: Առաջին ֆակտորիան բացուեց Սուրաթ քաղաքում, արևմտեան ծովափի վրայ, 1612 թուականին, Աքբարի որդի Զահանգիր-Շահի թոյլաւութեամբ: Ամբողջ XVII դարի ընթացքում ընկերութեան գլխաւոր ջանքն էր բազմացնել ֆակտորիաների թիւը զանազան տեղերում: Հետզհետէ նա ձեռք է բերում Մադրասը և Կալկաթայի տեղը արևելեան ծովափում, Բօմբէյը արևմտեան ծովափում: Այդ առեւրական կայանները դառնում են փոքրիկ կենտրօններ, որոնց շուրջը խտանում և մեծանում էին գաղութներ, սրանց կառավարութիւնն էլ Ընկերութեանն էր պատկանում: Նշանակւում էին նահանգապետներ, զօրաբաժիններ էին պահելում, պաշտօնէութիւններ էին հաստատում. Բնկերութիւ-

նը, հօլլանդականի նման, ստացաւ պատերազմ հրատարակելու, դաշնագրութիւններ կապելու իրաւունք:

Անգլիացիների օրինակին հետևեցին և ֆրանսիացիները, որոնք 1624-ին հիմնեցին նոյնպէս Հնդկական Առևտրական Ընկերութիւն: Մինչդեռ անգլիացիները փորձում էին զլսաւորապէս հիւսիսային Հնդկաստանի ափերում, ֆրանսիացիները ընտրեցին աւելի հարաւային երկիրներ և ձեռք բերեցին Պօնդիչերի քաղաքը, հիմնեցին այդտեղ մի փոքրիկ գաղթականութիւն: Մըսութեան դաշտը մնաց այդ երկու ազգերի—ֆրանսիացիների և անգլիացիների մէջ. պօրտուգալացիները համարեա այլ ևս չը կային Հնդկաստանի առևտրական հրապարակում, հօլլանդացիները սաստիկ թուլացել էին, որովհետև Անգլիան մի շարք ևս անդուն միջոցներով խլել էր նրանցից տիրապետութիւնը ծովերի վրայ: Բայց XVII դարում դեռ անգլօ-ֆրանսիական մըրցութիւնները ընդհարումների պատճառ չը դարձան: Իւրաքանչիւր գակտօրիա մը ծովախնեայ պահեստ էր մի յայտնի տեղի ապրանքների համար. երկրի ներսերում վաճառականութիւնը հնդկացիների ձեռքումն էր. նրանք կատարում էին միջնորդի դեր, առևում էին ապրանք և վաճառում եւրօպացիներին:

Հայերը Հնդկաստանում երեան էին գալիս իրրե վաճառականների մի առանձին խումբ, որ ունէր իր արտահանութեան առանձին ճանապարհները, իր առանձին շուկաները և առևտրական ճիւղերը: Համեմատել անգամ չէ կարելի հայ և եւրօպացի վաճառականների գրութիւնը: Մինչդեռ եւրօպացիները հանդէս էին զալիս այդպիսի վիթխարի ընկերական կաղմակերպութեամբ, պաշտպանում էին իրանց շահերը զօրքերի և թնդանօժների օգնութեամբ, հայերը շարունակում էին իրանց հին, նահապետական սիստէմով գործել: Նրանք առանձին-առանձին էին առևտուր անում, ցրուած ոյժերով, կամ փոքրիկ, աննշան ընկերակցութիւններով: Զուղայեցի վաճառականների գործավարութիւնը զարձեալ էին ձեր մէջ մնաց: Նրանք բաժանուած էին խոշոր և մանր վաճառականների: Խոշորները փոքրիկ գումարներով փող էին տալիս մանրերին և սրանք գնում էին առևտուր անելու, իսկ զրամատիրոջ տալիս էին շահ 6—12%: Հետաքրքրական է թէ ինչպէս էին նրանք երկրի հում նիւթերը շահագործում: Բամբակի մեծ առևտուր կար նրանց ձեռքում: Հայ վաճառականը գնում էր բամբակ և բաժանում էր բամբակ մանողներին: Ստանալով զրանից թել, նա յանձնում էր կտաւագործներին: Այդ կերպով պատրաստած կտաւը ուղարկում էր Բենգալ-Արաս նաւահանգիստը, որտեղից ապրանքը տարածում էր ոչ միայն Պարսկաստանում, այլ և Թիւրքի-

այում, հասնում էր նոյն իսկ եւրօպական շուկաներին, ուր նայացնի էր «պարսկական կտաւ» անունով *):

Հետևելով իրանց հին, պատեմական դործավարութեան, հայ վաճառականները, այնուամենայնիւ, այնքան առաջադէմ գտնուեցան Հնդկաստանում, որ եւրօպացիների համար լուրջ մրցակիցներ էին հանդիսանում: Այդ հանգամանքի պատճառները ջուղայեցի վաճառականների ընդունակութիւնն ու ճարպիկութիւնն էին. նրանք մտնում էին լնիկ ազգաբնակչութեան մէջ, մտենում էին տեղական կիսանկախ կամ անկախ իշխողներին (ուաջաներին) և բարձր պաշտօնեաներին (նարաբներին), իրանց տակտով ու ազնուութեամբ, իրանց չարքաշ համբերատարութեամբ և բազմամեայ անխոնչ աշխատութեամբ ձեռք էին բերում հաւատ, վատահութիւն և անդադար լայնացնում էին իրանց առևտրական շրջանառութիւնը: Եւրօպացի վաճառականի թիւն ու թիկունքը հրացանն ու թնդանօթն էր. յենուելով ոյժի վրայ, եւրօպացիները, որքան էլ չուղենային, դիմում էին բլունութիւնների: Ծատ վատ յիշատակներ էին թողել մանաւանդ պօրտուգալացիները, որոնք աւաղակային միջոցներով էին ապրանքներ ձեռք բերում, կեղեկում ու հարստահարում էին աղբաբնակութիւնը: Անդէն, խաղաղ հայ վաճառականը այդպէս չէր և լինել չէր կարող: Ուստի նրա գործունէութիւնը այնքան արդիւնաւոր էր նոյն իսկ երկրի համար, որ XVIII դարի վերջերում մօնութիւնութիւն մէկը արտօնութիւններ էլ տուեց: Խաչատուր վարդապետը, որ Զուղայից նուիրակ էր ուղարկուած, կարողացաւ ստանալ հետեւեալ իրաւունքները. 1) Հայոց ազգը ազատ լինի ամեն կողմով. 2) Եթէ հայոց ազգից մէկը մեռնէ, նրա ստացուածքը, շարժական թէ անշարժ, հայոց ազգի սեփականութիւնը պիտի դառնայ, ուրիշները իշխնելու իրաւունք չունենան. 3) «Դալ, միրէս, իարջիխարջէն կէս ուուիի տան, մաքս հարիւրին երեք և կէս, ինչ զգեստ ուղենան հազնեն, ուր կամ մենան գնան, ոչ ոք չը հանդիպի նոցա» **):

Հնդկական առևտուրը ահագին շահեր էր բերում: Եղել են ժամանակներ, երբ անզլիական Բնկերութիւնը օգուտ ստացել է 340 տոկոս ***): Հայերն էլ դիմում էին հարստութիւններ: XVII դարի երկրորդ կէսում ջուղայեցի Յովսէփ Մարգարեանը իր եղբօր հետ ընկերանում է և տոեստուր սկսում Հնդկաստա-

*) Նէրեր—Պատմ. Անգլիոյ վաճառականութեան, թարգմ. Մ. Աղաբէկեան, Կ. Պոլիս, 1882, Էր. 51.

**) «Ազգասէր» շարաթաթերթ, Կալկաթա, 1845, Էր. 125:

***) Գիբբոնս—«Օչերք Իсторія англійской торговли и колоній», ԸՆԲ. 1819, Էր. 8:

նում. մօտ 100 հազար ռուփի գրամագլխով այդ եղբայրները 30 տարուայ ընթացքում ստանում են զուտ արդինք 1,763,000 ռուփի *): Հայ վաճառականի համար սովորական էր գրած գրամագլխի չափ շահ ստանալ առևտորից: Բայց և այնպէս, հայերը Հնդկաստանում չէին կարողանում անկախ գիրք բռնել: Զը կարողանալով միանալ, մեծ գրամագլխում ունեցող մի նշանաւոր ընկերութիւն կազմել, նրանք առանձին-առանձին պիտի կախուած լինէին եւրօպական ընկերութիւններից հէնց այն պատճառով, որ ապրանքներ արտահանելու միջոցներ չունէին, ինչպէս նաև չունէին սեփական նաւահանգիստներ և պահեստների տեղեր: Այս և սրա պէս ուրիշ հանգամանքներ, որոնք հայերի անպատճառատութիւնից և աւանդապահութիւնից էին առաջանում, հարկադրում էին նրանց՝ Հնդկաստանում գործող եւրօպացի ազգերից մէկն ու մէկի հետ միանալ: Բայց ում հետ:

Դեռ Շահ-Աբաս Մեծը, պօրտուգալացիներին գիմազրելու համար, գիմեն էր անզիլիացիների օդնութեան և առևտրական գաշնազրութիւն կնքելով նրանց հետ, շինացրել էր Բէնուէր-Աբաս բանուկ նաւահանգիստը՝ Հօրմուզի ննդուցի վրայ: Կարծես մեծ բռնտորը նախատեսում էր որ հարաւային Ասիան վերջ ի վերջոյ անզիլիացիներին պիտի պատկանէ: Այդ նախատեսութիւնը, կարծես, ունէին և հայերը: Նրանք մօտեցան անզիլիացիներին, իսկ անզիլիացիները շատ լաւ ըմբռնեցին թէ ինչ են հայերը Հնդկաստանի և առհասարակ ասիական առևտրի համար և ինչ ոյժ են ներկայացնում: Այդ ոյժի գէմ մաքասում չառաջացրին նրանք, այլ զիջողութիւններով և համաձայնութեամբ նուածելու քաղաքականութիւնը գործադրեցին:

1688 թուականի յունիսին անզիլիական Ընկերութեան վարչութիւնը մի գաշնագիր կնքեց հայ վաճառականների ներկայացնուցիչ, ջուղայեցի Խօջա-Փանոս Քալանթարի հետ: Այդ գաշնազրութիւնը շատ լայն իրաւունքներ էր տալիս հայերին և հէնց գրանով էլ որոշում էր Հնդկաստանի հայերի ապագայ վիճակը: Ահա ինչ էր ասում նա. 1) Հայ ազգը տիրանում է այն բոլոր իրաւունքներին, որ ունեն անզիլիացի վաճառականները. 2) Հայերին բացարձակ ազատութիւն է տրւում ամեն ժամանակ երթիեկութիւն ունենալ Հնդկաստանից ուրիշ աշխարհներ և ուրիշ աշխարհներից Հնդկաստան՝ Ընկերութեան նաւերով և այն պայմաններով, ինչ վայել է ազատ մարդկանց. 3) Նրանց համար ազատութիւն է բնակուել Ընկերութեան որ քաղաքում, աւանում, բերդում կամենան, առնել, տալ, կալուածներ և աներ զնել, ընտ-

*) Պատմ. Նոր-Ջուղայու, հատ. I, եր. 183:

բուել քաղաքական պաշտօնների համար այնպէս, ինչպէս թէ անդլիացի էին ծնուած. հաւատի և գաւանութեան կատարեալ ազատութիւն են վայելում: Եւ եթէ Ընկերութեան որ և է նահանգապետ կամենայ խանգարել այս իրաւունքները և արտօնութիւնները, այնպիսին չը պիտի պահուի ծառայութեան մէջ: Հարկեր կամ տուրքեր Հնդկաստանում հայերը պէտք է նոյնքան տան, որքան բնիկ անդլիացիները: Այնուհետև երկար ու մանրամասն յիշատակուում է թէ հայերը ինչ ապրանքների համար ինչ մաքս և նաւազարձ պիտի տան: Միայն այդ ապրանքների երկար ցուցակը ցոյց է տալիս թէ որքան: բազմակողմանի ու ճոխ էր հայ առեւտրականների գործունէութիւնը Հնդկաստանում, Հնդկական արշնիպելագոսում, Զինաստանում: Մի ուրիշ, լրացուցիչ թղթով, որ ստորագրուած է մի և նոյն օրը, Ընկերութիւնները, եթէ Ընկերութեան պատկանող որ և է քաղաքում կամ աւանում ապրող հայերի թիւը համոււմ է քառասունի, այդտեղ Ընկերութիւնը պարտաւոր է նրանց հող տալ՝ եկեղեցի կառուցանելու համար, Ընկերութիւնը կառուցանում է նաև փայտէ եկեղեցիներ հայերի համար, իրաւունք տալով նրանց ազգայում, եթէ կամենան. Քարէ եկեղեցիներ շնել փայտեղէնի տեղը, նաև Ընկերութիւնը իր միջացներից եօթը տարւայ ընթացքում տարեկան եօթն փունտ ստերլինգ ոսմիկ է տալիս այն քահանային կամ պաշտօնային, որին հայերը կընտրեն իրանց եկեղեցուն ծառայելու համար *):

Ի՞նչ են ցոյց տալիս այս նշանաւոր արտօնութիւններն ու իրաւունքները—Ամենից առաջ այն, որ հայերը անդլիացիների աջքում շատ կարենոր և մեծ ոյժ էին երկում: Ինքը, Ընկերութիւնը, իր այդ թղթերի մէջ խոստավանում է որ հայերը Հնդկաստանի և առհասարակ Սրբների առետրի մեծ մասը իրանց ձեռքում ունեն, ուստի թէ Ընկերութեան և թէ նոյն իսկ Անդլիայի շահերի տեսակէտից ցանկալի է որ նրանք անգլիական նաւերով փոխազրեն իրանց ապրանքները, փոխեն իրանց առեւտրական ձանապարհը և ուղղակի Անդլիայի հետ յարաբերութիւններ ունենան, որպէս զի անգլիական զանձարաննը մըտնեն նրանց տուած մաքսերը: Ահա այդ օգուաները Ընկերութիւնը գնում էր արտօնութիւնների և ազատութեան գնով, որ տալիս էր հայերին: Անգլիական ազգի հանձարը հէնց որա մէջ է. տիրել է և տիրում է նա երկրագնտի բոլոր կողմերում, բայց ոչ մի տեղ չէ վայսենում ազատութիւն և մարդկային բարձր

*) „Աղքամէր“, 1846, №№ 37 և 39:

իրաւունքներ տալուց հնդհակառակն, նա հէնց այդ ազատութիւններով էլ գրաւում է իր հպատակին, յենուած իր բարձր կուլտուրայի, իր ազգի գիտակցութեան, իր մտաւոր ահազին կարողութեան վրայ:

Հնդկաստանի հայերն էլ հէնց այս միջոցով էին նուաճում: Նրանք իրանց ճակատագիրը կապեցին անզլիացիների հետ, զա նշանակում էր որ նրանք հոգով ու մտքով պիտի հնթարկուեն անզլիացիներին և պիտի զգան այս գրութեան բոլոր քաղցրութիւններն ու դառնութիւնները: Քաղցրութիւն էր, ի հարկէ, վայելել Ասիայի բարբարոս անկիւններում ազատ անզլիացու բոլոր իրաւունքները, գտնել հզօր պաշտպանութիւն, գործունէութեան բոլոր յարմարութիւնները և միենոյն ժամանակ ազատ ու իրաւատէր լինել իբրև տուանձին ազգ. կատարեալ իրաւունք ունենալ պահպանելու և զարգացնելու իր ազգային ինքնուրոյնութիւնը, իր լեզուն, իր գրականութիւնը, իր կրօնական անկախութիւնը: Բայց այդ քաղցրութիւնները տառում էին դէպի ամսխուսափելի դառնութիւն: Մի բուռն ժողուուրդ, այն էլ հայերի պէս մի ժողովուրդ, չը պիտի կարողանար գիմնասիլ, կանգնել երկար և պահպանել իր ազդացին ինքնուրոյնութիւնը: Այդ փոքրիկ ժողովուրդը պիտի խեղդուէր անզլիական հզօր կուլտուրայի ծովի մէջ, մի ծով, որ վերջ ի վերջոյ կ'անհետացնէր ոյդ աննշան մեծութիւնը, թոյլ տալով որ մի ժամանակ եկեղեցիներն ու տապանաքարերը վկայեն թէ եղել են հայեր ու չը կան:

Այդպէս էլ եղաւ: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Մեծ աղքերը, կլանող կուլտուրաները չեն չտապում. հայերը ամբողջ 150 տարի և աւել պահուեցին Հնդկաստանում իբրև հայ: Բայց մենք իրաւունք ունենք բախտը անիծելու, որ Հնդկաստանի հայերը հէնց սկզբից անզլիական ազդեցութեան տակ ընկան: Եթէ հնդկահայերը միմիան իրանց առևտրով, իրանց ահազին շահերով հետաքրքրուէին և բաւականացին, նրանք, ամենաշատը մի անցողակի անուն, մի չնչին լիշտակի թողած կը լինէին մեր պատմութեան մէջ: Բայց նրանք մեզ համար կուլտուրական մեծ ոյժ գարձան, մենք կը տեսնենք նրանց ազգային գրականութիւնը, նրանց դպրոցները, նրանց տուատաձեռն նուէրներն ու կտակները յօգուտ ամբողջ ազգի: Ահա այստեղ հասկանալի է թէ ինչ էր անզլիական ազդեցութիւնը: Նա էր, այդ ազգեցութիւնը, մի զլխաւոր պատճառ, որ ի ընէ ընդունակ, ազգային—հասարակական բնազդներով տոփորուած ջուղայեցին գառնում է աւելի ևս զլայուն, աւելի սրարտաստուկամ, պարտաճանաչ: Թէի մեծ մասամբ կիսողրազէտ վաճառու-

կան, նա իր ժամանակի աղջայիններից առաջ է ընկնում. իսկ կական հայրենասէր էր նա գեռ այն ժամանակ, երբ հայրենասիրութիւնը մնեղանում խեղզուած էր եկեղեցու, կրօնական ծէսերի հետ կապուած նեղ հասկացողութեան մէջ. նա առաջին անդամ հիմնում է պարբերական մամուլ, նա սիրում է զիրքն ու զպրութիւնը և իր հեռաւոր պանդիտութիւնից դասեր ու խրատներ է տալիս հայութեան, քաշում է նրան դէպի առաջ:

Չէ կարելի, ի հարկէ, ասել թէ բոլոր հնդկահայերն էին այդպէս: Ոչ, նրանց միծամասնութիւնը իսկական վաճառական էր, այսինքն սեփական շահի, սեփական բարեկեցութեան սորուկ: Հնդկահայերի պատմութիւնը պահել է մի շատ պերճախօս փաստ, որ ցոյց է տալիս թէ ինչ անհեթեթութիւնների ու վայրենութեան էր համառում անչափ աջողութիւններից և անսպասելի հարստութիւններից յղփացած վաճառականը: Այդպիսիններից էին Սուրաթի հայերը XVIII դարի երկրորդ կէսում: Հաւանելով բարեկեցութեան այն աստիճանին, երբ մարմնապաշտութիւնը և կերուխումը գաճանում են միակ հասկանալի սրբութիւն, այդ վաճառականները իւրաքանչիւր օր ինձոքը էին հաւաքւում մէկի կամ միւսի տանը: Խնջոքը շքեղութեան և զեղխութիւն բոլոր կարգ ու կանոններով էր տանւում: արքեցութիւն, անչափ ուտել, պարեր, երաշշտութիւն, կանաքը: Բայց այս բոլորը բաւականասութիւն չէր տալիս հայ բարժուաներին: Եւ նրանք, իրանց ուրախութիւնը աւելի աղջու և հետաքըրքական գարձնելու համար, խելք խելքի են տալիս ու եկեղեցական կարգերն են իրանց լրտութեան առարկայ դարձնում: Քէփ անողներից մէկը եպիսկոպոս էր դառնում, միւսը քահանայ, սարկաւագ, սարկաւագուհի, դպիր, երգում էին եկեղեցական երդեր, կատարւում էին կրօնական արարողութիւններ: Այսպէս, երբ պարող կանաքը սկսում էին հագնել իրանց պարի շորերը, վաճառականները սկսում էին երգել «Խորհուրդ խորին» երգը, կամ երբ սկսում էին «Փառը ի բարձունս» երգը և հասնում էին այն տեղին, ուր ասւում է «Ցոյց մեղ, Տէր, զողորմութիւնս քո», ամենքը վեր էին կենում և համբուրում էին պարող կանանց ծծերը *):

Այսպիսի տարր էլ կար հնդկահայ վաճառականութեան մէջ: Նոյն պատմութիւնը տալիս է մեղ և վերին աստիճանի գծերի ու շահամոլ մարդկանց տիպեր էլ **): Բայց հնդկա-

*) Պատմ. Նոր-Զուզակու I, եր. 188.

**) Այդպիսիններից մէկն էր և Թափաբէկեան վարժարանի հիմնադիր նդուարդ Ռափալէլ Ղարամեանը. նրա կեանքից մի շատ տղեղ, ուղղակի

հայերի բախտն այն էր, որ նրանց մէջ շատ կային պատուաբեր, արժանաւոր անհատներ. և այդ բախտաւոր առատութիւնը, որ միանգամից չէր առաջ գալիս, այլ հետզհետէ, տարիների ընթացքում, տուեց նրանց այնքան նախանձելի դիրք հայութեան մէջ։ Այստեղ մենք պէտք է չը մոռանանք և այն, որ բոլոր հայ վաճառականները չէին անզիական ազգեցութեան տակ գտնուում։ Կային և այնպիսիները, որոնք վաճառականութիւն էին անում ֆրանսիական մասում, Պօնդիշէրիում, ինչպէս նաև քիչ չէին և այնպիսիները, որոնք գործում էին անկախ եւրօպական ընկերութիւններից, ուղղակի ընկերի մէջ, մօնուոլ թագաւորների հովանաւորութեան տակ։ Այստեղ հայերը յաճախ թողնում էին վաճառականի զբաղմունքները և հասնում էին նոյն իսկ ուաջայի (մեծ զօրապետ, իշխան) աստիճանին. նրանց ազգեցութիւնը այնքան մեծ էր որ երկրի բուն տէրերին իրանց ուղածի պէս էին շարժում և ահազին հարստութիւններ հաւաքում *). Այդ դիրքից և աղղեցութիւնից օգտում էին եւրոպացիները։ 1644 թուին անզիացիները մտան Բենզալիա, առևտուր անելու համար։ 1651-ին նրանք մի զեսպանութիւն ուղարկեցին Շահ-Զահանի մօտ և այդ զեսպանութեան առաջնորդն էր հայ վաճառական Աղա-Մահրազը։ Դեսպանութեան հետ էր մի անզիացի բժիշկ, որ բժշկոց Շահի աղջկան և փոխարէնը խնդրեց որ մօնուոլ կայսրը նորհ անէ Բենզալիա մտած անզիացիներին։ Շահը կատարեց այդ խնդրքը և անզիացիները հաստատուեցան այն տեղում, ուր յետոյ գոյութիւն ստացաւ կալկաթա քաղաքը։ 1669 թուին Հնդկաստան գնաց Ֆրանսիական Ընկերութեան դիրեկտոր Կարօնը։ Հիմնելով ֆրանսիական առաջին ֆակտորիան Հնդկաստանում, Կարօնը մարդիկ ուղարկեց երկրի զանազան կողմերը՝ նոյն տեսակ առետրական հիմնարկութիւնների տեղեր պատրաստելու և տեղացի իշխողների հետ համաձայնութիւն կայացնելու համար։ Այդ մարդկանցից մէկը հայ էր, Մարգար անունով **):

Թէև հայերը այսպէս ցրուած էին Հնդկաստանի զանազան կողմերում, գտնուում էին զանազան դիրքերի մէջ և զանազան ազգեցութիւնների տակ, բայց մենք իրաւունք ենք համարում նկատի առնել միայն անզիական ազգեցութիւնը. և այս այն պատճառներով, որ նախ հայ վաճառականների մեծ մասն էր

զգուշելի փաստ պատմում է Ս. Վարդ. Թէոդորեանը („Պատմ. Խորագեան վարժարանին“, Պարիզ, 1866, հատ. I, էր. 44):

*) Հ. Զաղընեան—„Պատմութիւն Հայոց“ Վիեննա, 1872, էր. 411:

**) Լավուս և Ռամբո—„Վсехобщая Ист.“, т. II, էր. 801—805.
„Աղղասէր“, 1845, № 14.

գտնւում անզլիական կալուածներում, երկրորդ՝ այդ մեծամասնութիւնն էր, որ ցոյց տուեց հանրային մի լուսաւոր գործունչութիւն, մինչդեռ միւս տեղերի հայերը թողել են յիշատակներ միայն իրանց հարստութեան և փառքի մասին։ Վերջապէս կայ և այն հանգամանքը, որ ի վերջոյ բոլոր հնդկահայերը, ինչպէս և ամբողջ Հնդկաստանը, մտան անզլիական տիրապետութեան տակ։ Այնպէս որ թէ բնիկների մէջ և թէ քրանսիական կալուածներում ապրող հայերին կարող ենք մի կողմ թողնել։

Անզլիացիների հետ ապրող հայերը վազ են սկսում ենթարկուել անզլիական կուլտուրային, կրթութեան։ Դեռ XVIII դարի առաջին քառորդում, դեռ այն ժամանակ, երբ անզլիացիները Հնդկաստանում շատ գօրաւոր դիրք չէին ձեռք բերել, մենք տեսնում ենք հայ մեծատուն ընտանիքներ, ուր անզլիացի ուսուցիչներ կան։ Մովսէս Խորենացու պատմութիւնը առաջին անգամ ամբողջավին լատիներէնի^{*)} լարգմանողները, Վիճելմ և Գէորգ Վիստօն եղբայրները, հայերէն սովորել էին իրանց հօրից, որ Մագրասում ուսուցչութիւն էր անում Գրիգոր Ազափիրեան անունով հայի տանը։ Սհա անզլիական ազգեցութեան օգուտների հէնց մի առաջին, թէ կողմնակի փաստ։ Հայերի մէջ առաջացաւ մի այնպիսի անզլիասիրութիւն, որ նրանցից շատերը իրանց անձնական աջողութիւնն ու շահերը կապեցին Անզլիական Ըսկերութեան բախտի հետ այնպիսի ժամանակներում, երբ Ըսկերութիւնը շատ դառն, նոյն իսկ օրհասական դրութեան մէջ էր գտնւում։ Մենք պարտաւոր ենք մի թուցիկ ակնարկ գցել այդ Ըսկերութեան պատմութեան վրայ, որպէս զի հասկանանք թէ անզլիական գործավարութիւնը Հնդկաստանում դաստիարակչական լինչ տեսակ ազգեցութիւն կարող էր ունենալ հայերի վրայ։

Եւրօպացիների առետրական աջողութիւնները կախուած էին այն հանգամանքից թէ որքան բարեհած արամազրութիւն էին ցոյց տալիս տեղացի իշխողները, մանաւանդ «միծ մօգօլները» գէպի այդ վաճառականները։ Իսկ բարեհածութիւն ցոյց տալը կախուած էր այն հանգամանքից թէ որքան ուժեղ կամ թոյլ է այս կամ այն իշխողը, թագաւորը։ Մենք տեսանք որ Աքբար-Շահի թոյլ յաջորդները իրաւունք տուին անզլիացիներն առետրական պահեստներ և գրասենեակներ հասաւաել իրանց ուղած մի քանի տեղերում։ Որքան թոյլ ու անկարող էին իշխողները, այնքան լաւ էին գնում եւրօպական ըսկերութիւնների գործերը. այդ գէպքում եւրօպացիները զինուորական ոյժն

^{“)} Տպուած է Լոնդոնում, 1736-ին։

Էին իրանց իրաւունք գարձնում և առնում էին զօռով այն, ինչ չէին տալիս յօժար կամքով։ Բայց ահա XVII դարի երկրորդ կէսից (1660-ից) թագաւորում է Առուբէնդ-Զէրը, մի կարող, ուժեղ միապետ, որ նուածումներ է անում, մեծացնում է մօնոգոլների թագաւորութիւնը, բայց Աքբար-Շահի հակապատկերն է—մի ֆանատիկոս մահմեդական, որ ամբողջ ժամանակի մտածում է մարգարէի կրօնը տարածելու և տիրապետող գարձնելու մասին։ Այդ բարեպաշտական մակերը իրականացնելու համար նա, ինչպէս վայել է մոլեռանդ ազանդաւորին, զիմում է բարբարոս բռնակալութեան ամենախիստ միջոցներին, յենուելով իր ահազին ոյժի, իր յազդթութիւնների վրայ։ Հնդկաստանում բայց ւում է երկարատև պատերազմների, այն էլ կրօնական պատերազմների մի մեծ շարք, տեղացի ոչ խսլամ ազգաբնակութիւնը կեղերում է, ենթարկւում ծանր վիրաւորանքների և վերջապէս ապստամբութեան է զիմումը՝ իր հին ազգային սովորութիւնները, իր կրօնական հաւատալիքները պաշտպանելու համար։ Ապստամբութիւնները, ի հարկէ, ճնշում են սոսկալի անզիթութիւններով։ Առուբէնդ-Զէրը այդպէս թագաւորեց մինչև 1707 թուականը։ Ճիշտ է, նա ստեղծեց մի ահազին սկսութիւն, նուածնելով և իր երկաթէ ձեռքին հպատակելինելով համարեա ամբողջ Հնդկական թերակղզին, բայց հէնց այդ մեծութիւնն մէջ թագնուած էր մի անդիմադրելի քայլայում, որ միայն աջող հանգամանքների էր սպասում։

Այդքան մոլեռանդ սիւննիի ժամանակ եւրօպացի քրիստոնեայ վաճառականները, ինչ ասել կ'ուզէ, չափ վաս պիտի համարէին իրանց գրութիւնը։ Վնասուեցին մանաւանդ անզիացինները, 1686 թուականին նրանց սկսեցին նեղել Բենգալիայում։ անզիացինները փորձեցին զէնքի ոյժով գիմազրել, բայց զրանով միայն կատաղեցրին Առուբէնդ-Զէրին, որի ուզարկած բանակը ջարդեց անզիացիններին և դուրս վնագեց նրանց Բենգալիայից։ Բոլոր անզիական գաղութները թէ արևելան և թէ արևմտեան ծովափում կողոպտուեցան։ Հնդկաստանը համարեա թէ բոլորովին կորած էր անզիական վաճառականների համար։ և նրանք, ուրիշ ճար չը գտնելով, ստիպուած եղան խոնարհուել ահարկութագաւորի առաջ և իրանց հնազանդութիւնը յայտնել։ Այդպէս միայն նրանք կարողացան մնալ Հնդկաստանում։ Յիշենք որ հէնց այս տիսուր ժամանակներում էր որ կնքուեց վերոյիշեալ դաշնագրութիւնը Ընկերութեան և հայ վաճառականների մէջ։ Սա էլ մի ապացոյց է, որ անզիացինները շատ կարօտ էին հայերի աջակցութեան։

Տիսուր ժամանակներն անցան, հէնց որ մեռաւ Առուբէնդ-

Զէբը։ Նրա պետութիւնը, որի մէջ կուտակուած էր այնքան գիրոհութիւն, այնքան թշնամութիւն, սկսեց պատառ-պատառ լինել, ցրիւ դալ. Նրա յաջորդներն էլ թոյլ ու ողորմելի էին, գլուխ բարձրացրին տեղական իշխողները, անկախութիւն հաստատեցին իրանց համար. «մեծ մօջօլի» թագաւորութիւնը համարեա ոչնչութեան հասաւ։ Ահա այդ ժամանակ էլ սկսուեց Հնդկաստանի իսկական նուաճումը եւրօպացիների ձեռքով։ Անզիւացիների և Փրանսիացիների մէջ սկսուեց մրցութիւն. իւրաքանչիւր կողմը աշխատում էր գրաւել ուաշաներին, նարարներին և սուբաքներին և այս իշխողները պատրաստ էին անցել այն կողմը, որ շատ փող էր տալիս։ Այդ մրցութիւնների մէջ Փրանսիացիները մեծ աջողութիւն ձեռք բերին. Ֆրանսիական Ընկերութիւնը աշխատում էր մեծ եռանդով, գործադրելով թէ նուրբ քաղաքականութիւն, թէ զէնք և թէ զրամ։ Ֆրանսիական Հնդկաստանում երևան են գալիս խելքի և ընդունակութիւնների տէր, տաղանդաւոր գործիչներ, որոնք կառավարիչների, ծովապեանների պաշտօններում ցոյց են տալիս կամքի ոյժ, քաղաքական նրբամտութիւն։ Դրանց մէջ շատ նշանաւոր է մանաւանդ Դիւալիք, Ֆրանսիական Ընկերութեան նահանգապետը (1741—1754)։ Լաւ զգալով, որ մօնգոլական պետութիւնից միայն մի խեղճ ուրուական է մնացել, Դիւալիքն յղանում է և գործադրել է սկսում մի համարձակ միագր—նուածել Հնդկաստանը զէնքի ոյժով, նուածել հէնց հնդկացիների ձեռքով. այլապէս այդ հարուստ երկիրը շահագործել չի լինի։ Մինչև այդ՝ Փրանսիական և անզիւական ընկերութիւնները լոկ առետրական հիմնարկութիւններ էին. Նրանք չէին էլ մտածում հողեր ձեռք բերելու մասին, այլ աշխատում էին լաւ շահուել առետրից և օգուտներ տալ բաժնեաէրերին։ Դիւալիքն իր Ընկերութիւնը դարձնում է մի պատերազմող, աշխարհակալ պետութիւն. Նա տեղացի հընդիկներից զօրագնդեր է կազմում, կրթում է նրանց եւրօպական սիստէմով և ահազին հոչակ է ստանում Հնդկաստանում, գառնում է մի տեսակ թագաւոր։ Սկսում են պատերազմներ, բայց զրանք շատ շուտով կորցնում են իրանց բուն նպատակը և գառնում են երկու եւրօպական ազգերի արիւնահեղ ընդհարումներ Հնդկաստանի հողի վրայ։

Անզիւական Ընկերութիւնը քնած չէր, թէն չունէր, Փրանսիականի նման, նշանաւոր գործիչներ։ Նա էլ դիմեց նոյն միջոցներին, նա էլ դարձաւ պատերազմող պետութիւն. և որովհետեւ միակ այդ երկու մեծ մարմիններն էին միմնանց արժանի, միմեանց համահաւասար մրցակիցներն ու ախոյեանները Հնդկաստանի առետրական հրապարակում, ուստի նրանք էլ

յարձակուեցան իրար վրայ՝ համեղ որսից առիւծի բաժին ստանալու համար։ 1743 թուականին Անգլիան էլ մտաւ այն պատերազմի մէջ, որ մզւում էր Եւրօպայում աւստրիական ժառանգութեան պատճառով։ այդ պատերազմում նա Ֆրանսիայի հակառակորդն էր։ Եւրօպայում տեղի ունեցող պատերազմը առիթ դարձաւ, որ ֆրանսիական և անգլիական ընկերութիւններն էլ Հնդկաստանում իրար գէմ կուռեն։ Եւ 1746 թուին ֆրանսիացիները խլեցին Մագրասում անգլիացիների ձեռքից։ Այսուեղ յայտնի դարձաւ թէ ինչպէս ևն հայերը վերաբերւում անգլիացիներին։ Մագրասում ապրում էր ջուզայեցի շատ նշանաւոր և շատ հարուստ վաճառական Պետրոս Ռուկանեանը։ Միայն Մագրասում նա ունէր 33 տուն Պետրոսը վախաւ քաղաքից և ֆրանսիացիները քանդեցին նրա բոլոր սնները, գրաւեցին նրա բոլոր գանձերն ու հարստութիւնները և տարան Պօնդիշէրի։ Դիւտլէն մարդ ուղարկեց հայ վաճառականի մօտ, խոստացաւ վերադարձնել նրա բոլոր ստացուածքները, եթէ նա կ'անցնէ ֆրանսիացիների կողմք։ Բայց Ռուկանեանը մնրժեց այդ առաջարկութիւնը։ «Ինչ հարստութիւն ունեմ, անգլիացիներից եմ ստացել, —պատասխանեց նա, —և պարտաւոր եմ համարում ինձ բոլորովին հաւատարիմ մնալ անգլիացիներին»։ Դրա հետ հպարտ մնածատունը խնդրում էր, որ իր զանձերը բաժանեն աղքաններին, որովհետեւ, աւելացնում էր նա, չեմ կարծում որ ֆրանսիական մեծահամբաւ պետութիւնը կարօտ լինի իմ չնշն ստացուածքներին» *):

Անգլօ-ֆրանսիական ընդհարումները երկար տևեցին Հընդկաստանում, յամառ էին, բազմաթիւ։ Դիւտլէն շատ գեղեցիկ կերպով էր կաղմել Հնդկաստանը նուածելու ծրագիրը, բայց այդ բանը ֆրանսիացիներին չէր տուած. անգլիական հանճարն էր, որ փոխ տուած ֆրանսիացիների միտքը, առաջ տարաւ և զլուխ հանեց նրան։ Անգլիական Ընկերութիւնն էլ ունեցաւ իր հանճարեղ զօրավարը. դա լօրդ Կլայվլ էր, որ անգլիական զէնքի փառքը տարածեց Հնդկաստանի բոլոր անկիւններում և կատարեալ յաղթանակ պարգևեց անգլիացիներին։ Ֆրանսիացիները, Դիւտլէի հեռանալուց յետոյ, ստիպուած էին տեղի տալ իրանց հզօր ախոյնանին. հետզհետէ նրանք կորցրին իրանց բոլոր կալուածները, այնպէս որ XVIII դարի 60-ական թուականներին ֆրանսիական տիրապետութիւնը Հնդկաստանում համարեա թէ ոչնչացաւ, ասպարէզը թողնելով միայն անգլիացիներին։ Բայց ֆրանսիացիների հեռանալը չէր նշանակում թէ անգլիացիները

*.) Պատմ. Նոր-Զուղայու, I, եր. 134.

առանց, որ և գժուարութեան տիրայան Հնդկաստանին: Ոչ, դա միայն մի քայլ էր, իսկ վերջնական նպատակին հասնելու համար դեռ երկար ճանապարհ կար և այդ ճանապարհը Անդկական Ընկերութիւնը անցաւ երկար տարիների ընթացքում, մինչև XIX դարի կէսը: Տեղացի բազմաթիւ իշխողներին, աւագակային ցեղերը կամ զէնքի ոյժով կամ ոսկով նուաճելու մի ճանապարհ էր դա:

Այդ անվերջ պատերազմներից միայն մէկը կը յիշատակենք մենք: 1763 թուականին անդլիացիները ստիպուած եղան զէնք գործ ածել Միր-Կասրմի դէմ, որին իրանք էին նշանակել հարուստ թենգալիայի տէր: Միր-Կասրմը, զգուելով անդլիացիների հարստահարութիւններից, զօրքեր հանեց նրանց դէմ և մի շարք պատերազմներ սկսեց, որոնք մղւում էին մեծ հմտութեամբ և յամառութեամբ: Մեղ համար հետաքրքրականն այն է, որ Միր-Կասրմի բանակի հրամանատարը մի հայ էր, Գօրգի կամ Գրիգոր-խան անունով, որ խելացի և կտրիծ դիմուորականի համբաւ էր վայելում: Յայտնի է և նրա եղբօր անունը—Պետրոս, որին նա մեծ փառքի հասցրեց: Աւելի հետաքրքրական է այն, որ Միր-Կասրմի բանակում կար և հայ զօրախումբք Բացի Գրիգոր-խանից, այդուեղ կային և երկու հայ զօրավարներ՝ Մարգար և Յարութիւն. որանք իրանց քաջութեամբ մեծ անուն համացին և երկար ժամանակ աջողութեամբ զիմաղրում էին անդլիացիներին: Բայց վերջը, ինչպէս երեսում է, անդլիացիների կողմնակից գարձան, գաւաճանեցին Միր-Կասրմին ու Մենգալիան անդլիացիների ձևորում թողեցին: Այդ արարուուժի համար նրանք մեծ պատիճ կրեցին. բայց վատ անուն ժառանգելուց, կորցրին իրանց հարստութիւնն էլ, փառքն էլ *): Այսպէս ահա, Հնդկաստանում մենք բացի շահով ու բեռներով հոչակուած հայերից տեսնում ենք և այնպիսիներին, որոնք փառք ու հարստութիւն նուաճել էին զիմաւորի հուժկու բազուկով և զօրավարի ընդունակութիւններով:

Հնդկաստանի այս խառնաշփոթ ժամանակներն էին, երբ Զուղայից փախչողների հօսանքը, առժամանակ կանդ առնելով Բարայում, անցնում էր Հինդոսի և Գանգէսի ավելոր: Այդ հոսանքը գնում էր ստուարացնելու հնդկահայ դաղթականութիւնը, գնում էր մի նոր ու ճոխ հայրենիք կազմելու:

I. I. 0

(ԱՐ ՇԱՐՈՒՅՆԱԿՈՒԹԻ)

*.) Պ. Ճարեան—«Սկզբունք պատմութեան Եղաց», Վենետիկ, 1846, էր. 937.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

33) Karl Kannenberg „Kleinasiens Naturschätzte“ 278 S. mit 31 Vollbildern und 2 Plänen. Կարլ Կանենբերգ „Կանանինքներգ, Փոքր-Ասիայի բնական հարատութիւնները“ 278 էրես, 31 պատկերով և 2 յառակադուկ:

Խնչպէս յայտնի է, վերջին տարիների ընթացքում Գերմանիան զգալի կերպով մտերմացել է Թիւրքիայի հետ և նրա հովանաւորի գերն է կատարում: Վիխելմ II և Արդուլ Համբուրու ոչ մի առիթ բաց չեն թողնում, որպէս զի միմեանց փոխադարձ սէր ու յարգանք չարտայայտեն:

Սյդիմի մաերմութիւնը գերմանական կամիշալի համար բաց է արել մի դիւրընթաց ուղի դէպի արեւելք, դէպի Փոքր-Ասիա: Շահատէր գերմանացիները շատ լաւ հասկանում են այդ իրողութիւնը և ամենայն ջանք ու նուանդով աշխատում են օգտուել բարեբաստիկ հանգամանքներից: Նրանք Փոքր-Ասիայում հիմնում են նորանոր գաղութներ, սկսում են նորանոր ձեռնարկութիւններ, որոնց շաբքում Բաղդադի երկաթուղին «զլուխ գործոց» կարող է համարուել:

Սակայն նախ քան ձեռնարկութիւնների դիմելը անհրաժեշտ է տեղական պայմաններին ծանօթանալ, հարկաւոր է երկիրը ուսումնասիրել: Եւ գերմանացիները մեծ ընդունակութեամբ կատարում են այդ միսսիան: Իրեւ ապացոյց բաւական է յիշել այն փաստը, որ միայն վերջին տարիներում այդ ուղղութեամբ գրուած գրքերի ու լրագրական յօդուածների թիւը տասնեակների է հասնում:

Ահա մի այգափափ ուսումնասիրութիւն է ներկայացնում և Կաննենքներգի աշխատութիւնը, որ իր հարուստ տեղեկութիւններով օգտակար կարող է լինել ոչ միայն գերմանացիներին, այլ և բոլոր այն մարդկանց, որոնց մեծ կամ փոքր չափով հետաքրքրում է Փոքր-Ասիայի տնտեսական կեանքը:

Հեղինակն անմիջապէս ծանօթ է եղել երկրին և բացի

գրանից իր ձեռքի տակ ունեցել է հարուստ նիւթեր զանազան լեզուներով, ուստի և նրա աշխատութիւնը չունի այնպիսի վայրիվերոյ դատողութիւններ, այնպիսի իուզոր սխալներ, որոնցով սովորաբար լի են լինում թիւրքիայի մասին գրուած գըրքերից շատերը:

Նա բաւական մանրամասն նկարագրում է Փոքր-Ասիայի ընտանի ու վայրենի կենդանիները, բոյսերը, հանքերը: Տեղտեղ առաջ է բերում վիճակագրական տեղեկութիւններ և միշտ յիշում է խօսուած նիւթի մասին գոյութիւն ունեցող գրականութիւնը:

Հեղինակի հազորգած փաստերից երեսում է, որ անասնապահութիւնը բաւական տարածուած է Փոքր-Ասիայում: Նըրանով պարապում են գլխաւորապէս մահմետականները, քիւրդերը, թիւրքերը և այլն: Ամենատարածուած կենդանին է ոչխարը: Ոչխարների մեծ քանակութեամբ առանձնապէս յայտնի է Անգօրայի վիլայէթը, որտեղ 1894 թ. 1,603,242 զլուխ ոչխար է եղել: Զափաղանց հոչակուած է նոյն վիլայէթի այծը իր գըֆտիկով: 1894 թ. այդտեղ եղել է 1,230,052 այծ:

Երկրագործութիւն. Դեռ հին դարերում Փոքր-Ասիան յայտնի էր իր պաղատու հողով և առատ ու քաղցրահամ հայտահատիւներով: Սյժմ էլ բնական պայմանները մնացել են նոյնը, սակայն մարդկային յարաբերութիւնները փոխուել են, ուստի արդիւնագործութեան այդ ճիւղը շատ յետամենաց զրութեան մէջ է ընկել: Մշակուում են միայն ամբողջ երկրի 40—45%, բայց գրա $\frac{3}{4}$ էլ կազմում է վակուոֆ, այսինքն մղկիթների սեփականութիւն, այնպէս որ ամբողջ երկրի միայն 10% է ժողովրդական սեպհականութիւն կազմում:

Գալով հարկերին, պէտք է նկատել, որ դրանք այնքան բազմաթիւ են, այնքան ծանր, որ շատ անդամ գիւղային ստիպուած է լինում իր ամբողջ եկամուտի 40% վճարել: Դըրանից յետոյ հասկանալի է, թէ ինչու շատ հողեր անմշակ են մնում, թէ ինչու երկրագործ ժողովուրդը գերազասում է պանդրխտել, քան թէ դժոխային պայմաններում երկրը մշակել:

Երկրի պաղաբերութեան մասին աւելի շշափելի գաղափար տալու համար հեղինակը յիշում է, որ վատ բերքի ժամանակ հացահատիկները տալիս են մէկին—3—4, միջակ բնրքի ժամանակ—մէկին՝ 15—20, իսկ ամենալաւի ժամանակ—մէկին 40—50.

Հաների կողմից էլ աղքատ չէ Փոքր-Ասիան, միայն ի հարկ է ամեն ինչ թագնուած է ու անօդաւակար, որովհետև հետապօտող—մշակող չը կայ: Պատմաբանների հաղորդած տեղե-

կութիւններից երեսում է, որ Տմօլուս (այժմ Բողդաղ) սարից հոսող Պատկոլուս (այժմ Ղարասու) գետը հարուստ է եղել ուկեխառն աւագով։ Այդ գետն է եղել կրեսոս թագաւորին առատ ոսկի մատակարարողը։ Խսկ այժմ... թիւրք կառավարութեան անհոգութեան պատճառով նրա մասին մտածող էլ չը կայ։

Արծաթի հանքերով յայտնի են Գիւմուշխանչ, Կարասիսար (Սիվաղի վիլայէթում), Դենիք մագան (Ղզլիրմաղի մօտ), Բերան մաղած (Եփրատի ափին), Բուլղար Դաղ (Կոնիայի մօտ), Բալիս և այլն։

Կան և երկաթի, պղնձի, արձճի, աղի, քարածուխի հանքեր, բայց մեծ մասամբ անհոգութեան մատնուած։

Փոքր-Ասիայի բազմաթիւ բնիսերից առանձին ուշադրութեան արժանի է ծխախոտը, որի մենաշնորհը գտանուում է Regie ընկերութեան ձեռքում։ Այդ ընկերութիւնը վճարում է տարեկան 750,000 ոսկի «Dette publique», 80% վերցնում է իր կապիտալի համար, իսկ մնացած ամրող օգուտը բաժանում է իր և կառավարութեան մէջ։

Պայմանագրի համաձայն ոչ ոք իրաւունք չունի իր ցանած ծխախոտը գործածելու կամ բայց Regie-ից ուրիշին ծախելու։ Regie-ին էլ վճարում է սովորաբար 7—10 պիսատեր մէկ հոխայի համար.—Այդպիսի վիճակը մի կողմից թանդացրել է ծխախոտի արժէքը, իսկ միւս կողմից կաշկանդել նրա ազատ մշակութիւնը...

Պ. Կանոնընքերգ տեղատեղ խօսում է և Փոքր-Ասիայում ապրող աղջութիւնների մասին։ Նա ի միջի այլոց պնդում է, թէ քիւրբերը երբէք լաւ երկրագործներ չեն եղել, որովհետեւ երկրագործութիւնը պահանջում է ծանր ու երկար աշխատանք։ Անհրաժեշտ է չը մոռանալ որ՝ ա) Փոքր-Ասիայի այս կամ այն կողմում պատահող լաւ երկրագործները զուտ թիւրքեր չեն, այլ լազեր, չերքէդներ և այլն և թէ թիւրքերը երբեմն լաւ պարտէցներ ու այդիներ են պահում, այդ դեռ չի նշանակում, թէ նրանք լաւ երկրագործներ են բառիս բուն նշանակութեամբ։

Արժէ կարգալ այդ գիրքը...

Ե. Թ.

**ՅԱ) Gustav Hirschfeld „Aus dem Orient“ 388 s. Գուստավ
Հիրշֆելդ „Արևելքից“ 388 էրես:**

Այս գրքի հեղինակը * գերմանական գրականութեան մէջ յայտնի է իրեն պատմական աշխարհագրութեան ականաւոր ներկայացուցիչներից մէկը: Նա այս կամ այն երկրի ներկայ դիրքի ու վիճակի մասին խօսելիս մեծ նշանակութիւն է տալիս և անցնեալում տեղի ունեցած փոփոխութիւններին ու պատմական փաստերին:

Այդ միենոյն ուղղութիւնը նկատում է և յիշեալ աշխատութեան մէջ: Այսուեղ հեղինակը խօսում է Արևելքի կամ աւելի ճիշտն ասուծ Փոքր-Ասիայի մասին և իր ճանապարհորդական տպաւորութիւնները համեմում է մի շարք պատմական տեղեկութիւններով: Խօսելով Փոքր-Ասիայում ապրող ազգերի մասին, նա յայտնում է այն կարծիքը, որ «երբէք չի կարելի ասել թէ այս ազգն անպայման լաւ ու արդար է, իսկ միւսը— անպայման վատ ու անարդար և սկզբից մինչև վերջը հետեւում է այդ սկզբունքին, այդ միջին ձանապարհին»:

Սակայն նոյն իսկ նրա հաղորդած հատ ու կտոր տեղեկութիւններից երեսում է, որ Թիւրքիայում հայերը ենթակայ են հալածանքների, թէ են իրանց ընդունակութեամբ ու կուտուրայով աւելի բարձր են հարևաններից...

Համեմատաբար հետաքրքիր են գրքի այն տեղերը, որտեղ պատկերացրած են հեղինակի յարաբերութիւններն ու խօսակշութիւնները թիւրք պաշտօնականների հետ, բայց այստեղ էլ աւելորդ մանրամասնութիւնն է այդ առաւելութիւնը վշացնում:

Ընդհանուր առմամբ զիրքը իր մէջ ոչ մի նորութիւն չի պարունակում և ձանձրալի է իր երկար աւելորդութիւններով:

Ե. Թ.

ՅԱ) Совѣтъ Съѣзда нефтепромышленниковъ. Обзоръ Бакинской нефтяной промышленности за 1900 годъ. Очеркъ нефтяной промышленности С. Америки и статистическая свѣдѣнія о нефтяной промышленности въ Грозномъ. Съ приложеніемъ 13-ти діаграммъ и 2-хъ картъ.

Баку, 1901 г. Цѣна 5 р.

Այս վիճակագրական տեղեկութիւններով հարուստ հաս-

*) Նա այժմ մեռած է: Այս աշխատաթիւնը լուս է տեսել նրա մահից յետոց: Հաստարակիչն է „Allgemeine Verein für Deutsche Literatur“ ընկերութիւնը:

տափոր հրատարակութիւնը այնքան առատ նիւթեր է պարունակում մեր երկրի ամենալսոշոր արդիւնաբերութեան մասին, որ արժէ նրան նույրել մեր ամսագրում մի առանձին տեսութիւն։ Մի արդիւնագործութիւն, որով զբաղուած են 36 հազարից աւելի ծառայողներ ու բանուորներ, որի մէջ գրած են միլիօններ, որ իր գոյութեամբ ահազին փոփոխութիւններ է մտցնում մեր ամբողջ երկրի ոչ միայն զուտ անտեսական, այլ և հասարակական ու բարոյական յարարերութիւնների մէջ— անշուշտ պահանջում է առանձին ուշագրութիւն դէպի ինքը։

Բացի ընդհանուր նշանակութիւնից այդ արդիւնաբերութիւնը ունի մի առանձին հետաքրքրութիւն մեղ, հայերիս, համար, որպինեան այդ միակ ճիւղն է, ուր հայերի կապիտալը, ինտելիգէնս և բանուոր ոյժերը խոչսր զործունէութիւն են ցոյց տալիս։ Ընդհանուր ծառայողների և բանուորների թուի մէջ հայերի թիւը համար է 8,586 հոգու։

Այդ ահազին հատորի նիւթը բաժանուած է երեք մասի։
1) Նաւթահորերի, գործարանների, նաւթային առևտրի և արտահանութեան գրութիւնը 1900 թուին։ 2) Մ.-Նահանգների նաւթագործութեան գրութիւնը և Գրօնայի նաւթագործութիւն մասին վիճակագրական տեղեկութիւններ։ 3) Աղիւսակներ մանրամասն տեղեկութիւններով Բագուի նաւթագործական ֆիրմաների և նաւթի արտահանութեան մասին։

Առաջաբանից երեսում է, որ վիճակագրական նիւթի մշակումը կատարել են գլխաւորապէս պ.ալ. Կոկուևը, Շայոյըխը և Սոսքելեանը, Մ.-Նահանգների նաւթագործութեան տեսութիւնը կատարել է պ. Ռոգէնֆէլդը, իսկ Գրօնի նաւթային արդիւնաբերութեան մասին վիճակագրական տեղեկութիւններ կազմել է լեռնային ինժենէր Խոչկինը։ Տեղեկադրի ընդհանուր խմբագրութիւնը պատկանում է Ստատիստիկական բիւրոյի կառավարիչ պ. Վ. Խստօմինին։

I. U.

36) Armenia. Travels and studies. By H. F. B. Lynch. Հրատարակութիւն Longman, Green et C^o, London; Գինն է 42 շ. (21 ռ.) 2 հատոր, 945 երես, 197 լուսանկար և փորանկար սրատկերներով. բազմաթիւ լատակագծեր և քարտէզներ. մեծ քարտէզ՝ Հայաստանի և սահմանակից երկիրների։

Հատերն են ճանապարհորդել Հայաստանում, բայց քչերն են նույրել նրան այնքան մանրամասն և բարեխիղճ ուշագրութիւն—ինչպէս ոլ. Լինչը։ Պ. Լինչը նրանցից է, որոնք

ընդունակ են գրաւուելու իրանց հետաքրքրող առարկայով։ Նրան մղել է դէպի այդ բազմաշարչար աշխարհը «մի այնպիսի զգացում, որ տարերքի պէս աւելի ուժեղ է քան ինքներդ, «որովհետև այդ երկիրը և նրա ժողովուրդը արժանի են ողնորուած համակրութեան և ամենամեծ հետաքրքրութեան»։ Իր դրքի վրայ նա աշխատել է ամբողջ 8 տարի և, բացի իր երկու անգամ կատարած ճանապարհորդութիւններից, նա դիմել է բազմաթիւ հայ և օտարազգի անձնաւորութիւններին, որոնք լաւ ծանօթ են եղել երկրի հետ Ալդալիսով նա աւելի հարստացրել և լուսաբանել է իր դիտողութիւնները և այդ բոլորը նա ամփոփել է երկու մեծ և շքեղ հատորների մէջ, զարդարած վերին աստիճանի մաքուր աշխատած նկարներով և քարտէզներով։ Առաջին հատորը յատկացրած է միայն Ռուսա-Հայաստանին, երկրորդը՝ Թիւրքաց-Հայաստանին։ Առաջին ճանապարհորդութեան ժամանակ (1893 օգոստոսից մինչև 1894 մարտը) նա անցնուած է Բաթումից Քութայիս և այստեղից Ախալցխա, Ախալքալաք, Աւելքսանդրովոլ, Երևան և Կարս, միշտ նկարագրելով և նկատելով այն ամենը, ինչ որ տեսնուած է։ Այս մասուած շատ հետաքրքրական դիտողութիւններ և կարծիքներ կամ կովկասի մասին, ինչպէս և բնորոշումներ հայերի, վրացիների, ոուսների, թաթարների և այլն։

Անցնելով սահմանը (II հատ.) մենք միանգամից ընկնուած ենք մի ուրիշ աշխարհ։ մենք ծանօթանուած ենք քիւրդերի և թուրքերի հետ «որոնցից առաջինները արիւնարբու աւազակներ են, իսկ երկրորդը—մի պարապիտ»—տեսնուած ենք և հային—և հասկանուած թէ ինչպէս կարող էր և պիտի խեղդուի այդ մթնուարուած ամեն մի կուլտուրական ձգտուած և արդիւնաբերական եռանդ։ Այս հատորուած Վամսի հին իշխանութեան մի սիրուն դրուխ է նույրուած։ Նկարագրելով իր ժամանակուայ (1894 թ.) մինչև կոտորածները գրութիւնը—նա օրինակ վերցնելով Վանը, Նկատուած էր որ այստեղ «մի լուռ մաքառուած կայ երկու հակառակ ոյժերի մէջ։ մի կողմից համարեա եւրոպական ոգով կորովի և անընդհատ աշխատող հալատակ հայի, և միւս կողմից կրաւորական, բայց կասկածու ու քմահած իշխող տարրի մէջ։ Զը կայ ոչ մի նշոյլ կարգին կառավարութեան—և ոչ ընդունակութիւն ստեղծելու օրինական կարգ ու կանոն։ Բոլոր հարստութիւններ ստեղծողը աշխատասէր հայ տարրն է, իսկ փոքրաթիւ մահմեղական ազգաբնակութիւնը աճուած է ճարպի մէջ և ստանուած է վերին աստիճանի բարձր ոունիներ այնպիսի պաշտօնների համար, որոնք ոչ մի աշխա-

տանք չեն պահանջում: Բոլորի վրայ իշխում է մի որևէ անկիրթ և ողորմելի ընդունակութիւններով պաշտօնեայ և անսանձ իրաւունքների տէր մի որևէ զօրապետ, որոնք և կազմում են ամեն տեսակ ինտրիգների կենարոն: Իրերի այդ վիճակից է ծընուել հայկական հարցը:

Վանից անցնելով ծովակի հարաւարեսմտեան կողմը—նա զնում է Բիթլիս, և այստեղից ծոռելով դէպի հիւսիս, մտնում է Մուշ, Կարին—իսկ այստեղից էլ դէպի ծովեղը: Այնուհետեւ տեղի են ունենում սարսափելի կոտորածները և երկիրը փակւում է ճանապարհորդների առաջ:

Երկրորդ անգամ ինչը ուաք է գնում Տրավիզոնի ցամաքի վրայ 1898 թուի մայիսին, այս անգամ ընկերակցած պ. F. Oswald-ի հետ, որին մենք պարտական ենք զրբում ամփոփուած բոլոր երկրաբանական հետազօտութիւնների և տեղեկութիւնների համար: Այս անգամ Կարինից նրանք անցնում են Խնուսի բարձրաւանդակի վրայ—այցելելով Թոքաթը, Մելազկերտը, Ախուլաթը և այլն մինչև Նազլիկ լիճը և վերադառնում (սեպտեմբ. 1898): Աւելորդ է այստեղ հետեւ պ. Ինչին քայլ այլ քայլ, ասենք այսքանը, որ գուք զգում էք, ինչպէս հմուտ արուեստագէտը պտըտեցնում է ձեզ իր հետ, ցոյց տալով ամեն մի տեղի ազգաբնակութեան ցեղական առանձնայատկութիւնները, սովորութիւնները, տարազը, տնտեսական վիճակը, քրքրելով ամեն մի տեղի անցեալը, պարզելով ձեզ համար նրա աշխարհագրական և գէօլօգիական դիրքը, և գուք զգում էք ձեզ մի ինչոր առասպեկտականութեան և իրականութեան գեղեցիկ իսառնուրդի մէջ՝ հնարաւորութիւն ունենալով միշտ տարբերելու առասպելը պատմութիւնից և ներկայի իրականութիւնից, կանգ տնելով հայերի ներկայ վիճակի վրայ—նա ասում է, որ թիւրք կառավարութիւնը հայակական հարցի դէմ կոռւելու համար գործ է ածում երկու տեսակ զէնք—քիւրդերը և գաղտնի ոստիկանութիւնը: Օգը լիքն է «հայկական դաւադրութիւններով», և այդպիսով Պօլից նշանակուած Էմիսարների կարգադրութեամբ—լրտեմները շարունակ թարմ են պահում հին վէրքերը և առիթ բաց չեն թողնում ստեղծելու նորերը: Կրկնակի կոտորածները և հայլածանքները հայերին աւելի քիչ են յուսահատեցնում, քան բիւրօկրատիայի կամայական ձեւերը թէ ուրիշ տեղ, թէ Պօլսում և թէ գաւառներում: Եթէ մի մահմէդական որևէ հակակրանք կամ ոխ ունի դէպի մի հայ, նա աշխատում է որ և է գաղտնի ոստիկանի մէջ կասկած զարթեցնել դէպի այդ հայը—և ահա մտնում են նրա տունը ու յատակից մինչև շտեմարանը

խուզարկում։ գուցէ գտնի տան երեխայի արկղի մէջ որ և է անմեղ ազգասիրական զգացմունքներ արտայայտող թղթի կտոր կամ գիրք, պատանին իսկոյն ձերբակալում է ու բանտարկում։ գուցէ գտնուեց որ և է հին ատրճանակ, —ամբողջ ընտանիքը խիստ հսկողութեան տակ է ձգւում... միւս կողմից կառավարութիւնը չոյսում է և երես է տալիս քիւրդերին—գործադրելով նրանց իրրե միջոց՝ «զսպելու երկրի միակ օգտաբեր տարրը»։ Զը նայած այդքան կոտորածներին և հալածանքներին այնուամենանիւ կայ մի հանգամանք, որ երաշխաւորում է հայերին մշտական գերիշխանութիւն մահմէդակամների վրայ. այդ է՝ նրանց ցեղին յատուկ ծննդական առատաբերութիւնը։

Լինչը շատ գովասանքով է խօսում ամերիկայի միսիօնարների մասին և մի կոչ է անում նրանց միջոցներ տուող ամերիկայիներին—«ըստիպել նրանց կրօնափոխ անելու հայերին—որ կը լինէր մի շատ անվայել վարժունք»։ Վերջապէս լինչը երկարօրէն արծարծում է թիւրքաց Հայաստանի նշանակութիւնը միջազգային քաղաքականութեան տեսակէտից։ Նրա կարծիքով «Բրիտանիայի քաղաքականութեան հիմնաքարը պիտի լինի՝ պահել այդ խաւերը Ռուսաստանից նոյնչափ հեռու, որչափ հնդկական սահմանները»։

Գրքի վերջում աւելացրած է Հայաստանի վերաբերեալ ամբողջ գրականութեան ցուցակը։

Անգլիական մամուլը միաբերան ողջունեց լինչի գիրքը, թէ ինչպէս մի ճանապարորդական գրուածք, «որի նմանը գեռչէր գուրս եկել վերջին 10 տարիների ընթացքում», և թէ ինչպէս մի «հեղինակաւոր զրուածք» Հայաստանը և հայերը ճանաչելու համար, որով լրացւում է մի զգալի պակասութիւն մեր այդ հարցի վերաբերեալ զիտութեան մէջ. մինչև այժմ մեզ հաւատացնում էին, որ չը կայ Հայաստան և չը կան հայեր—կամ պահանջում էին մեզնից լուծելու մի հարց, որի մասին մենք ունէնք միայն թեր և հակասող տեղեկութիւններ. ուրիշ կերպ կը լինի լինչի զրբից յետոյ» (Glasgow Herald)։ Մի խօսքով. գիրքը պարունակում իր մէջ հարուստ նիւթեր, և միջին ընթերցողի համար, և գիւտանազէտի համար, և ուսանողի համար. —կարելի է միայն ցանկալ որ այդ գիրքը թարգմանուէր զանազան լեզուներով և եւրոպացի ընթերցողների աւելի ստուար խաւերին մատչելի դառնար։

**ՅԵՍՈՎԻՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԵՐՈՒԻ ՏԻՒԱՐՔԻ ԳՐԵՑ Ա. ԱԼՊՈՅԱ-
ՃԵՍԱՆ:** Վենետիկ, 1901, 82 էր., 160. Արտասոված „Բազմավէպից“:

«Մուրճի» ընթերցողները արդէն ծանօթ են տիկին Մերու-
հի Տիւարքի կեանքի և գրական գործունէութեան: Պ. Ալպոյա-
ճեան իր այս աշխատութեան մէջ աւելի մեծ ուշադրութիւն
նուիրել է Տիւարքի գրական գործունէութեան, իսկ կեանքի
այն պայմանները, այն միջնավացրը, որի մէջ զարգացել ու գոր-
ծել է հայ առաջին հեղինակ կինը, չօշափուած են շատ թռուցիկ
կերպով, անցողաբար:

Հեղինակը ընդհանրապէս ճիշտ է ընբռնել Տիւարքի երեք
վէպերի նշանակութիւնն ու գեղարուեստական արժմնիքը և
պակասութիւնները: Նրա շատ հայեացքների հետ կարելի է
համաձայնուել: Բայց մի խոշոր պակասութիւն, որ ունի պ.
Ալպոյաճեան, այն է, որ նա, հակառակ լինելով կանանց դատի
պաշտպանութեան, չընդունելով որ հայերի մէջ էլ ֆեմինիստա-
կան շարժումը կարող է և պիտի ժամանակակից երեսյթ հա-
մարուի, պատշաճաւոր ուշադրութեամբ չէ վերաբերւում այն
նիւթին, որ տիկին Տիւարքի երկիրի ամբողջ միտքը, ամբողջ
բովանդակութիւնն է կազմում: Պ. Ալպոյաճեան ընդունում է,
որ մեր ընկերական և ամուսնական կեանքում շատ կան կնոջ
գրութիւնը վատացնող նախապաշարմանքներ, բայց ե ընդու-
նում է, որ այդ նախապաշարմունքները «յարգելի են» և եթէ
ջնջուեն, մեր ընտանեկան կեանքը կ'այլանգակուի: Ինչու:—Այս
հարցին գոհացուցիչ պատասխան չէ տալիս հեղինակը, այլ բա-
ւականանում է ընդհանուր բառեր գործածելով:

Կարելի է երկար վիճել հեղինակի հետ այս հարցի առի-
թով: Բայց այստեղ վիճելու տեղը չէ: Եւ մնաք յիշատակում
ևնք այս հանգամանքը միայն այն պատճառով, որ ցոյց ասնք
թէ կանանց հարցի մասին այսպիսի հասկացողութիւն ունեցող
հեղինակի գատողութիւնները նոյնքան զին կարող են ունենալ,
որքան, օրինակ, մի վարդապետի կամ եպիսկոպոսի գատողու-
թիւնները Վոլտէրի մասին: Պ. Ալպոյաճեան շարունակ կրկնում
է, որ կանանց հարց չը կայ մեղանում, որ ֆեմինիզմը հայերի
համար գեռ շատ վաղաժամանակ է, անօգուտ է: Դնենք թէ
հէնց այդպէս է: Բայց միթէ մի վիպազրող չէ կարող մարգարէ
դառնալ հեռաւոր կամ մօտիկ ապակայի մասին, հոգով ըմբռնել
որ այս կամ այն շարժումը պիտի մտնէ և այն հասարակութեան
մէջ, ուր ինքն է ապրում ու ցոլացնել իր երկերի մէջ այդ ա-
պագան, դառնալ գալոց սերունդների գեկավարը:—Եթէ այդպէս

գատելու լինենք, այն ժամանակ պիտի ոչինչ համարենք մեր Աբովեանին էլ, Շափփիխն էլ, որոնց մատուցած ծառայութիւնների մէջ զլիսաւորներից մէկը, եթէ ոչ առաջինը, ժամանակի բերմունքը հասկանալն էր, վաղուայ օրը գուշակելը, ողի մէջ նոր, գաղափարական հոսանք զգալը:

Պ. Ալպօյաճեան տ. Տիւսաբին «Ճայրայեղ ազատական» է համարում: Եւ սակայն մոռանում է որ նոյն իսկ ոչ ճայրայեղ ազատական գործիչին չէ կարելի մօտենալ վանական հասկացողութիւններով և պահպանողական գաղափարներով, եթէ, ի հարկէ, անաչառ լինելու խնդիր կայ մէջ տեղ:

I.

ՅՅ) Հ. ՀԱՄԱԳԱՍՏԱՎՈ ԹԵՐՃԻՄԱՆԵՍԱՆ.—Պատմութիւն Հայոց. Եօթներորդ տպագրութիւն. Վենետիկ, 1901, եր. 102, 80/, բազմաթիւ պատկերներով: Գինը 1 ֆրանկ. (40 կոպէկ):

Այս գիրքը նոր աշխատութիւն չէ. առաջին անգամ լոյս է տեսել, եթէ չենք սիսալում, 1847-ին: 50 տարուայ հնութիւն: Այսքանն էլ բաւական է՝ գրքի պակասութիւնները ցոյց տալու համար:

Մի շրջան կար մեզանում, երբ մենք շատ էինք սիրում մեր պատմութիւնը. այդ շրջանում հայերը շատ էին գրում հայոց պատմութեան դասագրքեր. համարեա ամեն տեղ ուր հայեր կային և հայ տպարան, լոյս էին հանւում այդպիսի դասագրքեր: Հ. Թերճիմանեանի ներկայ աշխատութիւնը այդ շարժման բազմաթիւ արտայատութիւններից մէկն է: Նա աչքի չէ ընկնում առաջին արժանաւորութիւններով. պատմութեան մի շատ չոր ու ցամաք կմափք է դա, որի վրայ չէ երեսում կենդանութեան որ և է նշոյլ: 102 երեսների վրայ, որոնց համարեա կէսը բռնում են պատկերները, ամփոփուած է մեր ամբողջ պատմութիւնը: Հասկանալի է որ այդպիսի ծաւալում կարելի էր զետեղել միայն անցքերի յիշատակութիւն, միայն անուններ:

Բայց թէ հեղինակը և թէ այժմեան հրատարակիչները, գրքի պակասութիւնները արդարացնելու համար, ընդգծում են մի քանի անգամ, թէ դա մի դասագրք է երեխաների համար: Շատ լաւ: Սակայն միթէ դասագրիք ասելով ամեն ինչ վերջանում է. միթէ դասագրիքը չը պիտի ունենայ աշխարհ, կենդանութիւն, միթէ նա միայն թուականներ, անուններ և դէսքեր պիտի հաղորդէ: Գուցէ 1847-ին, երբ առաջին անգամ լոյս էր տես-

նում «Պատմութիւնը», այդպէս էին հասկանում մանկավարժները դասագրքերի նշանակութիւնը Բայց այն հին ժամանակները անցան, իսկ ներկան ունի իր պահանջները, իր դաւանութիւնը: Ներկայի համար դա մի անպէտք դասագիրք է:

Նախ և առաջ գրութեան ձևը: Դուք յիշում էք հին կատելիսկիմները—հարց ու պատասխանով: Այս պատմութիւնն էլ այդ ձևով է գրուած, ինչպէս նաև Վեճնետիկում լոյս տեսած դասագրքերի մեծ մասը: Մեքենայական դասաւութեան մի քարացնող ձևն է գա, որ վաղուց արտաքսուած է դասագրքերից: Ինչու չեն արտաքսում և Միսիթարեան հայրերը.—չը զիտենք:

Յիսուն տարի առաջ հայոց պատմութիւն զրոյի գործը շատ հեշտ էր Եթէ մեր բազմաթիւ մատենագիրներին դիմելու ու նրանցից նիւթեր քաղելու յօժարութիւնը չը կար, բաւական էր և Զամշեանը: Կարելի է հաստատ ասել, որ մեր հեղինակները միմիայն Զամշեանը զանազան ձևով և դիրքով կրծատելու գործով էին զբաղուած: Միամիտ ժամանակներ էին. ինչ հազորդուած էր անցեալից, նա ընդունաւում էր իբրև սուրբ ճշշմարտութիւն և զրոշմւում էր դասագրքի մէջ: Պատմութիւնը հասկացւում էր անպէս, ինչպէս հասկացել էր Զամշեանը—դէպքերի, թաղաւորների, կաթողիկոսների յիշաւակութիւն, պատերազմների, կոտորածների նկարագրութիւն:

Իսկ այժմ՝ Գիտնական քննադատութիւնը տակն ու վրայ է արել շատ և շատ բան. այն, ինչ որ յիսուն տարի առաջ անժիստելի պատմական իրողութիւն էր ընդունաւուած, այժմ միայն ժամանակակից է պատճառում: Երեսն հանուեց և ջնջուեց առասպելների մի մեծ կոյտ, պատմական ճշմարտութիւն գտնելու համար խորտակուեցան շատ կուռքեր, անիմայ տրորուեցան սուրբ աւանդութիւններից շատերը: Այսքանը հին ժամանակների մասին: Գալով մեր պատմութեան այն շրջաններին, որոնք ունեն փոքր ի շատ կանոնաւոր տարեգրութիւններ, զրաւոր յիշաւակարաններ, զրանց վերաբերմամբ էլ գոյութիւն ունեն ուրիշ տեսակ պահանջներ: Պատմութիւնը, ժամանակակից հասկացողութեամբ, թաղաւորների, իշխանների, հոգենորականների պատմութիւն չէ, այլ ժողովրդի պատմութիւն: Այս տեսակ պատմութիւն մենք չունենք ոչ միայն դպրոցների համար, ուր նա աւելի քան անհրաժեշտ է, այլ և գպրոցից դուրս, հասարակութեան համար: Նոյն իսկ Պալասանեանի գոլած «Հայոց պատմութիւնը», որ լաւագոյնն է համարւում, չէ կարող բաւարարութիւն տալ ժամանակակից պահանջներին:

Այդ պահանջները յայտնի են, ի հարկէ, և Միսիթարեան հայրերին: Թերձիմանեանի այսօրուայ հրատարակիչները, յենուե-

լով գարձեալ այն հանգամանկի վրայ, թէ տալիս են մի դասագիրք երեխաների համար, ասում են որ ազգային հին առասպելները, որքան էլ գիտութեան կողմից ոչնչացրուած լինեն, պէտք է աւանդել երեխաներին. և եթէ այդ աւանդութիւնները «քննադատութեան անաշառ խարազանի ենթարկելով՝ ազգային մանկուոյն հաղորդուեն», — դա կը լինի մի սրբապղծութիւն: Ասենք զա չափաղանցութիւն է. «ազգային մանկութեած ոչինչ չեն կորցնի, եթէ հայոց պատմութիւնը սկսուի ոչ թէ Բարեկօնի աշտարակաշինութիւնց, այլ խաղերի թագաւորութեան վերջոց: Թող հայ երեխաները իմանան մեր հին առասպեկները, — զրա դէմ ոչ ոք չի բողոքի: Բայց թող նրանք մի և նոյն ժամանակ իմանան, որ զրանք առասպեկներ են. թող երեխաները գպրոցից սովորեն իրական ճշմարտութիւնը, ինչ էլ լինի նա: Իսկ երբ դուք ոչ միայն չեք լուսաւորում երեխայի միտքը, հասկացնելով որ առասպեկները առասպեկներ են, այլ և դնում էք Հայկի պատկերը, անպատճառ, ի հարկէ, յունական տարազով հագնուած մի զինուոր և ոչ թէ, գիշուք, օսորեստանի երեսք փէշանի հագուստը, որ երակայեալ Հայկի պարթի մարմինը պիտի ծածկած լինէր, որովհետեւ նա Ասորեստանի կողմերից էր ենել, մի հագուստ, որ այժմ էլ դոյութիւն ունի մեղանում, հայերի մէջ, — այստեղ թոյլ տուեք որ «քննադատութեան խարազանը» բարձրանայ և ձեզ զէմ:

Զը նայած այդ բոլոր պահասութիւններին, մենք Հ. Թերմաննեանի գրքոյի հրատարակութիւնը անօգուտ չենք համարում: Եւ ահա թէ ինչու:

Ասացինք որ կար մի ժամանակ, երբ մենք շատ էինք սիրում մեր պատմութիւնը: Այժմ այդպէս չէ. այժմ հայը իր անշեալից տեղեկութիւններ իմանալ չէ սիրում: Ինչպէս մենք այժմ աշխատում ենք մայրենի լեզու չունենալ, այսպէս էլ իր բի ազգ չենք ուզում իմանալ, թէ ինչ էինք և ինչ ենք: Մեզսիկայի նոուածման պատմութիւնը մենք շատ լաւ ենք իմանում, կարգում ենք ամենամեծ հետաքրքրութեամբ, իսկ Անիի թագաւորութիւնը... միթէ այդպիսի բան եղել է, հարցնում ենք մենք: Ապացոյց որ Անին այժմ էլ ոչնչանում է, հողի հետ հաւասարւում, մեղանից ոչ մէկի մէջ ափսոսանք չը յարուցանելով:

Այսպիսի ժամանակ մի էժանակին, պատկերագրդ «Հայոց Պատմութիւնը», որքան էլ պակասութիւններ ունենայ, ունի իր նշանակութիւնը: Նոր հրատարակութեան արժանաւորութիւնն այն է, որ նա շատ էժան է, բայց և շատ գեղեցիկ Բազմաթիւ պատկերներ կան: Պատկերների վերաբերմամբ մենք

պէտք է խնդրենք Միսիթարեաններին, որ գէն զցեն իրանց հին
կլիշները և նորերը պատրաստեն. չափազանց շատ են նրանք
շահագործուած: Ցանկալի էր նոյնպէս, որ պատկերները պատ-
րաստէին մեր պատմութեան, մեր կեանքին լաւ տեղեակ նկա-
րիչներ: Վենետիկում պատրաստած պատկերների մէջ հայկա-
կան, ասիական շատ քիչ բան կայ. յունական զինուորներ կամ
կաթոլիկ հոգեորականներ—ահա ինչ կերպարանքի մէջ են ե-
րեան հանւում մեր անցեալի գործիչները: Դա մի նշան է թէ
նրգան ողորմելի հասկացողութիւն ունենք մենք գեղարուեստի
և պատմական ճշմարտութեան մասին:

Լ.

ՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«ՀՈՂԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ» ԵՒ ՀԱՐԿԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒԽՄ

Գլ. III

Հարկալին դրութիւնը սուսաց տիրապետութեան ժամանակ.—Հարկերի իջեցնելը.—1837 թուի թիֆօրմը.—Ծխահարկի և դրամական տուրքի սկզբունքը.—Տուրքերի քանակութիւնը 80 թուականներին.—Տուրքերի թեթևացման դրական հետևանքը։

Ոսւսաց տիրապետութեան հետ միասին Կովկասում սկզբունք կամաց-կամաց վերջ դնուել այս տիսուր կացութեան։ Մասնաւորապէս «Հայկական շրջանում», երկրի աւերուած լինելու պատճառով հէնց գրաւումից յետոյ, կառավարիչ Պասկեիչը արքունական բահրաքերնի գիւղերի տուրքը իջեցրեց $\frac{1}{3}$ -ից մինչ $\frac{1}{4}$ ։ Եսարկերնի գիւղերինը $\frac{1}{2}$ -ից մինչև $\frac{1}{4}$ ։ Միւլքաղարական եարկերնի գիւղերի տուրքը $\frac{15}{30}$ -ից պակասացրեց մինչև $\frac{10}{30}$ -նը, որից կէսը ստանում էր միւլքաղարը, կէսը աւերութիւնը. միւլքաղարական բահրաքերնի գիւղերի տուրքը $\frac{10}{30}$ -ից իջեցրեց մինչև $\frac{8}{30}$ -ի, որից $\frac{5}{30}$ արւում էր միւլքաղարին, իսկ մնացած $\frac{3}{30}$ վերցնում էր աւերութիւնը։ Բայց պասնից, որովհետեւ նախին սարքեարների տեղ նշանակուած 10 կօմիսարների, 20 եսաուլների ու սարքեարների կատարած զեղծումների գէմ անվերջ գանգատներ էին թափւում, որոշուեց նախ ոչնչացնել կօմիսարների և եսաուլների պաշտօնները, նշանակելով ամեն գիւղի վճարելիք բերքի քանակութիւնը մօտաւորապէս, իսկ մի քիչ յետոյ, 1837 թուի յունիսի 5-ին, մի քանի տարուայ ստացուած բերքի ու գների համեմատ հաստատուեց կանոնագրութիւն, որով նահանգի մի մասը վճարելու էր իր տուրքը մթերքներով, միւսը (իր շանկութեամբ) դրամով։ Թափառական ցեղերը վճարելու էին 5-ական ո. ծխից և 2786 ոռութու մթերքներ... Ամբողջ տուրքերի քանակութիւնը հողի բեր-

Քերից հաշուած էր 145,870 ռ., ի բաց առևալ այն, որ մօտ 4000 ծուխ գաղթականներ ազատուած էին մի քանի տարով տուրքից. բացի դրանից վերացրած էր խոտի, եօնչի, յարդի, բամբակի սերմի ու բանջարանոցների բերքերի տուրքերը և գիւղացիներին թոյլ էր տրուած մթերքների տեղ վճարել նրանց նշանակուած դինք: Բինաչի և այլ դրամական տուրքերի փոխարէն նշանակուած է «ծիրի» տուրք 2½ ռ. արքունական գիւղացիներից, 2 ռ. միւլքաղարական և Յական ռ. քաղաքացիներից...

Այսպիսով ամբողջ «Հայկական շրջանի» բոլոր տուրքերը (չը հաշուած մաքսը և այլ կողմնակի տուրքերը), գաղթականներին տուած արտօնութիւնների ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, հաշուած էր մինչև 289 հազ. ռ., այսինքն համարեա թէ երեք անգամ պակաս, քան պարսկական իշխանութեան ժամանակ էր: Չը նայած նրան, որ նոյնանման թեթևութիւններ մտցւում էին և երկրի միւս շրջաններում, այնուամենայնիւ զանգատները և խուլ գժղոնութիւնները չէին դադարում: Փամբակում ժողովուրդը ցանկութիւն էր յայտնում գաղթել և հեռանալ խաղաղացրած երկրից, Կախէթիայում՝ առաջ եկան լուրջ խառնակութիւններ, որոնց վերջ տրուեց միմիայն զինուորական ոյժին գիւմելով: Բարձրագոյն իշխանութեան կողմից նշանակուած քննիչները պարզեցին, որ վարչական համարեա բոլոր ճիւղերում կատարում էին խոշոր զեղծումներ: Այդ զեղծումների ամենամեծ պատճառներից մէկն էլ այն էր, որ անդական պրիստաւմները, որոնք ժողովում էին տուրքերը մթերքներով, ուղարկում էին սպահեստները, ծախում և այն, իրականապէս հանդիսանում էին միահեծան իշխանաւորներ ամեն մի շրջանում և չնորհիւ դրա կատարում էին անվերջ զեղծումներ: Պակաս գեր չէր խաղում և այն, որ անդական ազգաբնակութեան հետ կապ չունիցող պաշտօնեանները աղատ էին զգում իրանց որևէ տրագիւրացից, իսկ ընդունուած հարկային ձեզ չէր համտապատասխանում ոչ մի արգար սկզբունքի, որ կարսղանար փոխարինել հին սովորութիւններին:

1837 թուի մարտի 30-ին կայացաւ բարձրագոյն հրաման, որով նշանակուում էր յատուկ յանձնաժողով՝ «ստեղծել յատուկ վարչութիւն և հաստատել կարգ ու կանոն կովկասում լնակուող տարբեր ազգութիւնների դրութեան ու կարիքներին համապատասխան»: Հարկային դրութիւնը բարեկարգելու համար գումարուած էր առանձին յանձնաժողով: Վերջինիս յայտնուած էր կայսեր ցանկութիւնը, որով՝ բարեկարգութեան հիմք կաղմելու էր ոչ այնքան հարկերի բարձրացնելը, ինչքան թեթեացնելն ու հաւասարեցնելը: Կայսեր կամքն էր որ մտցուելիք հար-

կատիրական ձեզ չը ճնշէ արդիւնաբերութեան գանազան ճիւղերը, այլ զարգացնելով վերջինները, շատացնէ երկրի արդիւնքը: Յանձնաժողովի մէջ առանձին ուշադրութիւն զրաւեց պետական պալատի նախկին կառավարիչ Բէղակի նախազիծը: Ինկատի ունենալով գլխաւորապէս այն դժուարութիւնները, —ուրոնք առաջ կը դային եթէ հարկմրի քանակութիւնը որոշելու համար ընդունուեր հողի, անսասունների կարողութեան կամ արդիւնքի սկզբունքը և այն որ այդ սկզբունքների ժամանակ տարեց տարի հարկը չէր աւելանալու, չը նայած ազգաբնակութեան աճման, — Բէղակի առաջարկում էր ոչնչացնել բոլոր եղած բազմակողմանի տուրքերը մթերքներով և այլն և հաստատել նրանց փոխարէն մի տուրք «ծխի» վրայ և միմիայն դրամով: Զանազան շրջանների ծխահարկի քանակութիւնը որոշելիս ի նկատի պիտի առնուեր գոյութիւն ունեցող հարկացին ծանրութիւնը, ինչպէս և ժողովրդի տնտեսական դրութիւնն առհասարակ: Զը նայած որ պետական կալուածքների մինհստրի կարծիքով «ծխահարկը» յիշեցնում էր թաթարների «կարաչը» կամ «եսուակը», Բէղակի առաջարկութիւնն ընդունուեց բոլոր վարչական մարմինների կողմից (երկրորդական նշանակութիւն ունեցող փոփոխութիւններով) և իրան՝ Բէղակին յանձնուեց իրագործել նոր ֆինանսական բէֆօրմը:

1843 թուին Բէղակը ուղևորուեց գաւառները և դրա հետ միասին միջոցներ ձեռք առնուացին, որպէս զի շուտ վերջանայ սկսուած ժողովրդագրութիւնը: Ատեղծուեց նոր հարկացին դըրութիւն, որի հիմքը կազմում էր «ծուխը»: Նախկին Վրաստանի նահանգում (ներկայ Թիֆլիսի նահանգ և Գանձակի, Ղազախի և Ալեքսանդրոպոլի գաւառները), ուր հաշւում էր 45,485 ծուխ (28,645 պետական, 4,913 եկեղեցավատկան և 11,927 կալուածատիրական) և որի բոլոր տուրքերի քանակութիւնը մինչև «ծխահարկի» մոցնելը հաւասար էր 95,486 ռ. (միջին թըւով 210 ռ. ծխի վրայ), որոշուեց հաստատել տուրքերի հետեւալ կարգերը.

1) Գօրուայ և Դուշէթի շրջան. եկեղեցական և կալուածատիրական գիւղացիների համար Յական ռ.:

2) Միւս շրջաններում՝ կալուածատիր. գիւղացիների համար Յ. 50 կ.:

3) Արքունական գիւղացիների, որ ապրում էին կալուածատիրերի հողերի վրայ, 4 ռ. 50 կ.:

4) Արքունական գիւղացիների, որ պարապում էին վաճառականութեամբ, Յ. ռ.:

- 5) Պետական հողերի վրայ ապրող գիւղացիների՝
 ա) Գորու գաւառի լեռնաբնակ օսերի և
 նրանց հարեանների 1 ռ. 50 կ.
 բ) Գորուայ գաւառի և Դուշէթի շրջանի. 5 » — »
 գ) Թիֆլիսի, Թելաւի, Ալեքսանդրոպոլի
 և Շամշադինի շրջանների 6 » — »
 դ) Ղաղախի շրջանի 7 » — »
 ե) Բօրչալսւի շրջանի 7 » 50 »

Լեռնաբնակ թուշերը թողնուած էին հին գրութեան մէջ,
 վճարելով «սաբալախօ»:

Քութայիսի նահանգի տուրքերը նշանակուած էին շատ
 շած՝ պետական գիւղացիներից՝ 1 ռ. տուրք, 1 ռ. հողային
 վարձ և 75 կոպ. տեղական ծախս.—ընդամենը 275 ռ., եկեղեց-
 ական և կալուածատիրական գիւղացիներից 50 կ. տուրք և
 75 կ. տեղական ծախսի համար.—ընդամենը 1 ռ. 25 կ.։

Նոր օրէնքով ամբողջ Քութայիսի նահանգի վճարելիք
 տուրքը լինելու էր 26,638 ռ. պետական տուրք և 23,387 ռ.
 տեղական ծախսերի համար և այս ամենը 18,284 ընտանիքից
 (միջին թուով 1 ռ. 60 կ.):

Հայկական շրջանի 20,000 ընտանիքներից այդ ժամանակ
 ստացւում էր 202,964 ռ. տուրք (միջին թուով 102 սուբլի ըն-
 տանիքից): Բէզակի առաջարկութեամբ այդ տուրքի քանակու-
 թիւնը իջեցրին 65 հազար սուբլով:

Նոր օրէնքի համաձայն պետական պալատը ամեն տարի
 ուղարկում էր գիւղերին յատուկ հարկի թերթեր: Թերթի մէջ
 նշանակում էր ամեն մի կիսամետակի համար առանձնա-
 պէս զիւղի վճարելիք «ծխահարկի» քանակութիւնը (ծխերի
 թուի ու հարկի աստիճանի համեմատ): Գիւղից ընտրուած հար-
 կահանները, շինական ժողովի սրոշման համաձայն, ժողովում
 էին տուրքերը և տանուտէրի միջոցով յանձնում մօտակայ
 գանձարանին: Տեղական ստորիկանութիւնը «հսկում էր», որպէս
 զի նշանակուած գումարը մտնի դանձարան և իումին և ժամա-
 նակին»:

Վերջի 50 տարուայ ընթացքում, երբ Կովկասում մտցրուած
 է նոր հարկատիրական ձեր, վերջինս չէ ենթարկուել որ և է
 լուրջ փոփոխութեան: «Բարեփոխութիւնները» կայանում էին
 միայն նրանում, որ ամեն մի նոր ժողովրդավրութեան հետ,
 աւելացած ծխերի թուի համեմատ աւելացւում էր համեմատա-
 բար և ամեն մի գիւղի վճարելիք տուրքը, չը նայած հողերի և
 ժողովրդի ստացած արդիւնքի պակասելուն Բացի զրանից, այս
 պէս կոչուած տեղական տուրքերը (ՅԵՄԾԿՈՒ ԽԱԼՕԳԻ), որ սկզ-

բում կազմում էին շատ չնշին գումար (75 կ.)—ծխահարկի $\frac{1}{4}$ — $\frac{1}{5}$ մասը՝ ամեն երեք տարի, և թարկուելով փոփոխութեան, տարեց տարի բարձրանում էին:

1883 թուին, օրինակ, պ. Բուլիսի *) հաշուով Երևանեան նահանգի (Նախկին «Հայկական շրջանի» Ալեքսանդրօպոլի գաւառի հետ) վճարելիք պետական և նահանգական տուրքերի քանակութիւնը հաշում էր.

		Ը ն դ ա մ ե ն ը			
Որտեղ:	Ստան.	Ծխահարկ Զեմսկի և Հողային Ընդամ.			
	թիւ	այլ տեղակ.	սուբք		
Հաղար.	Հազ. ռ.	Հազ. ռ.	Հազ. ռ.	Հազ. ռ.	
Քաղաքներում	89	280	119	—	399
Գիւղերում	597	2362	4295	990	7647
Հնդամենը	686	2642	4413	990	8046

Միջակ ընտանիքի վրայ.

	Ո	Ռ	Ը	Լ	Ի
Քաղաքներում	1	315	134	—	449
Գիւղերում	1	399	719	117	1285
Հնդամենը	1	385	644	144	1173

Նոյն ժամանակամիջոցում Անդրկովկասի միւս նահանգների վճարելիք տուրքերի քանակութիւնը միջակ ընտանիքի վրայ հաւասար էր.

Թիֆլիսի նահանգում	812 սուբքու.
Քութայիսի	» 555 »
Բագուի	» 1090 »
Գանձակի	» 1080 »
Երևանի	» 1173 »
Անդրկովկասում ընդհանր.	939 »

1884—86 թուականներին, երբ պետական կալուածների մինիստրութիւնը ձեռնարկեց պետական հողերի վրայ ապրոզ գիւղայիների տնտեսական վիճակի ուսումնասիրութիւնը, այդ կարգի շինականների վճարելիք բոլոր տուրքերը զանգան նահանգներում հաւասար էին **).

Նահանգներ:	Ընտանիքի:	Անձնաւորութ.:	Մէկ դես. հողի վրայ:	Սշակուող:	Սոհասարակ:
Թիֆլիսի	1359	212	231	077	

*) О подымной подати и другихъ налогахъ на Кавказѣ и въ Закавк. краѣ.

**) Сводъ Матер. по изученію экономич. быта госуд. кр-янъ Закавк. я. т. I.

Քութայիսի	1036	157	384	249
Բագուփի	1307	198	149	089
Գանձակի	1617	227	193	089
Երևանի	1534	181	201	095
Անդրկովի.	1407	198	194	089

Նոյն ուսումնասիրողների հետազօտութիւնների հիման վրայ պիտի ընդունել, որ Երևաննեան նահանգի զանազան գաւառների միջակ ընտանիքների բիւղէներին (մուտքին ու ելքին) նայած, միջակ անձնաւորութեան (կամ հոգու) միջակ տարուայ ծախքը կազմում է *).

Ուտելիքի վրայ	.	.	151	ո.	կամ	530/0
Հագուստի	»	.	54	»	»	190/0
Վառելիքի և այլ մանր ծախք		27	»	»		95
Տուրքերի	.	.	18	»	»	63
Պահեստի գումար	.	.	35	»	»	122
Ընդամենը			285	»	»	1000/0

Այսինքն թէ տուրքերը կազմնիս են եղել ամեն մէկի ամբողջ ծախքերի $\frac{1}{16}$ մասը:

80-ական թուականներից տուրքերի քանակութիւնը բարձրանում է աւելի և նոյն Երևաննեան նահանգի լեռնային մասում, օրինակ, վերը յիշած գրքի հեղինակի հաշուով, հաւասար էր 255 ո. հոգու վրայ (231-ի փոխարէն), որ կազմում է տարեկան գիւղատնտեսութիւնից ստացած մուտքի (2543 ո.) 910/0-ը, կամ $\frac{1}{11}$ -ը:

Ի նկատի ունենալով, որ պարսկական թէժիմի ժամանակ Երևաննեան նահանգում ամեն մի ընտանիքի վճարելիքը հաւասար էր 35 ո. կամ ստացուածքի $\frac{1}{3}$ -ին և նոյն իսկ $\frac{1}{2}$ -ին, չէ կարելի չը համաձայնուել, որ ներկայումս տուրքերի ծանրութիւնը առաջուանից անհամեմատ աւելի թէին է:

Այդ թեթևութիւնը կազմում է XIX-րդ դարուայ ընթացքում կատարուած հարկատիրական ձեր փոփոխութեան ամենաէական մասը. դա ուսաց տիրապետութեան ժամանակամիջոցում կատարուած առաջադիմութեան ծուծն է: Անվերջ խորվութիւններին վերջ դնելուց յետոյ, հարկերից թեթևացնելուն պիտի վերադրել զլիսաւորապէս այն զարկը, որ ստացաւ մեր երկրում կուլտուրան և առաջադիմութիւնը Մինչև 1801 թուականը կովկասի ազգաբնակութիւնը ոչ միայն առաջադիմում, այլ

*) Опытъ изслѣдованія сельскаго хоз. хлѣбор. района Эрив. губ. и Карской обл. Тифлисъ, 1899 г.

նոյն իսկ չէր աճում: Ամբողջ երկիրը ծածկող առուների, հնձան-ների, կալների, եկիդնեցիների աւերակները անհերքելի ազգացոյց են դրան: Այդ տիսուր երեսոյթի պատճառները նոյնն են, որոնք մեր օրերում թոյլ չեն տալիս աճելու Տաճկաստանի, Պարսկաստանի ու այլ յետ ընկած երկիրների ազգաբնակութեան. դա կեանքի ու աշխատանքի անապահովութիւնը, օրէնքի բացակայութիւնը և հարկերով անշափ ծանրաբեռնուած լինելն է: Բնդհակառակը, այն օրից, երբ Կովկասում սկսուեց վերջ դնուել այդ ամենին—օրէց օր, տարէց տարի սկսեց աճել և ազգաբնակութիւնը:

1831 թուին «Հայկական շրջանի» (Ներկայ Երևանեան նահանգ առանց Ալէքս. գաւառոյ) ազգաբնակութեան թիւն էր 312 հազ. ընտանիք, (868 հ. ար. ս. և 777 իգ. ս.) ընդամ. 1644 հազ. ընակիչ, 1886 թուին նոյն շրջանում ապրում էր 74. հ. ընտանիք և (2904+2442) 5347 հազ. ընակիչ. այսինքն 55 տարուայ ընթացքում ընտանիքների թիւը աւելացած է 428 հազարով կամ 1370/0, իսկ ընակիչներինը 3802 հազարով կամ 2320/0/0: Նոյնը կատարւում է անընդհատ և մինչև մեր օրերը:

1886-ից մինչև 1897-ը Երևանեան նահանդի ազգաբնակութեան թիւը 6704 հազարից բարձրացած է մինչև 8049 հազ., այսինքն 1344 հազարով կամ 200/0 10 տարուայ ընթացքում. նոյն տանամեակի ընթացքում հիւսիսային Կովկասի ազգաբնակութեան թիւը աւելացած է 440/0-ով, իսկ Անդրկովկասինը 170/0-ով: Վերջին տարիները (1895—98 թ.) Երևանեան նահանգում ամեն մի 1000 ընակչի վրայ միջակ տարին աւելանում է քաղաքներում 120 հոգի, կամ 120/0, գաւառներում՝ 173 կամ 173, ամբողջ նահանգում 167, կամ 167/0: Եթէ մենք համաձայնուենք անտեսագէտների հետ, որ ամեն մի երկրի ամենամեծ հարստութիւնը կազմում է ինքը ժողովուրդը, այդ երկրում ապրող մարդիկ, չի կարելի անկեղծ կերպով չուրախանալ ազգաբնակութեան այն զգալի աճման, որ գոյութիւն ունի մեր երկրում: Եւ այդ աճման ամենախոչոր պատճառներից մէկը, ինչպէս վերը ասացինք, հարկերի թեթեացնելն է աշխատաւոր ամրոխի ուսից: Արձանագրելով նոր բէժիմի հարկատիրական ձեր այս խոչոր դրական կողմը, մենք չենք կարող սակայն կանգ չառնել և այն պակասութիւնների վրայ, որ տառչ և կան նոյն բեֆօրմի հետ միասին:

Գլ. IV

«Նիսահարկից սկզբունքի բացասական կողմերը.—Զանազան նահանգների, գաւառների, զիւղերի անհաւասար ծանրաբեռնումը տուրքերով.—Այդ սկզբունքի աղդեցութիւնը զիւղերի արդարացի սովորութիւնների քայլայման նկատմամբ.—Հարկերի անհաւասար ծանրանալը ունեորների և չունեորների վրայ.՝Դրամական տուրքի թոյլ կողմերը.—Շնողմնակից տուրքերի ուժեղանալը»:

Ինչպէս վերելը (Գլ. II) աեւսանք, պարսկական բէժիմի ժամանակ տուրքերը ամփոփում էին իրանց մէջ եկամուտի եւ կապիտալի բոլոր ճիւղերը Տուրքի ամենամեծ մասը վճարուում էր բերքով—շատ ստացողը վճարում էր շատ, քիչ ստացողը—քիչ: Նոյն չափով վճարում էին տուրք և արդիւնաբերութեան միւս ճիւղերը—անասնապահութիւնը, շերամապահութիւնը, այգեգործութիւնը, արհեստները, վաճառականութիւնը և տեղ-տեղ նոյն իսկ առետրական կապիտալը: Այս կարողութեան և եկամուտի սկզբունքին քիչ էին հակասում նոյն իսկ գրամով ժողովուող տուրքերը: «Բինաչի» կամ Վրաստանի «սուկօմի» անուանեալ տուրքը ինչպէս և բէզարը թէս ծանրանում էին ընտանիքների վրայ, բայց ունեոր զիւղերում 1 բինաչի էր ընդունուում 1,2,3 ընտանիք, իսկ աւելի աղքատ զիւղերում—5,10 ընտանիք. զանազան աղէտների ժամանակ «բինաչի» տուրքից ժողովուրդը ազատուում էր, հարստանալուց—բինաչիների թիւը աւելանուում էր:

Ճիշտ է, այս մանրակրկիտ և բաւականին բարդ հարկատիրական ձեզ առիթ էր անվիրջ զեղծումների ու զանգատների, նա պահանջում էր բաւականին ծախքեր պաշտօնեաների վրայ—բայց, չը նայած այս ամենին, նա ունէր մի շատ խոշոր առաւելութիւն, որի մասին ասեցինք—շատ ունեցողը վճարում էր շատ, քիչ ունեցողը—քիչ, եկամուտի տեկացած զէպքում տուրքը աւելանում էր, պակասած դէպքում՝ պակասում: Զը նայած ընդհանուր չքաւորութեան, հարկային հին սիստէմով պահպանում էր մի աեսակ հաւասարակշռութիւն երկրի բոլոր շրջանների, հասարակութեան բոլոր խաւերի մէջ: Հարուստներն ու աղքատները, հողագործներն ու վաճառականները, զիւղացիք, քաղաքացիք, լեռնցցիք, գաշտըշիք—բոլորն էլ հաւասարապէս ենթակայ էին տուրքի իրանց կարողութեան եւ եկամուտի համեմատ:

Այլ պայմաններ ստեղծուեցին 1801 թուից և մանաւանդ 50-ական թուականներից, երբ Կովկասում հաստատուեց նոր հարկատիրական ձեզ:

Շնորհիւ կովկասի բարդ ու բազմակողմանի աշխարհագրական, պատմական, կուլտուրական պայմանների, դարերի ընթացքում առաջ էին եկել այստեղ բարդ ու բազմակողմանի հարկատիրական ձևեր: Այդ ձևերը որոշ չափով համապատասխան էին ժողովրդի տնտեսական պայմաններին, յատուկ էին ամեն աշխարհագրական շրջանի, ամեն ազգութեան համար: Վաճառականն ու քաղաքացին տուրքը վճարում էին դրամով, խաչնարածը—անսառնով, բրդով, իւղով, գինեգործը—գինով, շերամապահը—մետաքսով: Ամեն տեղ՝ այսպիսով, հաստատուած էր տուրք՝ համապատասխան տեղացու պարագմունքի և որ աւելի զլուաւորն է, նրա հարստութեան ու ստացած եկամուտի համեմատ: Վերածելով այս բարդ ձևերով ժողովուող տուրքերը մի ձևի, այն է «ծխի»՝ նոր հարկատիրական սիստէմի, հարկաւ կամայ ակամայ ենթակայ պիտի լինէր շատ ու շատ սխաների, և այդպէս էլ եղաւ:

Երբ 40-ական թուականներին բարձրից նշանակած յատուկ յանձնաժողովը ընդունեց Բէզակի նախագիծը ծխահարդի նշանակելու վերաբերմամբ՝ բոլոր միւս տուրքերի տեղ, 1846-ին իրան՝ Բէզակին յանձնարարուեց ուղեղորուել գաւառները և շրջելով գաւառապետների հետ միասին զիւղերը, նշանակել վերջիններիս համար ծխահարկի աստիճաններ: Այս տեսակ պատասխանատու միասիա ունեցող պաշտօնեաները հարկի աստիճանը որոշելիս զեկավարուելու էին զանազան գիւղերի «աշխարհագրական, իրաւաբանական, կլիմայական, և այլ տնտեսական նշանակութիւն ունեցող պայմաններով»... Գիւղեցիկ խօսքեր, որ հետ կարելի էր գրել թղթի վրայ, բայց շատ գժուար էր իրագործել կեանքի, մէջ... Այն էլ 50 տարի առաջ, երբ յայտնի չէր ոչ զանազան գիւղերի հողերի տարածութիւնը, ոչ անսառնների քանակութիւնը, ոչ եղած արհեստների նշանակութիւնն ու տուած արգիւնքը: Քառասուն տարի յետոյ 1884—86 թ., երբ ուսումնասիրուում էր Անդրկովկասի հինգ նահանգներում ապրող արքունական գիւղացիների տնտեսական վիճակը, դրա համար պահանջուեցան տասնեակ բարձրագոյն կրթութիւն ստացած երիտասարդներ, ուսումնասիրութեան վերաբերեալ նիւթերից կազմուեցին 7 մեծ հատորներ: Իսկ 7 հատոր էլ կազմում էին ուսումնասիրութիւնից քաղած ամփոփումները զանազան տնտեսական խնդիրների մասին: Այս աշխատանքը, եթէ չեմ սիսալում, պահանջեց մօտ 100,000 ոռութիւն: Ինքն ըստ ինքեան հասկմնակի է, որ պ. Բէզակը զանազան գիւղերի ծխահարկի աստիճանը որոշելիս չէր կարող զեկավարուել լուրջ ուսումնասիրութեամբ, այլ միմիայն իր ստացած թռուցիկ տպաւորութիւն-

ներով, որոնք, ով գիտէ, ինչ պատահական պատճառներից, կարող էին լինել և նպաստաւոր գիւղացոց համար, և անուղղելի չարիք: Եւ ձիտ, ինչով բացատրել քիչ վերեք նշանակուած թուերը, որով երեանի, Բագուի և Գանձակի նահանգների միջակ ընտանիքների տուրքերը (10,8—117 ոռւրլի) մէկ ու կէս անգամ աւելի բարձր էին Թիֆլիսի նահանգի տուրքից (82 ո.) և երկու անգամ բարձր Քութայիսի նահանգի տուրքից (535 ո.): Միթէ մշտադալար Քութայիսի նահանգը աւելի աղքատ էր, քան Բագուի չոդ ու ամայի անապատները, կամ այգեգործ ժիր, կուլտուրական իմերէնները աւելի քիչ էին աշխատում, աւելի աղքատ էին ապրում, քան թէ արեւելեան Սնդրկովկասում թափառող խաչնարած թուրքերը և հողագործ հայերը:

Ի հարկէ ոչ:

Սա միայն խոչոր սիսալի հետեանք էր, հիմնուած չինովնիկների սոսացած տապաւորութիւնների վրայ: Նոյնանման սիսալներին վերջ չը կար և ամեն մի նահանգում, ամեն մի գուառում:

Չը նայած որ երկրի զանազան դասակարգի գիւղացիների վճարելիք տուրքի աստիճանը տարբերւում էր, այնուամենայնիւ դա գրաւական չէ, որ տուրքի աստիճանը համապատասխանում էր գիւղերի անտևսական ապահովութեան:

Երեաննեան նահանգում, օրինակ, զանազան կարգերի գիւղացիների ծխուր վճարում էին:

44,825	ծուխ պետ. հողի վրայ ապրող .	. 150—10 ո.
1,019	» եկեղեց. » » . . — —	
12,964	» կալուածատէրերի » . . 175—8 »	
1,255	» սևիսականատէր գիւղացիներ . 175—8 »	
628	» կանգիրլեցի թուրքեր . . 200—250 »	

Սևիսականատէր գիւղացիների հաւասարեցնելը կալուածատէրերի հողերի վրայ ապրող գիւղացիների հետ, պարզում է բաւականաչափ այն, որ այս բաժանումները ունեին միմիայն... սննուածական արժէք: Դրա մէջ չը կասկածելու համար, բաւական է հետեւել նրան, թէ ինչպէս էին բաժանուած տուրքերը երեանն նահանգի զանազան գաւառների մէջ:

1884—89 թթ. հետազօտութեան ժամանակ պարզուեց զանազան աստիճան ծխահարկ վճարող գիւղերի թուերը, որ հետեւալն էր.

Գատառներ.	մինչև 2 ո.	2—4	4—6	6—8	8—7	բնդամ. գիւղ. թիւ.
Երեաննի . .	. 12	56	52	13	—	33

Զգուառուս, 1901.

Ալեքսանդրոսկ.	.	3	99	55	3	—	160
Նոր-Բայազէթի	.	1	2	17	58	46	124
Էջմիածնի	.	—	77	6	34	—	117
Նախիջևանի	.	12	46	—	1	—	59
Սուրմալուի	.	2	38	41	2	—	83
Շարուր-Դարալագ.	—	62	59	4	—	125	

Այս բաժանումների ակներե սխալը պարզելու համար բաւական է յիշեցնել միայն, որ ամբողջ նահանգի ամենացուրտ և ամենաազբատ նոր-Բայազէթի գաւառը ծանրաբեռնուած էր ամենից շատ: Եթէ համեմատենք այդ գաւառը աւելի հարթ և հողագործ Ալեքսանդրոսկի, կամ աւելի հարուստ Երևանի գաւառի հետ, կը տեսնենք որ զանազան կարգի տուրք վճարող գիւղերի թիւը այդ գաւառներում հաւասար էր:

Խնչ կարգի տուրք.	Նոր-Բայազ. գաւ.	Ալեքս.	Երևանի.
Ցած (մինչ 2 ռ.)	1	3	12
Միջակ (2—6 ռ.)	19	153	108
Բարձր (6—8 ռ.)	104	3	13

Հնդամենը՝ 124 160 133

Այսպիսով՝ տուրքի ցած, միջակ և բարձր աստիճաններով ծանրաբեռնուած էին.

Ցած. Միջակ. Բարձր.

Նոր-Բայազ. գաւ.	գիւղերի.	»	10%	15%	84%
Ալեքսանդրոսկի.	.	»	2%	96%	2%
Երևանի	.	»	9%	81%	01%

Աւելի անարդարացի կերպով էր կատարւում գաւառների ու գիւղերի մէջ տեղական (ՅԵՄԵԿԻ անուանեալ) տուրքի բաժանումը:

Չը նայած զանազան գիւղերի տնտեսական դրութեան մէջ եղած մեծ տարբերութեան, տեղական տուրքի աստիճանը Երևանի նահանգի բոլոր գիւղերում... միևնոյն էր: Ի բաց առեալ Սուրմալուի և Երևանի գաւառները (ուր տեղական տուրքերը երկու կարգի էին), Երևաննեան նահանգի մեջած հինգ գաւառներում բոլոր գիւղերի տեղական հարկը նշանակուած էր 7 ռ. 80 կ. վերջի ժողովրդագրութեան (կամերալի) ընտանիքից:

Անկասկած, տուրքի մի աստիճան նշանակելը բոլոր գաւառների ու գիւղերի համար շատ հեշտ էր և յարմար չինովնիկների համար, աղատելով վերջիններիս աւելորդ գլխացաւանքից ու հաշիւներից, բայց դա շատ ծանր և կորստաբեր պիտի լինէր աղքատ գաւառների ու գիւղերի համար: Ահա այս տեսակ սխալների պատճառով էր, որ 1884—86 թթ. հետազօտու-

թիւնը պարզեց իշխող հարկատիրական ձեի բացասական կողմերի չը սպասած սիւրպրիզներ:

Պ. Դեկօնսկու *) ասելով Շուշուայ գաւառի պետական
68 գիւղերից վճարում էին՝

19 գիւղ (մեծ մասամբ դաշտում) 3—5-ական ո. ծխահարկ:

25 գիւղ վճարում էին . . . 6—9-ական . ծխահարկ.

24 գիւղ վճարում էին . . . 10—13-ական. ծխահարկ.

«Թափառաշրջիկ հասարակութիւնների մեծ մասը (դաշտում ապրող) — ասում է հետազօտողը — որոնք աշքի են ընկանում իրանց հարստութեամբ ու անասունների բազմութեամբ (60-ից աւել ծխի վրայ), վճարում են 6-ական ոռւբլի. ընդհակառակը, նստակեաց գիւղացիք, որոնք աւելի աննպաստ պայմաններում են ապրում, վճարում են ծխից 9, 11 և 13 ոռւբլին: Շամախի գաւառում, պ. Աբէլենանի *) ասելով, հողից բոլորովին զուրկ Բայաթ-Նազր-Հուսէյին և Բաս-Խալ գիւղերը վճարում էին 9 և 45-ական ո. ծխահարկ, իսկ 315 և 275-ական դես. (ծխի հաշուի) հող ունեցող Բախչի-Յուրինի և Ղարա-Մանէթլի գիւղերը — 5 և 45-ական ոռւրի: Էջմիածնայ գաւառի միմեանց հարևան և միատեսակ պայմաններում գտնուող Կարգաբազար և Արմութլի գիւղերի հողերի տարածութիւնը և վճարելիք տուրքերը կազմում էին.

	Հողը դես.	Ընդամ. ո.	Հողը դես. վրայ ո.	Վայ ո.
Կարգաբազար	. 263	230	1442	439
Արմաթլի	. 681	168	1263	133

Աւելի մեծ անհաւասարութիւն նկատում էր Ղազախի գաւառում: Պ. Երիցեանի **) հետազօտութիւնից մենք վերցնում ենք մի քանի օրինակներ, որոնք այդ մասին տալիս են որոշ գողափար:

Խնչ գիւղերու	Հողի տարածութիւն Ծխի վրայ դես. Վարելահող. Ամեն տես. հող.	Ծխահարկի չափը.
Դաշտի	{ Աթամ աղալի 124 318 450	
	{ Ասրիկ Բայթամի 583 4042 450	
Միջակ	{ Կուլալի 391 1082 450	
գօտիկ	{ Պետիս 2216 4416 550	

*) Մատերիալы по изуч. экономич. бытие госуд. хр. т. IV.

**) Ibid, т. VI.

***) Ibid, т. IV.

Սարերի	{	Բաշքենդ	492	1964	800
		Միխայլօվկա	615	3515	800

Այս տեսակ սխալներ հարկի վերաբերմամբ չէին կարող գոյութիւն ունենալ պարսկական բէժիմի ժամանակ:

Դժբախտաբար նոր բէժիմի հարկային ձեր սիալմունքները չը սահմանափակուեցին վերը մեր ասածներով: Այս անհաւասարութիւնը, որ չորհիւ «ծխահարկի» սկզբունքի մոդըրուեց զանազան նահանգների, զաւանների ու դիւզերի մէջ, սկսեց արմատ ձգել և դիւզերում ապրող ընտանիքների մէջ... Այս բանին մասսամբ արգելվ էր հանգիստում ժողովրդի բնական խելքն ու տրամաբանութիւնը, ինչպէս և տիրող օրէնքների այն մասը, որով (ապառիկներ չը կիտուելու համար) գիւզերի վրայ եկած հարկի բաժանելը թողնուում էր համայնքի հայեցողութեան: Այս օրէնքի չորհիւ, պետական հարկային ձեր փոխուսութեան հետ միասին անպայման չէին փոխուում և գիւզերի մէջ եղած սովորութիւնները հարկի բաժանման վերաբերմամբ: Գիւզերը ղեկավարուում էին օրէնքների ու «աղաքների» վրայ հաստատուած սովորութիւններով: Բայց, այնուամենայնիւ, սխալ հիմքերի վրայ հաստատուած օրէնքը կատարուում էր իր կորստաբեր գերը... Զէ որ, եթէ նշանակութիւն ունէր ադաթթ, աւելի ևս նշանակութիւն պիտի ունենար այն հանգամանքը, որ եղած իշխանութիւնը տուրքը նշանակելիս ղեկավարուում էր «ծխարի» թուով: Նամանաւանդ որ ծխահարկի սիստէմը ձեռնտու էր զիւղացիների մի մասին, հարուստներին, որոնց ձայնը առանց այն էլ համայնական ժողովներում ամենալսելին է: Բնականաբար «ծխահարկի» ընդունելը իբրև հարկի հիմք պիտի նպաստէր հին՝ աւելի արդարացի սկզբունքների վերացուելուն ու ոչնչացնելուն: Եւ այդպէս էլ եղաւ:

Կոմիսառում համագիւղացիների մէջ հնուց գոյութիւն ունեցող սովորութիւնների մասին հարկերի բաժանման վերաբերմամբ մենք հաստատ տեղեկութիւններ չունենք: Զը նայած այս հանգամանքին շատ հիմքեր կան ենթազրելու որ երկրի զանազան շրջաններում ու գիւղերում այդ սովորութիւնները պիտի զգալի կերպով տարբերուէին միմեանցից: Եւ այլ կերպ չէր էլ կարող լինել մի երկրում, ուր միմեանց կից ապրում են զանազան ցեղերի պատկանող, զանազան քաղաքական անցեալով ապրած և զանազան կուլտուրական շրջանների մէջ գանուած ազգութիւններ:

Աֆրիկայի կիսավայրենի ցեղերի մէջ, ուր չի զարգացած նոյն իսկ խաչնարածութիւնը և գծուար են հաղորդակցութեան միջոցները, առևտուրի ամենաստարածուած առարկան մարդն է:

Պատերազմների ժամանակ յաղթողների աւարը գերիներն են կազմում, կամ այլ խօսքերով տուրքի ամենազլիաւոր օբեկտը, առարկան մարդն է... նոյն էր և ամեն տեղ նախ քան կուլտուրայի զարգացումը։ Երբ սկսուեց զարգանալ խաչնարածութիւնը և մարդկանց ամենամեծ հարստութիւնը կազմեցին անասունները, վերջններիս շուրջը սկսեց պատել և առևտուրը։ Անասունների թուով չափում էր և վճարելիք տուրքերի աստիճանը։ Անասնապահութեան յետեից միմեանց յաջորդեցին հողագործութիւնը, այդեղործութիւնը, արհեստները և արդիւնաբերութիւնը։ Դրա հետ միասին առևտուրն էլ սկսեց տատանուել այդ ճիւղերի արդիւնքի շուրջը. տուրքերն էլ սկսեցին վճարուել հողագործութեան, արդիւնաբերութեան մթերքներից։ Հասկանալի է որ ապրուստի ու հարստութեան նոր ճիւղերի առաջ գալուց չէին ոչնչանում հին ճիւղերը։ Մարդկանց ու ժողովուրդների հարստութեան համագումարի մէջ փոխում էր միայն այդ ճիւղերի նշանակութիւնը։ Սկզբում ամենամեծ նշանակութիւնը ուներ մարդը, յետոյ անասունները, հողագործութեան, արդիւնաբերութեան մթերքները։ Օրինակ, մարդիկ կամ գերիները դեր էին խաղում ոչ միայն հրէաների գերութեան ժամանակ եղիպտոսում ու Բաբելոնում։ Քսէնֆոնի նահանջի միջոցին, Միջադեպից դէպի Աև-ծովը (Վ դար. Ք. առաջ), յոյների աւարի աշքի ընկնող մասը մետաղների, զէնքերի, հագուստների ու անասունների հետ միասին կազմում էին և... գերի կանայք ու երիտասարդներ... Այն հայ գիւղում, ուր գիշերեցին յոյները, նրանք գտան նժոյգներ, որ գիւղացիք մնացնում էին թագաւորի համար (իրեն տուրք)։ Զը նայած դրան, յունաց զօրավարներից մէկը հայ տանտիրոջ որդուն իր հետ գերի տարաւ Աթէնք։

Գերի վերցնելը կամ մարդկանցով տուրք վճարելը ամենատարածուած միջոցն էր ոչ միայն թաթարների արշաւանքների ժամանակ, այլև նոյն իսկ Շահ-Աբբասի... Աւելի եւ. XVII դարի վերաբերմաստը ճանապարհորդ Շարդէնը ասում է որ Մինքրելիայից, Խմերէթից և Փուրիայից տարեկան ծախումը էր 400—500 մարդ և որ գերիների արժէքը հասնում էր մինչև 50—60 և աւելի արծաթի, նայած մարդու հասակին, սեռին, գեղեցիկութեան։ 1812 թուի սովոր ժամանակ Քութայիսի սուս նահանգապետը զանգատուում էր բարձր իշխանութեան, որ չի կարողանում արգելել մարդկանց առևտուրը, որովհեան սոված ծնողները ծախում են իրանց որդիկերանց հարեան զաւառները։ Սիսալ չը պիտի համարել այն ընդհանրացած կարծիքը, որ Պօլսի ու Եգիպտոսի հարէմներում այսօր էլ գտնւում են Աբխա-

զիայում, Գուրիայում, Մինգրելիայում գնուած մահմեդական ու քրիստոնեայ աղջիկներ ու տղաներ...

Հարկաւոր էին հազարաւոր տարիներ, որպէսզի մարդք դադարէր առևտուրի ու տուրքի առարկայ լինելուց և որպէսզի նրան փոխարինէին արդինաբերութեան զանազան ճիւղերի նիւթեր: Բայց քանի որ ապրուստի ու հարստութեան ճիւղերը զանազան ժամանակներում ու զանազան պայմաններում միատեսակ նշանակութիւն չունեն, ուստի և բնական պիտի համարել որ մի տեղ տուրքի ծանրութիւնը ընկնում է արդինաբերութեան միւղի վրայ, միւս տեղ—միւսի, մի տեղ տուրքի է ենթարկում հարստութեան մէկ, ամենազիստաւոր ճիւղը, միւս տեղ—տուրքով ծանրաբեռնուում են եկամուտի բոլոր աղբիւրները: Ինչպէս անփոփոխ չէ ինքը կեանքը, նոյնպէս էլ միատեսակ չեն հարկերի ձեւերը և այն աղաթները, որոնցով զեկավարում են համագիւղացիք՝ զիւղի վրայ եկած տուրքը բաժանելիս: Հայկական շրջանում ապրող զիւղանցի քրդերը, որ սարդարին տուրք էին տալիս ոչխարով, բրդով, իւղով, տուրքի ամբողջ քանակութիւնը միմեանց մէջ բաժանելիս մի՞թէ կարող էին այլ սկզբունքով զեկավարուել, եթէ ոչ ամեն մէկի ունեցած անասունների թուով: Երկրագործ զիւղերը, որ դարերի ընթացքում մթերքներից տասանորդ էին վճարում, հացը դրամի վերածած ժամանակ միմեանց մէջ անսպայման զեկավարուելու էին հողի տարածութեան սկզբունքով: Այնպէս էլ այգեգործական, շերամապահական և այլ շրջաններում: Ոչ միայն այդ. Սարդարի կառավարութեան ժամանակ գոյութիւն ունեցող հարկացին ձեզ ապացոյց է, որ մօտ հարիւր տարի մեզանից առաջ, տուրքերը բաժանելիս զիւղացիք զեկավարում էին կարողութեան և եկամուտի սկզբունքով: Վերջին 20 տարուայ ընթացքում կատարուած հետազօտութիւնները պարզում են, որ այդ սկզբունքը ենթարկուած է լուրջ փոփոխութիւնների, հաւանականորէն «Ճխահարկ» սիստէմի ընդունուելու չնորհիւ: Դա պացուցւում է պետական զիւղացիների մէջ ներկայումս գոյութիւն ունեցող սովորութիւններով:

Ա. ԶԱՀԱՐԵԱՆ

(Կը շարունակուի)

ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Գրաստանի ծխական ուսումնարանների նոր ծրագիրը. — Գրագիտութիւն
տարածող ընկերութիւնը. — Կօսպերատիվ շարժումը վրացական կեանքում:

Վերջին շաբաթներս վրաց հասարակութեան և մամուլի մէջ շատ են խօսում եկեղեցական-ծխական ուսումնարաններում տեղի ունենալիք փոփոխութեան մասին: Բայցի մինիստրական և հասարակական տարրական դպրոցներից վերջին տարիներս հին Վրաստանի երեք թեմներում, այն է՝ Քարթլ-Կախէթում կամ բուն Վրաստանում (Թիֆլիսի նահանգ), Իմերէթում և Գուրիա-Մինդելիայում (Քութայիսի նահանգ) մէկը միւսի յետեից և մեծ արագութեամբ բացւում են եկեղեցական-ծխական ուսումնարաններ, որոնք բոլորն էլ պահուում են օրթօգօքս սինօդի հաշուով: Բաւական է ասել, որ մինչեւ այդ ուսումնարանների հիմքը գրուել է ընդամենը միայն 15 տարի առաջ, ներկայ բոպէիս միմիայն Քարթլ-Կախէթի թեմում գոյութիւն ունեն 200 այլպիսի ուսումնարան: Այդ օգտաւէտ ձեռնարկութեան ինիցիատորն եղել է 1885 թուին Վրաստանի այն ժամանակի էքզարքոս Պատէլը՝ խորհրդակցութեամբ Իմերէթի հըռչակաւոր առաջնորդ վրացի Քարթլէլ եպիսկոպոսի: Բայցի վերոյիշեալներից կան նաև բաւականաչափ ուսումնարաններ, որոնք պահուում են «Կովկասում քրիստոնէութիւն վերականգնող» և «Վրաց մէջ գրագիտութիւն տարածող» ընկերութիւնների հաշուով: Այդ եկեղեցական-ծխական ուսումնարանները ունէին մինչեւ օրս եռամենայ ուսում և նրանք ջոկուում էին միւս բոլոր տեսակ գպրոցներից իրանց այն մեծ առաւելութեամբ, որ տեղացի մանուկները առնում էին այնուեղ ուսումը մայրենի լեզուով, իսկ պետական լեզուն աւանդւում էր նրանց իրրե մի առանձին առարկայ: Այդպէս էին թէ քաղաքի և թէ գիւղի ուսումնարանները: Պետերբուրգի սինօդը, կամենալով ուժեղացնել ուսումը յիշեալ դպրոցներում, որոշեց սրանից մի քանի ամիս առաջ՝ եկող սեպտեմբերից բանալու նրանցում նաև չորրորդ տարուայ

դասընթացք։ Այդ բարեփոխութիւնը տեղի կ'ունենայ նախ միայն Քարթլ-Կախէթի թեմում, որի հոգեոր խորհրդին և յանձնուեց պատրաստելու նոր ծրագիր և ներկայացնելու ի հասատութիւն սինօդի։

Այդ հոգեոր խորհրդից ընտրուած և երեք հոգուց (երկու վրացի, մէկը ռուս) բազկացած մասնաժողովի կարծիքով հարկ չը կար հին ծրագրի մէջ որ և է վոփոխութիւն մտցնել, այլ պէտք էր միայն նոր բացուելիք չորրորդ բաժանմունքում կրկնել ուսւաց լեզուով այն բոլորը, ինչ որ աշակերտաները սովորում են մայրենի լեզուով նախորդ երեք տարիներում։ Այդպիսով երեխաները, մասնաժողովի կարծիքով, աւելի հիմնաւոր կ'իմամանային իրանց ուսածը և բաւականաչափ կը տիրապետէին նաև պետական լեզուին։ Հոգեոր խորհրդութը՝ նախադահութեամբ էքզարքոս Թլաւիանի՝ մասնաժողովի այդ առաջարկութեամնը գերադասեց և ամբողջովին ընդունեց Քարթլ-Կախէթի եկեղեցական ուսումնարանները բաժանւում են նախ քաղաքային և գիւղային ուսումնարանների։ բոլոր բաղադայիններում ուսումնական առարկաները ուանդուում են անպայման՝ ամբողջ 4 տարուայ ընթացքում, սկզբից մինչև վերջը՝ ուսւաց լեզուով։ Վրացերէնն աւանդուում է միայն իբրև առանձին առարկայ և այդ էլ այն գէպքում, եթէ ուսուցիչը գիտէ այդ լեզուն։ Դասաւանդութիւնը հեշտացնելու համար գործ է դրւում այսպէս անուանուած համբ մերողը, այսինքն ուսուցիչը հասկացնուում է երեխաներին իր ուզած բաները զանազան շարժումներով և նշաններով և ապա սովորեցնուում զրանդ համապատասխան բառերն ու խօսքերը։ Գիւղական ուսումնարանները բաժանւում են 2 խմբի, այն ուսումնարաններում, որոնց մէջ վրացիների հետ սովորում են նաև ուրիշ ազգի երեխաներ, ինչպէս ևն հայեր, յոյներ, օսեր, ռումներ, այսօրիներ և այն,—զասաւանդութիւնը լինում է բացարձակապէս քաղաքային ուսումնարանների նման։ եթէ մինչև իսկ նրանցում վրացիների թիւը կազմէ ահազին մեծամասնութիւն և միւս աղղերի երեխաներն էլ իմանան վրացերէնը։ Երկրորդ խմբի ուսումնարանները գիւղերում կազմում են նրանք, որոնցում սովորում են անիսան, զուս վրացին։ Դրանց ուսման ծրագիրն այսպէս է, առաջին տարին առարկանները սովորում են մայրենի լեզուով, իսկ ուսւերէնից ունեն միայն բերանացի լեզուական վարժութիւններ (լեքսական դասեր)։ Երկրորդ և երրորդ տարին առարկաններն աւանդուում են զուղընթացաբար վրացերէն և ուսւերէն լեզուներով, այսինքն իւրաքանչիւր դա-

ուր վրացերէնից անմիջապէս թարգմանում է ռուսերէնի. չորրորդ տարին բոլոր սովորածը կրկնուում է ռուսերէնով։ Այն բոլոր ուսումնարաններուում, որտեղ ուսուցիչը գիտէ վրացերէն, չորրորդ տարուայ ընթացքում պէտք է սովորեցնէ միայն հին, խուցուրի կոչուած վրաց եկեղեցական լեզուն, իսկ կենդանի լեզուի դասեր այդ բաժնամունքում՝ չէն լինելու։

Վրաստանի հոգիոր խորհրդի այդ նոր նախագիծը, բնականաբար, մեծ տպաւորութիւն թողեց, վրաց հասարակութեան և մամուլի վրայ։ Վրաց մամուլը, յուսալով որ սինօդը կը յարդէ տեղացիների կարծիքը, ենթարկեց այդ գլորոցական նոր ծրագիրը մանրամասն և եռանդուա քննութեան՝ մանկավարժական և այլ տեսակէտերից։

«Ծերեկուայ լոյսի պէս պարզ է,—ասում է «Խոլերիան»—թէ որքան անձիշտ է այդ ծրագրի իմաստը։ Դրա իրականացումը կատարեալ դժոխքի կը փոխի ուսումնարանները։ Մանուկների մաքի շփոթում ու խանգարում—ահա նրա անմիջական հետեւանքը։ Նա իրար կ'անցնէ նաև զիւղացիներին և պառակտում կը յառաջացնէ նրանց մէջ։ Մինչև օրս վրացի զիւղացին եղբայրաբար էր վարուում հայերի և օսերի հետ և իրամներից չէր ջոկում նրանց, բայց այժմ այդ եղբայրական յարաբեբութիւնը (մինոյն զիւղում) կը քանդուի և պառակտում կը զոյտցնի։ Եթէ գիւղն այլ ևս չի ճանաչուի վրաց զիւղ և նրա ուսումնարանը՝ վրաց ուսումնարան լոկ այն պատճառով, որ այդ զիւղում բնակութիւն ունեն մի քանի տուն հայ կամ օս։ Այն ժամանակ վրացի զիւղացիք վիսասակար կը համարեն այդպիսի հարևաններին, ամեն ակասակ հնար գործ կը գնեն, որ նրանց հալածեն զիւղից, նրանց երեխաններին կ'արգելն ուսումնարան յաձախելը և այսպիսով կը ստեղծուի մի գրախատ զրութիւն։ Մինչդեռ գլորոցն ամեն տեղ ծնում է բարեմտութիւն և բարեսրտութիւն, նա մեզանում կ'աճեցնէ այսուհետեւ միայն վայրագութիւն, չարութիւն և թշնամութիւն» *):

Համբ մեթոգով լեզուի և կրօնի գասատւութեան անյարմարութիւնը լրագիրը ձևակերպում է հետեւալ կերպով։

«Համբ մեթոգի օգնութեամբ երեխան կարող է սովորել լեզուի միայն տեսանելի, մարմնական, նիւթական կողմը և այն էլ մեծ դժուարութեամբ, բայց նա բոլորովին անզօր է ծանօթացնելու աշակերտներին խօսքի անտեսանելի, հոգեկան և աստուածային կողմի հետ, մինչդեռ հէնց այս վերջին կողմն է ամենապլիսաւորը եկեղեցական-ծխական ուսումնարաններում։

*.) «Խոլերիա», № 148.

Այդ մեթողը անպատճառ կը զարգացնէ ուսումնարաններում հեթանոսական նիւթապաշտութիւն և բոլորովին կը հալածէ այնտեղից քրիստոնէական իդէալիզմը: Ուստի դրա մուաքը նոյնքան անընդունելի պէտք է լինի ծխական դպրոցներում, որքան և սատանայինը—դրախտում:

«Փրաքանչիւր դաւանութեան ազգին չնորհուած է իրաւունք սովորացնելու իր կրօնը երեխաներին մայրենի լեզուով և այդ ոչ միայն տարրական, այլ նաև միջնակարգ և բարձրագոյն ուսումնարաններում: Այդպէս է Ասիայում, Ամերիկայում, Մոռասատանում և ամեն տեղ, ի՞նչու և ապա մեր ազգին էլ կը պէտք է չնորհուի այդ բարիքը: Ի՞նչու պէտք է նա կազմի այդ ցաւալի բացառութիւնը ուրիշ ժողովուրդների մէջ: Քանի տարի են սովորում ուսում մանուկները կրօնը տարրական ուսումնարաններում իրանց մայրենի լեզուով: Երեք: Մենք ուսաների եղբայրներն ենք, նրանց հաւատակիցը, նրանց հետ յօժար կամքով միացած և հաւատարիմ հպատակ ուսում թագաւորի. ուրեմն եթէ կայ աշխարհում արդարութիւն, պէտք է մեր երեխաներին էլ չնորհուի այդ լաւութիւնը, պէտք է նրանք էլ ուսանն իրանց մայրենի լեզուով՝ իրանց հաւատի վարդապետութիւնն ու սրբազն պատմութիւնը» *):

Այդ դպրոցական նոր ծրագրի ասիթով վրաց լրագիրն անում է իր մի խմբագրականում հետեւեալ առաջարկութիւնը.

«Հոգեորականութիւնը, որպէս պաշտպան իր հօտի բարոյական և կրօնական շահերի, ունի իրաւունք, որքան մեզ յայտնի է, կազմելու պէտք եղած ժամանակը գործակալութիւնների ժողովներ, դատելու այս կամ այն առարկայի մասին և ապա ներկայացնելու իր կարծիքն ու որոշումը տեղական հոգեոր կառավարութեան: Յուսով ենք, որ ներկայ դէպքումն էլ մեր հոգեորականութիւնը նոյն տեսակ կը վարուի, և եթէ համոզուի, որ դպրոցական նոր ծրագիրը անյարմար է, կը ներկայացնէ իր պատճառաբանուած կարծիքը թեմի բարձրագոյն վարչութեան՝ այդ կարծիքին կանոնաւոր ընթացք տալու համար: Բացի այդ, մեր հոգեորականութիւնը կարող է խնդրել յիշեալ վարչութիւնից, որ նշանակուի նոյնպէս՝ որքան կարելի է շուտ՝ ամրող թեմի հոգեորականների ժողով, որպէս զի այդ վերջինը քննէ նոր ծրագիրը և, նրան չընդունելու դէպքում, ինդրէ վրաստանի եքզարքոս սրբ. Ֆլաւիանի միջնորդութիւնը և. սինօղի առաջ» **):

*) «Թիվերիա», № № 148 և 150.

**) Ibid.

Մեր այս տեղեկութիւնը լրացնելու համար պէտք է աւելացնենք նաև, որ վերոյիշեալ 200 ծխական գպրոցներից 32-ում սովորում են անխառն կերպով միայն յոյներ:

Մենք մի առանձին բաւականութեամբ անցնում ենք այժմ մի միթթարական երևոյթի մեր հարեանների կեանքում: Դրանց ազգային հաստատութիւնների մէջ շատ պատուաւոր տեղ է բոնում «Վրաց զրագիտութիւն տարածող ընկերութիւնը», որ գործել է արդիւնաւէտ կերպով ամբողջ 22 տարի: Ընկերութիւնն ունի իր ձեռքում այն բոլոր գործօնները, որ անհրաժեշտ են մի այդպիսի բարձր գաղափար իրականացնելու համար. ուսուումնարաններ, էժանագին զրագարան-ընթերցարաններ, սեփական միջոցներով հրատարակուող գրքեր, թանգարան, գիտնական գրքերի և վրացերէն ձեռագիրների ժողովածու, զրավաճառանոց և մինչեւ իսկ լուսանկարչանոց, որ նուիրել է նրան հանգուցեալ Ռօխնովը... Բացի այդ՝ ընկերութիւնն օդնում է զրամով զրոյներին և ուսանողներին և գրքերով ու ուսումնական պիտոյքներով՝ այլ և այլ—ոչ իր սեփական—զպրոցներին և զրագարաններին: Եա ունի նոյնպէս՝ թէև չափուոր՝ յատուկ գումարներ (մօտ 10,000 ռուբլի) զրոյների, թանգարանի, ձեռագիրների ժողովածուի և ապագայ տպարանի համար:

Անցեալ 1900 թուին ընկերութիւնն ունեցել է, ինչպէս այդ երեսում է վերջերս լոյս տեսած հաշուից, 8 պատուաւոր, 73 հիմնադիր և 588 խակական անդամ. պահնլ է 3 ուսումնարան ամբողջապէս իր հաշուով, զարձեալ 3 ուսումնարան, որոնց ծախսի կէսը ինքն է հոգում, իսկ մնացածը—զիւղական հասարակութիւնը և էլի 2 ուսումնարան, որոնց ծախսը յանձն է առել իր վրայ Քութայիսի կալուածական բանկը. ունեցել է 7 էժանագին զրագարան-ընթերցարան՝ քաղաքներում և զիւղերում. նպաստ է տուել 10 ուրիշ ուսումնարանի և 6 զրագարան-ընթերցարանի. տպագրել է 5 անուն գիրք, որոնցից մէկը, այն է մեր ընթերցողներին ծանօթ երաժիշտ Փ. Քօրիձէի երգերը՝ դուրս է նկել ուժը առանձին տեսրակներով. ընդհանուր ծախսը այդ գրքերի, որոնց մէջ կան և դասագրքեր (տասնեւակ հազարներով), եղել է 7375 ռուբլի: Այնուհետև ընկերութեան զրավաճառանոցում սեփական և ուրիշներից վերցրած հրատարակութիւնները եղել են 35,319 ռուբլու արժողութեան, որոնցից ծախուել է տարուայ ընթացքում 19,662 ռուբլու ապրանք և զուտ արդիւնք մնացել է զրանից 1917 ռուբլի: Ընկերութեան զրասենեակում պահուող մատենագարանում գտնւում էր 3355 վրացերէն գիրք և ձեռագիր և 1254 գիրք էլ օտար լեզուներով: Հաշուետուութեան տարին ընդհանուր մուտք եղել է 19,990

ոռւբլի և նոյնքան էլ ծախս, որից մօտ 9000 ոռւբլին ընկնում է ուսումնարանների վրայ:

Ընկերութիւնը մեծ համակրութիւն է զայելում գաւառներում, որտեղ շարունակ տրւում են ներկայացումներ, կազմը և ուսումների շարունակ տրւում են անդամակութիւններ և արդիւնքն ուղարկուում ընկերութեանը: Բաւական է յիշել այդ կողմից, որ միայն Բաթումից ու Վլագիկաւկազից ստացուել է հաշուետութեան տարին 1365 ոռւբլի. Բագուից—1500 ռ., Գանձակից—400 ռ. և այլն: Իբրև մի հետաքրքրական բան, աւելացնենք նաև, որ անցեալ տարի 15 անձ և հաստատութիւն իրաւունք են վերցրել ընկերութիւնից պահելու իրանց մօտ փակ գանձանակներ (զուլար), որոնցից գոյացել է 186 ոռւբլի:

Ընկերութեան ամբողջ գոյքն հաւասարում էր 1901 թ. յունուարի 1-ին 48,923 ոռւբլու:

Վրացիք կարող են պարծենալ, որ մեզանից չուտ հասկացան ժամանակակից նշանաւոր գաղափարներից մէկի՝ կօսպերատիվ ընկերութիւնների կազմակերպութեան՝ իրականացնելու անհրաժեշտութիւնը: Տասը տարուց աւելի է, որ Վրաստանի գիւղերում և քաղաքներում գործում են թէ արդիւնաբերողների և թէ սպառողների ընկերակցութիւններ, աւելի կամ պակաս շրջանառութեամբ: Զունենալով ներկայ բոպէիս մեր ձեռքում ճիշտ թուանշաններ այդ օրինակ կազմակերպութիւնների շրջանառութեան և ել և մուտքի մասին, մենք կը թուենք այս անդամ այդ ընկերակցութիւններից մի քանիսի գործունէութեան տեղերը: Թիֆլիսում գոյութիւն ունեցող վրաց «Շուամավալի» (միջնորդ) սպառողական ընկերութիւնը պահում է իր անդամների համար մի խանութ: Եոյն քաղաքում նորերս հիմնուեց մի ընկերութիւն, որ նպատակ ունի մատակարարելու իր անդամներին հաւեր և այլ ընտանի թոշուններ: Քութայիսում մօտ 2 ամիս առաջ հիմնուեց իր անդամներին թխած հաց մատակարարելու ընկերակցութիւն: «Շուամավալի» նման խանութներ կան Կախէթի Մաշխանի և Շիլդա գիւղերում: Արդիւնաբերողների ընկերակցութիւններ գոյութիւն ունեն՝ երկուսը կախէթում—այգետէրերի—սեփական գինին ծախելու, մէկը՝ Գորու գաւառում—տեղական կալուածատէրերի—ամնատեսակ գիւղական արդիւնաբերութիւնները ծախում են բոժոք, իսկ երրորդը՝ Գութայիսի գիւղի ընկերակցութիւնները ծախում են բոժոք, իսկ այլ արդիւնքները:

Այդ վերջինն երեք ընկերակցութիւնները ունեն ընդարձակ շրջանառութիւն և իրանց ապրանքի (բոժոժ, ընկոյզի ծառ, սիմինդր և այլն) մեծագոյն մասը արտահանում են Եւրոպա, որտեղ ունենում են շարունակ իրանց միջից ընտրած գործականներ։ Կախէթի ընկերութիւններն ունեն Թիֆլիսում մեծ պահեստ և դրանց գինին ուղարկում է նոյնպէս Ռուսաստան և արտասահման։ Այդ տեսակ արդիւնաբերողների ու սպառողների ընկերակցութիւններ, ինչպէս երեսում է վրաց լրագրութեան մէջ տպուող տեղեկութիւններից, հիմնուելու են մօտիկ ապագայում նաև ուրիշ շատ տեղերում։ Ուշագրութեան արժանի են այդ վերջինների մէջ կախէթի «ոչխարաբոյծերի» և «ծխախոտաբոյծերի» նախագծուած ընդարձակ ընկերակցութիւններ։

Հանգուցեալ Արծրունին մի ժամանակ ասում էր, որ հայերը, առանձին վերցրած՝ լաւ են, առաջադէմ են, բայց միասին վերցրած՝ անպէտք են... Մեր այդ «խմբական անպէտքութիւնը» հաստատում է այժմ, ի միջի այլրոց, և այն ապշեցնող հանգամանքով, որ հայ մարդու համար գոյութիւն չանի մինչև օրս և ոչ մի կօպերատիվ կազմակերպութիւն...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անձնական նախաձեռնութիւնը հասարակական կեանքում.—Ինստիգէնցիայի դերը այդ հարցում.—Դործնականութեան ողին Եւրոպական հասարակական գործիչի մէջ,—Վերացական դատողութիւնների սէրը մեր մէջ.—”Հասարակական գիտութիւնները“ լսովներին մի խորհուրդ.—Ժողովրդական կրեղիտի կազմակերպութիւնը մեղանում.—Անձնական նախաձեռնութեան օրինակներ մեր կեանքից.—Պէտք է ժողովրդին յարմարեցնել փոփոխող պայմաններին.—Հայ ինտելիցինանների նախաձեռնութիւնը անցեալում.—Դպրոցական կանոնադրութիւններ, —Ընտրողական սկզբունք և փաշայական կամայականութիւն, —Հոգաբարձութիւնը օրինական մարմին է, —Վտանգաւոր էքսպերիմենտներ, —Ընկերակցութիւնների մէջ թագնուած բազմակողմանիութիւնը:

Եւրոպական կեանքը ընդհանրապէս առած տարբերւում է մեր կեանքից իր աչքի ընկնող կինսունակութեամբ, կայտառութեամբ, թափով: Եւրոպային ոչ միայն աւելի մեծ գիտական պաշար ունի, այլ և աւելի շատ ինքնավստահութիւն: Անսահման մեծ է մանաւանդ նրա ինիցիատիվը կամ նախաձեռնութիւնը: Հասարակական բոլոր ասպարէջներում այնտեղ կարելի է տևանել անհատական ինիցիատիվ չնորհիւ կատարուած հակայական գործեր: Անշուշտ այդ երեսոյթը բայցատրւում է նրանով, որ այնտեղ չը կան զանազան խոշնդուսներ ոչ միայն աղասի կարծիք յայտնելու, այլ և զանազան ժողովներ գումարելու և ընկերութիւններ կազմելու դէմ: Մինչզեռ մեզ մօտ վարչական ինամբը մեռունում է մտրդկանց մէջ ինքնուրոյնութիւնը, նախաձեռնող ողին:

Սակայն, այնուամենայնիւ, որոշ սահմաններում հասրաւորութիւն կայ թէ անհատական և թէ հասարակական նախաձեռնութեան համար և մեղանում: Եւ կարելի է ասել, որ մեղ աւելի պակասում է հասարակական ողին, քան թէ ինիցիատիվը, որովհետեւ նեղ ամհատական բարեկեցութեան ուղղուած զործունէութեան մէջ, մանաւանդ հայը, բաւական զարգացած նախաձեռնութիւն է ցոյց տալիս, այդ ընդունա-

կութիւնը նա բաւականաշափ ուժով չի արտայայտում մի-
միայն հասարակական նշանակութիւն ունեցող ձեռնարկու-
թիւնների մէջ։ Տգիտութեան և աղքատութեան մէջ կորած
մասսայից սպասել, որ նա ինքն իրան օդնի, ըմբռնի ժա-
մանակակից կեանքի պահանջները, իր գոյութիւնը բարւո-
քող նոր ճանապարհներ գտնի—նշանակում է լինել ֆա-
տալիստ։ Եւրոպական աւելի աչքաբաց, աւելի զարգացած
մասսաների մէջ անգամ զանազան հանրօգուտ ձեռնարկութիւն-
ների նախաձեռութիւնը պատկանում է ինտելիգէնտ ոյժերին։
Ինտելիգէնցիան է, որ իր գիտութիւնը, իր եռանդը, իր ոգե-
ւորութիւնը զոհում է մասսայի զրութիւնը բարւոքելու հա-
մար։ Հաստատ գիտակցութիւնը՝ որ հասարակական չարիքնե-
րի վերայցումը մարդկանց սեփական ոյժերին է վերապահ-
ուած—ներչնչում է եւրոպացի զաղափարական ինտելիգէնտին
ինքնավատահութիւն և կայտառութիւն նրա գործունէութեան
մէջ։ ոչ մի գժուարութիւն նրան չի յուսահատեցնում, որով-
հետեւ նա զիտէ տեղական պայմանների և հանգամանքների հա-
մեմատ հանձարեղ գործնականութեամբ կազմակերպել կոյիւը
չարիքի դէմ։ Այդ գործնականութիւնը, այդ կազմակերպական
տաղանդը մենք համարեա չունենք, երբ հարցը դուրս է
գալիս մեր անձնական շահերի սահմանից։ Շատ բնորոշ է,
որ մեր ինտելիգէնտներից շատերը տարիներով ապրելով ար-
տասահմանում, ոչինչ չեն սովորում այնտեղի կեանքի դպրո-
ցից։ «Հասարակական գիտութեան» թէօրիաներով զրանք գի-
տեն ոգիորուել, իսկ թէ ինչպէս է եւրոպացին իրագործում
կեանքի մէջ այդ թէօրիաները—մեր «վիլսոնիաներին» այդ չէ
հետաքրքրում։ Եւ վերադառնալով հայրենիք մեր այդ «հասա-
րակագէտ» գալիրները իրանց առաջն պարտականութիւնն են
համարում ուսանողական նստարանից լսած «ամենավերջին»
տեսութիւնները, գիտնականութեան արտաքին բոլոր ձեռքին
հաւատարիմ մնալով—ճառել, մուսանալով որ գիտութեան այր-
ութենք չիմացող ընթերցող մնամաւանութեան համար այդ բո-
լորը այնքան արժէք ունի, որքան դիֆփերինցիալները և ին-
տեղքախները՝ թուաբանութեան չորս գործողութիւնները գեռ
չիմացող աշակերտի համար։ Հասկանալի է, որ ոչ Մարքսը և
ոչ Էնդելսը երբէք չեն պահանջել, որ նրանց հետեղները
կորցնէին իրանց առողջ գատաղութիւնը... Ի հարկէ, ան-
հրաժեշտ է իւրացնել, մարսել գիտութեան «ամենավերջին
խօսքերը», բայց պէտք է նաև իմանալ, թէ ուր ինչ է պահանջ-
ւում որոշ պայմաններում և հանգամանքներում...
Եթէ «հասարակական գիտութիւններ» լսող մեր երիտա-

ապրդները մի և նոյն ժամանակ իրանց նեղութիւն տային ուսումնասիրել գործնականապէս թէ ինչպէս են եւրոպական կեանքի մէջ իրագործում որոշ թէօրիաներ, թէ ինչպէս են, օրինակ, մաքառում վաշխառուների դէմ, ինչպէս են էժան կըրեղիտ, փոխատու-ինայողական, արդիւնաբերական ընկերակցութիւններ կաղմակերպում եացն եացն, և ապա մեր կեանքի մէջ ևս աշխատէին զործ գնել իրանց տեսածը, չը խնայելով եռանդ ու վերցնելով իրանց վրայ ինիցիատիւը, կաղմակերպելու ջանքերը—այն ժամանակ անչուշտ պլզնձի զօղանջիւն չէին լին լայդ շարլօնական տրակտատները...

Պէտք է չը մոռանալ, որ, մանաւանդ 1895 թուականի օրէնքից յետոյ, ժողովրդական վարկի կաղմակերպութիւննը Ռուսաստանում բաւական զիւրութիւններ է ստացել և այդ ուղղութեամբ գործողների համար աղատ ասպարէզ է բացուած գործազրելու իրանց թէ զիտութիւնը, թէ գործնական հմտութիւնը և թէ ինիցիատիւը։ Եւ մենք տեսնում ենք որ Ռուսաստանի այն ծայրերում, ուր ժողովրդի մէջ աւելի է զարգացած հասարակական բնագինները, ուր ինտելիգէնցիան աւելի զարգափարական է և նախաձեռնող—այնտեղ աւելի են տարածուած մասսայի բարօրութեանը նպաստող զանազան ձեր ժողովրդական կրեղիտի և ինքնօգնութեան կաղմակերպութիւնները։ Այդ կողմից կեհաստանը, Բալտաւան նահանգները կարծեն պետութեան մէջ լինէին, քան Կովկասը։

Թէ անձնական նախաձեռնութիւննը հասարակական կեանքում ահագին դեր կարող է կատարել նաև մեր կեանքում, չը նայած քոլոր աննպատ պայմաններին, այդ երեսում է մի քանի օրինակներից։ Բաւական է յիշել այստեղ, որ առաջին հայոց էժանաղին զրադարանը Թիֆլիսում իր գոյութեամբ պարտական է մի խումբ ինտելիգէնտ երիտասարդների և օրիորդների ինիցիատիւն *):

Միթէ թատրոնը, բարեգործական ընկերութիւնները, հրատարակչական գործը մեզանում նոյն այդ ինիցիատիւի արդիւնք չէ։ Այս ուսումնական տարուանից Բագուտուելիք «Համակրթական կուրսերը» նոյն անհատական ինիցիատիւի արդիւնք չեն։ Անկասկած գոյութիւն ունեցող պայմաններում աւելի լի մեծ տոկունութիւն ու եռանդ է պահանջւում մեր ինիցիատորներից, քան եւրոպականներից։ բայց այդ չը պէտք է պատճառ լինի որ մեր ինտելիգէնցիան ձեռները թափ տայ և «ոչինչ չի դուրս գալ» խօսքերով հանդստացնի իր խիզճը և անօգնական

*.) «Մուրճ» 1890 թ. № 12. «Եժանագին զրադարանի փորձը»:

թողնի դարեսը ստրկութեան մէջ հոգու ամեն մի ազատ շարժում կորցրած խաւար մասսան:

Կեանքը բարդանում է, ժամանակի հետ փոխում են պայմանները, պահանջում է յարմարուել այդ նոր պայմաններին. դրա համար պէտք է խառնիճաղանջ երևոյթների մէջ մի ուղեցոյց, գործաւնէութեան նոր եղանակներ, նոր ձևեր: Արդ, ինքը մասսան կարող է այդ անել, եթէ ինտելիգէնտը նրան չօգնի, եթէ գրական խօսքը չը մտնի ժողովրդի խաւերի մէջ, եթէ հրապարակախօսը չարունակի նոր սխոլաստիկայով պարապել: Այս բոլոր հարցերի չուրջը պէտք է պտտի ինտելիգէնտիայի մտածողութիւնը. նրա վրայ են ծանրաբեռնուած հասարակական-ազգային հոգսերը և նա թեթիամիտ է ու յանցաւոր, եթէ բակարայից և դիվիդենտներից դուրս բան չէ տեսնում...

Երբ մենք յետ ենք նայում, չենք կարողանում չը խոստովանել, որ վաֆմունական և եօթանասնական թուականների մեր ինտելիգէնցիան, չը նայած իր սակաւաթւութեան, աւելի էր արտայայտում հասարակական բնադրներ, քան մենք: Ոչ միայն գրական շարժումը, թատրոնը, բարեկործական ընկերութիւնները, այլ և գալրոցական հարցը այն ժամանակ գըտնում էր բուռն ոգեսորութիւն ինտելիգէնտ խաւերի մէջ: Այդ ինտելիգէնցիայի ինիցիատիվ չնորհիւ է, որ մեր գալրոցները ստացան գեմօկրատիկական հիմք: Ընտրողական սկզբունքը մտցրուեց և մեր գալրոցական կեանքի մէջ: Ժողովրդի ներկայացուցիչ ինտելիգէնտները մշակեցին կանոնազրութիւններ, որոնք հաստատուեցան սինօդից և կաթողիկոսից: Ժողովրդական մասնակցութիւնը մի հող էր, որի մէջ խոր արմատներ պէտք է գցէր գալրոցը և մոռնդ առնելով այդ տեղից օրից օր աճէր, գարդանար: Պէտք էր միայն խնամել, ժամանակին այս կամ այն պակասը լրացնել հոգատար, քնքոյց ձևոներով: Այդ հողը օրինական հիմքերի վրայ էր դրած: Պոլօժենիայի 1004 յօդուածի հիման վրայ կազմած և վաթսունական թուականներին Մատթէոս կաթողիկոսի և սինօդի կողմից հաստատած կանոնազրութիւնները պէտք է նաև ապագայում յարգուէին մեր հոգեսր իշխանութեան կողմից, իբրև ժողովրդի և հոգեսրականութեան մէջ կոած մի դաշն: Բացի գալրոցական հոգաբարձութիւնները սինօդը կարող էր ունենալ իր մօտ և մի ուսումնական մասնաժողով, որին յանձնուած լինէր մեր զըստրոցների ընդհանուր վերահսկողութիւնը: Այդ մասնաժողովը պէտք էր նմանապէս ընտրովի լինէր: Դիցուք ընտրուէր հէնց թեմական հոգաբարձութիւններից: Մի խօսքով կարելի էր շա-

րունակ կատարելագործել ընտրողական առողջ հիմքերի վրայ դրուած դպրոցական կազմակերպութիւնը: Որ բոլորովին օրինական էր հոգաբարձութիւնը, այդ երեսում է նախ նրանից, որ սինօղը և նրա պրօկուրօրը հաստատում էին այդ կանոնադրութիւնները: Այդ երեսում է և նրանից, որ Նոր-Նախիչևանի թեմական գպրանոցի կանոնադրութիւնը հաստատուեց բարձրագոյն իշխանութիւնից: Սակայն մեր տղէտ հոգեսրականներին և զրանց հայկատակ մի քանի ինտելիգէնտ—«գործիչներին» աւելի ձեռնտու էին թիւրքական կարգերը. դրանք ուզում էին որ քմահաճոցքը օրէնք ճանաչուի. և ահա սկսուեցին մի շարք խաղեր և ոսնձգութիւններ ընտրողական իրաւունքի դէմ, մինչև որ կատարեալ խայտառակութեան հասցրին, դարձնելով դպրոցները ստոր կրքերի, վայրագ շահախնդրութեան, կղերական կամայականութեան կրկէս: Հոգեոր իշխանութեան փաշականութեան դէմ շատ թոյլ ընդդիմագրութիւն ցոյց տուառութսունական և իննառունական թուականներին մեր ինտելիգէնցիան: Այնուհետև ամեն լան տակն ու վրայ եղաւ և վերջին տարիներս քաօսը կատարեալ դարձաւ: Այսօր նշանակում էին հոգաբարձուներ, վաղը ընտրում. մի օր նշանակում էին լիազօր տեսուչներ, մէկ էլ յայտնում էին որ հոգաբարձութիւնը իրաւունք ունի ինքը տեսուչ ընտրել: Ապա մի քիչ անց յայտնում էին, որ այդ իրաւունքը պէտք է սահմանափակուի և ընտրեն անպատճառ փարաջաւորներ և անպատճառ այս կամ այն անձի ցանկալին և այլն և այլն:

Հոգեոր իշխանութիւնը, ասիական ըռնասպետութիւնների նման, իշխանութեան բաժանման սկզբունք չէր ճանաչում—նա իրան ամենագէտ և ամենակարող էր յայտարարել. այսօր մանկավարժական ժողովի որոշման մէջ էր խառնուում, վաղը հոգաբարձութեան միաձան վճիռը փոխում. մի տեղ արձակած աշակերտի կողմն էր բռնում, միւս տեղ այս կամ այն բանկիրի քէֆով էր կարգագրութիւն անում և այն և այլն: Մի խօսքով՝ իրաւունքի, «օրինաչափութեան մասին թուրք փաշայի հասկացողութիւն էր թագաւորում: Եւ ի՞նչ. այդ բոլոր խայտառակութիւնները անելով հանդերձ մեղադրում էին «ընտրողական սկզբունքը», ինչպէս Կրլօվի առակում հայելին էր փշրում, որովհետև նրա մէջ երեսում էր կապիկի տգեղութիւնը... Եւ ահա մի սկզբունք, որ ամեն մի ժողովրդի համար միայն առաջադիմութեան կռուանն է եղել, հայ տղէտ կղերի և նրա իննկարկող «ապահպանողական» կոչուածների համար քաւութեան նոխաղ է դառնում... Ի՞նչ կարելի է անել այդ մտաւոր կռութեան և վարչական հրէշաւոր ապիկարութեան դէմ. եթէ

ոչինչ չէ կարելի անել—պէտք է ինքնաճանաչ հոգաբարձութիւնը գոնէ բողոքի նրանով, որ հրաժարուի կոյր գործիք լինելուց: Եւ ժողովրդի առաջարդիմութեան այդ գործօնի, դպրոցի, վրայ առայժմ պէտք է մեծ յոյսեր չունենալ, քանի որ հոգեւոր իշխանութիւնը իր կատարեալ իրաւունքն է համարում մեր դպրոցների զիմին զանազան վտանգաւոր էքսպերիմենտներ կատարել...

Մենք ասացինք որ ժամանակը, պայմանները փոխուել են, կեանքը նոր պահանջներ է դնում մեր առաջ: Մեր ինտելիգէնցիան պէտք է ըմբռնի ժամանակի ողին և ձգտի ամեն կերպ խոր մացնել ժողովրդի մէջ զրական խօսքի ազգեցութիւնը, քարոզել, օրինակ ցոյց տալ ինքնօգնական զանազան ընկերակցութիւններ կազմակերպելու գործում, չը բաւականանալ վերացական դատողութիւններով, այլ աշխատել գործնականապէս, իրական կեանքում ստեղծել զանազան կէտերում ինքնօգնութեան օապիսներ: Ամեն մի կօսպերատիւ ընկերակցութիւն իր մէջ արդէն պարունակում է բազմակողմանի տարրեր. մենք տեսնում ենք որ սկզբում մի անհնան սպառողական ընկերութիւն կամաց-կամաց սկսում է բարոզել իր անդամների կեանքի ոչ միայն նիւթական կողմը, այլ և մտաւորը, էաթետիկականը... Եւ թող կենտրոններում եղած մեր ինտելիգէնցիան չասի թէ չի կարող գնալ գաւառում իրագործել մեր ասածները: Գաւառը ինքն է գալիս նրա մօտ. Բագւում, օրինակ, բոլոր գաւառներից կան բանուորներ, գործակատարներ, վարպետներ, արհեստաւորներ. դրանց մէջ կատարած փորձերը բնականարար հետեւանքներ կ'ունենան և գաւառներում: Դժուար չէ սովորած բանը տեղափոխել նաև գաւառը և ինտելիգէնս ոյժերի հոգատարութեամբ և օգնութեամբ շարունակել սկսածը կամ սկիզբ դնել նման ձեռնարկութիւններին և ծննդավայրերում: Այսպէս ուրեմն մեր կեանքի մէջ շատ փոփոխութիւններ կարելի է մացնել, ևթէ մեր ինտելիգէնցիան, իր անձնական ինիցիատիւի որոշ մասը դործաղրի հասարակական ասպարեզում, և իր կեանքում չը հետեւի: Sauve qui peut—եսական գելիզին:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

I. Մօռացուած գաւառամասերը Երեւանինան նահանգում

Բնութիւնը երեսանեան նահանգում որքան որ առատաձեռն է դաշտային մասերում, նոյնքան ժլատ է լեռնոտ տեղերում և որքան պտղաբեր ցած հարթութիւնների վրայ, նոյնքան դաժան բարձրաւանդակներում: Եւ այժմ նահանգի այն մասերը, որոնք ընկած են լեռնոտ մասերում և բարձրաւանդակների վրայ, ոչ միայն ենթակայ են ժլատ ու անողոք բնութեան զըրկանքներին, այլ և մոռացուած ամենքից, թողնուած բախտի կամքին: Ահա թէ ինչու այդ մասերում ժողովուրդը տարէց տարի աղքատանալով հասել է յետին ծայր թշուառութեան և մի կամ երկու միմնանց յաջորդող անքերրի տարիներում ենթարկուելով տնտեսական ծայրայեղ քայլայման, թողնում է երևսի վրայ իր ընտանիքը, ձկում իրան ապրուստ չը հայթայթող վար ու ցանքը և ձեռք առնում պանդխտութեան գաւաղանը:

Այսպիսի աննպաստ պայմաններին ենթակայ և բախտի կամքին թողնուած գաւառամասերը այժմ ներկայացնում են երեսանեան նահանգում Աբարանը, Դարաչիչակը և Նոր-Բայազէտը: Ցուրտ կլիման, երկարատես ձմեռը որքան էլ այդ տեղերի ժողովրդին ընտելացրած լինեն ոտկաւակետութեան, բայց յաճախակի տեղի ունեցող ամբողջ ամառուստ ընթացքում սոսկալի երաշտը այնպէս այրում, խանձում է բուսականութիւնը, որ սովը, տնտեսական քայլայումը անխուսափելի է դառնում այդ տեղերում:

Բայց հացահատիկների մշակութիւնից, այդ տեղերում ժողովուրդը պարապում է նաև անամնապահութեամբ: Այդ երկրորդ պարապմունքը նոյնպէս նրան չէ վարձատրում: Թէկ այդ բարձրաւանդակներում անամնապահութեան համար ձգուած են ընդարձակ արօտատեղեր և գեղեցիկ լեռնաշղթաներ, բայց երաշտ տարիներում ինչպէս հացաբոյսերը, այնպէս էլ արօտատեղերը աղանձուելով առաջացնում են խոտի, դարմանի

այնպիսի պակասութիւն, որ առանց այն էլ աղքատ ժողովուրդը, կենդանիների ուտեստի թանգութեան սարսափի տակ, ծախում, «զլիսից ուագ» է անում իր մի քանի զլուխ ոչխարը, աչքի լոյս լծկան եզը, իր երեխաների «բուզզ» կթի կովը և մնում է դատարկածեն։ Եւ ահա անասնապահն էլ դարձեալ ստիպուած է գաղթել գէպի աշխատանքի կենտրոնները—Բագու, Բաթում, Թիֆլիս, և մշակութեամբ մի կտոր հաց հասցնելու երեսի վրայ թողած իր ընտանիքին։ Իսկ եթէ մնում է իր երկրում—ընկնում է վաշխառուների ճանկը։

Պէտք է այստեղ յիշել որ այդ լեռնային զաւաները բոլորովին մոռացուած են և մեր Գիւղատնտեսական Ընկերութիւնից, որ քիչ թէ շատ նպաստում է (փորձական դաշտեր, մասնագէտներ) մեր նահանդի դաշտային մասերի ժողովրդական աշխատանքը զիւղատնտեսական զիտութեան փորձերով աւելի արդիւնաւոր դարձնելու, սակայն բնաւ ու շաղրութիւն չի դարձնում լեռնային ժողովրդի նահապետական անօգնական վիճակի վրայ։ Մինչդեռ յիշեալ լեռնոտ մասերում կարելի էր, աւելի զարգացնել անասնապահութիւնը և կաթնատնտեսութիւնը, կարելի էր ազնուացնել կենդանիների տեսակները, կարելի էր սովորեցնել իւղ և պանիր պատրաստելու աւելի ձեռնտու միջոցները, կարելի էր ճանապարհներ ցոյց տալ չուկայ գուրս բերելու այդ բոլոր արդիւնքները, ինչպէս և բուրդը, կաշին։ Սարահարթերում աջող կերպով աճում են կանսի և կտաւահատ, որոնցից կարելի է ստանալ թոկների համար թել և ամենաընտիր քաթաններ ու պարուսիններ պատրաստելու համար վուշ, մինչդեռ մեր ժողովուրդը գաղափար անգամ չունենալով դրանց մասին, այդ բոյսերը մշակում է այն չափով, ինչ չափով հարկաւոր է հատիկների գործածութեան և ձէթ ստանալու համար, իսկ հատիկները ստանալուց յետոյ ցողունները համարեա կորչում են աննպատակ։

Այդ տեղերում կարելի էր զարգացնել նաև մեղուաբուծութիւնը, այն ինչ գիւղատնտեսական այդ ճիւղը միանգամայն գոյութիւն չունի այդ լեռնամասերում։ Կարելի էր զարգացնել բանջարանոցային բոյսեր, որոնք նյոնպէս անտես են առնուած։ Տնայանագործութեան ոչ մի ճիւղ գոյութիւն չունի։ Կապերտներ, թաղիքներ, շալեր, ջէջիմներ և այլն գործուածքներ պատրաստելը բոլորովին մոռացուել են այդ տեղերում, այն ինչ բաւական էր որ ժողովրդին մատակարարուէր թելը և ցոյց տրուէր գործելու եղանակը, որ զարգանար այդ տեղերում անայնագործութիւնը, որ մեր լեռների ժողովուրդը փոխանակ դատարկա-

բանութիւններով տարուայ 6—7 ամիսները սպանելու, պարապէր անայնագործութեամբ և այլ օգտակար արհեստներով:

Վերջապէս կարելի էր հաստատել զիւղական բանկեր, բաց թողնելով զիւղացուն էժան կրեդիտ, ազատելով նրան վաշխառուների ճանկերից: Մի խօսքով մեծ ասպարէզ կայ մեր մասնագէտ-ինտելիգէնսների, մեր զիւղատեսական ընկերութեան առաջ. հարկաւոր է նախաձեռնութիւն, էներգիա...

Այժմ երբ կովկասեան զիւղատնտեսական ընկերութիւնը գործի գլուխ անցնելով կազմակերպել է ցուցահանդէսը, թող ուշադրութեան առնի և այս մոռացուած շրջանները, թող յատուկ մասնագէտներ ուղարկէ յիշեալ գաւառամասերը, ճիմսէ կաթնատնտեսական և թոչնաբաննական կայարաններ, տարածէ տնայնագործութիւնը և այլ արհեստներ ու պարապմունքներ և դրանով նա նպաստած կը լինէր այդ մոռացուած գաւառների ազգաբնակութեան տնտեսական բարօրութեան:

Ա.—ԴՕ

Ա. Արձակագրական տեղեկութիւններ Ս. Ա. Խանաղովովի գաւառի հայ-լուսաւորչականների մասին:

Մեր գաւառական կեանքն ընդհանրապէս քիչ է ուսումնասիրուած: Փաւառների մասին մեր գրականութեան մէջ բացարձակ՝ կերպով պահանջման են մինչական տեղեկութիւններ:

Գիճակիս յաշորդ Մատթէսո վարդապետը գործակալների միջոցով դիւղական քահանաներին*) տպագրած ցուցակներ էր ուղարկել: Այդ ցուցակների մէջ նրանք պէտք է աեղեկութիւններ գրէին: Յիշեալ ցուցակների մէջ մարդահամարը թեթև սիսակներ էր պարունակում, որոնց ստոգելու համար մենք անձամբ զնացինք զիւղերը և դատարաններում եղած ների հետ ուղղեցինք: Խիսակատարութիւնների մասը վերաբերում էր վել-ջին քառամեակին, այն է 97, 98, 99 և 900 թուերին: Սրանց մէջ անձը առաջիններին աշքի էին ընկնում, ուստի լու համարեցինք այս մասը նոր մէկից ուսումնասիրել: Հոգ: Կառավարութեան արխիմէջ օգնուելու թոյլառութիւն ստանալով այլ և այլ համեմատութիւնների համար քիչ համարեցինք չորս տարին, վերցրինք տասնամեակը՝ սկսած 91 թուերից, մինչև 900 թիւը: Ցուցակներում նշանակուած հողերի քանակութիւնը պահանջանք աշխատաւոր

*) Եթէ քաղաքներում քահանաների մէջ եղած անհաւասարութիւնն անտանելի է, որից և զիսաւորապէս ծագում է անբաւականութիւն, վէճ, կոփու, զիւղերում հօ քահանաների դրութիւնը սոսկալի է արյէն: Գիւղացին յօժարութեամբ չի տալ քահանայի հասոյթը. տարիներով ծխականարութիւն է անում մարդը և ոչինչ չի ստանում, ո՛չ պտղի և ո՛չ փող: Հողաբաժինը, որ քահանան օրէնքով պէտք է ստանար, շատ զիւղերում զիւղացիք կոպտութեամբ խել են նրա ձեռքից: Քահանան եթէ տանը աշխատող ձեռքեր ունի, լաւ, իսկ եթէ ո՛չ, ապրում է յետին չքատրութեան մէջ, անմռունջ տանելով իր ծանր խաչը:

էր և շատ տալրեկ չափերով արտաքայտուած, ուստի այդ մասը թռղնում ենք մի այլ անգամուաց:

Այժմ զիմենք բան գործին:

Ալեքսանդրօսօլի վիճակը, ըստ Հոգ, վարչութեան, բաժանուած է տասն և մէկ գործակալութեան: Գործակալութիւնների հոգեոր գործերը վարում են Հոգ. կառավարութեան կողմից նշանակած գիւղական քահանաները:

Գործակալութիւններն են՝ Օրթաքիլիսա, որին ենթարկւում են 20 զիւղեր, Բող-Խօսուշ՝ 7 զիւղ, Զորի՝ 14 գ., Սորաշէն՝ 12 գ., Արթիկ՝ 10 գ., Հոռոմ՝ 12 գ., Մահմուտնուզ 10 գ., Տաւշան-Ղլազ 13 գ., Մեծ-Հարնի՝ 11 գ. Համամիլ՝ 7 գ. և Մեծ-Ղարաքիլիսա 9 զիւղ *), ընդամենը հարիւր քան և հինգ զիւղ: Տեղի սղութեան պատճառով զանց եմ առնում ցուցակագրել իւրաքանչիւր զիւղն առանձին-առանձին, յարմարութեան համար աղիւսակի մէջ զնում եմ գործակալութիւնների գէմ զիւղերի թիւը, մարդահամարը և անասունների քանակութիւնը.

Համար	Գործակալութիւններ:	Պահանջման զիւղ:		Արդարանք:	Պահանջման զիւղ:	Արդարանք:	Արդարանք:	Արդարանք:	Արդարանք:	Արդարանք:
		Պահանջման զիւղ:	Արդարանք:							
1	Օրթաքիլիսա	20	2,087	9,290	8,568	17,858	15,776	33,012		
2	Բող-Խօսուշ	7	341	1,420	1,338	2,758	3,520	5,528		
3	Զորի	14	853	3,619	3,259	6,878	6,378	9,605		
4	Տաւշան	12	938	4,380	4,059	8,439	8,634	10,849		
5	Արթիկ	10	1,188	5,446	4,922	10,368	9,612	7,232 ¹⁾		
6	Հոռոմ	12	1,518	6,331	5,835	12,166	11,414	6,155		
7	Մահմուտնուզ	10	1,365	5,644	5,156	10,800	7,656	6,465 ²⁾		
8	Տաւշան-Ղլազ	13	1,160	4,665	4,282	8,947	7,600	6,259		
9	Մեծ-Հարնի	11	1,348	6,236	5,579	11,815	11,309	24,030		
10	Համամիլ	7	809	4,362	3,749	8,111	6,245	11,553		
11	Մեծ-Ղարաքիլիսա	9	1,295	5,949	5,271	11,220	7,901	12,091		
Ընդամենը.		125	12,902	57,342	52,018	109,360	96,045	132,779		

Ծան. Հաշիւր կազմուած է զարնան սկզբներին, որից լիւաոյ մի քանի զիւղերում պատահեց եղջիւրառ անսատների ժանուախով, որից կոտում են մօտ 2000 կենդանիներ:

1) Վերջին երեք գործակալութիւնները, մինչև 41. թիւը, ենթարկուած են եղել Սանահնի վասքին, իետոյ միայն միացուած է Ալեքսանդրօսօլի վիճակին: Յիսանական թուերի վերջերին քաղաքիս յաջորդէ կարգուած հանգուցեալ Վարդան եպիսկոպոս օձնեցին: Փամանակակիցների վկայութեամբ հանգուցեալը խիստ դրամասէր է եղել: Օգոստեով իր զիրքից, ինչոր մի թուղթ է գուրս բերում Հոգ. կառավարութեան արխիվոց և նրանով պահանջում է Փամակակի այս մասից, որպէս Սանահնի վանքին երբեմ ենթարկուած գիւղեր, „գաւազանսպոտուզ“ և „սրբազրամ“ կոչուած նուէրները, որոնք տարիների ընթացքում ապահով են մնացել ժողովրդի միամիտ և շէն ժամանակը լինելով, այդ ապահովիներից ահազին տուրք է ժողովուել, որոնց մէծ մասը մտել է սրբազրամի գրպանը:

2) Արթիկ, Մահմուտնուզ և Տաւշան-Ղլազ գործակալութիւնների գիւ-

Գործակալութիւններից ամենաբազմամարդն են՝ Օրթաքիլիսա, 17858 բնակչով, Հռուսմ, 12166 բնակչով, Մեծ-Հարնի 11815 բնակչով, Մեծ-Ղարաբիլիսա, 12220 ր., Մահմատօնուց, 10800 ր. և Արթիկ, 10368 ր., իսկ մնացած գործակալութիւնները ունեն 10 հազարից պակաս բնակիչներ:

Վիճակի մէջ 200-ից աւելի տուն ունեցող գիւղերն են.

1) Արթիկ . . .	295	տուն	2,636	բնակչով:
2) Դուղքեանդ . . .	203	"	1,695	"
3) Խի-Ղարաբիլիսա	348	"	2,568	"
4) Համզաշիման . . .	334	"	2,232	"
5) Համամլի . . .	356	"	3,138	"
6) Հոռոմ . . .	251	"	1,990	"
7) Մեծ-Ղարաբիլիսա	468	"	3,300	"
8) Մեծ-Հարնի . . .	245	"	2,393	"
9) Մեծ-Քափանակ . . .	245	"	1,860	"
10) Սօղիւթլիւ . . .	296	"	2,598	"

40 գիւղեր ունեն 100-ից աւելի տներ, իսկ ամենափոքր գիւղերն են՝

- 1) Սարութ. 16 տ. 117 բնակչով.
- 2) Մահնտի՛ 21 տ. 241 բնակչ.
- 3) Գալնդայա՛ 22 տ. 183 բն.
- 4) Ալիխան' 27 տ. 349 ր. և
- 5) Նոր-Բաշ գիւղ, 28 տ. 275 բնակչով:

Մնացած գիւղերը ունեն 30—100 տներ:

Արական սեռը վիճակում կիսականից աւելի է 5324-ով, իսկ քաղաքում համարեա երկու սեռն էլ հաւասար են թուով. (9227 արական, 9229 իզական):

Երկու սեռի համագումարը՝ 109360 հոգի բաժանելով տների ընդհանուր թուի վրայ, 12902-ի, իրաքանչիւր տանն ընկնում է միջին թուով 8-ից աւելի անդամներ, իսկ քաղաքում ապրողների միջին թիւն ընկնում է 5 հոգի:

Բայց գիւղերում կան բազմանդամ գերդաստաններ, որոնք յիշեցնում են մեզ հին նահանգեատական բարի ժամանակների համակեցութիւնը. Այժմ էլ, ինչպէս առաջ, գիւղերում ապրում են միախն, մի ծածկի տակ, մի քանի եղբայրներ, իրանց որդիներով ու թոռներով, որտեղ մի քանի եղբայրներ, իրանց որդիներով ու թոռներով, որտեղ մի քանի օրօրոց, մի քանի կաթսայ կերակուր եփում, հաց թխում ընթերցողներից բարեմնութեան վրայ վատահելով զնում եմ ալստեղ մի քանի մեծ տների անուններ.

Գիւղումա գիւղում կենում է Քոթաննոնց մեծ ու հարուստ տունը՝ 75 անդամից բաղկացած: Մրանք բացի անսառններից, ունեն մի ձեռատունկ ժառանան 4—5 հազար ծառով:

Աղքիլիսա գիւղ. ապրում են Կոստանդնուպ, որոնց ընտանիքի անդ. թիւն է 55 հ.

"	"	Յակոյենք,	"	"	"	32 "
"	"	Ալեքսանենք	"	"	"	25 "
Դիլաքլար	"	Թոմոյենց Սահակի ընտանիքը, բաղկացած լծում են 2 գութան, 15 սալլ. ունի 450 սոմար ցորեն ամբարած:	45	"	"	

Պերից Փոքր-Հարնի, Ղասումալի, Խաչաքիլիսա, Մարիբաշ, Աղին գիւղերը չունեն փոքր կենդանիներ՝ արօտաստեղ չունենալու պատճառով:

Նոյն գիւղում կան Մատոսենք, անեցիների թիւն է 35 հոգի, վերցնում են 240 սալլ հաց:

Հաջի-Նազարում Բովիկ Խաչոյի ընտանիքը, 36 հոգուց բաղկացած, գիւղացիք Նրանց կարողութիւնը 10 հազարի են հասցնում:

Փոքր-Նարիարում կան Վարդանենք, 43 հոգի են և հարուստ:

Զաջուռոցի գլաւնի Բատիկի ընտանիքը 30 հոգուց աւելի է, ունի ջրաղաց, 2 օրավար ծառառունկ և հարուստ է:

Թորոսի գիւղում կենում են Դալի-Օղանենք 40 հոգուց բաղկացած անդամներուի:

Օրթաքիլիսեցի Տէր-Նրսէնի ընտանիքը նոյնպէս փոքր չէ, մօտ 32 հոգուց բաղկացած: Նոյն գիւղում կան Ասատուրենք, զարձեալ 36 հոգուց բաղկացած:

Խմբխան գիւղում կան Պետոյենք, 40 հոգի են:

Սղբուլաղում Նիրթեցոնց Յարութիւնի գերզատանը՝ 42 հոգուց աւելի է:

Երկար կը լինէր ալս ցուցակի շարունակելը: Այսքանն էլ բաւական է՝ գալախար կազմելու համար գիւղական մհծ գերդաստանների մասին: Մեծ գիւղերը քաղաքին հետևելով բաժան-բաժան են լինում: Յաւալի է նկատել որ բաժանութիւնը սովորաբար կատարում է կոխներով: Բաժանուող եղբայրները զործը հաշոտ վերջացնել չեն կարող, ուստի ստիպուած զիմում են զատարաններին և երկու կողմն էլ անտեղի կերպով վասնում են իրանց կարողութիւնները զանազան զրագրների, ինքնակոչ վաստարանների տալով: Գիւղացու պարապմունքն անհրաժեշտորէն պահանջում է համակեցութիւն: Գիւղատնտեսութիւնը մեր աշխատան պայմաններում աշխատաւոր ձեռքերի շատ պէտք ունի: Մէկ-երկու մարդով զործ դարձնել չի լինի: Քիչ մարդով գութան լծել, վար ու ցանք անել, խոռ կամ արտ հնձել, կալսել չի լինի: Որքան շատ են աշխատաւորները, այնքան էլ օգտակար է գիւղատնտեսութիւնը: Աշխատողների մի մասը ցանքսով կը պարապի, միս մասը անասուններին կը հոգայ, ռեացլառ կը զնայ: Եթե գիւղերում հասկանալի չէ առանց անասուններ ունենալու գիւղացի լինել: Համիկաց (մհծ տուն, բաղմանզամ գերգատանով) տները ունին և լաւ ու շատ վարելու հողեր և բազմաթիւ անասուններ: Բաժանուած, մանրացած տները զրկուած են թէ մէկից և թէ միւալից: Գիւղացու հողը բաժանուած է անհատի վրայ: Քչուոր ընտանիքը կ'ունենայ քիչ հողը Յաւալի է տեսնել որ հէնց այդ քիչ հողը, որ պէտք է կերակրել ընտանիքներին, շատ անզամ պարագի և այլ պատճառներով ընկել է քաղաքացի չարչի վաճառականների ձեռքը, իսկ նրա գիւղացի տէրերը զրկուած են ապրուածի միակ միջոցից:

Այժմ զառնանք մեր խնդրի երկրորդ մասին, տեսնելու թէ ո՛րքան պսակ, կնոնք և ննջեցեալ է լինում զաւառում, ի՞նչ մնացորդ է մնում կնունքից, որ և կազմում է անումը գիւղերում: Խնչպէս վերևն ասուեց, աւելի պարզ հասկացողութիւն ունենալու համար այդ պատկերի մասին՝ մենք հաշին սկսում ենք վերջին տասնամեակից 91—900 թ.: Այստեղ էլ, ինչպէս առաջ, գիւղերի առանձին-առանձին ծիսակառարութիւնները գումարել ենք տարիների հանդէպ:

11 գործակալութիւնը միասին, 125 զիւղ:

Տարիներ:	Պահ:	Մկրտութ.		Կրկ-	Նշջեցնալ:		Կրկ-	Աճու-	Վահան-
		Արա- կան:	համա- կան:		Գումարի մեջ թիւն:	Արա- կան:			
1891	964	2,646	2,287	4,933	1,362	1,132	2,494	2,439	49,4%
1892	1,092	2,507	2,330	4,837	2,277	1,853	4,130	707	14,6%
1893	854	2,337	2,089	4,426	2,390	1,930	4,320	106	2,4%
1894	929	2,321	2,205	4,526	1,647	1,365	3,012	1,514	33,5%
1895	908	2,595	2,336	4,931	1,251	1,114	2,365	2,566	52,0%
1896	1,068	2,570	2,363	4,933	1,126	978	2,104	2,829	57,3%
1897	1,307	2,793	2,539	5,332	1,425	1,197	2,622	2,710	51,0%
1898	958	2,649	2,408	5,057	1,884	1,541	3,425	1,632	32,3%
1899	1,087	2,783	2,532	5,315	2,466	2,284	4,750	565	10,6%
1900	964	2,979	2,646	5,625	1,293	1,105	2,398	3,227	57,4%
Միջին թիւ	10,131	26,180	23,735	49,915	17,121	14,499	31,620	18,295	36,4%

Ոչ մի գարակիչ հիւանդութիւն, նոյն իսկ խօլերայի նման՝ համաձարակը, այնպէս վատ չի ազդի, ինչպիսին կարող է ազդել թանձութիւնը, ամսինքն նախորդ տարրաց երաշուր ընթերցողը պարզ տեսնում է, որ 93-ին և պահների թիւն է պակաս, և ծնունդը, զրա հետ միասին մեռնողների թիւն զբաղի կերպով բարձր է միւս ամրիներից, այնպէս որ աճումը, այսինքն ծնուածներից զուրս զարով մեռնողների թիւը, իշնում է 106-ի, կամ 2, 39%: Այդ այն գժրախտ տարին եր, երբ ժողովուրդը նախկին տարուց բերք չէր ստացել երաշտութեան պատճառով, չուներ ուստեղու պաշար և չէր կարող սեպհական միջոցներով ապրել, նատի Կոլ. Հայրեղ, Ընկերութիւնը փող էր ուղարկում ուստելիք գնելու համար և շատ բնական է, մի ժողովուրդ, որի միակ և զվարար պարագանքն է երկրագործութիւնը, այնպէս որ յոյսը զրել է իր ցանքսի վրայ, որ եթէ տարին առաս եղաւ, լաւ, իսկ եթէ ո՛չ, այն տարին քաղցած կը կուռուի, ել ինչպէս մտածէ ամուսնութեան մասին: Խակ երաշտ և անբեր տարիներ սովորաբար նիրակում պատահում է լաճախ:

Տասը տարուայ ընթերցում ժողովուրդն աճել է 18295 հոդի կամ 36, 6%: Եթէ ընդունենք, որ տարեկան միջին հաշուում մարդիկ 1830 հոդով աւելանում են, դուրս է զալիս որ սրանց 30 տարի առաջ, Ալեքս. Փիճակում ապրում էին հիմիկուայ մարդկանց թուի կեսը (109360-ի); Կամ ուրիշ խօսքով, 30 տարի առաջ կարին 54900 հոդի պակաս այժմեանից: Ասել է թէ միենուն քանակութեան հողը, շատ աւելի լոգնած, պէտք է կերակրէ համարեա երկու անգամ շատացած մի ալզարնակութիւն:

Ելուապայում այս երեսիթը թերմա մի առանձին չարիք չէր, որովհեակ նրանք զիտեն երկիրը մշակել կասարելագործուած ձեւրով, զիտեն արհեստական միջոցներով պարարտացնել այն ու առուներ անցկացնելով:

Մանօրութիւն. 92-ին—Խօլերա. 39-ին թանգութիւն. 98-ին; 09-ին—Ղիֆտերիտ և ուրիշ վարակիչ հիւանդութիւններ:

ջրել, արտը հանցնել իրանց ուզածի պէս: Խակ մեզանում—մեզանում դեռ ևս հողը մշակում են նախնական-նահապետական ձևերով, պարարտացնելու մասին իսկի գաղափար չունեն, իսկ ջրելը խօմ, Ասոծու կամքից է կախուած: Դարերի ընթացքում Ախորեան գետը իր հունով հոսում է, առանց շրջակալիքին զգալի օղուտ տալու նրա ջրով կարող էին սպառնել զաշնի 20 և աւելի գիղեր, բայց մինչեւ օրս ո՛չ քաղաքացիները սիրու արին ընկերութեամբ գետը իր ակնքից շրջել գէպի Շիրակաց դաշտի արմելեան կողմը և ո՛չ օգտուելու ձեռնհաս զիղերն իրանց հաւաքական ոյժու, ընդհանուր աշխատանքով կարողացան շրջել: Գրում են Ռուսաստանի ցուցալաշտերի մասին; Շիրակը հին-հին զարերից յայտնի զիղատնութեան պարանգելու տեղ է, սակայն այժմեան պայմաններում ժողովուրդը գոնուում է իստին դրութեան մէջ: Ծայր է ծայր ման զալով գաւառի մէջ, ամեն տեղ մինուն չքաւորութիւնն է աչքի լնկնում: Ամենեան մեծամասնութեան մօտ նշանակութիւն չունեն զիղերում ցաք ու ցրիւ գտնուած շին տնկերը, այն ինչ ընդհանրապէս տիրում է օտակալի աղքատութիւն: Եթէ այս աղքատութեան վրայ աւելցնենք զիղացու թանձր տղիսութիւնը, նախապաշարմունքներն ու մնտիսապաշտութիւնը, ապա կը տեսնենք որ զիղացին համարեա անասնական կեանք է վարում: Ո՞վ պէտք է զիղացոն առաջնորդէ խասարից գէպի լոյս, ի՞նչպէս պէտք է նրա զրութիւնն առզդուի: Ահա հարց:

Առհասարակ թէ՝ քաղաքում և թէ զիղերում իդական աեռը պակաս է ծնուած արականից: Այս րանը թերևս ունի իր բնախօսական պայմանը բայց թնում է թէ քաղաքում տնտեսական պայմանների շնորհիւ արակոն սեռից աւելի են: Տեսում, ուստի և երկու սեփ մէջ հաւասարակշռութիւն է: պահպանուած Անկասկած քաղաքներում կին-մարդն աւելի բարուք կեանք է վարում, քան զիղերում Քաղաքներում ընտանիքի ծանրութիւնը տղամարդկանց վրայ է ընկնում: Կեանքի բարդ պայմանների շնորհիւ տղամարդն աւելի շուտ է ընկնում հոգերից և շուտ էլ գերեզման մտնում, մինչդեռ կինը, եթէ չը լինէր որդենութիւնը, շատ աւելի հանգիստ է պարզում, զայելում է տղամարդու խնամքն ու հոգացողութիւնը, ուստի և շատ է ապրում: Մեր զիտողութիւնները ցոյց են տալիս, որ քաղաքում շատ պառանելեր կան, քան թէ ծերեր, շատ այրի կանացք, քան թէ տղամարդիկ: Կին զիղերում կնոջ դրութիւնը բոլորին ուրիշ է: Զանէլ, զեռ չափահան շեղած տղաներին կարգում են, հարս են բերում, որ տան աշխատող ձեռքն ամելանալ: Կինը տանը պէտք է աշխատի, պէտք է նաև օդնէ մարդուն բարձր գործերում: Սրբ վրայ պէտք է աւելացնել կնոջ բնական վիճակը—որդի ձնելը: Նրգէն մամուլի մէջ շատ է գրուել, թէ ի՞նչ բարբարու, անխիմ միջոցներ են գործ գնում կնոջը երկունքից աղատելու համար դիւլացին բացարձակ չի հասառում թշկական զիտութեանը: առողջապահական կանոնները նրա համար գորութիւն չունեն նա իր կոշտացած նախապաշարմունքներով կուում է զիտութեան զէմ և այդ անմիտ պայքարում զինում է հարիւրաւոր թշուառ կանանց, որոնք զեռ շատ կասրէին, շատ որդիներ կը տալին մարդկութեանը:

Աւելորդ չենք համարում մի թեթև հաշիւ էլ դնել մեր գաւառի քահանաների թուի մասին:

Գաւառիս 125 զիղերում կան 156 քահանայ: Դրանցից 0թարբելիսայի գործակալութեան զիղերում կան 24 քահանայ, Բող-Եօխուշի գործակալութեան զիղերում 7 քահանայ, Զորլուալ գործ: 13 քահանայ,

Նորաշէնի գործ՝ 12 ք., Արթիկի գործ՝ 16 քահանայ, Հոռոմի գործ՝ 18 քահանայ, Մահմուտճողի գործ՝ 15 քահանայ, Տաւշան-ՂԱՂաղի գործը՝ 16 քահանայ, Մեծ-Պարնի գործ՝ 13 քահանայ, Համամլի գործ՝ 12 քահանայ, և Մեծ-Ղարաբիլսա 7 քահանայ=156.

Քահանաներն ըստ ձեռնազրութեան՝ հինգ հոգի ձեռնազրուած են 50—60 թուերին, երեսուն հոգի՝ 60—70 թուերին, երեսուն մէկ հոգի՝ 70—80 թուերին, երեսուն չորս հոգի՝ 80—90 թուերին, չիսուն վեց հոգի՝ 1890—1900 թուերին։ Քահանաներն ընդհանրապէս տգէտ, ողորմելի մարդիկ են, բացառութեամբ մի քանիսի։

Ն. ք. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կիուչենէրի վերջին բայտարարութիւնը, — Ազատական կուսակցութեան նոր ֆրակցիս Անգլիացում. — Զեմքերլէնը իրու Բիտմարկի հետևող. — Անդիխական լեզուի գերիշխառթեան հարցը Մալտա կղզում. — Ազգերի համերաշխութիւն և ուժեղների ստիպողութիւն. — Կոպիտ ոյժի կուլտը. Նիցշէականութիւնը, իրու ուժեղ անհատականութեան սանձարձակութիւն. — Գլազուոնի շփոլայի մարդիկ. — Ֆրիդրիխ-Ալբարդիա կայսրունու մահը. — Կրիստին յեղափոխական և Կրիստին իրու ոյետական անձ. — Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութեան նոր ցուց.

Քօդսի, Զեմքերլէնի և Մինէրի ջանքերով Հարաւային Աֆրիկայում սկսուած գժբախտ պատերազմը շարունակում է երկու կողմից էլ զոհեր տանել: Բօտայի և Դեվէտի յամառութիւնը կոտրելու համար անգլիական կառավարութիւնը թոյլ տուեց Կիուչենէրին հրատարակել մի բարբարոս յայտարարութիւն, որով բոլոր այն բոէր զօրապետները, որոնք մինչև սեպտ. 15-ը անձնատուր չեն լինի — ընդմիշտ պիտի աքսորուեն Հարաւային Աֆրիկայից: Բայց ոչ ոք չէ հաւատում, որ «հայրենիքի լիակատար ազատութեան» պաշտպան բօէրական հերոսների վրայ որ և է ազգեցութիւն կ'անի այդ նոր սպառնալիքը: Զեմքերլէնը կամաց-կամաց սկսում է անգլիական պետական կեանքում պատուաստել Բիսմարկեան միջոցներ: Անգլիայի ազատական վեհ սկզբունքները, ինչպէս երեսում է, սկսել են մոռացուել: Բաւական չէր կարծես Իրլանդիայի ատելութիւնը, բօէրների և աֆրիկանդէրների թշնամութիւնը, Զեմքերլէնը այժմ գրգռում է Մալտա, կղզու ազգաբնակութեան ինքնասիրութիւնը: Այդ կղզու մի բուռն ժողովուրդը միշտ հաւատարմութիւն է ցոյց տուել Բրիտանիային, վայելելով ազատ անգլիական կարգեր և շարունակելով պահպանել իր մայրենի իտարական լեզուն Ալժմ Զեմքերլէնը հրամայում է, որ այսուհետև Մալտայի դպրոցներում տիրապետող լեզուն դառնայ անգլիա-

կանը։ Յաւալին այն է, որ Զեմբերլէնի իմպերիալիզմը համախռներ է գտնում նաև ազատական կուսակցութեան մէջ։ Ինչպէս որ իրանդական home route-ը Դլադստոնի ժամանակ անշատում առաջացրեց ազատական կուսակցութեան մէջ և Զեմբերլէնը իր համախռներով կազմուցին լիբերալ-ունիօնիստների ֆրակցիա, նոյնպէս և այժմ Հարաւային Աֆրիկայի պատերազմը գնելով իմպերիալիզմի հարցը այդ կուսակցութեան առաջ՝ կարող է նոր ֆրակցիա կազմելու պատճառ դառնալ։ Ազատական կուսակցութեան մէջ Ասկվիտը, Ռոզբէրին և միւսները իրանց իմպերիալիստական հայեացքներով աւելի մօտենում են Զեմբերլէնին քան Գլադստօնի արադիցիաներին հաւատարիմ Կեմպէլ-Բաններմանին, Մօրլէյին, Հարկօրտին, Լաբուշէրին և այլն։ Թէ անշատումը չի կատարուել, բայց, այնուամենայնիւ, շատ որոշ է այդ նոր ֆրակցիայի՝ լիբերալ-իմպերիալիստների—տարբերութիւնը Գլադստօնեան ազատականութիւնից։ Մենք արդէն մի անգամ (Մարտ) սպիթ ունեցանք ասել որ իմպերիալիզմը սնդիմական շովինդմն է, այսինքն անգլօ-սակսոնական ցեղի գերիշխանութեան մի ձգտում։ Ճիշտ է, Ասկվիտը «իմպերիա» ասելով հասկանում է աղատ և ինքնավար հասարակութիւնների դաշնակցութիւն (Փեդերացիա), սակայն ինչպէս հաշտեցնել ազատութեան սկզբունքի հետ այն բոնի միութիւնը, որ ուղում են ստեղծել՝ ստիպելով բօէրներին, հակառակ իրանց բարի ցանկութեան, մտնել անգլօ-սակսոնական դաշնակցութիւնների մէջ։ Առևինի ոյժով չի կարելի ստիպել սիրել որոշ կարգեր։ Եւ անկասկած Գլադստօնը իր մարդասէր քաղաքականութեամբ աւելի շուտ գլուխ կը բերէր ազգերի համերաշխութեան գործը, քան Բիսմարկը՝ արեան և երկաթի քաղաքականութեամբ։

Ոյժի պաշտամունքը Բիսմարկի չնորհիւ միջազգային յարաբերութիւնների մէջ դառաւ մի սովորական երկոյթ։ Դուրս էր գալիս որ ուժեղ մի ազգ, ինչպէս և անհատ, կարող է ոչ մի բանից չը քաշուել և անել ինչ որ թելադրում է նրա ինստինկտը։ Խիզճը, բարոյականութիւնը դառնում են թոյերին և ստրուկներին վայել զգացմունքներ։ Իզուր չէ այդ ժամանակակից ողին ծնել և իր փիլիսոփայութիւնը, իզուր չէ Նիցչականութիւնը հիմա մօղային ուսմունք դարձել։ Անհատականութեան սանձարձակ, վայրագ արտայայտութիւն—ահա այդ փիլիսոփայութեան հանրամատչելի է ութիւնը։ Ուժեղ անհատականութեան տէր անձին, «գերմանացուն», ներելի է ամեն բան։ ոչ մի բարոյական սկզբունք նա չը պէտք է ճանաչի, և արհամարելով խիզճ, ալտրուիզմ և այլն՝ նա պէտք է վարուի իր ազատ

բնազգների համաձայն: Իբրև «գերմարդու» տիպար Նիցշէն բերում է յայտնի Ցեղար Բօրջիային: Տասնելիցերորդ դարում ապրող այդ իտալացի իշխանը իդէալ էր և Մակիփավելի համար: Ցեղար Բօրջիան իր նշանաբան էր զրել «Aut Caesar aut nihil!» (կամ Կեսար կամ ոչինչ), և իր նպատակներին հասնելու համար ամեն միջոց ներելի էր համարում: Նա սպանեց իր եղբօրը, բռնաբարեց իր քրոջը, անթիւ սպանութիւններ կատարեց, առհասարակ թունաւորել հակառակորդին, խաբել, ուխտագրուժ լինել սովորական էր նրա համար:

Այժմ ուժեղները նոյնն են անում, բայց աւելի ստոր են քան Ցեղար Բօրջիան, որովհետև աշխատում են իրանց արարգները սքօղել, փարիսեցիական զանազան սկզբունքներ հնարել, «Քեհազոյն շահերով» արդարանար Խոկ եթէ այդ կեղծաւորութիւնը մի կողմ դնէք, իը տեսնէք որ Մակիփավելի վարդապետութեան հաւատարիմ հետեղներ են պետական մարդկանց մեծագոյն մասը: Բիսմարկը միայն զրանց խոշոր, տիպիկական ներկայացուցիչն էր: Իզուր չէր նրա աշակերտ Վիլհելմ Ռ-րդը բարեկամ անուանում սուլթանին հէնց այն բոպէին, երբ ծերունի Գլադմատօնը «մեծ մարդասպան»-ի չարագործութիւններն էր մերկացնում: Իզուր չէր նոյն Վիլհելմը Գիրմանիայի զինուարներին Զինաստան ուղարկելիս պատուերում—չը խնայել ոչ ոքի և հոնական անգիտութիւններով յաւէրժաշնել գերմանական անունը հեռաւոր արեելքում... Անշուշտ նիցշէական է և Վիլհելմ Ռ-րդը, ինչպէս նիցշէական էր և Բիսմարկը: Բոլորովին հակառակ համոզմունքի մարդիկ էին Վիլհելմի թէ հայրը և թէ մայրը: Այս վերջինը, կայսրուհի Ֆրիդրիխը, որ վախճանուեց յուլիսի 27-ին, Գլադմատօնի երկրպագուներից էր և իր լսարերար ազգեցութիւնը հաղորդել էր և իր ամուսնուն՝ դժբախտ Ֆրիդրիխ կայսրին: Հանգուցեալ Ֆրիդրիխ Վիկտորիա կայսրուհին իր հետ Անգլիայից պրուսական արքունիքն էր բելել Գլադմատօնին ազատամութիւնը, պարզութիւնը և մարդասիրութիւնը, սէրը դէպի սահմանադրական կարգերը, գիտութիւնն ու գեղարուեստը: Յայտնի է նրա խոր ատելութիւնը դէպի Բիսմարկը և բարեկամութիւնը Վիբխովի հետ: Կայսրուհին, ինչպէս և նրա ամուսինը, կարող էին համարուել Գլադմատօնի շկօլայի մարդիկ, մինչդեռ նրանց որդին՝ Բիսմարկի դպրոցի ծնունդ: Էյդ շկօլայում կատարելագործեց իր պետական կրթութիւնը և մի այլ քաղաքական գործիչ, որ վախճանուեց յուլիսի 29-ին: Մեր խօսքը Կրիստիֆի մասին է: Շատ ուսանելի է այն փոփոխութիւնը, որ կատարուեց այդ իտալական գործիչի մէջ նրա երկար և բազ-

մակողմանի կեանքի ընթացքում՝ Նախկին դաւադիրյեղափոխականը, ծայրայեղ արմատականը, «բոլոր ազգերի եղբայութեան» ջատագովը, Մաձմինիի և Գարիբալդիի հետ հայրենիքի միութեան և աղատութեան համար աշխատած դեմօկրատը յետոյ, կառավարութեան զլուխ անցնելով, սկսում է կամաց կամաց դառնալ միապետական, բուրժուազիայի պաշտպան, դիկտատոր: Իր դիրքը ամրացնելու համար նա չի քաշում և պօլիցիական ճնշումներից, և ազօրէն հալածանքներից: Քաղցած ամբոխի արդար բողոքը խեղդելու համար նա չի ամաչում զինուորական ոյժի դիմել: Ուշադրութեան արժանի է այն որ Կրիսպին նկատելի կերպով սկսում է փոխուել դէպի վատը այն ժամանակից, երբ նա մօտենում է Բիսմարկին: Ինքը ընկնելով Բիսմարկի ազգեցութեան տակ և իտալիան դործիք գարձնելով Գերմանիայի ձեռքում, Կրիսպին ոչ միայն մոռանում է «ազգերի եղբայրութեան» գաղափարը, այլ նոյն իսկ 1889 թուին առաջարկում էր Կրէտէն խաղաղացնելու համար ուղարկել այնտեղ... Շաքիր-իաշային:

Բիսմարկը ճարպիկութեամբ օգտուեց Ֆրանսիայի կողմից Տունիսին տիրելուց, իր թակարդը գցելու համար իտալիան: Իտալական չօլինիզմը չէր կարող հաշառել որ հին Հռոմի ժառանգութեան—Տունիսին, տիրեն ուրիշները: Եւ ահա, չը նայած որ իտալիայի թէ առևտրական և թէ կուլտուրական շահերն աւելի պահանջում էին մերձենալ Ֆրանսիային, քան Գերմանիային, նա այնուամենայնիւ Կրիսպիի չնործիւ մտաւ եռապետական գաճնակցութեան մէջ:

Աղքատ իտալիան կաջուց դուրս էր գալիս իր զօրքով ու նաւատորմիզով յետ չը մնալ իր գաճնակիցներից: Երկիրը տնտեսապէս քայլայում էր, իսկ Կրիսպին երազում էր Տունիսի փոխարէն Աֆրիկայում մի այլ գաղթավայր ձեռք բերել: Ցայտնի է թէ ինչ վախճան ունեցաւ այդ բախտախնդրական արշաւանքը 1896 թուին: Մենելիքի հարուածից գլորուեց և ինքը Կրիսպին իր զեկալարող դիրքից: Նա հեռացաւ քաղաքական ասպարէզից և կորցրեց իր ժողովրդականութիւնը այն աստիճան, որ մշտական երկիւղի մէջ էր նոյն իսկ իր անձնական ապահովութեան նկատմամբ:

Կրիսպիի տապալուելուց յետոյ իտալիան թէ և սկսեց մօտենալ Ֆրանսիային, բայց խզել իր կապերը եռապետեան գաճնակցութիւնից չէր կարող: Իսկ Ֆրանսիան այնքան ճարպիկ գտնուեց որ մենակ չը մնաց Բիսմարկի ստեղծած վտանգի առաջ: Հանրապետական Ֆրանսիան ձեռք բեկնեց միապետական

Ծուսաստանին։ Այդ երկպետեան բարեկամութեան մի փառաւոր ցոյց էր 1898 թուին ոռոսաց Կայսերական Զոյզի այցելութիւնը Ֆրանսիային։ Այնուհետև թէ Ֆրանսիան և թէ Ծուսաստանը գորեղացնում էին իրանց ծովային ոյժերը։ Եւ այժմ Ֆրանսիան դարձեալ զնծում է սպասելով բարեկամ պետութեան միահեծան Պետին՝ մեծ զօրահանդէմներում ցոյց տալու համար Նրան թէ իր հզօր նաւատորմիդը և թէ կազմ ու պատրաստ զօրքը։

Լ. Ս.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Standar d»-ի ^{29/16} յովիսի
Նում տպուած է հետեւալը. «Նոր
հնագիտական գիւտեր Հայու-
աստանում»: Գերմանական կա-
ռավարութեան շահերը Բաղդադի
երկաթուղու մէջ թելաբրել էր նը-
րան ուղարկել Հայաստան մի գի-
տական լանձնախումբ՝ այնտեղ հը-
նադիտական հետազոտութիւններ
անելու նպատակով: Եզդ լանձնա-
խումբը (1898—1899 թուականնե-
րին) բաղկացած էր Դր. Շեկից և
առողապէտ Դր. Էմանիք: Նորերս
միայն հրատարակուեց գրանց զե-
կուցումը, որ պարունակում է իր
մէջ գիտութեան համար նոր և շատ
կարևոր տեղեկութիւններ: Առաջին
անգամ ֆրանսիացի ճանապարհորդ
Դր. Շուլցն էր, որ մատնացոյց
արեց Վանի ծովակը շրջապատող
երկրի նախնական քաղաքակրթու-
թեան հետքերի վրայ: Նա արտա-
գրեց Վանալ բերդի ժայռոտ պա-
տերից բազմաթիւ բներագիր ար-
ձանագրութիւններ: Դժբանտարար
Դր. Շուլցը սպանուեց թիւրքերի
ձեռքից, բայց նրա յուշառետրերը
ինտու գոնուեցան և հրատարակուե-
ցան ֆրանսիական կոռավարու-
թեան ձեռքով „Journal Asiatique“-
ում: Բացի Դր. Շուլցից Հայաս-
տան այցելեցին Լազարդը (1849
թ.) և Ռասասմը, որոնք նոյնպէս
արտագրեցին բազմաթիւ արձա-
նագրութիւններ: Վերջինը՝ Թօփ-
րակ-Կալէզում փորելով գետինը—
գոտու Վանալ իշխանների պարա-
ները: Սակայն գերմանական այդ
վերջին էքսպեդիցիայի աշխատու-

թիւնները անհամեմատ աւելի լայ-
նացրին այդ երկրի մասին մեր ու-
նեցած գիտութիւնը: Յանձնախումբը
համեմատելով և բազդատելով մին-
չե օրս գտնուած բոլոր արձանա-
գրերը—աւելացրեց նոր նիւթեր
Հայաստանի հին պատմութիւնը ու-
սումնագիրելու համար, որոնց մէջ
է և նոր գտնուած մի երկար և
պարզ գրութիւն՝ գրուած երկու լե-
զուով, ասորերէն և վաներէն (վալ-
ուու): Սոյդ էքսպեդիցիայի ամենանշա-
նայոր հետևանքը այն է, որ այժմ
բասական որոշ կերպով լաւանի է
այդ կայսրութեան տարածութիւնը,
որ համարեա բոլորովին անհետա-
ցել է պատմութեան էջերից: Մայ-
րաքաղաքը եղել է Վանը, այժմ
նոյն անոնք կրող լճի ափին, որ
կոչում էր Թուազաս—հին ազգերի
Տօսր-ը Բայց երևում է, որ թա-
գաւորանիստ քաղաքը եղել է Թօփ-
րակ-Կալէն, որ կոչում էր Ժուզվաս:
Կայսրութեան հիւսիսացին ասհ-
մանները որոշ չեն, բայց նման
արձանագրեր գտնուել են ուսաւկան
Հայաստանում: Դէպի արևելք—այդ
տեսակ արձանագրեր տարածուած
են միայն մինչև Սւերմիա լճի կող-
մերը: Մէկը գտնուել է Թօվանդիզի
մօտ, Քելի-շէն կիրճի ժայռոտ գա-
գաթի վրայ, որ գտնում է ծովի
մակերեսովից 12 հազար ոտնաշափ
բարձր: Սոյդ խորսովիրը գտաւ ուրը
Հէնրի Շառուինսոնը և Վերագրում
է Խոսկունիս և Մինուաս թագաւոր-
ների օրերին, որոնք թագաւորում
էին միասին (800 Ք. առ.): Դէպի
արևմուտք այդ պետութեան ասհ-

մանները հասնում էին մինչև բալուի ժայռերը—եփատի վրայ, Մալթիէյի մօտ, որտեղ նոյնպէս գտնում են Սենուասի բեւեռազրերից: Այդ նոր գտնուած արձանագրերը պատմում են Հիսոթիսների, Ասորոց և աւելի լեռոյ Բարուասների (որոնք պարփկներ չեն երեւմ, այլ հաւանօրէն արիացիների նախորդներ) դէմ մղած պատերազմների մասին: Նմենահին արձանագրութիւնները ծագում են Սարդուրի և Խոպունիսի ժամանակիներից և զըրուած են ասորերէն, որտվինետև Վանի գրողները զեռ չէին լարմարեցրել իրանց լեզուի համար բեւեռազրութիւնը, որ նրանք փոխէին առել: Սակայն նրանք կարճ ժամանակի ընթացքում կատարելագործեցին այդ, և Մինուասի ու նրա հօր հետ միասին թագաւորած ժամանակի բոլոր արձանագրերը Ալարօդեան լեզուով են գրած: Այդ հետազոտութիւնների գլխաւոր արդիւնքներից մէկն էլ է ալնտեղը բնակած ժողովրդի անունը որոշելը. Նրանք կոչում էին Քալդէացիք—իրանց ազգային ասոռոծոյ անունվ, որ կոչում էր Քալդի և նոյնն է, ինչ որ յոյն գրողների Քալդայները—ինչպէս օր. Քաշնօֆոնի գրուածքներում:

Զեռք բերած գեղարուեստական առարկաների մէջ, որոնք այժմ գտնուում են Եերինի թանգարանում, կան բրօնդից շինած ցուկեր, վահաններ և ալյն, որոնք գտնուած են Թօփրակ-Կալէյում: Մի քանի վրայ արձանագրած են Արդիստիս և Ռուզաս թագաւորների անունները, որոնք ժամանակակից էին Ասորեստանի Սարգոնին՝ 721 թ. առ.: Այդ լիշտակարանները ներկայացնում են այն աղբիւները, որտեղից ծնունդ են առել պարտկական գեղարուեստական ձեւերը, որոնցով դարդարուած են Պերեց պօլիսի պարտասները: Պարսից և նի-

նեալի քանդակագործութեան նմանութիւնը անվիճելի է. մի հարց, որ մինչև այժմ շատ դժուար էր որոշել, քանի որ ասորոց պալատները կործանուած էին դարեհի օրերից առաջ: Հայ արուեստգէտները ստանում էին իրանց գեղարուեստական ներշնչումները ասորացիներից, որոնցից նրանք առած էին և իրանց զբերը, բայց նրանք ներկայացնում էին ցովերը և ալյն, անշափաւու ձեւերով: Թօփրակ-Կալէյում գտնուած Քալդի շաստուածի զահը անշուշտ ներկայացնում է Սարգոնի կամ Սենեքերիմի զահի մի օրինակը, իսկ Դարեհի զահը Քալդէի զահի կատարեալ պատճէնն է, որպեսով պարզում է պարսիկ գեղարուեստի ասորական ծաղումը:

Այդ կարճ տեսաթիւններից երեսում է, թէ ինչքան նշանաւոր հետանքներ է ունեցել գերմանական վերջին գիտական արշաւանքը“:

Ն.

РУССКОЕ БОГАТСТВО, ГІПЕЛІС: ПІД
ІГАВАЛ 1900 թուականին սուլթան
Ներփіл-Համітхը տօնեց իր գրարե-
բախութ թագաւորութեան քանհինգ
ամեակլը Համітլը, ինչպէս յատնի
է, ամբողջ քրիստոնեայ աշխարհը
խարելուց և 300,000 հայերի կոտո-
րածով ցնցելուց յետոյ, հանդիսա-
ցա համբաւականութեան զաղա-
փարը ոչ միայն արծարծող, այլ և
կեանքի մէջ զործազրութ Համիսլա-
մութիւնը գեղեցիկ ապագայ է
խոստանում քայլքայտած թիւլք
պետութեսն գլխաւորին. Նա է խա-
լիֆը, նա է Մուհամմէդի յաջորդը,
հետևաբար նրա մի նշանով ոտքի
պիտի կանգնեն 250 միլիոնից աւել
մահմեդականները աշխարհի բոլոր
ծայրերում: Կամենալով մի մեծ
բարիք անել մահմեդական աշխար-
հին և առելի ևս գրաւել բոլոր ուղ-
ղահաւատների սրտերը, սուլթան
Համիդը 1900 թուի սկզբում իրադէով

հրամայեց երկաթուղի կառուցանել Դամասկոսից մինչև մահմեդականութեան ամենամեծ սրբագրը— Մաքքան Սուլթանի տօքենանի օրը, օգոստոսի 15-ին, Դամասկոսում մեծ հանդէսով դրուեց այդ ճանապարհի առաջին քարը: Այժմ պ. Ս. Կոմոդուուշին մի շատ հետաքրքրական լոգուած է նուիրում Մաքքայի երկաթուղուն:

Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր ուղղահաւատ, որ ուզում է հաջ գնալ», պիտի 40 օր և 40 դիշեր ճանապարհորդէ անապատում, յաճախ առանց ջրի, սաստիկ այրող արեղակի տակ: Եցդ ճանապարհորդութեան շատերը չեն դիմանում, բոլոր ուխտաւորները չունեն ուղտեր, այնպէս որ թողերը և հիւանդները սովորաբար մեռնում են ճանապարհին: Անապատը այնքան անբնակ է, ողը այնքան չոր է, որ մարդկանց և կենդանիների դիակները մի տարուց յետոյ էլ, ինչպէս պատմում են ուխտաւորները, ամբողջ մայցած են լինում մահուան տեղում: Մաքքայի ճանապարհը լիքն է մարդկանց և կենդանիների սոկորներով: Խոկ Մաքքայի մէջ շատ յաճախ, համարհա իւրաքանչիւր տարի, երեան է գալիս որ և է համաձարակ հիւանդութիւն: Երկրագընտի րոլոր ծայրերից հասաքուած ահագին բազմութիւնը, ցեխն ու տօթը շատ նպաստաւոր պայմաններ են հիւանդութիւններ զարգայնելու համար: Մաքքայից վեց ժամ հեռու գտնուող մի տեղ ամեն տարի մորթուում են բաղմաթիւ մասազացու կենդանիներ, որոնց փառղ դիակները և արիւնը վարակում են օգլու Մի բարեպաշտական կարծիք է կազմուած, թէ ամեն տարի պէտք է մորթուի ոչ պակաս քան 75 հազար ոչխար: Դրանից պակաս զոհը ընդունելի չէ: Բայց սովորաբար այդ քանակութիւնից էլ աւել ոչխար է մորթուում: Համաձարակի ժամանակ

մարդկանց դիակները հարիւրներով և հազարներով թափուած են լինում Մաքքայի փողոցներում և Քաարայի մօտ ու լրացնում են կրօնական վայրենի տղիտութեան տխուր պատկերը: Բայց այս ամենը բոլորովին չէ շփոթեցնում ուղամաւատուներին: Ամեն տարի Մաքքայում լինում են մօտ 200 հազար ուխտաւորներ, որոնցից համաձարակի տարիներում կոտրում է համարհա չորրորդ մասը: Այնուամենայնիւ, մահմեդականները երբէք չեն ասում թէ Մաքքայում համաձարակ կար: Գոյութիւն ունի բարեպաշտական համոզմունք, թէ մարդիկ Մաքքայում կարող են մեռնել կամ յոդնածութիւնից կամ թէ առհասարակ Աստուծու և նրա մարդարէ Սուհամմէդի կամքով, որոնք իրանց մօտ են կանչում աւելի արժանաւոր ուխտաւորներին:

Ի՞նչ նշանակութիւն կ'ունենայ նոր շինուող երկաթուղին: Յօդուածագրի կարծիքով այդ նշանակութիւնը ահագին կը լինի և նրա հետեանքների մասին այժմ նոյն իսկ չէ էլ կարելի ճիշտ դաշտար կազմել: Երկաթուղու առաջին գործը այն կը լինի, որ ուխտաւորների թիւը սկզբում շատ կը մեծանայ: Մաքքա կը գնան ոչ միայն աղքատութիւնը և տկրութիւնը, որ միշտ մեծ անտարերերութիւն ունի դէպի կեանքը, այլ և հարուստ, նոյն իսկ կրթուած մարդիկ: Բայց ուխտաւորների թուի աւելանալը և ճանապարհների հեշտանալը պիտի պահանջանան, որ շոտով կ'ընկնի մահմեդական և վայրերը այցելողների գինը Տգէտ, միշտ ֆանսաորիկաս, միշտ անհամբերող—պահպանողական հաջիների մասան կը կորցնէ իր նախկին նշանակութիւնը: Աւելի կրթուած մարդիկ Մաքքայից ուրիշ տպաւորութիւններ դուրս կը բերեն, ապաւորութիւններ, որոնց վերաբերյալ ապաւորութիւններ,

ամբոխը կոյր է: Մահմետական հոգևորականութեան զիշառով հակումները, նրանց աներես խարերայութիւնը, ուխտաւորներից փոք զջելու միջոցները, աստուածապաշտութեան այսպիսի միջոցի վայրենութիւնը և անհարկաւորութիւնը - այս բոլորը հետզիւտէ կը մտնէ մահմեդականութեան դիտակցութեան մէջ և կ'անէ իր աննշմարելի, առողջացնող ներդործութիւնը: Բացի դրանից, երկաթուղին մի լայտնի սատրճան կը վերացնէ մահմեդականների ահազին համախմբումները, բաժանրաֆանացան կ'անէ ամբոխ և հէնց դրանով հնարաւորութիւն կը տայ ուխտաւորներին դուրս բերել աւելի անհատական տպաւորութիւններու նմբոխի մէջ զարանանում է նոյն խոկ ամենամարդառէք մարդը: Մահմետականի աչքերը ամբոխի միջից աւելի չարացած են պարզում, ամբոխի մէջ մուտքամանը աւելի անհարերող է և դիւրազրդիւ: Ինչն է պահպանում մահմեդական փառատիկուութիւնը, — ողիտութիւնը, սպարապ փողոցալին կեանքը, տեսակտեսակ համախմբումները կրօնական նսպառակներուք: Ֆի հասարակութիւն զարգանում է այն շափով, ինչ չափով զարգանում է, աղատուելով մասսայի աղջեցութիւնից, առանձին անհատը: Եւ այս տեսակտետով երկաթուղին կրթով մեծ զեր կը կատարէ: Անցնում է մահմեդականների փանատիկուութիւնը, թշշնամութիւնը դէպի միւս աղջեցու Ալժմք քրիստոնեաները ապլում են նրանց մէջ, իրանց եկեղեցիները, իրանց զպրոցներն են շնուր, իրանց ձեռքն են առնում առևտրական դործերը: «Խարքայի երկաթուղին» կ'ոչնչացնէ կրօնական սրպութ, դրա ուղղակի հետևանքը այն կը լինի, որ մարդիկ կը սկսն աւելի լսելացի և հանգիստ կերպով վերաբերուել սրբութիւններին և մարդկացին կեանքին: Կրօնական

ինքնասպանութեան ժամանակը
անցնում է:

Հետաքրքրական զուգաղիպութիւն է, որ մի որիշ երկաթուղի էլ գալիս է հեշտացնելու շիա մահմեդականների ճանապարհորդութիւնը դէպի իրանց սրբավայրերը: Այդ ճանապարհը Բաղդադի երկաթուղին է: Այնպէս որ Գամասկոսը, Մատինան և Մաքրան, Սամարրան, Քէրբէլը, Նաջիվը և Բաղդադը կը կատուեն երկաթուղիներով քաղաքակիրթ աշխարհի հետո թէ Բաղդադի և թէ Մաքքայի գծերով կը սկսի զարգանալ տնտեսական կեանքը, որ կը բռնէ ծուլութեան, տղիտութեան և կրօնական անհամբերողութեան թագաւորութիւնը, կը բռնէ, կը ճմէլ և նորից կը շինէ ինչպէս ինքն է ողում: Կը ծաղկեն Երկաթուղիների շրջականները, անտարակոյս կը կնողանանայ և Նրարիան օճաց հազի թէ զա օգտակար լինի Թիւրքիայի համար: Թիւրք պետութիւնը նման է մի մարդու, որ կորցրել է իր շարժուածքները կառավարելու ընդունակութիւնը. ուզում է մի պատառ զնել իր բերանում, բայց մի վիրաւորական կօմիզմով մեկնում է այդ պառար ուրիշին: Արարիայի վայրմնի ցեղեցիր այժմ էլ քիչ են հպատակութեան: Միայն, մի քանի նահանջներ անուանապէս հաշում են սուլթանի երկրների ցուցակում: Հարաւային Արարիան գտնում է Անգլիայի աղջեցութեան տակ, իսկ Մաքրան ունի իր էմիրը և բոլորովին չէ չանչում Թիւրքիայի իշխանութիւնը: Հէնց որ կը վերջանայ երկաթուղին, Արարիա կը թափուեն երոպացիները և, կեանքի կը կանչեն երկրի քնածոյնքները: Նրանք կը մշակեն բոլոր բնական հարասութիւնները, կը կենդանացնեն թերակղզին, որ կամ կը մտնէ երոպական պետութիւնների հօգանու տակ, կամ դրանց

ձեռքով բաժան-բաժան կը դառնայ:
Նոյն իսկ եթէ Արարիան առանձ-
նանայ և ինքնավարութիւն ստա-
նայ, — բոլոր դէպերում էլ վաս-
ուողը թիւրք պետութիւնը կը լինի:
Թիւրքաց պետութեան գորութիւնը
քաղաքական և տնտեսական ահա-
տոր պարմանների մի լծորդութիւն
է ներկայացնում. այս զրութեան
մէջ այդ պետութիւնը չէ կարող
լաւ բան անել իր մէջ: Որքան լաւ
բան, այնքան վառ:

Եթոհասարակ-շարունակում է
հեղինակը, իսլամի կեանքի մէջ
զգացում է մի օրհասական պատ-
ռուածք: Թիւրքաց պետութիւնը
կորցնում է իր քաղաքական ոյժը:
իսլամը կորցնում է իր բարոյական
ոյժերը: Թիւրքաց պետութեան
տաեղծողն ու պահպանողը իսլամն
էր: Զօռօվ կացրած զանազան, մի-
մեանց չը հասկացող և յափտեան
միմեանց թշնամի ազդութիւննե-
րից, Թիւրքիան ուժեղ էր իր ներ-
քին կեանքի մէջ միայն այն պատ-
ճառով, որ նրա մէջ տիրապետում
էր մահմետական տրամադրութիւնը,
որ վայրենի ուժգնութիւն էր ցոյց
տալիս: Վայրենի կամայականու-
թեան ազդած երկիրը չէր թոյլ
տախոս որ այդ պետութիւնը քայ-
քայուի և բաժան-բաժան դառնայ:
Թիւրք կառավարութիւնը չորս դա-
րերի ընթացքում ոչ մի կերպ չը
կարողացաւ միացնել պետութեան
մասերը: Տնտեսական կեանքը ոչ
միայն չը զարգացաւ այդ ամբողջ
ժամանակում, այլ թւում է, աւելի
և ցած ընկաւ: Արարական կու-
տուրան և քաղաքակրթութիւնը
ճնշուեցին օտարների լուծի տակ:
Միայն իսլամը, ցոյց հանելով ցըն-
ցոտիները, ցեխը և աղքատութիւնը,
շարունակում էր պահուել: Այդ ոյ-
ժից թիւրքաց կառավարութիւնը
միշտ օգտում էր, որպէս զի թա-
լացնէ հասարակական կեանքի այս
կամ այն տարրը, Այնտեղ, ուր հար-

կաւոր էր ճնշել ուժեղացող քրիս-
տոնիաներին, կառավարութիւնը
երկպառակութեան կայծ էր զցում
նրաց և մուսիլմանների մէջ. վեր-
ջիններս կոտորում էին քրիստո-
նեաններին, իսկ կանոնաւոր զօրքե-
րը, խռովութիւնը հանգստացնելու
պատրուակով, զալիս էին վերջա-
ցնելու սկսած զործը: Մաքքայի և
Բաղդադի երկաթուղիները կը հա-
րուածեն իսլամի սիրտը: Մուսիլման-
ները մութ կերպով զցում են այս:

Տայ Աստուած, —կ'ասէ մարդկու-
թեան և առաջադիմութեան ամեն
մի բարեկամ: Բայց ե՞րբ կ'աւար-
տուի Մաքքայի հանապարհը: Նրա
տարածութիւնը կը լինի մօտ 1300
վերատ. 35 միլիոն ուորի է հար-
կաւոր վերջացնելու համար: Ենի-
ւում է ոչ թէ պետութեան հաշուու,
այլ մահմետականներից ժողովուող
տուրքով: Եւ մուսիլմանները չեն
խնայում իրանց նուէրները. 1900
թուին միայն երկու շարթուայ ըն-
թացքում հաւաքուել է 4½ միլիոն
ուորի: Բայց երկաթուղու շինու-
թիւնը շափականց զանդար է գնում
և համարեա չէ էլ սկսուել, այնպէս
որ կարծողներ կան թէ հաւաքած
գումարները ուրիշ նախառակի կը
յատկացնուեն: Եթէ այզպէս էլ չը
լինի, ո՞րքան զումար պիտի հաւա-
քուի, որպէս զի կշտացնէ Թիւրքաց
պաշտօննեաններին և ապա միայն
զլուի բերէ այդ հանապարհի շի-
նութիւնը...
—

“Արեւելք” ամսօրեայ լրագիր,
Դրական շատ կարեսոր հարցեր ու-
նենք, բայց զրանց ուսումնասիրու-
թեամբ զբաղուել չենք կամ հնում
կամ չենք կարողանում: Յրինակ,
մենք կանգ ենք առնում այն վաս-
տի առաջ, որ մեր զրականութիւնը
գնալով աղքատանում է, մանրա-
նում, կարծեա կորցնում է իր զո-
ւութեան իրաւունքը: Խնչո՞ւ է այդ-
պէս: —Պէտք է պատասխանել այդ

հարցին, իսկ պատասխանելու համար պէտք է ուսումնասիրել հարցը, քննել անցեալն ու ներկան, վերլուծել զրականութեան վրայ ազդող հանգամանքները. բայց մենք չենք անում այդ, այլ միայն կանգնում ենք իրողութեան առաջ և յուսահատ կերպով կախ ենք անում զլուխներս: Մեր այս ընդհանուր թուլութեան մէջ մի-մի երեան եկող փորձերը հէնց այդ պատճառով է, որ ուշադրութիւն են գրաւում իրեկ անապատի մէջ երեացող օսպիսներ: Այդ օսպիսներից մէկն է պ. Գ. Անդրէասեանի „Համառօտ և բաղդատական ուսումնասիրութիւն մը Պօլսահայ գրականութեան վըրայ“, որ տպուեց „Սրեելքի“ միշարք համարներում: Դա մի թառցիկ ուսումնասիրութիւն է, եղբակացութիւնների մի ամփոփում. և մենք կը ցանկայինք տեսնել աւելի խոր ու մանրամասն մի ուսումնասիրութիւն, որ եղբակացութիւնները փաստերով լինէին ապացուցուած, երելթները՝ օրինակներով: Բայց պէտք է գոհ լինենք, որ գոնէ համառօտ թռուցիկ ուսումնասիրութիւններ են լինում:

Դժբախտաբար, մեր ձեռքը չեն հասել „Սրեելքի“ այն համարները, որ տպագրուած է պ. Անդրէասեանի յօղուածի սկիզբը: Դատելով մեզ մօտ եղածից, պէտք է ասել որ հեղինակի մոտադրութիւնն է եղել որոշել պօլսահայ գրականութեան հոգերանութիւնը, նրա միջնալայրը, դարգացման միջոցները, նրա ձըգտումները: Խնչակը տեսնում էք, շատ հետաքրքրական հարցեր են, մանաւանդ ալժմ, երբ թիւրքահայերի գրականութիւնը, չը նայած բազմաթիւ լրագիրներին, շարաթաթերթերին, ներկաւացնում է անկենդան ու չոր մի դաշտ:

Պ. Անդրէասեանը նկատում է որ պօլսեցի գրադէմները ընդհանրապէս արձագանքն եղած են արեգե-

րական և համամարդկալին գրականութեան մը: Այս բառերը անհասկանալի կը մնային մեզ, եթէ քրացատրուէին այն մտքով թէ ազօլսահայ զրականութիւնը, իր նիւթերու առասութեամբ և զանազանութեամբ հանդերձ, չէ կրցած ներկայացնել տոհմային գրականութիւնը, չի կրնար անտեսելի օրինակ ըլլալ անոնց, որ ինքնատիպ, առանձնայատուկ զրականութեան ուղիղ ճամբան կը փնտուեն: Խօսելով աւելի պարզ լեզուով, Կ. Պօլսի զրականութիւնը չէ պահում իրական, ազգային հոգի վրայ, նա կօսմօպօլիտական ուղղութիւն ունի, նա տեղի և միջնալայրի հետ կապուած չէ: «Համամարդկային զրականութիւնը» իրեկ մի առանձին, բոլորովին տարրեր ճիւղ, գոլութիւն չունի այժմ ազգերի մէջ և այն զրականութիւնը, որին մենք կարող ենք տալ «համամարդկային» անունը, կազմում է հէնց այնպիսի ստեղծագործութիւններից, որոնք այս կամ այն ազգի մէջ են երեան եկել, կրում են այդ ազգի հոգին, բնորոշ, առանձնայատուկ գոյնները: Այսպէս, օրինակ, Տօլստօվի ժամարի իշխանութիւնը ուստական կեանքի հայելին է, տոգորուած է տեղային, միայն ուս ազգին լատուկ գոյններով, իրականութեամբ: Բայց այդ երկը համամարդկային, տիեզերական գրականութեան բազարիշ մասերից մէկն է կազմում, ինչպէս նաև, օրինակ, Զօլայի «Յեղմանուրութիւնը», թէև նրա մէջ պատկերացրած է ֆրանսիական կեանքը, Պարիզի իրականութիւնը: Հետևաբար, պօլեցին չը պիտի պարձենալ թէ ինքը կարող է, առանց իր ազգի, իր ժողովրդի մէջ ստեղծագործական ովելորութիւն որոնելու, ծառայել համամարդկային զրականութեան համայն մարդկութիւնը—դա ազգերի և ցեղերի մի ահազին խառնուրդ է. նա մէջտեղ

է բերում իր մասնիկները կազմող ազգութիւնների մոտուր հարսուութիւնները, և արդպիսով դառնում է ամբողջ մարդկութեան մի համախմբում: Դայտեցեք այդ համախմբման, սկանդինավացին իր յատուկ դէմքով է այնտեղ, ուսուը իր աղդային ոդին է բերել, ֆրանսիացին, անգլիացին իրանց գոյնն ու հոտն են բերում: Պօլսեցին չունեցաւ սեփական ինքնուրուն կերպարանք, — առ ուրեմն չէ կարող տեղ ունենալ համարաժեպային գրականութեան մէջ:

Պօլսահայելու գրել են և գրում են վէպիկներ, վէպեր: Բայց պ. Անդրէասեանը այդ տեսակ գրուածքների կոյտի մէջ մի հատ գործ միայն զիտէ, որ իսկապէս ինքնուրուն է, օտար վիպագրութիւնների տասիակ նմանութիւնը չէ ներկայացնում: Մի հատ... Շատ չէ, պօլսեցի հայելու պէտք է շատ ծանր ու բարակ մոտածեն այդ միաւորի վրայ: Խօսքօդի ափերում շատ տարածուած է փոքրիկ պատկերների, կամ, ինչպէս այնտեղ են անուանում, նորավէպերի (նորվէլ) գրականութիւնը: Ով առիթ է ունեցել կարդալու այդ անհամ ձանձրացուցիչ, զօռով թխած գործերից մէկը կամ երկուը, նա կը համաձայնի որ «Մուրճի» ներկայ համարում տպուած ճնորավէպին նորավէպը պատկերը շատ աջող կերպով է ծաղրում պօլսական այդ թխուածքները: Պ. Անդրէասեանը պօլսահայ վիպագրութիւնը հէնց այդ նորավէպերի հիման վրայ համարում է խիստ յետամնաց: Պատճառը նոյնն է—ազգային հոդից ու գաղափարից զուրկ լինելը: Հետաքրքրական է թէ ինչպէս է պ. Անդրէասեանը բացատրում այս երեսովի պատճառը: Թինձի կը թուի, առում է նա, թէ այս յետամնացութեան պատճառն այն է, որ Պօլսով ընտանեկան և ընկերական կեանքը, մանաւանդ

80-ական թուականներէն ի վեր քաղաքակրթութեան անհրաժեշտ աղղեցութեամբ հետզհետէ կորսունցուած է իր առանձնապատուկ հանգամանքը, եւրոպականին նմանելու համար. ասկէ վաս վիպագրիները միշտ ժամանակակից նիվիթեր և բարքեր ընտրած են, որով վիպագրութիւնն սուացած է միջազգային, և քաղաքացիական ձգուում մը, համաձայն Պօլսոյ միջավացրին: Մենք հազիւ թէ կարողանանք ըստարար համարել այս բացատրութիւնը: Ասել թէ Պօլիսը այնքան եւրոպականցել է, որ այնտեղ ապրող աղդութիւնները կորցրել են իրանց առանձնայատկութիւնները—զա կը լինի, մեր կարծիքով, չափազանցութիւն: Անհնարին է որ թիւրքաց մայրաքաղաքի 200 հազար հայ ազգաբնակութիւնը միանգամայն կորցրած լինի իր ազգացին կերպարանքը՝ եւրոպականին նմանելու համար: Եթէ այդ ազգաբնակութեան մէջ կայ մի շրջան, որ արդէն օտարացել է և ամօթ է համարում հայութեան հետ կապուած մնալը, այդպիսի երկույթ շատ տեղեր կարելի է տեսնել, հէնց նոյն իսկ մեր օտարահայելի մէջ: Որքան էլ վերոցիշեալ տողերի զրոյը մի պօլսեցի է, մենք, այնուամենայնիւ, չենք ընդունում, որ Պօլսում հայութիւնը այդ աստիճան ալլանդակուած լինի: այնտեղ կայ հաստրակի ժողովուրդ, կայ արհեստաուր, մշակ դասակարգ և անհնարին է որ այս հայուն խստերի մէջ «քաղաքակրթութեան անհրաժեշտ աղղեցութեամբ» շատ բան փոխուած լինի:

Ոչ, ազգային առանձնայատուկ կետնք կայ և Պօլսի մէջ. ապացոյց Հանգուցեալ Պարոնեանի հեղինակութիւնները, որոնց մէջ այնքան գեղեցիկ կերպով ցոլանում է կեանքը: Վիպական զրականութեան ողորմելի դրութիւնը, մեր կարծիքով, պէտք է որոնել ուրիշ պատճառները,

բի մէջ; Գրանցից ամենագլխաւորը ուղղութիւնն է; Պօլսեցի զրովը այսօր էլ կաշկանդուած է քօմանտիկ ուղղութեան վաղուց ամեն տեղ վերացրած կապանքներուի; Պօլսեցին ուղում է ամեն տեղ երգել, երագել, բայց չէ ողում տանել, նկարագրել, գեղարուեասուը նրան պիտի հանուք պատճառէ և այդ պատճառով էլ նա խոյս է տալիս ամեն մի իրավան հիւթից, որ անմարմին ու անարին խոհեր ու ողերութիւն չէ ծնեցնում, այլ կեանքի ծանօթ խաչն է ներկայացնում: Նրկար կանգ տանել այս իրացրութեան վրայ մենք չենք կարող: Խասենք միայն այն, որ այս հանգամանքը իրանք, պօլսեցներն էլ, հասկացի են վերջն աւարիներս: Նրանք էլ զրտեն որ գրական մի կեզ ուղղութիւն տարիների ընթացքում արգէս է կրթել իրանց: Միա կողմից, չէ կարելի լուութեան տալ և այն հանգամանքը, որ Պօլսում տաղանդներ երկան չեն զայիս վիպարութեան մէջ: Եթէ նոյն իսկ ընդունենք թէ Կ. Պօլսի հայութիւնը ամբողջովին այլասեռուել է և միջազգային մի խառնուրդ է ներկայացնում, դարձեալ չենք կարող հասկանալ Կ. Պօլսի գրական ամացրութիւնը. թողարկ գէպքում տաղանդաւոր գործեր երկան զային, հէնց արդպիսի միջազգային շրջանը պատկերացնող գործեր:

Ներկարացնենք: Ինքը, հեղինակը, տախս է մեղ ճիշտ զատորութիւններ, որոնք հասկանալի են դարձնում գրական հիանդութեան պատճառները. „Պօլսական միտքը ասում է նա—ճիշտ գեղեցիկը, հաճելին, գիրինը կը վնասէ“: Լուրջ ուսումնասիրութիւն, քննարասող և վերլուծող կարողութիւն չը կան պօլսեցների մէջ: Նոյն իսկ բանահական, իմաստափարական և պատմական հետազոտութիւնների մէջ պօլսահայ գրականութիւնը

„հուռ հետևող մը եղած է եւրոպական մտքին և Մխիթարեաններուն⁶, Ընդհանրապէս խօսելով, պօլսահայ գրականութիւնը իր մէջ զարգացուցիչ տարրեր շատ քիչ ունի: Փողովուրդը այդ գրականութիւնից լրջուէն մեծ բան չէ շահել մինչև այժմ: Նրա օդուրը միայն այն է եղել, որ այդ գրականութիւնը նրա միտքը պատճառատել է հոգեալաշտութեան: Արդէն Պօլսահայ գրականութիւնը մէջ առաղջ տարրեր շատ պակաս են: Նորահաս սերունդին առաղջ ու գրաւոր զաստիարակութեանը նըսպասող դրականութիւն մը չէ ան, ամենակին: Զարգացուցիչ և լառաջիմական տարրերը այնքան պատկաս են անոր մէջ, որ երիտասարդի մը ինքնասկրթութեանը պէտք եղած կերպով չի նպաստեր և տկար ու խակ կը պահէ անոր անհատականութիւնը: Արդահատելի ու կոր է այն տառցիչը, որ իր ուսուցման ու զաստիարակութեան նիւթերը բոլորուին պօլսկական զրականութիւնէն կը քաղէ: Պօլսոյ մէջ իսկ՝ այդ զրականութիւնը խիստ թերի է զաստիարակութեան համար: Սլունիս հեղինակը անցնում է գրական ուղինակ հարցերին: Անրուստը և ոճը դիմի մէջ պ. Անդրէասեանը այնպիսի նկատողութիւններ է անում, որոնց հիմնաւորութիւնը, արդարացրութիւնը ոչ ոք չէ կարող ուրանալ: Կ. Պօլսի գրականութեան մէջ տիրում է հուսորական ոճը: և իրաւութեան հիմնական պատճենը անունը է նման: շատ և շատ հաղուագիւտ են այնպիսի պօլսեցները, որոնք կարողանան պատմել, նկարագրել հասարակ լեզուով: Ճշտութիւն և բնականութիւն չէ կարող լինել պօլսահայ ոճի մէջ: — հուսորութիւնը սպանում է այդ բաները, «հուսորութիւնը կը ծածկէ զալավարներու պակասութիւնը, զատողութեան և տրամաբանութեան սխալները: Բայց «հուսորութիւն»

բառն էլ իսկապէս չէ կարելի գործադրել պօլսահայ ոճի վերաբերմամբ։ Աւելի ճիշտ կը լինի անուանել այդ ոճը ոռուցիկ, անստանելի ոռուցիկ։ Սա մի սոսկալի չարիք է զրականութեան համար։ Պօլսիցի հայերը այժմ այնպէս են գրում, որ նոյն խակ հասկանալ շատ գըֆուար է և մենքն անհամ ու ամենէն այսպանելի յառկութիւնն է ոռուցիկութիւնը, որ խոշոր ու փայլուն բառերու պառկերներու և գաղափարներու կուտակումով՝ արյարի կը շացնէ խակ մտքերը, բայց ձարձրացոցիչ է զրականութիւնն հասկացող մարդոց, Այս անտանելի ոռուցիկութիւնը տասկափն կը տիրապետէ մեր զրականութեան մէջ զանազան ձեռքրու տակ։ Ոմանք իրանց խորհրդապալատութիւնը անով կը բացատրէն, ուրիշներ իրանց գեղեցկապիտութիւնը, շատեր ալ առանց որ և է նպատակի սովորամութեամբ։

Թիւրքահամերի լեզուի վրայ սաստիկ ազգիցութիւն ունին թիւրքերէնը և ֆրանսերէնը։ Սա բնական երևոյթ է, ինչպէս բնական է ոռահայերի սուսաց լեզուի և գրականութեան տակ գոնուելը։ Փոքրիկ ազգերը ենթարկում են մեծ ազգերի ազգեցութեանն ու տակ գոնուելը։ Փոքրիկ ազգերի ազգեցութիւններն եւ եթէ կայ մի բան, որ ցանկալի է ալս բնական երեսովի մէջ, ու այն է, որ ենթարկուող ազգը կարողանայ ինքնուրութիւն պահպանել, չոնչացնել իր սեփականը, ալլ զարգացնել նրան, առաջ տանելը Այս տեսակէտից միայն պօլսահայ զրականութիւնը չէ, որ կ'ող ճանապարհի վրայ է գտնուում։ Ուղանուում, իբրև մի փոքրիկ, աղքատ, ուրիշի ազգեցութեան իսխատ ենթարկուած ազգի մէջ, բնականաբար թարգմանական զրականութիւն պիտի լինի մեծ մասամբ։ Մենք թարգմանում ենք շատ բան, բայց ի՞նչպէս։—Առաջին պարտաւա-

րութիւնն ենք համարում հարազատ թարգմանիչ լինել, ալսինքն թարգմանել բառացի, տալ այն ամենը ինչ ունի թարգմանուող հեղինակի մէջ։ Թարգմանութեան նշտութիւնը, ի հարկէ, կարևոր է, բայց մենք համարեն միշտ այդ ճշութեան գոռնում ենք հայերէն լեզուն։ Հնարում ենք մեզանից բառեր, մտցնում ենք մեր լեզուին բարձր դարձուածներ և յաճախ առաջ ենք բերում այնպիսի բարելոնեան խառնակութիւն, որից մեր լեզուն վասառում է անդադար։ Թարդմանիչը արգարանում է նրանով, որ պէտք է ճիշտ թարգմանել։ Բայց ընթերցող հասարակութիւնը, նոր գրողները սովորում են այդ լեզուն, —և ահա հայերէնի անկում և աղճատում։

Ամեն հանդամանքի մէջ հայերէն զրոյզ չը պիտի մոռանայ մի հանդամանք—որ նա պիտի գրէ հայերէն Պ. Անդրէասեանը բողոքում է օսար բառերը թարգմանելու այն սովորութեան գէմ, որ ախտի կերպարանք է ընդունել Կ. Պօլոսում և որ անհասկանայի է դարձնում զըրը բառածքները։ «Նարազրութիւն կարգը ֆրանսերէնի, և կամ անքանական նորագոյն եղանակով կայմումով, ոճին մէջ առաջ և կած է մթութիւն։ Դարձուածաւոր, երկար պարբերութիւնները, միհնոյն պարբերութեան մէջ մէկէ աւելի միջանկեալ նախաղատութեանց գործածութիւնը կը նսեմացնէ նիւթին իմաստու և ընթերցողին վրայ կը թողուածամ, անորոշ ներգործութիւն մը»։

Նատ ճիշտ է...

Ի՞նչպէս զիմադրել լեզուի խանգարման, ի՞նչպէս կենսունակութիւն մտցնել զրականութեան մէջ։ Մի քանի տարիներից ի վեր Կ. Պօլսի մէջ սկսուել է մի հետաքրքրական բանակուս Այնուեղ սկսել է իր դատը պաշտպանել գաւառական զրականութիւնը։ Գաւառը տեղ է պա-

հանջում Պօլսի մէջ, նա ասում է որ կարող է հարստացնել, դեղոցկացնել լեզուն, նոր, թարմ նիւթեր բերել: Պօլսը պաշտպանում է իր մենաշնորհը, նա չէ ուզում իր թագաւորութեան մէջ տեղ տալ էնըմպըլը զաւասին: Եւ սակայն դա միշտ շատ կարեռ հարց է, մահուան և կեանքի հարց: Պ. Անդրէասեանը այս պատքարը ձևացնում է այսպէս. զաւասցիները պահանջում են, որ զաւասպարբառները գրականութեան մէջ իրաւունք ստանան և զառնան զրքի լեզու Բայց նա ինքը համաձայն չէ որ արդպէս լինի և ցոյց է տալիս ուստահայերի օրինակը: Նա ասում է որ թիւրքահայերն էլ, ինչպէս և ուստահայերը, պիտի ունենենան մի ընդհանուր զրական լեզու, բայց զաւասները կարող են մտցնել այդ լեզուի մէջ իրանց լեզուալին հարստութիւնները, իրանց ժողովրդական լեզեցիկ ոճերը: Աւելորդ է ասել թէ որքան անսխալ է այդ հայեացքը: Կ. Պօլսը չափազանց արդէն քարացած է իր սահմանների մէջ, չափազանց շատ է բռնացած զաւասների վրայ: Մինելով գրականութեան միակ արտօնատէր, նա իրանից դուքս ոչինչ չէ ճանաչում: Լեզուն օր օրի վրայ արհեստական, անհասկանալի է դառնում, մօտեցում է գրաբառին և կորցնում իր կենսունակութիւնը: Չափազանց ծանր ու նեղ է Պօլսի մթնոլորտը, պէտք է նրան առողջաղնել, պէտք է նրա մէջ մտցնել կենդանարար տարրեր: Թո՛ղ, ուրիմն, առաջ զան զաւասները, նրանք առանց այդ էլ շատ են ուշացել: Վազուց պիտի իրանց իրաւունքների տէրը զաւանալին: Գաւառները միայն լեզուալին վերակենդանութիւն չէին բերի: Նրանք կը տալին գրականութեան ժողովրդական կամ թուլութեամբ, չէ կարողանում հասնել թէ ի՞նչպէս 300,000 գժբախտներ կոստուեցան մի վեհապետի հրամանով կամ թուլութեամբ, չէ կարողանում հասնալ քաղաքակիրթ Նկոպալի լութիւնը և արդարացնել Կայզերին (գերմանական կայսրին), որ ամբողջ ժամանակ խօսում է աւետարանի մասին և իրան բայտարարում է, արինահեղ կոտորածի համարեած

նախ ուզում բանակոփաներով իրաւոնք ստանալ: Այդպիսի հարցերը ակաղիմիական վէճերով չեն լուծում: Թո՛ղ մկան գաւառները, թո՛ղ մի ուժեղ հոսանք տարածեն Բօսֆորի ափերում, և հարցը ինքն ըստ ինքեան կը լուծուի: Եւ մենք ամբողջ սրտով ցանկանում ենք օր առաջ տեսնել պօլսահայ զրականութիւնը ժողովրդական, զաւասային նիւթերով կենդանացած:

«Կավկազի Ենտունք», օդոսուուս: Պ. Ս. Թամամշեան մանրամասն ծանօթացնում է նոր հրատարակուած մի գրանսերէն զրքի հետ, որի վերնադիրն է «Chrétiens et Musulmans»: «Քրիստոնեաներ և Մուսլիմները: Նկատի առնելով այդ աշխատութեան մեծ հետաքրքրութիւնը մանտաւնդ հայերին համար, մենք այսուղեղ կրծատում ենք պ. Թամամշեանի լուգուածը:

Հեղինակը լուղովիկ դը Կօնտանսոն, ճանապարհորդել է Թիւրքաց Հայաստանում և շատ մանրամասն խօսում է հայոց կրած տառապանքների մասին: Ֆրանսիական Ակադեմիայի անդամ Ժիւլ Լըմէտր մի առաջարան է կցել, որի մէջ առում է թէ իսլամի բարոյական, սօցիալական և քաղաքական դրութիւնը ամեն տեղ չափազանց տըլիրալի է: Ճնճ մանտաւնդ շատ ծանր կերպով լուզեց—առում է Լըմէտրալին երեսը, որ հեղինակը նուիրել է գժբախտ չայսաստանին: Խելքը չէ կարողանում հասնել թէ ի՞նչպէս 300,000 գժբախտներ կոստուեցան մի վեհապետի հրամանով կամ թուլութեամբ, չէ կարողանում հասնալ քաղաքակիրթ Նկոպալի լութիւնը և արդարացնել Կայզերին (գերմանական կայսրին), որ ամբողջ ժամանակ խօսում է աւետարանի մասին և իրան բայտարարում է, արինահեղ կոտորածի համարեած

միւս օրը, ապանող սովորանի բարեկամ: Կեղեքուելով՝ թիւրքերի ձեռքով, կողապատելով՝ քրդերի ձեռքով, ժամանակ առ ժամանակ կոտորուելով՝ երկուարի ձեռքով էլ, հայերը էլի սպասում են իրանց աղասութեան: Իսկ սույթանը կատաղաբար չարախնդութեամբ ծիծաղում է Եւրոպայի վրայ: Անմրոջ Ֆրանսիան, աւելացնում է Լըմէտր, պիսի կարեկցութիւն ցոյց տալ այս՝ այնքան համակլելի աղջին, հաւասարով մեծ պետութիւնների ստորագրութիւններին, կուսում է յանուն ազատութեան՝ թիւրքական կամայականութեան դէմ: Ոչ մի ժամանակ այնքան չէ խօսուել բարոյականութեան, արդարութեան, մարդասիրութեան մասին, և սակայն արդարութիւնը պիտի յետ քաջուի մի նոր թշնամու առջեց: — Պա միջազգային դրամական ոյժն է: և կթէ հայերի ձայնը խեղդուեց 1894—1896: թ. գաղանութիւնների ժամանակ, եթէ նախեղդում է և այժմ, դրա պատճառը, զլաւորապէս, այն է, որ փենանսական խոշոր ոյժերը (հայե Բազու), և Պօլսի այդ տէրերը չեն ցանկանում խառնակութիւններ, որոնք վեամներ են պատճառում նրանց: Մի՞թէ մենք ա'յնքան թոյլ ենք և չենք կարող բարձրացնել մեր ձայնը ու ցոյց տալ քրիստոնեաց քաղաքակիրթ Եւրոպային նրա պարասարութիւնները: Արքան ցաւալի է տեսնել Ֆրանսիան, որ առաջին անդամն է ինչ զատճանում է իր մարդասիրական կոչման:

Պ. Կոնտանսօն սկսել է իր հանապարհորդութիւնը Ալեքսանդրէտից, ուր հասել է 1897 թուի մայիսին: Զանազան ձևականութիւններ կատարելոց ցեսոյ՝ թիւրք պաշտանեաները, բաւական մեծ թուով, ինչպէս էլ հարկաւոր է լինել Հայաստանի գոների մօտ, համոզուելով որ մենք Զէթուն գնացող լեզափո-

խականներ չենք, թոյլ տուին մեղ առաջ գնալ: Ալեքսանդրէտում կանգնած են երկու բատալիօն զօրքեր, որոնց զիսաւոր նպաստակն է պահպանել սահմանադիմի մաքսատունը և արգելել հայերի գաղթականութիւնը թիւրքական: սահմաններից, ինչպէս նաև թոյլ չը տալ որ գերազանան փախատական հայերը, զինք մտցնելը արգելեն: Ալեքսանդրէտում և նէլլանում հեղինակը հանդիպել է նշանաւոր թուով հայերի գամապատական, լումայակոխիս, բանուր և բեռնակիր:

Հայէտում ճանապարհորդը տեսել է մահ և գատարկութիւն: Մի ժամանակ այնքան կարենոր այդ առևտրական կենտրոնի զործերը կատարելապէս փշացրել էին հայկական կոտորածները, թէն Հայէպի մէջ կոտորած չէր եղել Այս կողմերի կոտորածները միայն կիլիլ քաղաքում սահմանափակուցին, բայց այդ էլ ոչ թէ այն պատճառով, որ Կ. Պօլսի իշխանութիւնները խնայում էին հայերին: Հայէպ էր ուղարկուած մի անձ, որ պիտի խորհրդագցէր այստեղի իշխանութիւնների և պատուատը մահմեղականների հետ թէ արգեօք հարկաւոր է Հայէպի հայերին էլ կոտորել: Պէտք է արդար լինել, պատուատը մարդիկ, որոնք փորձուած էին և զիտէին անցիւալի գէպքերը, ցոյց տուին թէ ինչ արին եւրոպացիները 1850 թուին և մանաւանդ ինչպէս Փրանսիացիները միջամտեցին 1860 թուին և հարկան Դամասկոս քաղաքը սաստիկ պատիմ կրեց Եւրոպական զօրքերի ձեռքով սիրիացի քրիստոնեաներին կոտորելու պատճառով: Վերջապէս, Հայէպի զինուորական նահանգապետ Եղիշմափաշան (որ յետոյ նշանաւոր հանդիսացաւ լուն-թիւրքական պատերազմում) յայտարարեց, թէ ինքը հրաման է տուել իր զինուորներին զիմագրել հայերի կոտորածին և

նոյն իսկ կարգադրել է, որ միջնարեղի թնդանօթների բերանները ուղղեն դէպի ամենից անհանդիստ և փանատիկոս մահմերական թաղը, որ կոչում է բարձ-լ-ճերար, սպառնալով որ եթէ անկարգութիւններ ծագեն, ուրակոծել քաղաքի այդ մասը Հալէպի մէջ կան 140,000 բնակիչ, որոնցից 25,000 քրիստոնեաց, հայեր մօս 5000, դրանց կէսը կաթոլիկներ: Քրիստոնեաների մեծ մասը մարօնիդներ են: Հալէպիցիները վախենում են Զէլթունի հայերից. 1895—1896 թւմբի պատերազմի ժամանակ մի ամբողջ բառութիւն, որ բաղկացած էր հայէպիցիներից, գերի ընկառ հայերի ձեռքը և փակուեց միջնարերդում. Զէլթունի կանայք էին միջնարեղի պահապանները և գերի ընկած բառալիօնը կարողացաւ ծանօթանալ նրանց խէն ջարների և դանակների հետ. այժմ Զէլթուն անոնը, երր պատահաբար արտասանում է Հալէպի շուկաներում, մի մոգական աղղեցութիւն է գործում: 6000 հայերի հերոսական յաղթութիւնները, որոնք տեղի ունեցան 50,000 թիւրք զօրքերի դէմ մզած պատերազմի մէջ, թողել են իշխութիւններ, որոնք շատ էլ անորժելի չը պիտի լինեն մուսիլ-մանների համար:

Հալէպից մենք ճանապարհուեցինք Սօմբէջ: Մեր բարեկամները նախազուշացնում էին թէ ինչ վը-տանդներ կան ճանապարհին: Ձերքէղը, քուրզը, արարը միատեսակ կողոպուտ են ճանապարհորդին. զանազանութիւնը այն է միայն, որ չերքէղը կը կողոպատէ, կը մերկացնէ և այդպէս էլ իր զոհին կը թողնէ ճանապարհի վրայ, քուրզը թողնում է հաղուստը և երբեմն էլ ցոչց կը տայ թալանուածին ճանապարհը. արար-բեղովնը, բնութեամբ աղնիւ լինելով, նախ թալանում է, եղբայրաբար հիւրասիրում է իր զո-

հին և երբեմն նոյն իսկ ուղեկցում է նրան մինչև հարևան քաղաքը: Մենք պէտք է արձանագրենք այն զզուանքը, որ արաբները տածում են դէպի թիւրքերը և արհամարհները սուլթանի վերաբերմամբ: Օրօրեւելով իր միջնաղարեան փառաւոր անցեալի լիշտակների մէջ, արաբը իրան համարում է թիւրքից անսահման բարձր. ծագման հպարտութիւնը—սովորական երևոլթ է արաբների մէջ: Երաբ ծերունիները հաստատում են, որ երկիրը անկման և կործանման դրութեան մէջ է զտնում և պետական օրգանիզմը կրծում, ոչնչացնում են անբարեխիզ սլաշտունեանները: Թիւրքերը, այսպէս են երբեմն զիջողաբար վըկալում արաբները, միայն մի յառատկութիւն ունեն — քաջութիւն, բայց նրանք փչացնում են ամեն ինչ իրանց տղիտութեամբ և մարդարկի օրէնքը գործադրելու անընդունակութեամբ: իսկ արաբը, քաջութեան հետ միասին, ունի և ուրիշ արժանաւորութիւն—դիտութիւն և ընդունակութիւն:

Ճանապարհուրդելով դէպի Եղեսիա, մենք զիշերելու համար մնացինք մի յայտնի հարաւային քորդ ցեղի ասաւանորդի մօտ: Մեզ զիմաւորած աղան աւելի եւրոպական, քան ասիական տիպ է ներկայացնում: Նրա ցեղը կարող է զաշտ հանել 2000 համիդիէ կողուած ճեծեալներ: Այս քրդերը մեծ ակնածութեամբ են խօսում սուլթանի մատին. ճանապարհի անունը, որ տուել է նրանց գնդերին սուլթանը, շոյում է նրանց ինքնասիրութիւնը. նրանք իրանց համարում են ամենից շատ մօտիկ սուլթանի սրտին և հաւատացած են, որ կողոպուտի ամենամեծ մասը պիտի առանան խալիֆի ապագայ աջողութիւնների ժամանակի Հայկական զագանութիւնները և դրանց հետեած կողոպուտը կարաբար:

ցնում են նրանց ենթադրութիւնները, Խօկապէս քրդերը շատ ժամանակ չեն, ինչ հարկադրուած եղան հաստակուել թիրքաց կառավարթեան: Կազմակերպելով “համբդիկէ” քրդական գնդերը, կառավարութիւնը տալիս է նրանց զէնք և սազմամթերք, երբ հարկաւոր է համարում նրանց գործի կանչել, Քրդերը պիտի իրանց ձիաները բերեն իրանց հնտ: Զօրագույնները ցեղերի գլխաւորներն են, Քրդերին քարոզում է իւլամի ֆանատիկոսութիւնը, բայց թշում է, առանց մի առանձին աղողոթեան: Գուլդը կրօնապաշտ չեն, նա միայն մի տենչանք ունի—կողոպտել է Համբդիկէ գնդերը գեռ առիթ չեն տնեցել ցոյց տալու նոր զինուորական կազմակերպութեան գերազանցութիւնը, որովհետեւ գեռ մեծ թրտով չեն երացել պատերազմի դաշտերում: Բայց դատելով նախկին օրինակներից, երբ քրդերը մտցնում էին կանոնաւոր բասութեանների մէջ, — նրանք շատ էլ ցանկալի չեն, քանի որ աչքի են ընկնում իրանց գլխակոսութեամբ և անկարգութեամբ: Մասնաւանդ երախտազգէտ են քրդերը դէպի սուլթանը այն պատճառով, որ անսպաման իրաւունք ունեն կողոպտել հաւելին և ամեն տեսակ հարկերի ենթարկել նրանց: Արարենքը գանգառում են, որ երբ վէճեր են ծագում քրդերի և արարեների մէջ, թիւրք պաշտօնեաները քրդերի կողմն են բռնում:

Ելնուհնեան հեղինակը նկարագրում է Եգեսաւան, այնուեղ եղած կոտորածները, Զէլիունը և նրա պատերազմները Բայց այս մասին—հետեւալ համարում:

«Փամանակ», գրական, գիտական, գեղարվեստական և քաղաքական հանդէս, Պարիզից մեզ ուղարկուած է այդպիսի վերնազգիր կրող մի տեսրակ, բաղկացած 88 երևից: Վրան նշանակուած է № 1 և խմբագիր—Ս. Հախումեան: Մի կողմ զնելով երկու ինքնուրուն պատմուածքները, այդ տեսրակի մէջ տպուած միւս բաները լաւ ապացուցներ են որ տգէտ, սահմանափակ մարդ է յանձն առել խմբագրի պաշտօնը, մի մարդ, որ իր մտաւոր սնանկութիւնը աշխատում է թագցնել ճռաւան քրազների և

մեծ-մեծ բառերի տակ: Դրուած է Մայկօվի ակլերմանտի ժողովը՝ պօչմայի մի մասի բարբարոսական թարգմանութիւնը. այդ բառական չէ, տղիսութիւնը զեռ յանձն է ունել ծանօթացնել ուսւ բանաստեղծի կենսագրութեան հետ: Նունչեր է առում այդ տղիսութիւնը, “Ապօլուն Մայկօվի մահուան տարին չէ լայցել և նրա գերեզմանի վրաց դրամ ծաղիկները զեռ թարմ են”: Մինչդեռ Ապօլուն Մայկօվի մահմանը է 1897 թուականի մարտի 8-ին Տիայն անասնի տղիւտ մարդը կարող է ասել թէ Ապօլուն Մայկօվի մահմանական կամաց էր, որ լուզում առաջարկեց ուսապարակութեան մէջ և այդ յուղմունքի հեռանքն այն եղաւ որ որուղարը, լունը, սերը, նև լեռնցին աղասուեցած թիրքական լուծից: Մինչդեռ յայտնի է, որ սերբերը աղասութիւն ստացան գեռ ամանակ, երբ Մայկօվ չէր էլ ծնուած, լուները աղասուեցան այն ժամանակ, երբ Մայկօվ չէր էլ ծնուած, լուները աղասուեցան այն ժամանակ, երբ Մայկօվ չէր էլ ծնուած, լուների աղասութիւն ստացան գեռ ամանակը, սերի կամաց էր, իսկ թօլքարների աղասութիւնը ստեղի է ունեցել 1878-ին, այն ինչ Կուրմօնտի ժողովը “գրուած է 1801 թուականին: Մի ուրիշ նմուշ էլ: Քաղաքական տեսութեան մէջ նոյն տափակ ուղելը, խօսելի շինաստանի մասին, անուանում է նրան, Կոնֆուցիոսի և Բուդհայի հայրենիք”, այն ինչ երեխացին էլ յայտնի է որ Բուդհայի հայրենիքը Հնդկաստանն է—Ահա այսպիսի մարդը գործ է եկել և առում է թէ զիստութիւնը պիտի լինի իր ուղղութիւնը Ողորմիլի՛ զիստութիւն, եթէ նրա հովանառը և արածողը պիտի լինի այդքան ըրգէտ Հախումեանը: Այդ զիստութեան մի հարացլիիքն էլ լ. Մասնդինեանի և լրազների մեկնութիւնն է իր չենական լեզուուկ: Հախումեանը, սակայն, ունի մի անվիճելի արտօնութիւնն ստոր, անձնագիր, հաշիւներ մաքրել մարուլի մէջ, խարդախել, ստեր փշել, զատարկ ճղվացներով աղմուկ հանել, որիշի ասածները պղաւաղել, կուրծք ծեծել և իր ամբողջ մոսուր պաշարը, բաղկացած մի քանի հայնուական բառերից, դէս ու զէն շպրտել: Ազգպէս էլ նա արել է իր հանդէսում, “Մամուլ” անունով յօդուածի մէջ: Դա մի պացոյց է որ ժամանակը կը լինի կեղոսութեան և ամօթի մի հանդէս հայ մամուլի համար...»

Խ Բ Ա Գ Ր ՈՒ Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Ց

«Մուրճի» ներկայ համարը լոյս տեսնելուց մի քանի օր յետոյ, օգոստոսի 26-ին, Վենետիկի ո. Ղաղարի վահքում կը կատարուի Մխիթարեան Միաբանութեան երկու հարիւր ամեայ յօբելեանը:

Մեր ամսագրի ընթերցողները արդէն ծանօթացել են հռչակաւոր Միաբանութեան հիմնադրի, Մխիթար Սեբաստացու մանրամասն քննական կենսագրութեան հետ և հետզհետէ կը ծանօթանան նաև այն գործունէութեան հետ, որ ցոյց տուին Մխիթարի յաջորդները հայ գրականութեան ասպարէզում: Ներկայ լուպէին Մխիթարեանների նշանակութեան և մատուցած ծառայութիւնների գնահատութիւնը չենք տալիս մենք, այլ կամենում ենք շեշտել թէ որքան նշանաւոր է օգոստոսի 26-ի տօնը:

Մենք ընդունում ենք որ Մխիթարեան Միաբանութիւնը, անկախ այն պակասութիւններից և առաւելութիւններից, որ ունեցել է երկու հարիւր տարուայ ընթացքում իբրև մի վանական-կղերական հիմնարկութիւն, եղել է և այժմ էլ շարունակում է լինել մի գըրական ուժեղ գործօն, որ շատ է նպաստել մեր մտաւոր զարդացման:

Մեր խախուտ, երերուն իրականութեան մէջ, ուր հիմնարկութիւնները այնքան սակաւարիւն են, այնքան սակաւակեաց, մի նշանաւոր, նմանը չունեցող երեսյթ է այն տոկուն յարատեսութիւնը, որ եւրոպական մի անկիւնում կորած փոքրիկ կղզու վրայ ապրող հայ միաբանութիւնն է ցոյց տալիս երկու հարիւր տարուայ իր

դործունէութեամբ։ Երկու հարիւր տարի աշխատել եւ ռանդով, երկու հարիւր տարի չը մոռանալ պարտաւորութիւններ—դա մի շատ խոշոր երևոյթ է մեր կեանքի մէջ, այնքան խոշոր ու բեղմնաւոր, որ ամբողջ հայ ազգը, մեր խորին համոզմունքով, այսօր պիտի ցոյց տայ այդ պատկառելի հիմնարկութեան միահամուռ հիացմունք և երախտագիտութիւն։

Մի կողմ թողնենք պակասութիւնները, որոնք յատուկ են մարդկային բոլոր գործերին։ Մենք կարող ենք և պիտի քննադատենք պակասութիւնները նոյն իսկ շատ խիստ, շատ անողորմ կերպով։ Բայց այսօր, երբ հիմնարկութեան տուած օգուտների համագումարը պէտք է աչքի առաջ ունենալ, «Մուրճ», իբրև գրական հասարական օրգան, անկեղծ սրտից շնորհաւորում է Մխիթարեանների յօրելեանը և ցանկանում է ո. Ղազարի գրական ընկերութեան աւելի յարատեսութիւն, աւելի մեծ եռանդ և տոկունութիւն այն ասպարէղի մէջ, ուր այնքան մեծ պատուվ գործել է նա մինչեւ այժմ։

Թող երկու ամբողջ գարերը, որ այսօր Մխիթարեան Միաբանութիւնը թողնում է իր ետևում, խրատական դաս դառնան ասպագայի համար։ Մենք ցանկանում ենք, որ այդ ապագան լինի մի անձնուէր ծառայութիւն ամբողջ ազգի համար, որ կրօնը այլ ևս խոշնդոտ չը դառնայ, կիրք, դառնութիւն, հիասթափումն չառաչացնէր։ Դա կը լինի այն ժամանակ, երբ իւրաքանչիւրը մեղանից, թողնելով կրօնը մարդկային խղճին և սրտին, գրկէր աւելի լայն ու մեծ հասկացողութիւն—հայութիւնը։ Դրականութիւնը պիտի մարմնացնէ մեղանում այս հասկացողութիւնը։ Եւ Մխիթարեան միաբանութիւնը, իբրև գրական-գիտական մի խոշոր հիմնարկութիւն, թող այս ճանապարհով ուղղէ իր բայլերը անսայթաք, լի ամուր հաւատով և տոկուն, անձնուէր աշխատութեամբ։

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները Մխիթարեան ամբողջ Միաբանութեան։

Մ Ի Ն Կ Ա Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Նամակ Խմբագրութեան)

Միսիթար Սեբաստացու կենսագրութեան մէջ, որ տպուեց «Առուրծի» մէջ (ա. իմ «Հայոց գրականութիւնը ԽՎIII դարում») ևս փաստերով հերքել եմ այն աւանդութիւնը, թէ Միսիթարը ամենեին հեռացած չէր իր մայրենի եկեղեցուց, այլ մհալով լուսաւորչական, արտաքուստ կաթոլիկ եկեղեցուն էր յարած՝ իր Միսաբանութիւնը հաստատուն սրանելու համար. Ես ասել եմ որ դա առասպել է. ասել եմ որ Միսիթար Սեբաստացին կաթոլիկ էր, մի բան, որ ամենեին մեղք չէ, — մի և նոյն ժամանակ հաջ-կաթոլիկ, այսինքն հոգով նուրբուած իր ազգին. Ի միջի այսոց, ես հերքել էի այն ասարկութիւնը, որ բերում են մի քանիսները՝ Միսիթարի լուսաւորչական լինելը հաստատելու. համար. Դա այն է, որ Վենետիկում տպուած գրքերի վրայ նշանակուում էր Էջմիածնի կաթողիկոսի անունը. Ես ցոյց էի տուել որ Խաչատուր Կարնեցի վարդապետը, որի կաթոլիկութեան մասին ոչ մի կասկած չէ կարող լինել, նոյնու նշանակել է իր մի զրբի վրայ Էջմիածնի կաթողիկոսի անունը և փորձել էի բացատրել այդ հանգամանքը նրանով, որ կաթոլիկ վարդապետները զիմում էին այդ ընդունուած ձևին, որպէս զի նրանց տպագրած գրքերը ասարածուեն ազգի մէջ:

Կ. Պօլախ «Բիւզանդիան» լրագրում թիւրքահայ բանասէր պ. Դ. Խաչկանց սկսել է տպագրել «Երկհարիւրամեակ Միսիթար Արքահօր» աշխատութիւնը Նախարանի մէջ (№ 1453) պ. Խաչկանց ասում է թէ սկսալ է իմ վերոյիշեալ անսութիւնը, այսինքն թէ Միսիթար Սեբաստացին կաթոլիկ էր ձեւանում միայն, իրապէս նա դիմակաւորուած լուսաւորչական էր Որ ես կարող եմ սիսալուած լինել իմ աշխատութեան մէջ, դա շատ հեշտ կարող է պատահել, Բայց ինձ թւում է որ պ. Խաչկանց պիտի փաստերով հաստատէր իմ սիսալը և ոչ թէ բաւականանար լոկ խօսքերովք. Ես հիմնել եմ իմ եղբակացութիւնը մի շարք պատմական փաստերի վրայ. այդ եղբակացութեան սիսալը հաստատելու համար պէսաք էր կամ ոչխացնել իմ ունեցուծ փաստերը կամ մէջ բերել մի կամ քանի փաստեր, որոնք հաստատէին իմ սիսալը. Պ. Խաչկանց ոչ մէկն է անում, ոչ միւսը թնդ ինձ ներէ, ուրինմն, պարոնը, եթէ ես ասեմ որ պատմութեան մէջ

փաստերն են խօսողը, և ես հէսդ այս հիման վրայ չեմ կարող ընդունել որ ես սխալուած եմ Մխիթար Աբբայի վերաբերմամբ:

Պ. Խաչկոնց ասում է. «Իր (Մխիթարի) երկասիրութեանց մէջ կրնայ ցուցուիլ աշխատասիրութիւն մը որ մեր մէջ Հռոմագաւանութիւն տարածելու, հաւատափոխութեան փորձ մ'երած ըլլայ»: Ես ցոյց կը տամ պ. Խաչկոնցին Յակոբ պատրիարք Նալեանի «Ճրագ ճմարտութեան» զիրքը, որ տպուած է Կ. Պոլսում 1756 թուին: Այդուեզ հայոց աստուածաբան պատրիարք երկար և տեղ-տեղ նոյն իսկ շատ խիստ բանակոփւ է մզում Մխիթար Աբբայի գէմ գաւանաբանական հարցերի առիթով. այդ բանակոփւը ցոյց է տալիս որ Մխիթար Աբբան քննադատել է հայոց նկեղեցու դաւանութիւններն ու ծէսերը և ցոյց է տուել նրանց սխալները կաթօլիկութեան տեսակէտից:

Շատ զարմանալի կը լինէր այս բոլորից յետոյ դեռ շարունակել հաւատալ այն անփաստ տւանդութեան, թէ Սերաստացին հայոց եկեղեցուց չէր նեռացել, մանաւանդ թէ այդ բոլորը մի դիմակ էր նրա համար: Ի՞նչպէս է, սակայն, որ Մխիթարի ժամանակակից Նալեան պատրիարքը չը գիտէր այդ բանը և կուում էր նրա դէմ, իբրև հայոց նկեղեցու թշնամու դէմ (տես Նալեանի առաջարանը):

Ո՛չ, ես կրկնում եմ իմ ասածը. «Մխիթարը կաթօլիկ էր. —ոչինչ յանցանք չը կայ այս հանգամանքի մէջ»: Եւ կաթօլիկութիւնը բոլորովին արգելը չեղաւ որ այդ մեծ մարդը հայ ազգի երախտաւորը հանգիսանայ իր հիմնած Միաբանութեամբ:

ԼԵԶ

Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Բ

«Մուրճի» յուլիսի համարում մոռել են ի միջի այլոց հետեւալ վրիպակները.

Երես տող	Տպուած է	պէսէ է լինի
227 6	առաջարկութիւններ	առաջակութիւններ
246 21	=30 ֆունտ	=17 պուդ 29 ֆ.

ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ի Ւ 8 Ա Ի

(Հրապարակախօսական խոհեր)

ԳԻՆՆ Է ՅՕ ԿՈՊԵԿ

Մախւում է Թիֆլիսում «Մուրի» խմբագրատանը՝
Օտարաքաղաքացիները դիմում են. Տիֆլիս, Централь-
ная Книжная Торговля.

ՄԱՅՐԵՆԻ ԻՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿ

կրսոեր դասարանների համար

համառօտ բառդրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՄԻԿԵԱՆ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գինն է 70 կոդ.

Դիմել՝ Թիֆլիս, Կենտրոնական և «Գուտտենբերգ»
գրավաճառանոցները՝

«Մուրի» խմբագրատանը, «Թիֆլիսի Կենտրոնական» և
«Գուտտենբերգ» գրավաճառանոցներում ծախւում է
Խօզէ էջեգարայի՝

„Մ Ա. Շ Ի Ա. Ն Ա.“

գրաման, թարգ. Արակե Կրասինիկեանի:

Գինն է 1 ՌՈՒԲԼԻ

Հրատարակութեան վաճառման արդիւնքը յատկացուած է
«Եղբայրական օգնութեան»:

Լ Ա Յ Ս Ս Ե Ս Ա Ի

Լ Է Օ**ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**

Մեր կեանիքը, գրականութիւնը անցեալում

Հատոր առաջին:—XVI—XVII դար

ԳԻՆ է 1 ԹԱԿԻ 50 ԿՈՊԵԿ

Ծախւում է Թիֆլիսում, «Մշակվ» խմբագրատանը:
Օտարաքաղաքացիները դիմում են. Տիֆլուս, րեդակցիա „Մակե“ 2—5Լ ո յ ս ս ե ս ա ւ
Ա լ է Ք Ս Ա Ն Դ Ր Ռ Ա Տ Ո Ւ Բ Ե Ա Ն Ի**ԳՐՉԻ ՀԱՆԱԳՐՆԵՐ**

առևառութիւնը:

Գրքի երեսը զարդարուած է նկարիչ Վ. Սուրենեանցի նկարով:
ԳԻՆ է 50 ԿՈՊԵԿԴիմել հեղինակներ՝ Մոսկվա, Садовая-Каретная, меб.
ком. Носальского, Ал. Պատուրանу. 3—3

Ն Ո Ր Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

Գ Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ո Ց Ո Ւ Մ

վաճառուում են ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբոմներ,
ատլասներ և այլ տեսակ հրատարակութիւններ: Վենետիկում,
Վիեննայում, Կ. Պօլում և Զմիւռնիայում տպուած գրքերից
ցանկացողներին կարող ենք ուղարկել: Գումարով գնողներին
դիշումն կը լինի:Գրավաճառանոցը ընդունում է վաճառելու համար
գրեթե:Գրավաճառանոցի հետ գործ ունեցողները պէտք է դիմեն՝
Տիֆլուս, Книжный магазинъ «Гуттенбергъ», Галусту
Галустану. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՑՈՒՄ

Վաճառուում են հետեւեալ հայերէն գրեւըր.

Մարկոսան Մամբէկ վարդ., Ամեն մարդու բարեկամը, խօսք առողջական, երուսալէմ, գ. 25 կ.:

Մելեան Արամ, Հայոց մեծ վարդապետ ո. Մեսրոպը, պատկերով, թիֆլ. գ. 25 կ.:

Մելիք-Շահնազարեան Կոս., Ուղեցոյց գործնական գինեկործութեան, թիֆլ. գ. 60 կ.:

» Փշանք, պատկեր գարնանային կւամսից, մանուկների համար, Շուշի, գ. 15 կ.:

» Զիահիստը և իր վնասները, Շուշի, գ. 10 կ.:

» Ոգելից ըմպելիքների վնասակարութիւնը, Շուշի, գ. 10 կ.:

Մենեկիւթեան Գաբր. վարդ., Արսէն Այտնեան արքեպիսկոպոսի 50-ամեայ յորելեանի առթիւ, Վիեննա, գ. 35 կ.:

Միարան, Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն, Վազարչապատ, գ. 35 կ.:

» Անանիա Նարեկացի ժ. դար, Գիր խոստովանութեան, Վազարչ., գ. 50 կ.:

» Ազաթանդեղոսի աղբիւրներից, Գորիս և Շմոնի, Վազարչ., գ. 50 կ.:

Միանաւեան Մ., Քնար հայկական, Պետեր., գ. 5 ռ.:

Միհայէլ ասորւոյ ժամանակագրութիւն, Երուսալէմ, գ. 2 ռ.:

Միրզա-Աւագեան ի., Ստէնլի, Նրա կեանքը, գիւտերը, Բագու, գ. 25 կ.:

Միսիրարեան Աղիք., Տաղեր և երգեր, Ալեքս., գ. 60 կ.:

Միսիրարայ Հերացւոյ բժշկապետի ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, գ. 1 ռ.:

Մկրտումեան Գ. քահ., Հայթմազանց Միքէլը, Մոսկ., գ. 8 կ.:

Մկրեան Յովի. քահ., Կենսագրութիւն Մեսրովայ Դաւթեան թաղիաղեանց Երեանցւոյ, Թիֆ., գ. 1 ռ. 50 կ.:

Մոնուեանց Պետր., Բանաստեղծութիւններ, Ալեքս., գ. 25 կ.:

» Տիգբոնի կալանաւորը, Ալեքս., գ. 15 կ.:

» Վշտի աղբիւրից, Ալեքս., գ. 5 կ.:

Մուրադեան Եղ., Ծաղիկ արդի մատենագրութեան ա. և բ. մասերը, կ. Պոլիս, իւրաքանչիւրի գինն է 1 ռ.:

Մուրադեան Մելիք. եպ., Հովուական աստուածաբանութիւն, կ. Պոլիս, գ. 1 ռ. 20 կ.:

- Մուրադեան, Պետրոս Շանշեանց կենսագրութիւն, պատկերով,
Թիֆլ., գ. 50 կ.:
- Մուրացան, Հայ բողոքականի ընտանիքը. Թիֆլ., գ. 40 կ.:
- Մ. Ե., Փաւստոս Բուզանդ, Վիլևանա, գ. 50 կ.:
- Յակոբեան Յակ., Բանաստեղծութիւններ, Թիֆլ. գ. 30 կ.:
- Յարոյ Ն., Նկարներ, Թիֆլ., գ. 50 կ.:
- Յարուբիւնեան Արժ., Բանաստեղծութիւններ, Թիֆլ., գ. 40 կ.:
- Յարուբիւնեան Խս., Հայոց զիրը, Թիֆլ., գ. 1 ռ. 50 կ.:
- » Համառօտ տրամաբանութիւն, Թիֆլ., գ. 1 ռ.:
- » Ներսիսեան հոգևոր դպրոցի սաների առ. դպրոցական ճանապարհորդութիւնը ա. մասն, Թիֆլ., գ. 40 կ., նոյնը բ. մասն 20 կ.:
- » Ստեփանոս Պալասանեան, նրա կեանքը և գրական գործունէութիւնը, Թիֆլ., գ. 25 կ.:
- » Աշակերտի յուշտեարը, Թիֆլ., գ. 30 կ.:
- » Զգացմունքների աշխարհ (Ա. Աբովյանի երկերի առթիւ), Թիֆլ., գ. 30 կ.:
- » Մանահին, Թիֆլ., գ. 25 կ.:
- » Իմ օրագիրը, Թիֆլ., գ. 30 կ.:
- » Ծաղկոց (մանկական պարտէզ), Թիֆլ., գ. 10 կ.:
- Յովհաննիսեան Արժ., «Փորձ» ամսագիր, 1876 թուականից սկսած բոլոր տարիները միասին 35 ռ.:
- Յովհաննու իմաստամիրի աւճնեցւոյ մատենագրութիւնը, Վենետիկ, գ. 1 ռ. 50 կ.:
- Յովհաննիսեան Խաչ., Բնեոպագիր արձանագրութիւններ Ոռուաց Հայաստանում, Վենետիկ, գ. 75 կ.:
- Յովհաննիսեան Ղազ. Քահ., Քնարիկ մանկական, ձայնագրուած երգեր, պարերգեր և աղօթքներ փաքրահասակ մանուկների համար, Պետերբ., գ. 1 ռ.:
- Նազարեան Յովհ., Անեկդոտներ, Թիֆլ., գ. 50 կ.:
- Նախաւեան Յակ. Քահ., Զայնագրեալ տաղարան, Վաղարշ. գ. 50 կ.:
- Նաւասարդեան Բ. բժ., Բժշկական և առողջապահական կարևոր գիտելիք, Թիֆլ., գ. 40 կ.:
- Նաւասարդեան Տիգ., Հայ ժողովրդական հէքիաթներ, 3 դիք: Թիֆլ., իւրաքանչիւրի զինը 50 կ.:
- Նախազիզեան Ս. դպ., Տիժաղի տոպրակ, անեկդոտներ, հայ և օտարների կեանքից, Թիֆլ., գ. 50 կ.:
- » Հայկական նշանագրեար ձեռագործի համար, Թիֆլ., գ. 25 կ.:
- Նամբուրեան Շուշ. օր., Լուսանման, Թիֆլ., գ. 40 կ.:

Նանք, Երազ օրեր (մի գիշերօթիկի յուշատետրից), Թիֆլ.,
գ. 40 կ.:

» Դարձ, վէպ, Թիֆլ., գ. 40 կ.:

» Վերժին, վէպ, Թիֆլ., գ. 60 կ.:

» Դերասանուհին, Թիֆլ., գ. 40 կ.:

Նահազիզ. Եր., Մկրտիչ Յովաէլիեան Էմին, կենսագրական-գրա-
կան տեսութիւն, Թիֆլ., գ. 60 կ.:

» Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքը, Թիֆլ., գ. 40 կ.:

Նահնազարեան Ս. բժ., Դպրանոցիս աշակերտներին, Մոսկ.
գ. 20 կ.:

» Ճառ դպրանոցին ներկայանալիս, Մոսկ., գ. 25 կ.:

» Երեանի հայոց թեմ դպրանոցը և հասարակութիւ-
նը, Մոսկ., գ. 30 կ.:

» Արոշ կանոնագրութեան և ծրագրի անհրաժեշտու-
թիւնը թեմական դպրանոցների, Մոսկ., գ. 1 ռ.:

Նահնազարեան Ցովին., Անմեղ զոհեր, Մոսկ., գ. 50 կ.:

» Խաչատուր Աբովեանի հասարակական և զրական
գործունէութիւնը, Մոսկ., գ. 35 կ.:

Նահնազարեան Սիմ. բժ., «Մշակը» (25-ամնակի առթիւ), Մոսկ.,
գ. 1 ռ.:

» Մարտիրոսութեան և աշխատանքի աղմիւ զինուորը՝
Խորիս Ալեքսէնդրիչ Վեսելօվսկի, Մոսկ., գ. 60 կ.:

Նարական ձայնիալ, բ. ապազր. Վաղարշ., գ. 7 ռ.:

Նիրվանզարէ, Կրակ, Բագու, գ. 30 կ.:

» Զուր յայսեր, վէպ, Թիֆլ., գ. 1 ռ.:

» Արսէն Դիմաքսեան, Թիֆլ., գ. 1 ռ. 50 կ.:

» Քառու, վէպ, Բագու, գ. 1 ռ. 50 կ.:

Կալխշիան Գր., Արմանական պոեզիա մատուցութիւն
Պատկանա, Ռոտովъ/на Դոնу, Ա. 50 ռ.

Պատկանեան Քեր., Փալստոփ Բուզանդացւոյ պատմութիւն

հայոց, Պետեր., գ. 2 ռ.:

» Անանիա Շիրակունւոյ միացորդք բանից, Պետեր.,
գ. 1 ռ. 25 կ.:

» Պատմութիւն Սերէսոփ եպիսկոպոսի ի Հերակլին,
Պետերք., գ. 2 ռ.:

» Եշխարք մատենագրութեան հայոց, Պետ., գ. 1 ռ.:

» Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն
տանն Արծրունւոյ, Պետեր., գ. 2 ռ.:

» Յարութիւն վարդապետի Ալամդարեանց, չափաբ-
րականք, Պետեր., գ. 1 ռ.:

Պատկանեան Քեր., Ցыганы, Несколько словъ о народчикахъ
закавказскихъ цыганъ: Боса и Каради, СПБ.

п. 1 р.

Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւիթիմեյւոյ, Վաղարշապ.
գ. 2 ռ.:

Պարոնեան Յակ., Ծիծաղ, հեղինակի պատկերով, Թիֆլ., գ. 1 ռ.
25 կ.:

» Արևելեան ատամնաբոյժ, կատակ. 5 արտր., Թիֆլ.,
գ. 50 կ.:

» Քաղաքավարութեան վեսները, Թիֆլ., գ. 75 կ.:

» Տարեցոյց և գուշակութիւնք Խիկարի, Թիֆլ.,

գ. 10 կ.:

Պարտեզ հոգեւոր. աղօթաղիրք բարեպաշտ հաւատացելոց, Կ. Պօ-

լիս, գ. 60 կ.:

Պիյիբնեան Մելիք., Ընկեցիկը, նորավէպ, Կ. Պօլիս, գ. 15 կ.:

Պոօւեան Պ., Կոռուածաղիկ, վէպ, բ. տպ., Թիֆլ., գ. 1 ռ. 30 կ.:

» Յուշիկներ, ա. չրջան, Թիֆլ., գ. 1 ռ.:

» Բղդէ, վէպ, Թիֆլ., գ. 1 ռ. 20 կ.:

» Սկրդն երկանց, վէպ, Թիֆլ., գ. 1 ռ. 20 կ.:

» Ցեցեր, վէպ, Թիֆլ., գ. 1 ռ.:

» Նա, պատկեր, Թիֆլ., գ. 20 կ.:

» Ակցիզի, պատկեր, Թիֆլ., գ. 25 կ.:

» Միքէլ աղենց Սրդիւլը, զրոյց իրական կեանքից,

Թիֆլ., գ. 20 կ.:

Զիւանու Բնարը, ա. բաժմանմունք — Ոտանաւորներ, Թիֆլ., գ.
50 կ.:

Ուսունի, Ախալքալաքեցու դատողութիւններ, Թիֆլ. գ. 15 կ.:

Սահակեան Հ. Մես., Համառօտ երկրաչափութիւն, Վենետիկ,
գ. 1 ռ.:

Սաղմոս Դաւթի, Կ. Պօլիս, գ. 60 կ.:

» Երուսաղէմ, գ. 70 կ.:

Սանդալ, Վիշապ, պատկեր տաճկահայ պանդուխտ մշակների
կեանքից, Թիֆլ., գ. 40 կ.:

Սարգսեան Բար. վարդ. Ագաթանգեղոս և իւր բազմադարհան
գաղտնիքն, Վենետիկ, գ. 2 ռ.:

Դիմել Տիֆլու, Յա Պենտական Կույսական Տորգովլո.
Օտարազագագիներին ուղարկւում է և վերադիր վճարով, ևթէ
պատուիրած գրքերի արժեքի $\frac{1}{3}$ կանխիկ է ուղարկւում: Գրքերի
վերաբերեալ հարցերին պատասխան է տրւում, ևթէ դրա համար
մարկա է ուղարկուած:

մակերպութիւնը մեզանում.—Անձնական նախաձեռնութեան օրինակներ մեր կեանքից.—Պէտք է ժողովրդին բարմարեցնել վոփոխուող պարմաններին.—Հայ ինտելիգէնտների նախաձեռնութիւնը անցեալում.—Դպրոցական կանոնադրութիւններ, —Ընտրովական սկզբունք և փաշական կամայականութիւն, —Հոգաբարձութիւնը օրինական մարմին է, —Վոսանգաւոր էքսպերիմէնտներ, —Ընկերակցութիւնների մէջ թագնուսած բազմակողմանիութիւնը, Լեւոն Սարգսւանի

229

16. ԳԱԻՈՒԱԿԱՆ ԿԵՍՆԻՔ, I. Մոռացուած գաւառամասերը Երեանհեան նահանգում, Ա.՝ Թօ: II. Վիճակսպական տեղեկութիւններ Ալեքս. Հայ-լուս. մասին, Կ. Տ. Կ. 232
17. ԱՐՏԱ-ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Կիոչէնէրի վերջին բայտարարութիւնը, —Ազատուական կուսակցութեան նոր Գրակցիա Անդլիայում, —Զեմբերլէնը իրքի Բիոմարկի հետեւող, —Անդլիական լեզուի գերիշխութեան հարցը Մալտա կըդգում, —Ազգերի համերաշխութիւն և ուժեղների ստիպութիւն, —Առաջիս որժի Կուլտը, Նիցշէականութիւնը, իրքեւ ուժեղ անհստականութեան սանձարձակութիւն, —Դադստօնի շխօլայի մարդիկ, —Ֆրիդրիխ-Վիկորիա կայսրոււու մահը, —Կրիստին իրքը լեզափոխական և Կրիստին իրքը պետական անձ, —Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութեան նոր ցոյց, Լ. Ա. 241
18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 246
19. ԽՄԲԱԳ-ՐՈՒԹԵԱՆ ԿՈՂԾԻՑ 259
20. ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ, Լ. 261
21. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 263
22. ՑԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ, «ՑԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլսովի, Ժարգմ. Տովհաննեիսեանի 209—256

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Ե 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՇ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ր.Ի

Խմբագրութեան անդամները եց՝ պ.պ. Խեիռն ՍԱՐԳԻՍԵԱՆ և ԼՅՕ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՆԸ

Պուստանում տարեկան 10 ռուբ. Մերասահման՝ 12 ռուբ.

կէտ տարին	6	"	7	"		
"	1 ամսումն	1	"	1	"	50 կ.

«Մուշ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը
Երևանեան հրապարակ, առ. Խարազեանից:

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Տիֆլիս, և բարձրացնել
շուրջա ՝ «Մուշ».

Մերասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtch“.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ.

«Մուշում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՆ ՆԵՐ գետելու համար պէտք է վճարել

Մի երես բանող լայտարարութեան համար . 15 ռ.

1/2	"	"	"	"	8	"
-----	---	---	---	---	---	---

1/4	"	"	"	"	4	"
-----	---	---	---	---	---	---

Ա.Պ.Ա.Ռ.Ի կամ ԶՐԻ ոչ ո՞ի չէ ուղարկում «Մուշ»:

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը խնդրում է յօդուածագիրներից՝ գրել պարզ և
թերթի միացն մի երեսի վրա:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը
6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերա-
դարձնուած 2եռագիրը լետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանա-
պարհածախուց:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները
փոփոխելու կամ կրնառուելու իրաւունքը:

5. «Մուշ» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրու-
թեան տեղեկութիւն տալ մինչեւ յաջորդ համարի լուս տեսնելը: Այդ տեղե-
կութեան անհրաժեշտ է կցել տեղական պոստային գրասենեակի հաւաստա-
գիրը (յօդուածութեան), որ ամսագրի համարը չի լանձնուած դանգաստաւրին:







